ԱԲԴՈՒԼԼԱՀ ՕՋԱԼԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ

Դիմակավորված աստվածների և քողարկված արքաների դարաշրջանը

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

9(91.37)
Ա-62
Հ-

ԱԲԴՈՒԼԼԱՀ ՕՋԱԼԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ

6710

Դիմակավորված աստվածների և քողարկված արքաների դարաշրջանը

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2024

ՀՏԴ 32:94:1/14
ԳՄԴ 66.0+63+87
Օ-620

Օջալան Աբդուլլահ
Օ-620 Ժողովրդավարական քաղաքակրթության մանիֆեստ: Դիմակավորված աստվածների և քողարկված արքաների դարաշրջանը / Ա. Օջալան.- Եր.: Լուսակն, 2024.
Առաջին հատոր.- 412 էջ:

ՀՏԴ 32:94:1/14
ԳՄԴ 66.0+63+87

ISBN 978-9939-968-34-6

© Լուսակն, 2024

Հարգելի ընթերցող,

Առաջնորդի միջոցով մի ամբողջ ազգի ոչնչացնելու վրա կենտրոնացած Իմրալիի համակարգի[1] դաժան խոշտանգումների և մեկուսացման պայմաններում, գրեթե սուտ, եթե ոչ բոլորովին բացակայող միջոցներով մեր առաջնորդի գրած «Ժողովրդավարական քաղաքակրթության մանիֆեստ» աշխատության կարևորությունը մեր ժողովրդի և մարդկության համար օրեցօր մոտենում է այն կետին, որին արժանի է:

Այս մանիֆեստը մեր ուժի հիմնական աղբյուրն է՝ իր պատմությամբ, ներկայով և լուսավոր ապագայով: Այն պատկանում է ոչ միայն մեկ ազգի կամ դասի, այլ՝ ողջ մարդկությանը: Այս ռեսուրսը ողջ մարդկությանը սնուցող աղբյուրի վերածելը մեր կյանքի և պայքարի նպատակն է:

«Ժողովրդավարական քաղաքակրթության մանիֆեստ»-ի հինգհատորյակի վերաբերյալ, որն արդեն մեծ թվով ընթերցողներ ունի, կարևոր կարծիքներ և առաջարկություններ են արվել, և դրանք ուշադրությամբ գնահատվել են մեր շարժման կողմից: Ստացված կարծիքների և առաջարկությունների լույսի ներքո՝ նպատակահարմար համարվեց վերանայել Առաջնորդի պաշտպանական ճառը:

---

[1] Քրդական բանվորական կուսակցության հիմնադիր Աբդուլլահ Օջալանը Թուրքիայի կողմից դատապարտվել է ցմահ ազատազրկման և պահվում է Իմրալի կղզու բանտում:

Այս նպատակով ստեղծված հանձնաժողովը վերանայել է պաշտպանական ճառը և որոշ կետերում ուղղումներ արել, որոնք բովանդակության վրա չեն ազդել:

Այս ուղղումները կատարվել են քերականության, անհասկանալի տարեթվերի, հասկացությունների-իդիոմների-ասացվածքների մեջ, որոնք տարբեր լեզուներով թարգմանության ժամանակ խնդիրներ կառաջացնեին: Ուղղված նախադասությունների և բառերի իմաստը խնամքով պահպանվել է: Ջանքեր են գործադրվել ուղղումները կատարել այնպես, որպեսզի ոչ ճիշտ ընկալումների ու գնահատականների տեղիք չտան: Դրանով նպատակ ունենինք մեր հարգանքն արտահայտել Իմրալի բանտում մեկուսացված ու ծանր պայմաններում գտնվող մեր Առաջնորդին՝ որպես ընկերասիրության դրսևորում:

Հավատում ենք, որ «Ժողովրդավարական քաղաքակրթության մանիֆեստ»-ն այս տեսքով ավելի պարզ և հասկանալի կլինի ընթերցողի համար, կհեշտացնի թարգմանությունը: Ընդունեք մեր ողջույններն ու հարգանքների հավաստիքը:

Մայիսի 1, 2013 թ.
Խմբագրական հանձնաժողով

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՈՒՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երբ ինձ տարան Իմրալիի բանտ, ինձ առաջինը դիմավորեց Եվրոպայի խորհրդին կից խոշտանգումների կանխարգելման կոմիտեի նախագահի ներկայացուցիչը: Առաջին բանը, որ նա ասաց հետևյալն էր՝ «Դուք կմնաք այս բանտում, իսկ մենք դա կվերահսկենք Եվրոպայի խորհրդի միջոցով և կփորձենք որոշ լուծումներ մշակել»: Երբ Թուրքիայի և Հունաստանի միջև հարաբերություններում համընկան երկուսի շահերն էլ, և Հունաստանը, պատմության մեջ նախադեպը չունեցող կեղծավորությամբ դավաճանելով բարեկամությանը, ինձ ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության (CIA) վերահսկողության տակ դրեց, ես շղթայվեցի Իմրալիի ժայռերին: «Մերկ թագավորների և դիմակազերծ աստվածների դարաշրջանում» դատապարտվեցի ապրելու այնպիսի ճակատագրով, որը գերազանցում է առասպելական Պրոմեթևսի ճակատագրին:

Շահերի հավասարակշռումը, որը հանգեցրեց Սիրիայից իմ դուրս գալուն, ավելի ցայտուն է: Այն ըմբռնումը, որն ինձ դուրս բերեց Սիրիայից, էապես հիմնված է

փաստի վրա, որ բարեկամական հարաբերությունների իմ բարձր արժեհամակարգը հակասում է Իսրայելի քաղաքականությանը քրդական հարցի վերաբերյալ: Իսրայելը, որը ստանձնեց քրդական խնդրի հովանավորությունը հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, չափազանց զգայուն էր՝ հանդուրժելու քրդական խնդրի լուծման երկրորդ տարբերակը, որը գնալով ավելի ու ավելի ազդեցիկ էր դառնում ինձ համար: Լուծման իմ տարբերակը հաստատ համահունչ չէր իրենց հաշվարկներին: Ես չպետք է ժխտեմ՝ Մոսադն[2] ինձ անուղղակիորեն հրավիրեց միանալ խնդրի լուծման իր ճանապարհին: Բայց ես պատրաստ չէի դրան թե՛ բարոյական, թե՛ քաղաքական առումով: Սիրիայի արաբական վարչակազմը երբեք չի ցանկացել դուրս գալ Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) ղեկավարության հետ ռազմավարական հարաբերություններից: Ավելին, Հաֆեզ Ասադի ղեկավարությունը ձևավորվեց ԱՄՆ-ի և Խորհրդային Միության միջև հեգեմոնիայի համար մղվող հակամարտությունից: Խորհրդային Միության փլուզմամբ պայմանավորված կրիտիկական փուլում ոչ մի մարտավարություն չէր կարող պաշտպանել հարաբերությունները: Մինչ Սիրիան հավասարակշռում էր իր շահերը Թուրքիայի և իմ ու ինձ հետ նաև Քրդական բանվորական կուսակցության հետ հարաբերություններում, ինչ-որ իմաստով պատասխան էր փնտրում Թուրքիայի Հանրապետության կողմից 1958 թվականից ի վեր շարունակվող սպառնալի-

[2] Մոսադ՝ հա-Մոսադ լե-մոդիին ու-լ-տաֆկիդիմ մեյուխադիմ. Իսրայելի հետախուզության և հատուկ առաջադրանքների վարչություն:

քին Սիրիայի վերաբերյալ ու նրա ծայրահեղ իսրայելամետ մոտեցումներին: Այս առումով հարմար գործիքի առկայությունը հնարավորություն տվեց երկարաժամկետ մարտավարական հարաբերություններ հաստատել ՔԲԿ-ի հետ: Քիչ էր հավանականությունը, որ այս հարաբերությունները կարող էին հանգեցնել քրդական հարցի լուծման երկրորդ տարբերակին, և թուրքական վարչակազմերի ջանքերն այս առումով արդյունավետ չէին լինում:

Նույնիսկ այս հակիրճ հիշեցումը ցույց է տալիս, որ գլխավոր ուժը, որն ինձ դուրս բերեց Սիրիայից, Իսրայելն էր: Դրանում, անկասկած, իրենց դերն են ունեցել նաև ԱՄՆ-ի քաղաքական և Թուրքիայի ռազմական ճնշումները: Պետք չէ մոռանալ, որ Իսրայելը դեռ 1950-ականներին փակ պայմանագրեր ուներ Թուրքիայի հետ: 1996 թվականին երկրորդ անգամ «հակաահաբեկչության» անվան տակ ստորագրված լրացուցիչ համաձայնագրով ձևավորվեց ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի Հանրապետության դաշինքն ընդդեմ Քրդական բանվորական կուսակցության:

Մեկ այլ կարևոր գործոն, որը պետք է ավելացվի այս գործընթացին, այն դաշինքի վրա հիմնված համագործակցությունն էր, որը մշակվել էր Քրդստանի դեմոկրատական կուսակցության (ՔԴԿ) և Քրդստանի ազգային միության (ՔԱՄ)[3] վարչակազմի, այլ կերպ ասած՝ 1992

[3] Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը՝ KDP կամ PDK (քրդերեն՝ Partiya Demokrat a Kurdistanê), հիմնադրվել է 1946 թվականին, որի պաշտոնական բարտուղարն էր Համզա Աբդուլլահը: 1956 թվականից հետո կուսակցության առաջնորդն է եղել Մուստաֆա Բարզանին: 1979 թվականին նրա մահից հետո որդին՝ Մասուդ Բարզանին ղեկավարում է կուսակցությունը: Քրդական ազգայնական քաղաքական կուսակցությունն ակտիվ է ինչպես Արևելյան, այնպես էլ Հարավային Քրդստանում:

թվականին ստեղծված Քրդական դաշնային ժողովի և դրա վարչակազմի կողմից, որոնք հարաբերությունների մեջ էին Թուրքիայի Հանրապետության, ԱՄՆ-ի և Իսրայելի հետ: Անկասկած, Թուրքիայի Հանրապետության կառավարություններն ու զինված ուժերն այդ օրվա պայմաններում գործում էին մարտավարական ըմբռնմամբ: Սակայն պատմությունն ուներ իր ուղին: Ըմբռնումների բազմազանությունը բացահայտում է կարևոր զարգացումներ: Այս պատմական սխալը, որի վրա Թուրքիան այսօր այդքան զայրացած է, բխում է նեղ, եսասիրական ու միակողմանի ընկալումից:

Այս անբարենպաստ գործոնների համադրությամբ 1998 թվականին հեռացա Սիրիայից: Պետք է հստակ ասեմ, որ ինքս էլ գիտակցում էի, որ պետք է դուրս գայի Սիրիայից: Սպասման ծայրահեղ ծանր մի շրջան անցկացրի: Բայց Քրդստանի համար զարգացող քաղաքական գծի գրավչությունը և բարեկամական մոտեցումը, որը ես ցանկանում էի բարձրացնել ռազմավարական մակարդակի, գրեթե գրավեցին ինձ: Պետք է խոստովանեմ, որ Սիրիայի վարչակազմը ամենաբարձր մակարդակով ընդգծել էր դրա թերությունները: Բայց ես դեռ պաշտպանում էի ժողովուրդների միջև ռազմավարական բարեկամության կարևորությունն ու անփոխարինելիությունը: Նույն ըմբռնումն էր, որ գրավեց ինձ դեպի Հունաստան: Եթե ոչ հունական պետության հետ, ապա հույն ժողովրդի հետ

Քրդստանի ազգային միություն (քրդերեն՝ Yekîtiya Niştimanê Kurdistan). 1966 թվականին դուրս է եկել KDP-ի կազմից եւ 1977-ին ստեղծվել է երեք կազմակերպությունների միավորումից՝ կոմունիստ աշխատավորներ (քրդերեն՝ Komalan Rejdaran), Սոցիալիստական կուսակցություն և Դայքարողներ (քրդերեն՝ Tekoşeran):

արժեքավոր բարեկամական հարաբերությունների զարգացումը երկրորդ հարցն էր, որը հետաքրքրում էր ինձ: Նրանց դասական մշակույթին և ողբերգական պատմությանը ծանոթանալը ինձ համար շատ կարևոր էր, ինչն էլ պարտադրեց բարեկամության անհրաժեշտությունը:

Մյուս ելքը Քրդստանի լեռներ հասնելն էր: Դեռևս մանկության տարիներին իմ մականուններից մեկը եղել է «Dîndê Çolê», որը նշանակում է «Լեռան խելագար»: Բայց երկու գործոն կար, որ այս ճանապարհը դարձրեցին երկրորդական: Հաշվի առնելով տարածաշրջանի ամենաուժեղ ռմբակոծության անխուսափելիությունը այն երկրում, որտեղ ես կլինեի լեռներում, վնասը, որը կարող էին կրել ժողովուրդն ու իմ համախոհները, ինչպես նաև հարաբերությունների նեղությունը՝ միայն ռազմական ճանապարհի վրա կենտրոնանալը և ամբողջությամբ այդ ճանապարհով գնալն անխուսափելի էր լինելու: Մյուս կողմից ինձ լեռներ բարձրանալուց հետո պահեցին երիտասարդության շրջանում ուսման անհավանական պակասը և նրանց անպայման կրթելու անհրաժեշտությունը:

Մի խոսքով՝ «Թուրքիայի բազմաթիվ պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջանակների նեղեցինք, և տեսեք, թե ինչպիսի արդյունք ստացանք» պնդումը չի արտացոլում իրականությունը: Ըստ էության, թեև Իրանի և Իրաքի վրա դեռևս ինտենսիվորեն փորձարկվում է նույն ճնշելու քաղաքականությունը, սակայն արդյունք տալու փոխարեն հանգեցրել է կույր մոլուցքի: Հնարավոր չէ կանխատեսել, թե ինչ հետևանքներ կունենան Թուրքիայի մարտավարական հարաբերությունները Սիրիայի և Իրանի հետ: Կարելի է ասել, որ այս հարաբերությունների արդ-

յունքում ստեղծվել է մի քաղաքականություն, որն ունի բազմաթիվ հետևանքներ: Երբ կամ ԱՄՆ-ԵՄ-Իսրայել, կամ Իրան-Ռուսաստան-Չինաստան երկընտրանքը սրվի, արդյո՞ք Թուրքիայի Հանրապետության կառավարությունները պատրաստ են դիմանալ ցանկացած հետևանքների:

Աթենք-Մոսկվա-Հռոմ գծի վրա իմ ունեցած եռամսյա արկածից սովորած դասերը, անկասկած, պատմական արժեք ունեն: Այս ճառի հիմնական հայեցակարգը կապիտալիստական արդիականությունն է և այն իր բոլոր գրահներով ու դիմակներով ճանաչելը, որոնց մեջ թաղված լինելն ուղղակիորեն կապված է այս արկածի հետ: Եթե չլիներ այս արկածը, մի կողմ թողնելով այս վերլուծությունները, ես կամ զամված կմնայի դասական պարզունակ ազգայնական ազգ-պետականությանը, կամ ինչպես հարյուրավոր օրինակներ են եղել նախկինում, նույնիսկ նրանց, ովքեր հիմնադրել են պետություններ, ես էլ կավարտեի իմ ճակատագիրը՝ որպես դասական ձախ շարժում: Միշտ նկատի ունեմ, որ համոզված չխոսելը հասարակագիտական սկզբունք է: Ինձ համար պարզ է՝ կապիտալիստական արդիականության իրական ուժը ոչ փողի, ոչ էլ զենքի մեջ է: Նրա հիմնական ուժն այն է, որ նա խեղդում է բոլոր ուտոպիաները, ներառյալ սոցիալիստական ուտոպիան, որը վերջինն է և ամենահզորը՝ իր իսկ լիբերալիզմի մեջ, որն ընդունում է ամեն գույն և գերազանցում ամենաարժանավոր աճպարարին: Քանի դեռ չի լուծվել այն խնդիրը, երբ այն խեղդում է մարդկության բոլոր ուտոպիաները սեփական լիբերալիզմի մեջ, նույնիսկ ամենաանձնազոհ մտքի դպրոցը չի կարող խուսափել կապիտալիզմի ծառան լինելուց, էլ չեմ խոսում նրա դեմ պայքարից: Ոչ ոք չի վերլուծել կապիտալը այնքան համապարփակ, որքան Մարքսը, և քչերն են կենտրոնացել պետության և հեղափոխության վրա այնքան, որքան Լենինը: Բայց այսօր պարզ է դարձել, որ թեև միմյանց շատ հակառակ են, բայց մարքս-լենինյան ավանդույթը կապիտալիզմին պարգևել է զգալի նյութ և իմաստ: Որովհետև հաճախ հանդիպող իրավիճակ է, որ մեր կամքերը, որոնք պատմության տարբեր ընկալումների հանրագումարն են, մեր ակնկալիքներից վեր արդյունք են տալիս: Սա չեմ կոչում որպես ճակատագիր և անխուսափելի դիալեկտիկական հարաբերություն: Ընդհակառակը, եզրակացնում եմ, որ ազատության ուտոպիաների վրա պետք է ավելի շատ կենտրոնանալ:

Եթե մենք չվերլուծենք ազատականությամբ տոգորված անհատներին և հասարակությանը և չուղղորդենք մարդկանց դեպի իրենց բնական ճանապարհը, արդյունքը կլինի ոչ այլ ինչ, քան մահը սոցիալական քաղցկեղի հետևանքով: Սա դեռ երկար-երկար կբացատրեմ:

Նկատի ունեմ հետևյալը. պարզ է, որ ես չեմ կարող ճիշտ տնօրինել իմ ճակատագիրը, քանի դեռ չեմ լուծել այն կախարդական համակարգը՝ կապիտալիստական արդիականությունը, որը գտնվում է Եվրոպայի խորհրդի 70-ամյա ներկայացուցիչ տիկնոջ հետևում, ով ինձ դիմավորեց Իմրալիի բանտում: Դավադրության գործընթացը սկզբից մինչև վերջ ձևավորեցին Իսրայել-ԱՄՆ-ԵՄ եռյակը և կազմալուծված Խորհրդային Ռուսաստանը: Սիրիայի, Հունաստանի և Թուրքիայի կառավարությունների դե-

ը դավադրության մեջ երկրորդական բյուրոկրատական ծառայություններից այն կողմ չի անցնում:

Հարցաքննության ընթացքում ես թուրք պաշտոնյաներին (չորս հիմնական հաստատությունների՝ գլխավոր շտաբի հետախուզության, ազգային հետախուզության կազմակերպության, անվտանգության գլխավոր վարչության և ժանդարմերիայի հետախուզության ներկայացուցիչներին) հստակ ասացի, որ ինձ ձերբակալելու կապակցությամբ նրանց ուրախությունն անիմաստ է: Ցածր ու դավաճանական մեթոդ կիրառելը, ընկերական հարաբերությունները շահարկելով՝ աննախադեպ դավադրությամբ ինձ ինքնաթիռ գցելն ու վրաս հարձակվելը պատերազմի հերոսական ձև չէ: Միայն այս փաստը՝ որպես վառ օրինակ, բացահայտում է, թե ինչ են կապիտալիստական արդիականությունը և լիբերալիզմը, որի հեգեմոնն է ԱՄՆ-ն: Մի համակարգ, որը ճնշումների և շահագործման մեջ սահմաններ չի ճանաչում:

Իմ սեփական պայքարի համակարգում ես չեմ ճանաչել թուրքական ազգ-պետականությունը: Թեև մենակ էի, նույնիսկ ամենաթույլ վիճակում համարձակություն ունեցա կանգնելու դրա դեմ: Բոլոր նրանք, ովքեր ականատես են եղել, գիտեն, որ լավ եմ պայքարում: Սրա մեջ տարօրինակ բան չկա: Դա մահապատիժ էր մեջտեղում գտնվող քրդերի համար: Այս իրավիճակում ես կա՛մ պետք է պայքարեի՝ չհրաժարվելով իմ մարդկայնությունից ու արժանապատվությունից, կա՛մ պետք է կորչեի անգամ գույնն ու սեռն անհայտ ստրկության մեջ: Չեմ վիճարկում այս իրողությունը, ոչ էլ զայրույթ եմ զգում դրա համար: Հիմնական բանը, որի վրա զայրանում եմ, մտքի

(գաղափարախոսության) հիմարությունը կանխել չկարողանալն է:

Դա այնպիսի մի համակարգ է, որ գրեթե աստվածացնում է այսպես ասած մարդու իրավունքները: Բայց իրականում մի խումբ մարդիկ այնպես են շահագործում և պատերազմ պարտադրում իրենց իսկ տեսակին՝ ողջ մարդկությանը, որ որևէ այլ կենդանի համակարգում նման բան չի եղել: Ավելին՝ դա թունավորում է ողջ միջավայրը և այն հրամցնում մարդկությանը:

Հասարակությունը, որտեղ ես ծնվել եմ, ծանրաբեռնված էր նեոլիթյան գյուղի մշակութային ազդեցություններով: Այս մշակույթում էական է անբիծ բարեկամությունը և ոչ դավաճանական պայքարը: Ես մեծացել եմ այս զգացումներով: Սակայն, ասես քաղաքակրթական բոլոր գործընթացներից դուրս մնալը և քաղաքակրթության ամենաբացասական հետևանքները խիստ օտարելու ձևով ապրելը բավարար չէ. ազգ-պետությամբ շրջապատված լինելը էթնիկ ազգայնականությամբ շովինիզմի ծայրահեղ սահմանին, որը համատեղում է կապիտալիստական արդիականությունը և ամենադաժան պահպանողական ավանդույթը, ամենադժվար լուծելի գաղափարական գերիշխանությունն է: Սրան գումարվում է հարկադրանքը (ուժ, պետական բռնություն), որը պատրաստ է ցանկացած պահի հարձակվել, և մեր՝ այնտեղ ապրողներիս ճակատագիրն է՝ միշտ պատրաստ լինել պաշտպանվելու այնտեղ, որտեղ գտնվում ենք:

Թուրքիայի Հանրապետության սահմաններից դուրս գալս կատաղի դիմադրության արդյունք չէր: Այս հեռագալս կատաղի դիմադրության արդյունք չէր: Այս հեռանալու պատճառն ազգային խնդրի լուծման համար նոր

կենսատարածք փնտրելն էր, որին մեզ կապում էին մի քանի դոգմատիկ ձախ վերլուծություններ: ՔԲԿ-ն Մերձավոր Արևելքում այլ շանս չուներ, քան համակարգի սողանցքներից ինչ-որ արդյունքներ ստանալը: Սակայն նրա գոյությունը որպես հակահամակարգային ուժ պահպանելու ու զարգացնելու ցանկությունն ու ջանքը հատկանիշ է, որը չի կարելի թերագնահատել Մերձավոր Արևելքի դեպքում:

ՔԲԿ-ի համար լեռներ գնալն ու մշտական զինված դիմադրության մեջ մտնելը դրա հետևանքների առումով կարևոր էր: Քրդերի համար այս իրավիճակը նշանակում էր հետզհետե քաղաքականացվելու աճ: Դասական կոոպերատիվ տարրերից խզումն առաջին անգամ ընկալելի դարձրեց ազատության այլընտրանքը: Չկար սպասելի կամ ընդունելի արդյունք ո՛չ միջնադարյան դասական բոնապետական վարչակարգերի, ո՛չ էլ դրանց ընդարձակման, այսպես կոչված, ժամանակակից ազգ-պետությունների համար: Սա էր պատճառը, որ թե՛ քուրդ գործընկերները, թե՛ տարածաշրջանային ազգ-պետությունները և թե՛ իմպերիալիստական հեգեմոնները «ՔԲԿ-ն ահաբեկչական կազմակերպություն է» պնդման հարցում համաձայնության եկան: Ազատ քուրդը՝ որպես անհատ և որպես հասարակություն, խախտում էր բոլոր կանոնները: Իսլամի նվաճողական և ազատականության ազգայնական գաղափարախոսությունները ազատ քրդականությունը վաղուց ջնջել էին գրքերից և այն համարել պատմությունից դուրս: Ըստ էության, այս ազատ քրդականությունն է, որից ես դուրս եմ մնում և դատապարտված եմ մեկուսի կղզու բանտում: Իմրալիի բանտում, որտեղ ինն

տարի միայնակ եմ պահվել, ամեն օր իրականացվող քաղաքականությունը համակարգված է: Սրանց բացառապես որպես թուրքական բանտային քաղաքականության մոտենալը կհանգեցնի սխալ պատկերացումների: Սա էլ իր հերթին կբերի քաղաքական անլուծելի իրավիճակների ու հակամարտությունների՝ թե՛ քրդերի, թե՛ թուրքերի համար: Բայց ես նաև շատ լավ հասկացա, որ թուրքականությունը չի կարող իր անունից ո՛չ կռվել, ո՛չ էլ խաղաղություն հաստատել: Կապիտալիստական արդիականությունը նրան վերապահում է կոպիտ ժանդարմերիայի եւ պահակ լինելու դերը Մերձավոր Արևելքի բոլոր ժողովուրդների, ներառյալ՝ թուրք ժողովրդի համար կապիտալիստական համակարգի ճնշումների և շահագործման հարցում նրանց խոցելի դարձնելու նպատակով:

Նրանց համար շատ կարևոր է, որ թուրքական և անատոլիական մշակույթները ամուր խարսխված լինեն ինչպես Եվրոպայի ներսում, այնպես էլ դրսում: Իրականացվողը պատահական քաղաքականություն չէ: Ամենամշակված քաղաքականությունն ու ռազմավարությունն իրականացվում են հիմնականում զաղտնի, համապարփակ ու միասնական ձևով: Այս համատեքստում ավելի լավ կարելի է ընկալել Թուրքիայի հարաբերությունները թե՛ ՆԱՏՕ-ի, թե՛ ԵՄ-ի հետ:

Նույնիսկ այն կետերը, որոնք ուզում էի բացատրել մինչ այժմ, ցույց են տալիս, որ ես չեմ կարող բովանդակալից պաշտպանություն վարել, քանի դեռ խորությամբ չեմ հասկանում կապիտալիստական արդիականությունը: Հասկանալի է, որ չոր՝ միայն օրենքի վրա հիմնված պաշտպանությունն իմաստ չի կարող ունենալ: Մակերե-

սային քաղաքական և ռազմավարական մոտեցումը չի կարող պարզաբանել «նորից դատվելու» գործընթացի կոծկման պատճառը: Կրկին դատվելու ընկալումը մեծ նշանակություն ունի նաև ազատ քրդականության լուծման հստակեցման առումով: Իմրալիում ցուցադրական դատավարությանը «դեմոկրատական հանրապետության» դեմ հայտարարությունս և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գործի առնչությամբ «Շումմերական քահանայապետությունից մինչև ժողովրդավարական քաղաքակրթություն» և «Ժողովրդի պաշտպանություն» խորագրերով ներկայացրածս համապարփակ ելույթներն իրական ժողովրդավարությունն ու արդարությունը հասկանալի դարձնելու փորձ էին: Իմ այս պաշտպանական ճառերը նպատակ ունեն հարստացնել ինչպես ժողովրդավարացման քաղաքական համակարգի իմաստը, այնպես էլ դրա կապը ազատության հետ՝ որպես լուծման այլընտրանք, ինչպես նաև ցույց տալ «կապիտալիստական արդիականության խնդրահարույց լինելը և այդ արդիականությունը հաղթահարելու» անհրաժեշտությունը: Հետևաբար, այն ևս մեկ անգամ բացահայտում է իմ պաշտպանական ճառերի ամբողջական և փոխլրացնող բնույթը:

Նշեցի, որ Իմրալիում առաջին դատավարությունը ցուցադրական էր: Իրոք, այս գործընթացում իրավական պաշտպանության համար պայմաններ չկային: Ամեն ինչ նախապես ծրագրված էր մինչև ամենավերջին մանրուքը: Ամեն ինչ՝ սկսած որոշումը կայացնելու օրվանից, ընտրված գլխավոր դատավորի որակավորումից ու ծննդավայրից, մինչև դատավարության գործընթացն ու դրա տևողությունը: Իսկ գործընթացին մամուլի մասնակցությունը մտածվել էր պատրաստված պլանի պահանջների համաձայն: Այս հարցում պայմանավորվածություն էր ձեռք բերվել ԱՄՆ-ի և ԵՄ-ի հետ: Իմ պարտականությունն այս իրավիճակում կեղծ իրավապաշտպան չլինելն էր: Առանց այն էլ օրենք չկար: Նույնը վերաբերում էր նաև ԵՄ-ին: Ամբողջ խնդիրն այն էր, թե քրդական հարցի շրջանակներում ես ինչպես պետք է օգտագործվեմ: Ամեն ինչ պետք է ծառայեր այս նպատակին: Ամեն դեպքում, Քենիայի գործընթացը[4] սկզբից մինչև վերջ ԵՄ օրենսդրության խախտում էր: Խախտվել էին Քենիայի օրենսդրությունը և նույնիսկ թուրքական իրավական համակարգը: Մահապատիժն անընդհատ օրակարգում պահելու պատճառը գործի քաղաքական ելքի հետ էր կապված: Ենթադրվում էր, որ ես վախենում էի, ուստի մահապատժի սպառնալիքը կենդանի պահելը կօգնի:

Նման իրավիճակում միակ բանը, որ կարող էի անել, քաղաքական գործընթացներին նպաստելն էր: Այդ իսկ պատճառով կարևոր էր պաշտպանական ճառերին քաղաքական ուղերձի բնույթ տալը: Այն, ինչ պետք է արվեր, բացասական հետևանքների հանգեցնող սխալ պատկերացումների համար արմատական պատասխաններ

[4] Աբդուլլահ Օջալանը 1999 թվականի փետրվարի 2-ին տեղափոխվել է Նայրոբի և ժամանակավորապես տեղավորվել Քենիայում Հունաստանի դեսպանատանը: 1999 թվականի փետրվարի 15-ին Քենիայում Հունաստանի դեսպանն Օջալանին ասել է, որ նա ազատ է գնալ իր ընտրած երկիր, և որ Նիդեռլանդները պատրաստ է ընդունել նրան: 1999 թվականի փետրվարի 15-ին Օջալանը զենքի ուժով ստիպված լքել է դեսպանատունը՝ քենիացի պաշտոնյաների հսկողության ներքո՝ ունենալով Կիպրոսի Հանրապետության անձնագիր, որը տրվել է Լազարոս Մավրոսի անունով և տեղափոխվել Նայրոբիի օդանավակայան՝ մեկնելու Նիդեռլանդներ, որտեղ նա քաղաքական ապաստան էր խնդրել: Օդանավակայան հասնելուն պես ձերբակալվել է թուրք գործարար Քավիթ Չաղլարին պատկանող մասնավոր ինքնաթիռով Թուրքիայից ժամանած Էնգին Ալանի հրամանատարությամբ հատուկ նշանակության ջոկատների կողմից և տեղափոխվել Թուրքիա:

փնտրելն էր: Այդպես էլ փորձեցի անել: Այս ըմբռնումը գերակշռում էր իմ բոլոր պաշտպանական ճառերում: Միայն այս հիմքով հնարավոր կլիներ խաղի մեջ գոնե քիչ գործիք լինել ու նպաստել ազատության համար մղվող պայքարին: Անկեղծ պետք է ասեմ՝ ակնկալում էի, որ ՄԻԵԴ-ը կորոշի, որ իմ կալանավորումն անօրինական է, և այդկերպ արդար դատավարության հնարավորություն կստեղծվի: Ակնհայտ անարդարությամբ նման որոշում չկայացվեց: Մնում էր, որ դատարանն ասեր՝ դատավարությունն արդար չի եղել: Այնուամենայնիվ, ամեն ինչ բաց ու ցուցադրված էր: Մինչ մենք երկար սպասումից հետո արդար դատավարության հույս ունեինք, բախվեցինք իրավական սկանդալի, որը Թուրքիայի կառավարության և ԵՄ խորհրդի միակողմանի ու երկար բանակցություններից հետո կեղտոտ սակարկության հետևանքն էր: Այս բանակցությունների ընթացքում ԵՄ-ի կողմից Թուրքիայից կորզած քաղաքական զիջումների դիմաց տասնյակ կետերում անօրինական գործարքները պետության անվտանգության մնացորդ համարվող Անկարայի 11-րդ և Ստամբուլի 13-րդ բարձր քրեական դատարանների ձեռքով հաստատվեցին: Սրա հիման վրա ԵՄ Նախարարների կոմիտեի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, և գործը վերադարձվեց ՄԻԵԴ:

Դեռ ՄԻԵԴ-ի դիրքորոշմանն ենք սպասում: Այդ կառույցի վերաբերմունքը սեփական որոշման նկատմամբ իսկապես հետաքրքրության առարկա է: Մինչ մենք պատրաստվում էինք իրական իրավական պաշտպանություն իրականացնել այս վերադատության գործընթացում, մեզ

տապալեցին: Ուստի, օրինական դատավարությունը ոչ այլ ինչ էր, քան ցուցադրական բեմադրություն:

Այս գործընթացում ավելի լավ հասկանալի դարձավ, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ն և Թուրքիայի Հանրապետությունը ձգտում են ինտենսիվ հաղորդակցության և փոխզիջումների՝ կապված ՔԲԿ-ի, իմ և ընդհանրապես քրդական հարցի հետ: Մինչ Թուրքիան լայն տնտեսական զիջումների դիմաց որոշել է լուծարել քրդական խնդիրը Թուրքիայում, նաև պնդում է Իրաքում քրդական դաշնային պետության ձևավորման մեջ իր պայմանական աջակցության դիրքորոշումը: Օրեցօր ավելի ակնհայտ է դառնում, որ այս հարցերի շուրջ շատ բուռն քննարկումներ են ընթանում: ԱՄՆ-ի հետ այս զիջումներն ու փոխզիջումներն արդեն բացահայտ կերպով էին արվել: Այդ փոխզիջումներից ամենակարևորը իմ ձերբակալությունն էր, արտադատական մահապատժի ենթարկելը, Թուրքիայում քրդական խնդրի վերացումը և ՔԲԿ-ին «ահաբեկչական կազմակերպություն» հռչակելը: ԱՄՀ-ի (IMF) և ԵՄ Կոպենհագենի չափանիշները կեղտոտ փոխզիջման համար քողարկման լավ միջոց էին:

Պետք է հստակ ասեմ, որ ԵՄ կառույցներից չէի սպասում նման կեղտոտ ու կասկածելի վերաբերմունք: Այս փաստերն ինձ մղեցին խորապես կասկածի տակ առնելու մարդու իրավունքները և ժողովրդավարական նորմերը, որոնց վրա հիմնված է ԵՄ-ն: Այս թեմաների վրա կենտրոնանալս ցույց տվեց, որ խնդիրներն ավելի խորն են, քան պատկերացնում ենք, և դրանց հաղթահարումը պահանջում է արմատական մոտեցումներ: Անկասկած, ԵՄ-ն մի քայլ առաջ է կատարել մարդու իրավունքների և

ժողովրդավարության հարցում: Այս առումով այն մեր աշխարհի դուռն է դեպի հույս: Բայց հիմքում ընկած կապիտալիստական արդիականությունը նրան բառացիորեն կապել է շղթաներով և հետագա քայլեր անելու կարողության հարցում հոռետես դարձրել:

Ռուս հեղափոխականները կարծում էին, որ իրենց հեղափոխությունների հաղթանակը կերաշխավորվի Եվրոպայի գոնե մի մասում տեղի ունենալիք հեղափոխություններով: Բայց հայտնի է, որ այդ սպասումները չարդարացան: Ընդհակառակը, եվրոպական լիբերալ հակահեղափոխությունը կազմալուծեց Խորհրդային Ռուսաստանը և նրա ղեկավարած ողջ համակարգը: Նույնը վերաբերում է այսօրվա ժողովրդավարական հեղափոխություններին: Որպեսզի Եվրոպայից ակնկալիքը չհանգեցնի նույն արդյունքին, համաշխարհային կապիտալի ամենազարգացած դարաշրջանում ավելի իրատեսական ճանապարհ է գլոբալ ժողովրդավարացման ձգտելը: Ժողովրդավարությունը, մարդու իրավունքները և ազատությունները Եվրոպայում կարող են իրենց ներդրումն ունենալ միայն այս պարադիգմի ներքո:

Այս պատճառները, որոնք փորձում ենք ուրվագծորեն բացատրել, պահանջում են հիմնական կատեգորիաների խորը վերլուծություն, թե ինչու «արդար դատավարությունը» ցանկալի չէ: Դա անհրաժեշտ է դարձնում այն հիմնական խնդիրները, որոնք ես նախկինում քննարկել եմ իմ պաշտպանական իրականության մեջ, հասցնել իրենց էական աղբյուրներին: Չնայած չափից դուրս ռեդուկտիվիզմը լուրջ պատրանքներ է առաջացնում ընկալման մեջ, քանի որ խնդիրը ծագում է արդիականությունից, այդուամենայնիվ, թերությունները պետք է հաշվի առնել: Պաշտպանության հիմնական մասերը, որոնք փորձում ենք լուծել, կունենան ներքին ամբողջականություն և նվազագույնի կհասցնեն ռեդուկցիոնիզմի թերությունները:

Հիմնական բաժինը, որին ես ուզում եմ անդրադառնալ ներածությունից հետո, մեթոդն է և ճշմարտության ռեժիմը: Ինչպես հայտնի է, մեթոդը սովորական քննա-հետազոտական մեթոդն է: Պատմության մեջ և այսօր փորձված այս մեթոդների նկարագրությունը լույս կսփռի: Մեթոդաբանական մոտեցումների հիմնական պատճառները դրական և բացասական կողմերով բացատրելը մեզ համար կհեշտացնի դրանց վերլուծությունը: Թեև մենք մեթոդամոլ չենք, այնուհանդերձ, միշտ անհրաժեշտ է մի ճանապարհ, որով պետք է գնալ:

Ճշմարտության ռեժիմ ասելով՝ հասկանում ենք, թե ինչպես կարող ենք լավագույնս հասնել «կյանքի» իմաստին: Մարդկային միտքը շատ զբաղված է եղել «ի՞նչ է ճշմարտությունը, իրականությունը» հարցի պատասխանը փնտրելով, թե ինչպես կարելի է հասնել դրան, կամ առհասարակ կարելի է՞ արդյոք հասնել: Այս հարցադրումը բոլոր լուրջ ուսումնասիրությունների համար լուծվելիք հիմնական խնդիրներից է: Այս բաժնում փորձ կարվի «օբեյկտիվություն» և «սուբյեկտիվություն» հասկացությունների հետ մեկտեղ վերծանել նաև մտքի որոշ հիմնական տեսություններ, որոնք գրավել են մարդկության ամբողջ երևակայությունն ու մտածելակերպը:

«Սոցիալական զարգացման մեջ տարածության և ժամանակի իմաստալից տարանջատումը» բաժնում փորձ կարվի պարզաբանել, որ կառուցված հիմնական սոցիա-

լական կատեգորիաների հետ կապված խնդիրները չեն կարող լուծվել ժամանակից և տարածությունից անջատ: Սոցիալական կազմավորումներին և դրանց էականությանը որպես չոր «պատմական իրադարձությունների» կամ վերացական արտահայտությունների վերաբերվելը՝ ասես տարածական գրառումներ չկան, մեր սոցիալական ընկալումները ներքաշում է լիակատար քաոսի մեջ, ստիպում է մեզ օգտագործել դրանք ամենաստոր շահերի համար և, ի վերջո, «իրական» անվան տակ հանգեցնում է ամբողջական ստի վրա հիմնված հռետորաբանության և դեմագոգիայի՝ հանուն հասարակության: Երբ կառուցվեն սոցիալական իրողություններ, երբ հստակորեն հաշվի առնվեն էականությունների ժամանակային և տարածական չափերը, այդ պարագայում «մարդկային կյանքը» իմաստավորելու հնարավորությունները կմեծանան: Այս դեպքում կարելի է հասկանալ, որ շատ հասկացություններ և տեսություններ պարունակում են մեծ մոլորություններ, խաբեություններ և սխալ պատկերացումներ և բաղկացած են «կլիշե բառերից»: Փորձ կարվի հիմնական տարրերով մեկնաբանել կոնկրետ այսօրվա քաղաքակրթության պատմական և տարածական զարգացումը՝ հաշվի առնելով գերիշխող քաղաքակրթությունը:

«Մերկ արքաների և դիմակազերծ աստվածների դարաշրջան» բաժնում փորձ է արվում պարզաբանել կապիտալիզմի՝ որպես արտադրության ձևի ի հայտ գալը և այն քաղցկեղը, որ դա առաջացնում է հասարակության մեջ: Փորձվում է բացահայտել բոլորը բոլորի դեմ ակնհայտ թվացող պատերազմի իմաստը, որը կապիտալիզմը կառուցել է իրեն կցված քաղաքական ուժով և գիտությամբ:

Սցիենտիզմի մեթոդով մղվող այս պատերազմում փորձ է արվում վերծանել գիտության այն հասկացությունները և տեսությունները, որոնք մտավոր ոլորտում հանգեցնում են կապիտալիզմի գերակայության: Փորձ է արվում բացատրել կապիտալիստական համակարգի կարողությունը իր դեմ պայքարող բոլոր շարժումները, հատկապես մարքսիզմը, անարխիզմը, ազգային-ազատագրական և նույնիսկ սոցիալ-դեմոկրատական շարժումները իր իսկ շահին ծառայեցնելու համար գործիքի վերածելու ուղղությամբ: Ինչպե՞ս ապրանքայնացումը և փոխանակման արժեքը, որոնք ի սկզբանե արհամարհում էին բոլոր հասարակություններին, դարձան հասարակությանը կառավարող նոր աստվածները: Ինչպե՞ս անցյալի շատ քիչ թագավորները, որոնք հագնում էին գունավոր հագուստներ և բոլորովին այլ կյանք վարում ամրոցներում ու պալատներում, այնքան շատացան, որ սկսեցին չտարբերվել իրենց մերկ հպատակներից:

Ինչո՞ւ այս շատ գիտական, շատ հզոր և նյութապաշտ համակարգի շրջապատն ու ներքին կառուցվածքը վերածվում են համայնքների, որոնք ուժասպառ են լինում հիվանդությունների և մահերի հետևանքով, որոնք նույնիսկ ամենաանգրագետ մարդիկ չեն կարող առաջացնել: Այս հարցերի պատասխանները կփորձենք գտնել՝ դրանց գաղտնիքները լուծելով: Կուսումնասիրվեն ինչպես ազգ-պետություն բաժանումների իրական դերերը, որոնք հիմնված են տնտեսության, սոցիալական կառուցվածքի և քաղաքական ինստիտուտների վրա, այնպես էլ գիտական բաժանումները, որոնք բխում են այդ ըմբռնումներից ու թեորեմներից, և թե ինչպես են դրանք կյանքը դարձ-

նում իմաստալից կամ անիմաստ: Հստակ կպարզվի լիբերալիզմի՝ ազգայնականության և անհատապաշտության նման պաշտոնական կրոնի հիմնական դերը: Կցուցադրվի, որ կապիտալիզմը մշտական պատերազմ է հասարակությունների ներքին և արտաքին կառուցվածքում, և այս առումով կյանքը լարված, սթրեսային ճգնաժամային և քաոտիկ վիճակ է:

«Ազատության ուտոպիաներով կրկին ապրելու դարաշրջանը» խորագրով բաժնում քննարկվում է, թե ինչպես կարելի է հասնել ապրելակերպի, որը ազատության ուտոպիաները կապիտալիստական արդիականության քաոսից և ճգնաժամից վերականգնել է: Կքննարկվի, թե ինչպես հասնել իմաստի նոր՝ հոգևոր և մտավոր ամբողջականության՝ վերականգնելու ուտոպիստական և հետաքրքրաշարժ կենսակերպերը, որոնք դուրս են մղվել կապիտալիստական ժամանակակից կյանքից նյութական կառույցների գերակայության ներքո, և թե ինչպես իմաստի այս ամբողջականության հիման վրա թևեր տարածել «ազատ կյանք» կոչվող տիեզերքի վրա: Կցուցադրվի, որ մինչ կապիտալիստական ժամանակակից կյանքի օրինաչափությունները, որոնք վտարում են իմաստը, մահից փախուստի ձև են, իրականում անիմաստ են դարձնում մահ-կյանք երկընտրանքը և աղավաղում այն ամենն, ինչ սուրբ է: Կցուցադրվի նաև, թե ինչպես են այդ օրինաչափությունները կառուցում մահվան և ապոկալիպսիսի հավերժական դարաշրջան՝ անջատելով կյանքը իր բոլոր կախարդական, հետաքրքրաշարժ և բանաստեղծական կողմերից: Թեև այն խորհրդանշական կերպով չի ընկալվում այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են

պոստմոդեռնիզմը, բայց ուտոպիստական ազատ կյանքի տարբերակը, որն ունի բազմաթիվ էկլեկտիկ արտահայտություններ, փորձ կարվի մեկնաբանել որպես համընդհանուր տոնի վիճակ: Կբացահայտվի, որ այս մոտեցումը արտադրության և հասարակության ձև չէ, ինչպես հաճախ քննարկվում է: Խեղաթյուրված հասկացությունների և տեսությունների փոխարեն, որոնք իրականությունը նման տարբերություններով դարձնում են անհասկանալի, կպատկերվի և կցուցադրվի համայնքների ստեղծելիք ազատ կյանքի տարբերակը՝ ամենօրյա և ակնթարթային հիմունքներով:

«Մերձավոր Արևելքը կապիտալիզմի դարաշրջանում» թեման կուսումնասիրվի առանձին՝ իր յուրահատկությամբ: Որո՞նք են Մերձավոր Արևելքին ոտքի պահող հիմնական գործոնները, որոնք կապիտալիզմն անգամ համաշխարհային պատերազմներով չկարողացավ տապալել: Ինչո՞ւ է Մերձավոր Արևելքը դարձել աշխարհի ամենախնդրահարույց և այդ խնդիրների միջից որևէ կերպ դուրս չեկող տարածաշրջան: Ինչ-որ առումով, որպես այսօր տեղի ունեցող «Երրորդ համաշխարհային պատերազմի» հիմնական տարածք և ժամանակ՝ ի՞նչ հնարավորություններ է այն պարունակում: Ինչպե՞ս պետք է իմաստավորենք Մերձավոր Արևելքի դիմադրությունն ընդդեմ կապիտալիստական արդիականության: Արդյո՞ք քաղաքակրթության օրրան հանդիսացող այս տարածքը կարող է վերածվել դրա գերեզմանի և դառնալ ազատ կյանքի ուտոպիաների դարաշրջան անցնելու տարածք: Կարո՞ղ է արդյոք այս տարածքը, որտեղ սրբությունները հիմնակա-

նում պատված են ցեխով, և, հետևաբար, կյանքը կանգ է առնում, վերակառուցել իր սրբությունները և ծնել իմաստալից, հետաքրքրաշարժ, բանաստեղծական և երաժշտական «ազատ ապրելակերպ»: Այս նպատակով այն կկարողանա՞ կոտրել կապիտալիստական արդիության նյութական և գիտական օրինաչափություններն ու կուռքերը և ստեղծել կառավարման ժողովրդավարական ձևեր, շրջակա միջավայրի հետ ինտեգրված արարող խմբեր և իմաստալից մեջլիսներ, որոնք հնարավոր են դարձնում ավելի ազատ կյանքը: Գրքի այս հատվածում նմանատիպ հիմնական հարցերի պատասխանները կփնտրվեն: Մերձավոր Արևելքում կապիտալիզմին իմաստ տված «Արմագեդոնի» պատերազմում քրդերի դերն առանձին գլխում կքննարկվի: Այլ կերպ ասած՝ քրիստոնեությունն ու հուդայականությունն էլ են «Արմագեդոնին» իմաստ տվել, իսկ իսլամն, այս պատերազմի մասին խոսելիս, «ապոկալիպսիս» *(mahşer)* է ասում: Քրդերին ինչ-որ իմաստով կարելի է անվանել «ժողովուրդ, որը ժողովուրդ չէ»: Որովհետև հնարավոր չէ հանդիպել մեկ այլ ժողովրդի, տարբերվող մարդկանց խմբի, ովքեր այդքան փախել են սեփական էական արժեքներից կամ որոնց ստիպել են փախչել: Սակայն չի կարելի ասել, որ քրդերը շատ թույլ ժողովուրդ են, որոնք կռվելու ունակություն չունեն: Իրենց ռազմավարական աշխարհագրական դիրքով և մարդաբանական բնավորությամբ նրանք կազմում են այն մարդկային համայնքը, որն ամենակարող է պատերազմում կռվելու և հաղթելու առումով: Կանանց և երիտասարդների խիզախության ներուժը շատ բարձր է: Բայց նրանք էլ այնքան վախկոտ են դարձել, որ նույնիսկ իրենց ստվերից են վախենում:

ԱՄՆ-ն պետք է ընտրի այս համայնքը՝ որպես իր նոր գլխավոր դաշնակից Մերձավոր Արևելքում: Իսկ Իսրայելը բոլորովին այլ քրդական նախագիծ ունի:

Այս ժողովուրդը, ում իսլամը մոռացության է մատնել և ժխտել, «Արմագեդոնում» հիմնականում կանցնի քրիստոնյաների և հրեաների կողմը՝ ընդդեմ աղանդավորական բոլոր կառույցների: Փաստորեն, ալևիզմի, եզդիականության և այլ աղանդների աշխարհականները, որոնք վաղուց կորցրել են իրենց իմաստը սեփական աղքատների շրջանում, կազմում են այս համայնքի ճնշող մեծամասնությունը: Ավանդական և ժամանակակից իսլամական աղանդների և խմբերի վերնախավի առաջնորդների մի փոքր մասը արագորեն հրաժարվում է արաբ, պարսիկ և թուրք գործընկերների իրենց դերից և նոր վարպետներ փնտրում իմպերիալիստական մետրոպոլիաներում: Սրանք ամենահեշտ լուծարվող մարդիկ ու խմբերն են: Այնուամենայնիվ, մեծ թերություն է քրդերի դերը Մերձավոր Արևելքում հակամարտությունների և քաոսի այս նոր ժամանակաշրջանում տեսնել որպես ոչ այլ ինչ, քան համագործակցություն: Քրդերի ճնշող մեծամասնությունը՝ ժողովուրդը, որն ամենից շատ ծարավ է «ազատ կյանքի» փիլիսոփայությանը, միշտ սպասելու է իմաստալից ռահվիրաների, ովքեր կհագեցնեն այս ծարավը: Թեև այս մեծամասնությունը կկարողանա արագորեն հրաժարվել միջնադարյան կյանքի օրինաչափություններից, որոնք արդեն սպառել են իրենց, այնուամենայնիվ, չի մնա իրեն ներկայացված ազգ-պետականություն օրինաչափության շրջանակներում, որը կապիտալիստական արդիականության հզոր սյունն է և որը ոչ մի ժողովրդի ազատ կյան-

քի հնարավորություն չի տալիս: Կառավարման դեմոկրատական դաշնային ձևը, որը լավագույն հնարավորությունը կտա հասնելու հավասարության և ազատության իդեալներին, քրդերի համար ամենահարմար քաղաքական ձևավորումն է թե՛ պատմական, թե՛ աշխարհագրական, և թե՛ բնութագրական հատկանիշներով: Այս առումով ՔՀՄ-ն (Koma Civakên Kurdistan)[5] դերակատարում և իմաստ ունի՝ որպես լուծման ամենահարմար հնարավորություն թե՛ իր շրջապատում գտնվող կոշտ ազգային-պետական կառույցների հետ խնդիրները լուծելու, և թե՛ նոր ազգ-պետություն նյութական կառուցվածքով անախորժությունների միջավայրում չհայտնվելու առումով: ՔՀՄ-ն առաջատար մոդել է Մերձավոր Արևելքի դեմոկրատական կոնֆեդերացիայի համար: Այն կարևոր է հատկապես բոլոր արաբական, թուրքական, քրդական, հայկական, հունական և հրեական հասարակությունների, իրանական և կովկասյան ծագմամբ համայնքների, բոլոր աղանդների ու կրոնների, ինչպես նաև այն համայնքների համար, որոնք չունեն եվրոպականի վրա հիմնված ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, որոնք ոչնչացվել են Մերձավոր Արևելքի ժողովուրդների խճանկարին պարտադրված կապիտալիստական արդիականության հետևանքով տեղի ունեցած պատերազմներում, ենթարկվել են ցեղասպանության, և որոնց ազատ կյանքի ուտոպիա-

[5] Koma Civakên Kurdistanese (KCK, «Քրդստանի համայնքների միություն», նախկինում՝ Koma Komalên Kurdistan կամ KKK)՝ միջազգային մակարդակով միավորում է բազմաթիվ քրդական կազմակերպությունների: Նպատակն է մեկ հարկի տակ հավաքել Քրդստանի բոլոր կուսակցությունները, կազմակերպությունները, ասոցիացիաները և սոցիալական խմբերը՝ հետևելով 2005 թվականից Աբդուլլահ Օջալանի կողմից հռչակված և մշակված ժողովրդավարական համադաշնության տեսական սկզբունքներին:

ները ոչնչացվել են ճնշումների և չարաշահումների պատճառով: Սա նաև հիմնական ձևն է սրբության, կյանքի և ազատ արտահայտման համար: Եթե Իրաքի քառսից ծնվի դեմոկրատական դաշնային հանրապետություն, ապա նման զարգացումը կարող է նաև առաջատար դեր խաղալ: Կապիտալիստական արդիականության «Երրորդ համաշխարհային պատերազմը» անվերջ է և հղի բազմաթիվ զարգացումներով՝ ամենադրականից մինչև ամենաբացասականը Մերձավոր Արևելքի էական տարածության և ժամանակի հարթության մեջ: Այս պատերազմի ելքը կորոշեն իմաստալից խմբերի նախաձեռնությունն ու ջանքերը: ՔԲԿ-ն այս խմբավորումներից միայն մեկն է, որոնք մշտապես կատարելագործում են իրենց ազատ կյանքի իդեալով, բեռնված իմաստով և հավակնելով լինել պիոներ: Հասկանալի է, որ կապիտալիստական արդիականության պայմաններում ո՛չ ես, ո՛չ մեր ժողովուրդը, որի առաջնորդն եմ ընտրվել, ո՛չ էլ շատ այլ անհատականություններ ու ժողովրդական խմբեր, արդար դատավարություն չեն ստանա: Գրքի վերջին գլխում սրան անդրադարձ կլինի: Ավելի ճիշտ՝ այս պաշտպանությամբ այս հարցը հասկանալի ու ապացուցելի կդառնա: Մենք կարող ենք հաղթահարել մի համակարգ, որը սնվում է հասարակության ներսում և դրսում վարվող մշտական պատերազմներով՝ փարվելով ազատության մեր ուտոպիաներին և ամենուրեք ստեղծելով դիմադրության և արդարության նշանակալից կենտրոններ՝ ընդդեմ ամենուր տիրող չարաշահումների և իշխանության: Մնացած բոլոր ճանապարհները, կարծես, արատավոր շրջանակում

կյանքը վատնելուց բացի, ուրիշ որևէ լուծում և նպատակ չունեն:

Այս ճառը գրում եմ Իմրալի կղզում՝ բացարձակ մեկուսացման պայմաններում: Ես չունեմ հետազոտական հնարավորություններ, և դա չէ այն ճանապարհը, որը կնախընտրեի: Անիմաստ եմ համարում թվարկել մարդկության այն ռահվիրաների անունները և ստեղծագործությունները, որոնք միշտ միմյանց փոխլրացրել են և նաև իմ հիմնական աղբյուրներն են. մտքի և գործի մեծ մարտիկներ, քանի որ ազատ կյանքն անհնար է քանակականացնել: Այս առումով դեմ եմ արդիականության գիտական կառուցվածքին: Ազատ կյանքով ապրելու կամքը չի կարող լինել այնքան ազատատենչ և արդար, որքան իմ մեկուսացման պայմաններում: Այս պաշտպանական ճառն ընկերաբար նվիրում եմ բոլոր նրանց, որոնք հավատում են և գիտեն, թե ինչպես իրականացնել այն:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԵԹՈԴԻ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ

Որպես հայեցակարգ՝ մեթոդը նկարագրում է այն ճանապարհը, սովորությունը և ողջամիտ մոտեցումը, որ ամենակարճ ձևով հանգեցնում են նպատակների հետ կապված արդյունքի: Երբ պարզ է դառնում, թե որ ճանապարհն է ամենաճիշտը և հեշտությամբ կհասցնի թիրախին, մեթոդը հաջողված է: Մեթոդի դրական կողմն այն է, որ այն փորձարկվել է և հաջողված է արդյունք տալու առումով: Երկար փորձարկումներից հետո դրա վճռականությունը անփոխարինելի է համապատասխան ակտիվիստների համար: Այն առաջացնում է հետևորդ-վարպետ հարաբերություններ:

Երբ բոլոր իրադարձությունների ու ըմբռնումների առումով փորձում ենք իմաստավորել, առաջին մեթոդը, որին հանդիպում ենք պատմության խորքում, առասպելաբանական մոտեցումն: Դիցաբանությունը ևս մեթոդ է, նեղ իմաստով՝ ճշմարտությունը բացատրելու մեթոդ: Առասպելաբանության հետևում տիեզերքի ըմբռնում կա: Թեև բնությունը որպես կենդանի և հոգիներով լի գնահատելն այսօր կարող է մանկամտություն թվալ, սակայն, հաշվի առնելով գիտության մակարդակը, հայտնի է դառնում, որ դիցաբանությունը չափազանց սխալ մեթոդ չէ: Մեթոդները, որոնք բնությանը վերաբերվում են որպես մեռած, անշունչ և դինամիզմից զուրկ երևույթի, ավելի շատ իմաստազուրկ են, քան հենց առասպելաբանությունը:

Առասպելաբանական մոտեցումը կյանքի հետ իր կապի առումով միանշանակ բնապահպանական է, ճակատագրից հեռու, ոչ դետերմինիստական և գրկաբաց՝ ազատության համար: Բնության հետ ներդաշնակ կյանքի այս ըմբռնումը մարդկային համայնքներին շատ գունեղ և խանդավառ դարձրեց մինչև մեծ կրոնների դարաշրջանը: Էպոսներով և սրբությամբ հագեցած առասպելները հատկապես նեոլիթյան շրջանի կյանքի հիմնական մտածելակերպն են: Այն, որ առասպելը հակասում է նպատակին, չի նշանակում, որ դրա բովանդակության վերաբերյալ իմաստալից մեկնաբանություններ չեն կարող մշակվել: Լեգենդների (առասպելների) վերաբերյալ կարելի է շատ իմաստալից մեկնաբանություններ անել: Առանց նման մեկնաբանությունների, պատմության վերաբերյալ շատ բան հնարավոր չի լինի հասկանալ: Որպես հիմնական մեթոդ՝ դիցաբանությունը անփոխարինելի նշանակություն ունի մարդկային համայնքները հասկանալու համար, որոնք իրենց ամենաերկար կյանքն անցկացրել են առասպելի տեսքով: Բավականաչափ ապացույցներ կան, որ այսօրվա գիտական մեթոդները, որոնք ներկայացվում են որպես առասպելաբանական մեթոդի ճիշտ հակառակը, մեծ մասամբ ընդամենը դիցաբանություն են:

Առասպելաբանական մեթոդը և դիցաբանական իմաստները, որոնք ամբողջությամբ վարկաբեկվել են դոգմաների մեջ խեղդված միաստվածական կրոնների կողմից, և գիտական մեթոդը, որը հավակնում է աշխատել ճշգրիտ օրենքների հետ՝ որպես դրանց շարունակություն, պետք է վերականգնվեն: Դիցաբանությունները, որոնք առնչվում են ուտոպիաներին, մտքի իմաստն ու ձևն են,

որոնցից մարդկային տեսակը չի կարող հրաժարվել: Մարդու միտքն առանց ուտոպիայի և դիցաբանության (առանց լեգենդի եւ էպոսի) թողնելը նման է մարմինը առանց ջրի թողնելուն: Ավելի լավ է հասկանալ, որ մարդկային միտքը, որը բոլոր կենդանի էակների խելքի հանրագումարն է, չի կարող նվազել վերլուծական մտածելակերպի, որը օգտագործում է միայն մաթեմատիկայի լեզուն: Այս մոտեցումը հակասում է կյանքին: Ինչպես միլիոնավոր խելամիտ էակներ չգիտեն մաթեմատիկա, այնպես էլ մարդկային միտքը, որը դրանց հանրագումարն է, չի կարող դատապարտվել մաթեմատիկայի: Ավելին, մաթեմատիկան՝ շումմերական քաղաքակրթության գյուտը, օգտագործվել է ավելցուկային արտադրյալը հաշվարկելու համար, որը եղել է նրա հիմնական գործառույթը հայտնագործման պահին: Այսօր մարդկային տրամաբանությունը գրեթե վերածվել է հաշվիչի: Այսպիսով, ինչպե՞ս և ինչո՞վ ենք մենք հասկանալու միլիոնավոր կենդանի էակների միտքը, նույնիսկ ենթաատոմային մասնիկների շարժումները և աստղագիտական մեծությունները, որոնք հնարավոր չէ չափել: Հասկանալի է, որ մաթեմատիկայի ուժը բավարար չէ այս միկրո և մակրո տիեզերքները հասկանալու համար: Առնվազն պետք է բաց պահել իմաստավորման նոր մեթոդների դուռը, որպեսզի նախապես չխեղդվենք դոգմաների մեջ:

Աշխույժ ինտուիցիան չի կարելի թերագնահատվել: Կյանքին վերաբերող ամեն ինչ թաքնված է այս ԶԳԱՑՈՒՄՆԵՐԻ մեջ: Չի կարելի ասել, որ մակրո և միկրո տիեզերքները զուրկ են այդ ինտուիցիաներից: Ճշմարտությանը ավելի մոտ տեսակետն այն է, որ այս ինտուի-

ցիաները տիեզերքի հիմնական հատկանիշն են: Հետևաբար, դիցաբանական մեթոդը անարժեք չէ տիեզերքը հասկանալու համար: Թերևս, դա կարող է նպաստել տիեզերքի մեր ըմբռնմանն՝ առնվազն նույնքան, որքան գիտական մեթոդը:

Դիցաբանական ըմբռնումից դոգմատիկ կրոնական ըմբռնմանն անցումը մեծ փուլ է: Այս անցումը սերտորեն կապված է մտավոր դաշտում հիերարխիայի և դասակարգության վրա հիմնված հասարակության մեջ փոխակերպումների արտացոլման հետ: Գերիշխանության և զաղութատիրության փոխհարաբերությունները պահանջում են անառարկելի դոգմաներ: Դոգմաները, որոնք տալիս են տաբու արժեքներ, ինչպիսիք են սրբությունը, Աստծո խոսքը և անձեռնմխելիությունը, կապված են զաղութատիրությունը թաքցնելու, դասակարգային շահերի պաշտպանության, հիերարխիայի և իշխանության օրինականացման հետ: Ինչքան խիստ դատողություն կա ըմբռնման մեջ, այնքան ավելի շատ բռնակալություն և շահագործում է այն թաքցնում: Կրոնական մոտեցումը դիցաբանությունից հետո մարդկության պատմության ամենաազդեցիկ մոտեցումն է: Այն, գուցե, սկսվել է գրավոր պատմությամբ, գուցե, ուղղակի առաջ կամ հետո: Այստեղ պետք է հասկանալ, թե ինչո՞ւ է կրոնական դոգման այդքան անհրաժեշտ: Հասկանալի է, որ այս մոտեցումն ինքնին մեթոդ է: Կրոնական մոտեցման մեջ էական է ըստ ԽՈՍՔԻ գործելը, որը վերագրվում է աստվածություններին, որոնք ենթադրվում են, որ տրանսցենդենտալ են բնությունից և հասարակությունից՝ որպես կյանքի նպատակ և ճշմարտությանը հասնելու ճանապարհ: Այդ խոսքերից շեղվել՝ նշանակում է ապրել՝ դատապարտված լինելով հարկադիր աշխատանքի և ամեն տեսակի ստրկության, իսկ մահից հետո՝ գնալ դժոխք: Հասել ենք մի շեմի, որտեղ դիմակավորված աստվածներ են կառուցվում: Դժվար չէ հասկանալ, որ այդ աստվածը նկարագրում է նաև հասարակությանը հրաման տվող և շահագործող պետին կամ բռնակալին: Չափազանց դիմակավորումը սերտորեն կապված է մարդկային հասկացողությունը խեղաթյուրելու հետ: Այն փաստը, որ բռնակալներն իրենց առաջին հայտնության ժամանակ գալով՝ իրենք իրենց աստված-արքաներ էին անվանում, բավականաչափ բացատրում է այս կետը: Տարածված պատմական իրավիճակ է, որ նրանք հետագայում իրենց իսկ խոսքերն օրինականացնում են և ներկայացնում որպես բացարձակ ճշմարտություն: Ճնշումն ու շահագործումը խորացնելով՝ կրոնական դոգմատիկ մեթոդը դարձավ մարդկային մտածելակերպի գերիշխող ուղին. ավելի ճիշտ՝ այն կառուցվել է որպես սոցիալական իրականություն: Այս մեթոդն ապահովում էր մարդկության ենթարկվելը երկարատև ստրկության՝ աստվածային դիմակներով տիրակալների իշխանության ներքո, որոնք թառամեցնում և խեղդում էին կյանքը:

Կրոնական մեթոդի՝ որպես մտածելակերպի ընդունման միջոցի ամենակարևոր կողմն այն է, որ այն օրինականացնում է ստրկատիրական հպատակությունը, որն առաջացել է մարդկային զանգվածների մեջ հազարամյա կոշտ ավանդույթների հետևանքով և արմատավորել է ֆատալիզմի ըմբռնումը: Շահագործման և դաժանության մեծ պատերազմները հնարավոր դարձան այս մեթոդի

շնորհիվ՝ «Ապրել սուրբ խոսքի և Աստծո հրամանի համաձայն»: Անկասկած, այս մեթոդը մեծ հարմարավետություն է տալիս ղեկավար պաշտոններ զբաղեցնողներին: Հաստատվել է նախիր–հովիվ դիալեկտիկան: Ստրկությունը ներկայացվում էր որպես հասարակությունների զարգացման անփոխարինելի փուլ, և դեռ ավելին՝ բնական իրականությունը գրեթե սառեցված էր հասարակության անփոփոխ ըմբռնմամբ: Բնության և հասարակության շատ պասիվ լինելու և ամեն ինչ ստեղծող ու ամեն ինչի պատճառ հանդիսացող, ղեկավարող և կառավարող տրանսցենդենտալ Աստծո շատ ակտիվ լինելու ըմբռնումը դարձել է անհրաժեշտ դիալեկտիկական համատեքստ: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ վաղ և միջին դարերում մարդկությունը կառավարվել է այս հասկացողությամբ և այս մեթոդով:

Դոգմատիկ մեթոդի ամենաառարկելի կողմն այն է, որ այն մարդկությանը պարտադրում է բնության ըմբռնումը, որը պասիվ է և գործում է միայն արտաքինից՝ գերագույն հրամանատարության հրամանների ներքո՝ կենդանի, ինքնազարգացող բնության փոխարեն: Սրա ամենակարևոր հետևանքը սոցիալական ոլորտի վրա այն է, որ նույն պասիվ կառույցները և արտաքին հովվի կառավարումը շատ բնական են ընկալվում: Այս մեթոդի ազդեցությունը, որն ամենահին, ինչպես նաև տրանսցենդենտալ սուբյեկտիվությունն է, իր գագաթնակետին հասավ միջնադարում: Այժմ օբյեկտիվ աշխարհը համարվում է գրեթե անհասկանալի կամ նույնիսկ անտեսված: Աշխարհը կյանքի ժամանակավոր կանգառ է, իսկ մշտական ու հավերժական իդեալները՝ կյանքի գլխավոր ճանապարհը: Ով ամենից շատ դոգմատիկ և կլիշե բառեր գիտի, համարվում է գիտնական և գտնվում ամենաբարձր մակարդակի վրա: Այս մտածելակերպը, որն ունի հակաառասպելաբանական բնույթ, առաջնորդել է պատմությունը և, հետևաբար, առաջատար դեր է խաղացել կյանքը առավելագույնս սահմանափակելու և այն գերության դատապարտելու գործում:

Կրոնական մեթոդի դրական կողմն այն է, որ այն մեծ առաջընթաց է գրանցում հասարակության մեջ բարոյականության հայեցակարգում: Այս փուլում և այս մեթոդով մեծ տարանջատում տեղի ունեցավ բարի-չար երկընտրանքի մեջ, և կատարվեցին վերջնական բարոյական դատողություններ: Այս մեթոդով գիտակցված հիմնական կետն այն է, որ մարդու միտքը ճկուն է և, հետևաբար, դյուրակուռ: Մարդկանց կենդանական աշխարհից տարբերող այս մտածելակերպը բարոյական զարգացման հիմքն է:

Առանց բարոյականությանը դիմելու հնարավոր չէ ո՛չ սոցիալականացվել, ո՛չ էլ կառավարվել: Մեթոդում բարոյականությունը հասարակության համար անփոխարինելի ձևավորման և կառավարման իրականություն և ընկալում է: Առանց բարոյականության դրական և բացասական բովանդակության քննարկման, նման զարգացումը պետք է անփոխարինելի համարել սոցիալական ընկալման համար: Անկասկած, բարոյականությունը մետաֆիզիկական ընկալում է, բայց դա անվավեր կամ անկարևոր չի դարձնում նրա գոյությունը: Դիցաբանական շրջանի պարզունակ բարոյականության նկատմամբ կրոնական բարոյականության գերազանցության մասին խոսելը

չափազանցություն չէ: Անբարոյական մարդկային հասարակությունը կարող է նշանակել, որ մարդիկ վերջ կդնեն իրենց տեսակին կամ կենսամիջավայրին, ինչպես դինոզավրերը, որոնք անհետացել են, քանի որ նրանք ուտելու խոտ չեն թողել: Դրանք երկուսն էլ նույնն են և, ի վերջո, նշանակում են, որ մարդիկ ընկնում են տեսակների անկայուն իրավիճակում: Փաստորեն, բարոյականության մեծ փլուզման պատճառով այսօր բնապահպանական խնդիրները մարդկությանը հասցրել են աղետի եզրին:

Դոգմատիկ մեթոդը գերակշռում է ոչ միայն հիմնական կրոններում, այլև դասական հունական մտածողության մեջ: Այս մտածողության մեջ դիալեկտիկական մեթոդի ու օբյեկտիվ մոտեցումների տեղը խիստ սահմանափակ է: Գերիշխող մեթոդը Արիստոտելի և Պլատոնի իդեալիզմն էր, որը միջնադարում դոգմատիկ կրոնական մեթոդի ամենաուժեղ հիմքն էր: Այն փաստը, որ Պլատոնը ընդունված է որպես մեծագույն փիլիսոփա և նույնիսկ իդեալիզմի ստեղծող, նրան դարձրել է մարգարեական մոտեցման ֆավորիտը: Նա մարգարեությանն ամենամոտ փիլիսոփան է:

Երեք հիմնական կրոններում էլ մարգարեական ավանդույթը միևնույն ժամանակ լավ կայունացված դոգմատիկ մեթոդի հիմնադիր ուժն է: Բոլոր երեք կրոնների գերակա կողմն այն է, որ նրանք մետաֆիզիկական բարոյականության հիմնադիրներն են: Բարոյականությունը հասնում է իր գագաթնակետին Բուդդայի, Զրադաշտի, Կոնֆուցիոսի և Սոկրատեսի մոտ: Հատկապես զրադաշտականության մեջ բարի-չար երկընտրանքը՝ որպես հիմնական փիլիսոփայություն, նույնացվում է լույս-մութ երկընտրանքի հետ: Մարդկությունը բարոյական մեծ առաջընթաց է գրանցել՝ ի դեմս պատմության մեջ բարձր արժեք ունեցող այս իմաստունների:

«Գիտական մեթոդը» կարևոր դեր է խաղում կապիտալիզմի՝ համաշխարհային համակարգ դառնալու գործում: Ռոջերի և Ֆրենսիս Բեկոնի և Դեկարտի կողմից ստեղծված նոր մեթոդի մեջ սուբյեկտի և օբյեկտի միջև տարբերությունը ուշադրությամբ է կատարվում: Միջնադարի դոգմատիկ մեթոդում օբյեկտի և սուբյեկտի համար քիչ տեղ կա, որտեղ դրանք ստվերանման ֆունկցիա ունեն:

Արևմտյան Եվրոպան, որը ոտքի կանգնեց Վերածննդի հետ, սուբյեկտի և օբյեկտի տեսքով քրիստոնեության բարեփոխմամբ և փիլիսոփայական լուսավորչական հեղափոխությամբ նոր դարաշրջան բացեց: Կյանքում մարդու սուբյեկտիվությունը և աշխարհի օբյեկտիվությունը երկու հիմնարար գործոններ են, որոնք ուշադրության կենտրոնում են: Բարոյականության հետ մեկտեղ իր կարևորությունը կորցնում է նաև Աստծո խոսքի վրա հիմնված դոգմատիկ մեթոդը: Ավելի ճիշտ՝ անցյալի քողարկված արքաների ու դիմակավորված աստվածների փոխարեն մենք մտնում ենք մերկ թագավորների ու դիմակազերծ աստվածների դարաշրջան: Կապիտալիստական շահագործման եղանակը հիմնական ազդակն էր, որը հանգեցրեց այս անցմանը: Շահույթի անվան տակ իրականացվող շահագործումը պահանջում է փոխել հասարակության ընկալումը բոլոր առումներով: Այս անհրաժեշտությունը կամ կարիքն այն հիմնական գործոնն է, որը հանգեցրեց «գիտական մեթոդի» ծննդին: Հետևաբար, մարդկությունն

ու բնությունը կանգնած են մեծ չարաշահումների առաջ: Հասարակության խիղճը (բարոյականությունը), որը չի կարող հեշտությամբ ընդունել այս չարաշահումը, կվերակառուցվի մտածելակերպի մեծ փոփոխության հիման վրա: Ահա թե ինչու «գիտական մեթոդը» մեծ դեր կխաղա՝ որպես հիմնարար ճշմարտության ճանապարհ: Հայտնի է, որ Դեկարտը, ով այս կետում արմատական վերափոխման կարիք էր զգում, տառապում էր թերահավատության մեծ հիվանդությամբ, կասկածում էր ամեն ինչի վրա և արդյունքում ապավինում էր «մտածում եմ, ուրեմն՝ գոյություն ունեմ» դատողությանը: Հայտնի է, որ Բեկոնները մեծ ուշադրություն են դարձրել «օբյեկտիվությանը»: Առաջինը դուռ է բացում անհատի համար՝ ինքնուրույն մտածելու, իսկ երկրորդը՝ «օբյեկտը» տնօրինելու համար այնպես, ինչպես ցանկանում է:

«Օբյեկտիվություն» հասկացությունը, որի վրա հիմնված է գիտական մեթոդը, կարիք ունի ավելի խորը վերահիմաստավորման: Բացի վերլուծական մտքից, ամբողջ կենդանի և ոչ կենդանի բնությունը՝ ներառյալ մարդու մարմինը որպես առարկաների սահմանումը, իրականում առանցքային գործառույթ ունի կապիտալիզմի կողմից բնության և հասարակության նկատմամբ շահագործման և տիրապետման գործում: Դեպի նոր դար ճանապարհ հարթող մտածողության վերափոխմանը հնարավոր չէ հասնել առանց սուբյեկտ-օբյեկտ տարբերակումը խորացնելու և այս տարբերակմանը մեծ լեգիտիմություն տալու:

Թեև սուբյեկտը վերլուծական մտքի ամենալեգիտիմ վավերական գործոնն է, օբյեկտը այն «նյութական»

տարրն է, որի հիման վրա կարելի է բոլոր տեսակի ենթադրություններն անել: Այլ կերպ ասած՝ այն ներկայացնում է «օբյեկտիվություն»: Այս տարբերակման համար մեծ կռիվներ են մղվել: Եկեղեցու և գիտության միջև կռիվը չպետք է դիտարկվի բացառապես որպես «ճշմարտության» մասին հակամարտություն: Այս պայքարի տակ մեծ հասարակական պայքարներ են թաքնված: Ինչ-որ իմաստով այն, ինչ տեղի է ունենում, պայքար է բարոյականությամբ հագեցած հին հասարակության և մերկ կապիտալիստական հասարակության միջև, որը ցանկանում է մերկացնել իր բարոյական ծածկույթը: Հարցը միայն եկեղեցու և գիտության պայքարը չէ: Ընդհանրապես, հակասություն կա պատմության ընթացքում սոցիալական խղճի կողմից պահպանված արժեքների վրա հիմնված և արգելող, դատապարտող ու չարաշահումը որպես մեղք համարող համակարգի և կապիտալիստական նոր սոցիալական նախագծի միջև, որը ցանկանում է հասարակությանը բացել շահագործման և տիրապետության առաջ՝ առանց արգելքներ, մեղքեր կամ անեծքներ ճանաչելու: «Օբյեկտիվ մոտեցումը» այս նախագծի հիմնական հայեցակարգն է:

Չկա որևէ «արժեք», որը «վերլուծական միտքը» չի կարող գործի դնել «օբյեկտիվության» ըմբռնման ներքո: Ոչ միայն մարդկային աշխատանքը, այլև ողջ կենդանի և անշունչ բնությունը կարելի է տնօրինել և յուրացնել: Այն կարող է ենթարկվել փորձաքննության և հետազոտության, և իրավունք է տրվել իրականացնել բոլոր տեսակի շահագործումներ: Բոլորը, բացի էլիտար սուբյեկտներից, կարող են մեխանիկորեն գնահատվել, անխղճորեն գե-

րիշխվել և չարաշահվել: Անհատ-քաղաքացին և ազգ-պետություն հասարակությունը, որոնք կազմակերպված են՝ որպես բնության և հասարակության դեմ հիմնական սուբյեկտներ, «նոր գյուտեր» են, նոր դիմակազերծված աստվածներ, որ ուժ ունեն անելու ամեն տեսակի խենթություններ՝ սկսած ցեղասպանություն կազմակերպելուց, մինչև միջավայրն անմարդաբնակ վիճակի հասցնելը: Հին ժամանակների «լևիաթանը[6]» այժմ լայն տարածում է գտել. թվում է, թե չկա օբյեկտ, որին նա չկարողանա տիրել ու ոչնչացնել: Պետք է լավ հասկանալ, որ օբյեկտիվ մոտեցումը որպես գիտական մեթոդի շատ անմեղ հասկացություն ընկալելը հանգեցնում է մեծ աղետների, շեղումների ու ավելի դաժան ջարդերի, քան միջնադարյան ինկվիզիցիաները: Պետք է ընդգծել, որ օբյեկտիվությունը ամենևին էլ անմեղ գիտական հասկացություն չէ:

Քանի դեռ «գիտական մեթոդը» չի ընկալվել որպես դասակարգային բաժանման ամենամեծ գործիք, սոցիոլոգիայի ներկայիս դիսֆունկցիայի և սնանկության պատճառները չեն կարող բացատրվել: Ես պետք է հստակ ասեմ, որ «օբյեկտիվ գիտական մեթոդը» վճռորոշ դեր ունի «գիտական սոցիալիզմի» սնանկացման գործում, որը համարվում է ամենահաստատակամ հասարակական գիտությունը, և որը ես ժամանակին այդպիսին էի համարում: Գիտական սոցիալիզմի և նրա ածանցյալների վրա հիմնված համակարգերի ներքին քայքայումն ու փլուզումը երկարաժամկետ ներդրումից և սոցիալական համակարգի կառուցումից հետո կամ դրանց ուղղակի փոխա-

[6] Ըստ Աստվածաշնչի ավանդության՝ վիթխարի ծովային հրեշ կամ թռչող հրեշ:

կերպումը պետական կապիտալիզմից մասնավոր կապիտալիզմի բխում էր «գիտական մեթոդից» և դրա «օբյեկտիվացման» մոտեցումից: Պարզապես ուզում եմ նշել, որ երբ հարկ լինի, կմանրամասնեմ այս հարցերը: Այլապես, երբեք չի կարելի կասկածի տակ դնել սոցիալիզմի համար պայքարին մեծ հավատով ու ջանքերով մասնակցողների ազնվությունն ու բարի նպատակները:

Բոլոր գիտական կառույցները, որոնք հիմնարար դեր են վերագրում սուբյեկտ-օբյեկտ տարբերակմանը, շատ են սիրում իրենց անկախությունը: Այնքան են սիրում, որ պնդում են, թե իրենք գործում են ամեն տեսակի սոցիալական արժեքային դատողություններից վեր: Այս պնդումների մեջ է թաքնված, թերևս, գիտության անվան տակ զարգացած ամենամեծ շեղումը: Գուցե, ոչ մի դարաշրջանում գիտության ինտեգրումը գերիշխող համակարգին այսքան ակնհայտ չի եղել, որքան կապիտալիստական ժամանակաշրջանում: Գիտության աշխարհը՝ իր մեթոդից մինչև բովանդակություն և՛ համակարգի ամենամեծ կառուցողական ուժն է, և՛ նրա օրինականությունն ապահովող և պաշտպանող ուժը: Կապիտալիստական դարաշրջանի գիտական մեթոդը և դրա հիման վրա ձևավորված գիտությունները հանդիսանում են ինչպես համակարգի շահավետ գործունեության, այնպես էլ հասարակության բոլոր ներքին և արտաքին օղակներն ընդգրկող պատերազմների, ճգնաժամերի, տառապանքների, սովի և գործազրկության, շրջակա միջավայրի ոչնչացման և բնակչությանը չափից դուրս շատանալու հնարավորություն ընձեռող և ճանապարհ հարթող հիմնական ուժը: «ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺ Է» ասացվածքն այս ճշմար-

տության հպարտ արտահայտությունն է: Միգուցե, հարցնեք, թե ի՞նչն է վատ սրանում: Համարվում է, որ համակարգը, անմեղության ու օրինականության զրահը հագած, ամենաբնական վերաբերմունքն է դրսևորել իր՝ հեշտությամբ արտահայտած այս դատողությամբ: Կապիտալիստական արդիականությունն այսօր ցույց է տալիս անկայունության նշաններ՝ իր բոլոր պարամետրերով, և դրա ամենամեծ մասնաբաժինը պատկանում է «գիտական մեթոդին», որի վրա այն հիմնված է: Հետևաբար, կենսական նշանակություն ունի համակարգային քննադատության զարգացումն այն մեթոդով, որի վրա այն հիմնված է: Համակարգի բոլոր քննադատությունների, այդ թվում՝ սոցիալիստական քննադատության հիմնարար թույլ կողմն այն է, որ նրանք օգտագործում են նույն մեթոդը, որի վրա հիմնված է համակարգը, և որը ստիպում է նրան գոյություն ունենալ: Մինչդեռ, այդ մեթոդի հիման վրա կառուցված սոցիալական իրականությունը չի կարող խուսափել նմանատիպ արդյունքների հանդիպելուց, որքան էլ այն քննադատվի նույն մեթոդով: Լավ հայտնի է, որ նրանք, ովքեր քայլում են նախկինում գծված ճանապարհներով, այլ բան չեն կարող անել, քան հասնել այն գյուղերն ու քաղաքները, ուր տանում են այդ ճանապարհները: Ահա թե ինչ է կատարվում համակարգին դեմ լինողների, այդ թվում՝ գիտական սոցիալիզմի հետ:

Մեծ խնամքով եմ վերաբերվում իմ գնահատականներին՝ հիմնվելով սուբյեկտի և օբյեկտի տարբերության դասակարգային և սոցիալական բնույթի վրա: Որովհետև անմեղ թվացող այս երկու հասկացություններն անկայուն դարձած արդիության գոյաբանական պատճառներն են:

Ինչպես ենթադրվում է, այս հասկացությունները որևէ առնչություն չունեն գիտական նվաճումների հետ կամ զերծ չեն հարաբերական լինելուց: Համենայնդեպս, ինչպես երևում է միջնադարի դոգմատիկ մեթոդից, նրանք բնության և օբյեկտի մոլուցքային ըմբռնում ունեն: Սուբյեկտի և առարկայի միջև հստակ տարբերակում դնելու միջոցով կյանքը հասկանալու փորձը մարդկային կյանքն ավելի հետամնաց ու թույլ է դարձնում և շատ ավելի նյութական անհանգստություն պատճառում, քան միջնադարում: Դոգմատիկ մեթոդի արդյունքում անշունչ մնացած և ազատությունից զրկված մարդկային կյանքը կապիտալիստական արդիականության սուբյեկտ-օբյեկտ տարբերակման պատճառով մասնատվում է: Կյանքի բոլոր ոլորտներում խորը ճեղքվածքներ են առաջանում: Գիտական արժեքները սոցիալական ամբողջականությունը չեն համարում որպես ամբողջություն, այլ վերլուծում են այն՝ բաժանելով մինչև իսկ մանր բջիջների: Այս իրավիճակը հանգեցնում է նրան, որ հասարակական կյանքի ամբողջականությունն ու անբաժանելիությունը ժամանակի և տարածության հետ կապված անտեսվում են:Այսօրվա «ճնշված կյանքից» ավելի վատ բան չի կարելի պատկերացնել, քանի որ կյանքի ողբերգությունը անջատված է իր էությունից և նրա տարածական ու ժամանակային հենարաններից: Մեզ ամենավատ ճակատագիրն է սպասվում: Սա սոցիալական քաղցկեղի այլաբանական մոտեցում չէ, այլ կյանքի ամենաիմաստալից համակարգային մեկնաբանությունը:

Այս հարցը, որին պետք է ինտենսիվ ուշադրություն դարձնել, կարող է միայն սահմանափակ գնահատման

արժանանալ պաշտպանական ճառի շրջանակներում: Իմ քննադատությունները չեն նշանակում, որ ես նոր մեթոդ եմ առաջարկում: Բայց և այնպես, չի կարելի եզրակացնել, որ ես խորհուրդ եմ տալիս լիակատար անմեթոդություն: Ես քաջ ծանոթ եմ ոչ միայն մարդկային, այլև կենդանի և անշունչ բնական կյանքին առնչվող ուղիներին, մեթոդներին և օրենքներին: Ես կարևորում եմ ճանապարհն ու մեթոդը: Սակայն պետք է նաև ընդգծեմ, որ թեև մեթոդի և իրավունքի ըմբռնումը միշտ կրում է դետերմինիստական էություն, դրա պնդումն ու մշտականությունը վտանգ է պարունակում, որ կարող է հանգեցնել զարգացման և ազատության ժխտման: Չեմ կարծում, որ կան տիեզերքներ առանց մեթոդի և օրենքի: Բայց ես չեմ հավատում, որ պետք է հիմք ընդունել Դեկարտի մեխանիզմը, որը տիեզերքին վերաբերվում է այնպես, կարծես այն ունի միայն մաթեմատիկական կարգ: Ես խորը կասկածներ ունեմ, որ մաթեմատիկայի և իրավունքի վրա հիմնված տրամաբանությունը հիվանդ է: Մեծ նմանություն եմ տեսնում շումմերական քահանաների մաթեմատիկայի ու օրենքների գյուտարարների և գիտական մտածելակերպի հիմնադիրների միջև: Ես կարծում եմ, որ նրանք երկուսն էլ ներկայացնում են նույն քաղաքակրթությունը:

Հակամեթոդ լինելը չի նշանակում ամբողջությամբ ժխտել մեթոդը կամ փնտրել այլընտրանքային մեթոդ: Հարկ է նշել, որ ազատ կյանքի տարբերակին ավելի մոտ մեկնաբանության հնարավորությունների համար բաց լինելն ավելի բարձր արժեք ունի: Եթե նպատակը կյանքի իմաստին հասնելն է, ապա մեթոդը պետք է միջնորդի դրան: Արդյունաբերական մեծ արտադրությունն ու մեծ

պետությունը մարդկությանը ավելի շատ պատերազմ ու ավերածություն են բերել, քան երջանկություն: Երբ արտադրությունն ու հզորությունը միավորվում են, իմաստն ավելի է հեռանում: Խնայողություններ ունեցողները միշտ նրանք են, ովքեր կյանքի հանդեպ ամենամեծ անկարողությունն են ցուցաբերում: Խնայողությունների հանդեպ հասարակության մեջ միշտ կասկածանք կա: Մեթոդի խնդրից ազատվելը կամ դա հաղթահարելը խորը արմատներ ունի: Այն պահանջում է հաշտվել դարաշրջանի և քաղաքակրթության հետ, որում մենք ապրում ենք: Դրա վառ օրինակների ենք հանդիպում պատմական ժամանակներում: Դեպի ազատ կյանք ելք որոնելն ապարդյուն ճիգ է առանց մեթոդների և գիտական կարգապահության արմատական քննադատության, որոնք իրենց հետքն են թողնում կապիտալիզմի, նրա բոլոր ժամանակակից ինստիտուտների և օրինաչափությունների վրա: Ես մտադիր չեմ նպաստել արդիականություն-պոստմոդեռնություն երկընտրանքի առաջացմանը: Թեև ես հարգում եմ այս հարցում բազմաթիվ մոտեցումներ, սակայն պետք է նշեմ, որ դեռևս տարածված կարծիք կա, որ խնդրի էությունն անտեսվում է: Պոստմոդեռնությունը համարվում է նաև նոր քողերի ներքո արդիականության շարունակություն:

Ես պետք է իմ սեփական մեկնաբանությունը ներկայացնեմ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ հասկացությունը: Այլընտրանքային մեթոդ փնտրելու փոխարեն ելք է որոնվում թյուր պատկերացումներով ծանրաբեռնված և ազատության արժեքից հեռու կյանքի ծանր խնդիրներից: Անկասկած, մարդկային հասարակության մեջ միշտ եղել է ճշմարտության որոնում: Այս որոնումներին ի պատաս-

խան՝ ի հայտ են եկել բազմաթիվ տարբերակներ՝ դիցաբանություններից մինչև կրոններ, փիլիսոփայությունից մինչև այսօրվա գիտություններ: Այս տարբերակներից դուրս կյանքն ապրելն անհնար է, և չի կարելի հերքել հեգնանքը, որ բազմաթիվ խնդիրներ առաջանում են հենց այս տարբերակներից: Այսինքն՝ ոչ կյանք կա առանց դրա, ոչ էլ երկընտրանք: Բայց արդիականությունը, որում մենք ապրում ենք, ունի յուրահատուկ տարբերություն: Այս արդիականությունը շատ ոլորտներում հասել է անկայունության սահմաններին: Եթե շատ արագ թվարկենք՝ գերաճող բնակչությունը, ռեսուրսների սպառումը, շրջակա միջավայրի ոչնչացումը, առանց սահմանների աճող սոցիալական ճեղքերը, լուծարված բարոյական կապերը, կյանքի բաժանումը տարածությունից և ժամանակից, մեծ սթրեսի տակ գտնվելու պատճառով հմայքն ու պոեզիան կորցրած կյանքը, միջուկային զենքի կուտակումները, որոնք աշխարհն անապատի կվերածեն, պատերազմի նոր տեսակները, որոնք երբեք չեն ավարտվում և շրջապատում են ամբողջ հասարակությանը, իսկական ապոկալիպսիս են առաջացնում: Այն, որ մենք հասել ենք այս փուլին, ինքնին ցույց է տալիս, որ մեր ճշմարտության ռեժիմները սնանկ են: Չեմ ուզում անհույս պատկեր ներկայացնել, բայց մենք չենք կարող լռել ու չգոռալ մեր առջև և մեր ներսում կյանքի կորստի համար: Հուսահատ չլինենք, արցունքներով չհեղեղվենք, սակայն սրան լուծում է պետք:

Ճշմարտության մեր որոնումը ապարդյուն ջանք է՞ր, թե՞ մենք անցնում էինք մութ ուժերի դարաշրջանով: Որտե՞ղ և ե՞րբ են թույլ տրվել հիմնական սխալները: Որտե՞ղ և ե՞րբ են առաջացել մոլուցքները:

Համոզված եմ, որ կապիտալիստական արդիականությունն իր ուժը ստանում է գերակշռող կեղծ սոցիալական կառույցներից: Չի կարելի հերքել, որ սրա դեմ մեծ պայքարներ են տարվել: Այն, ինչ տեղի է ունենում համակարգերի հետ, որոնք պնդում են, որ հաջողակ են, նույնպես ակնհայտ է: Այդ դեպքում, արդյո՞ք սա վերջին և հավերժական աշխարհն է, որում մենք ապրում ենք, ինչպես միշտ պնդում է համակարգը: Մի՞թե այլ աշխարհ հնարավոր չէ: Գիտակցում եմ, որ հարցերս կրկնվում են: Այնուամենայնիվ, մենք չպետք է թերագնահատենք բազմաթիվ երևույթների խորաթափանցությունը՝ սկսած մեթոդաբանական սխալներից մինչև գիտական առարկաների սխալներ, իշխանության և տնտեսության մեկնաբանություններից մինչև օրենքն ու գեղագիտությունը կարգավորող գերիշխող ըմբռնումներն ու ինստիտուցիոնալացումները: Այս առումով ես իմ մեջ տեսնում եմ ուժը, որպեսզի փորձարկեմ ասածս: Սա նաև համարում եմ ազատության արժեքների հանդեպ վճարվելիք պարտք և կատարվող պարտականություն:

Որպես թեմայի ներածական նախադասություն՝ պետք է նշեմ, որ թուլացել և խեղաթյուրվել է այնպիսի բաժանումների իմաստը, ինչպիսիք են սուբյեկտիվ-օբյեկտիվ, իդեալիստական-մատերիալիստական, դիալեկտիկական-մետաֆիզիկական, փիլիսոփայական-գիտական, առասպելաբանական-կրոնական բաժանումները, որոնք մարդկային մտքի վրա գերիշխող հիմնական օրինաչափություններն են: Այս երկընտրանքների խորացումը հիմնական մեթոդի սխալների հետևանք է, որը հանգեցրեց կապիտալիստական արդիականությանը: Քաղաքակր-

թության պատմության ընթացքում մտքերի և համոզմունքների այս ուղղորդված զարգացումը միշտ աջակցվել է իշխանության և շահագործման մեջ գտնվողների կողմից, և այդ երկընտրանքների խորացումը, որոնք իրենց համակարգերի պահպանման գործում օրինականության հիմնական գործիքի դերն են խաղում, հաստատվել է և իր գագաթնակետին հասել կապիտալիզմում: Այս երկընտրանքները որպես վերացական պատմություն մեկնաբանելը հիմնականում ի շահ իշխանության և շահագործման գերիշխող համակարգերի է: Եթե մարդկային միտքը չպայքարեր այս երկընտրանքների դեմ, ապա պատմության մեջ ոչ մի իշխանություն և շահագործման համակարգ այդքան արդյունավետ չէր լինի: Այս երկընտրանքների շուրջ շարունակվող մտավոր պատերազմները հանգեցնում են ավելի մեծ ուժի և շահագործման ձգտման՝ գրեթե ցանկության պես: Ճշմարտություն որոնողներն այս երկընտրանքներում իրենց հաջողությանը համաչափ տեղ են ունեցել իշխանության կողքին և շահագործման կենտրոններում: «Ճշմարտությունը ուժ է, ուժը՝ ճշմարտություն» ասացվածքը մեծ վավերականություն է ձեռք բերել: Այստեղ ճշմարտության ռեժիմը քաղաքական շահագործման ռեժիմի ամենաուժեղ դաշնակիցն է: Այս դաշինքի հետևանքն ավելի շատ կեղեքումն ու չարաշահումն էր, իսկ վերջինի հետևանքը՝ ազատ ու իմաստալից կյանքի կորուստը:

Հետևաբար, մեթոդական առումով առաջին լուրջ բանը, որ պետք է անենք, ճշմարտության այս ռեժիմից հրաժարվելն է: Փաստորեն, բացասական դիրքորոշում է պահանջվում՝ համակարգի ճշմարտության ռեժիմին բացասաբար վերաբերվել բոլոր ճակատներում: Այստեղ չոր ճակատի մասին չեմ խոսում, հայտարարում եմ, որ պետք է հակադիր դիրքորոշում որդեգրել՝ լուծարելով համակարգի ճշմարտության ռեժիմը: Ոչ միայն ուժային ցանցերի, այլ նաև շահագործման կենտրոնների դեմ իմաստալից դիմադրության դրսևորման դեպքում և միասնական ջանքերի գործադրմամբ միայն համակարգը թակարդում կհայտնվի և կսկսի քանդվել: Բոլոր սոցիալական կառույցները մենթալիտետի արդյունք են: Հակառակ ասվածի՝ ձեռքերն ու ոտքերը հասարակություն չեն կառուցում: Եթե այդպես լիներ, ապա աշխարհը մեր առջև բոլորովին այլ կլիներ: Պատմության բոլոր կարևոր իրադարձությունները, զարգացման գործընթացներն ու կառույցները արդյունավետ մտածելակերպի և կամքի գործ են: Մարքսիստական մեթոդի ամենամեծ սխալներից մեկն այն է, որ այն ակնկալում է սոցիալական նոր կառուցում ամենօրյա ճնշումների և չարաշահումների տակ գտնվող պրոլետարներից՝ հեղափոխությունը մտավոր ոլորտների վրա չկենտրոնացնելով: Մարքսիստները չհասկացան, որ պրոլետարը վերանվաճված ստրուկ է և ընկել է «ազատ աշխատողի» մոլորության մեջ: Այս սխալի հետևանքները մյուսների հետ միասին ակնհայտ են:

Այդ դեպքում ինչպիսի՞ն պետք է լինի մտածելակերպը, որը մենք պետք է ձեռք բերենք՝ իմաստավորելով մարդկության գիտական նվաճումները:

Այս հարցին ավելի հստակ պատասխանելու համար մենք պետք է ավելի խորությամբ վերծանենք երկու մտավոր դիրքորոշումները, որոնք բխում են սուբյեկտիվությու-

նից և օբյեկտիվությունից, բայց ի վերջո հանգեցնում են նույն բանին:

Նախ, ինչպես հաճախ պնդում են, օբյեկտիվությունը բնության և հասարակության օրենքների բառացի արտահայտությունը չէ: Եթե խորը ուսումնասիրվի, ապա պարզ կդառնա, որ օբյեկտիվ օրինականությունը «Աստծո խոսք» հին արտահայտության ժամանակակից ձևն է: Այս օբյեկտիվության մեջ միշտ հնչում է բնությանն ու հասարակությանը գերազանցող ուժերի ձայնը: Եթե այն ավելի մանրամասն ուսումնասիրվի, պարզ կդառնա, որ այդ ձայնը ծագում է կովարարի և բռնարարի գերակայությունից: Օբյեկտիվ միտքը և նրա լսած հնչյունների համակարգը սերտ կապեր ունեն քաղաքակրթական համակարգերի հետ: Նրանք վերապատրաստվել են այս համակարգերի միջոցով և նրանց ականջներին քաջ ծանոթ է այս ամենը: Նույնիսկ եթե օբյեկտներից նոր տեղեկություններ են արդյունահանվում, դրանք ակնթարթորեն համակարգում իրենց տեղն են զբաղեցնում: Կարևոր է լավ տեսնել, որ յուրաքանչյուր նոր տեխնիկական գյուտարար հազար ու մի փողկապներով համակարգին է կապվում կա՛մ դրանից առաջ, կա՛մ դրանից հետո: Եթե նրանք հակառակը պնդեն, ապա կենթարկվեն համակարգի աստվածների զայրույթին, ինչպես տեսնում ենք պատմական օրինակներում՝ Ադամից մինչև Աբրահամ, Մանիից մինչև Հալաջը Մանսուր, Սուրբ Պողոսից մինչև Ջորդանո Բրունո: Երբ օբյեկտիվ մոտեցում ունեցողները մոտ են մնում ճշմարտությանը և արդարությանը, բախվում են հազար ու մի թշնամիների: Օբյեկտիվ լինելը շատ արժեքավոր է, եթե դա իսկապես այն է, ինչ տեսնում է.ընկալումը, սրտի

աչքը: Երբ այն կապված է ազատ կյանքի արժեքի հետ, նաև հանգեցնում է իսկական իմաստության: Բայց դրա համար անհրաժեշտ է ռիսկի դիմել և Հալաջը Մանսուրի ու Ջորդանո Բրունոյի նման մտքի մարտիկ լինել:

Պետք է նշել, որ գիտության օրենքների առումով օբյեկտիվությունից կարելի է երկկողմանի եզրակացություններ անել: Իմանալը, թե դրանցից որն է ստեղծված գերիշխող համակարգի կողմից, իսկ որը իրականության արտացոլում, մեծ ջանք ու դիմադրություն է պահանջում: Եթե օբյեկտիվ մտածելակերպը, որն ավելի շատ պատկանում է վերլուծական մտածողությանը, փոխկապակցված չլինի հուզական բանականությունից բխող ակնթարթային ինտուիտիվ մտքերի հետ, այն պատմության մեջ երկրորդ դինոզավրի դեր կխաղա: Ատոմային ռումբը ծնած հրեշը հին լևիաթանի նոր տարբերակն է՝ համալրված կապիտալիստական արդիականության վերլուծական մտածողության կառուցվածքով: Հենց այս նոր տարբերակն է պատասխանատու մեր նշած բացասական պատկերի համար: Երբ մանրակրկիտ ուսումնասիրենք ազգ-պետության տեսքով այս չդիմակավորված նոր աստծուն, ավելի մոտիկից կտեսնենք, թե ինչի է ընդունակ օբյեկտիվ վերլուծական միտքը:

Սուբյեկտիվությունը, որը գտնվում է օբյեկտիվության հակառակ բևեռում, պնդում է, որ ճշմարտությանը կարելի է հասնել խորաթափանցության և անառարկայական շահարկումների միջոցով: Այս սուբյեկտիվությունը պլատոնիզմի մի ձևն է: Մենակ մնալով՝ սխալի և մոլուցքի մեջ ընկնելու միտումը, ինչպիսին է օբյեկտիվությունը, անմիջապես բացահայտվում է. Ճշմարտությունը այնքան

է, որքան զգացվում է: Ինչ-որ առումով սա հասնում է մինչև էքզիստենցիալիզմի: Նա մարդուն համարում է իր ստեղծագործությունը: Թեև նրա անունով ստեղծվել են բազմաթիվ մտքի դպրոցներ, սակայն այն օբյեկտիվության պես զերծ չի մնում համակարգում իր տեղն ունենալուց: Նրա անկումը դեպի «սուբյեկտիվիզմ» (օբյեկտի ժխտողականություն) բնության և հասարակության ըմբռնման մեջ նրան ստիպում է դառնալ անհատականության ուժեղ կողմնակից: Այն ըմբռնումը, որը արդի անհատին դարձնում է էգոիստ, սերտորեն կապված է սուբյեկտիվիզմի հետ: Այն, որ դա առողջ «ես»-ի փոխարեն հանգեցնում է եսասիրության, վերագրվում է հիմնական շարժառիթին, ինչը տանում է դեպի սպառողական հասարակություն:

Սուբյեկտիվությունը պատասխանատու է նաև «որքան շատ «ես», այնքան ավելի ճշմարտություն» մոլուցքի համար: Կապիտալիստական համակարգը շատ բան է պարտական այս մտածելակերպին: Արվեստի և հատկապես գրականության ասպարեզում արտացոլված այս մտածելակերպը հանգեցրել է վիրտուալ աշխարհի ստեղծմանը: Արվեստի արդյունաբերության միջոցով ազդելով ողջ հասարակության վրա՝ այն համակարգին ապահովում է անհրաժեշտ շերտավոր լեգիտիմություն: Հասարակությունը ակնթարթորեն ոմբակոծվում է վիրտուալ աշխարհով և բախվում անընդհատ ինքնամտածողության հնարավորությունը կորցնելուն:

Իրականությունը վերածվում է սիմուլյացիայի (պատճենման) աշխարհի: Բնօրինակի և պատճենի տարբերությունը դառնում է անիմաստ:

Սուբյեկտիվության՝ որպես խորաթափանցության դրական կողմն այն է, որ այն սերտորեն կապված է զգացմունքային մտքի հետ: Զգացմունքների և ինտուիցիայի միջոցով ուսումնասիրելը խորաթափանցության ուժ է:

Սուֆիզմի և մերձավորարևելյան իմաստության մեջ փորձ է արվել խորաթափանցության մեթոդի միջոցով ընկալել բնության և հասարակության միասնությունը, և այս առումով մեծ առաջընթաց է գրանցվել: Այն այսօր էլ կարող է գործել որպես հզոր ռեսուրս: Արևմտյան օբյեկտիվիզմի դեմ արևելյան սուբյեկտիվիզմը գերակա դիրք ունի բնության և հասարակության նկատմամբ բարոյական մոտեցման առումով: Սուբյեկտիվիզմը, ինչպես օբյեկտիվիզմը, հաճախակի իրեն որպես Աստծո ձայն արտացոլելու հիվանդություն ունի: Այս առումով երկուսը միավորվում են: Ներքին և տրանսցենդենտալ աստվածային բնության և հասարակության մոտեցումները չեն կարող զերծ մնալ համակարգերի դիմակավորված և դիմակազերծ աստվածներին ծառայող մերկ թագավորությունների գործիքների վերածվելուց և դրանց ինտեգրվելուց:

Մեր օրերում, ավելի ճիշտ՝ կապիտալիստական արդիականության մեջ, օբյեկտիվիզմն իր ամուր տեղն ունի պոզիտիվիստական դպրոցներում և համալսարաններում, իսկ սուբյեկտիվիզմը բոլոր տեսակի սպիրիտուալիստական և կրոնական հաստատություններում, և նրանք համակարգին երկու ձևով լեգիտիմություն են տալիս: Ճշմարտության մեթոդ կամ ռեժիմ լինելու փոխարեն նրանք համակարգի քսանյութի դեր են խաղում: Որպես իշխանության և շահագործման կաղրեր և ինստիտուտներ լեգիտիմացնող՝ նրանք ունեն նույնքան ֆունկցիոնալություն, որքան ուժի և շահագործման մերկ ինստիտուտ-

ները: Կրկին հանդիպում ենք համակարգային ուժերի, որոնք ինտեգրվում են «ուժը ճշմարտություն է» և «գիտությունը ուժ է» ասացվածքների հետ: Ճշմարտության որոնումը կապիտալ-գիտություն-քաղաքականություն եռանկյունու մեջ մարմնավորված խաղի անվանումն է, որը կարող ենք համարել նաև «ընկերություն»: Այս խաղից դուրս ճշմարտության յուրաքանչյուր որոնում կա՛մ համակարգի թշնամին է ու ոչնչացվում է, կա՛մ էլ փորձ է արվում կլանել ու տարրալուծել: Մենք շրջապատված ենք նյութական քաղաքակրթությամբ, որը՝ իմաստի մեծ կորստի պայմաններում, հասել է իր ամենաառաջադեմ փուլին: Ինչպե՞ս հասնել կապիտալ-գիտություն-քաղաքական իշխանություն շրջանակից ազատվելուն: Այս հարցին, որին ձգտել են պատասխանել ազատության փիլիսոփաները՝ Նիցշեից մինչև Միշել Ֆուկո, հեշտությամբ կարելի է պատասխանել: Պետք է հասկանալ այս փիլիսոփաներին, ովքեր՝ ի դեմս արդիականության, հասել են «ամուր հասարակության» և «մարդու մահվան» դատողություններին: Մահվան ճամբարները, ատոմային ռումբերը, էթնիկ զտումների պատերազմները, շրջակա միջավայրի ոչնչացումը, զանգվածային գործազրկությունը, կյանքի ծայրահեղ ճնշումը, քաղցկեղի աճը և ՁԻԱՀ-ի նման հիվանդությունները ոչ միայն հաստատում են այս դատողությունները, այլև հակաճշմարտությունների որոնումը դարձնում են այնքան հրատապ և անհրաժեշտ:

Պետք է ևս մեկ անգամ փաստեմ, որ գիտական սոցիալիզմը, սոցիալ-դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումները, որոնք համարվում են ընդդիմադիր հիմնական տեսություններ, վաղուց արդեն իրենց

տեղն են հաստատել և իրենց դերը կատարել՝ որպես արդիականության աղանդներ: Հասկանալի է նաև, որ շատ հետմոդեռնիստական հետապնդումներ քողարկված մոդեռնիստական մտքի շարժումներ են:

Գազաթնակետին գտնվող համակարգերը սկսում են քանդվել եւ անկում ապրել:

1970-ականները ներկայացնում են այն ժամանակաշրջանը, երբ կապիտալիստական արդիականությունը սկսեց անկում ապրել: Այս շրջանը նաև այն շրջանն է, երբ վարկաբեկումն ու քայքայումը դարձան մեթոդի խնդիր: Այս ժամանակաշրջանի հետ է կապված էկոլոգիական մտքի, ֆեմինիստական շարժումների և էթնոմշակութային շարժումների առաջացումը: Գիտական մեթոդի քայքայումը բացահայտեց այլ աշխարհների գոյությունը և ազատ մեկնաբանության արժեքը: Շատ կարևոր է այս ժամանակաշրջանին, որը կարող ենք նաև մեկնաբանել որպես քառսային, դիմավորել ընկալման հարստությամբ և տարբեր մտածելակերպի խմբերին տեսնել իրենց կոնկրետության մեջ՝ որպես դիմադրության կիզակետ իշխանության յուրաքանչյուր օղակում:

Վճռականությունը, որ պատմական ժամանակաշրջանը արդյունավետ է նոր մեթոդների և ճշմարտության կառուցման առումով, մեծացնում է համայնքային մակարդակում հասարակությանը վերակառուցելու հնարավորությունը: Կառուցված սոցիալական ինստիտուտներում ազատության և հավասարության ուտոպիաների գիտակցումը օրվա գործնական խնդիրներից է: Այն, ինչ պահանջվում է, անցած ճանապարհի գիտական արժեքն ու ազատության կամքի ուժն է: Խոսքն այն ժամանակաշր-

ջանի մասին է, երբ ճշմարտության սերը մոտեցավ ազատ կյանքին: Մեր կարգախոսն է՝ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐ Է, ՍԵՐՆ՝ ԱԶԱՏ ԿՅԱՆՔ:

Հետևաբար, առանց սիրով ազատ կյանք վարելու՝ թե՛ որպես ճշմարտության մեթոդ, և թե՛ ռեժիմ, չենք կարող ո՛չ անհրաժեշտ գիտելիքին հասնել, ո՛չ էլ կառուցել նոր նախադրյալներ և մեր սոցիալական աշխարհը: Եկեք ավելի մանրամասն ուսումնասիրենք տեղեկատվությունը և առաջամարտիկ կառույցները՝ մեր ենթադրությունների լույսի ներքո:

Եկեք մեր ուսումնասիրությունը սկսենք՝ մերժելով Բեկոնի և Դեկարտի նախադրյալները: Սուբյեկտ-օբյեկտ և հոգի-մարմին երկատվածությունը մերժելուց հետո մարդուն հիմք ընդունելը կարող է ամեն առումով ավելի տեղին սկիզբ լինել: Այստեղ մարդակենտրոն աշխարհի մասին չենք խոսում, ոչ էլ հումանիստական մոտեցման մասին: Գործ ունենք մարդկանց մեջ կենտրոնացած իրողությունների ամբողջության հետ.

1- Ատոմները, որոնք նյութի կառուցման հիմնաքարերն են, մարդկանց մեջ ունեն ամենահարուստ գոյությունն ու կազմը՝ թե՛ քանակով, թե՛ դասավորությամբ:
2- Մարդիկ առավելություն ունեն ներկայացնելու կենսաբանական աշխարհի բոլոր բուսական և կենդանական կառուցվածքները:
3- Իրականացրել է սոցիալական կյանքի ամենաառաջադեմ ձևերը:
4- Այն ներկայացնում է մտածելակերպի շատ ճկուն և ազատ աշխարհ:

5- Մետաֆիզիկան կարող է գոյատևել:

Հասկանալի է, որ այս միահյուսված հատկանիշներով ապրող մարդը գիտելիքի անզուգական աղբյուր է: Այս աղբյուրն ամբողջությամբ հասկանալը նույնական է տիեզերքը հասկանալուն: Առնվազն հասկանալու համար ճիշտ ելակետ է:

Առաջին հերթին, ատոմների՝ որպես նյութի, գոյացությունների և կյանքի միջև կապը մարդկանց մեջ կարելի է լավագույնս բացահայտել: Կարելի է ինչ-որ իմաստով մարդուն պատկերացնել որպես կենդանի նյութի դասավորություն, որը մտածում է: Անկասկած, այս հայտնաբերման մեջ մարդը չի համարվում միայն նյութի հանրագումարից բաղկացած, և նյութը չի դիտվում որպես կենդանի լինելու զգացողություն չունեցող կառուցվածք: Յուրովի կենդանի զգացողություն ունեցող նյութը դրա հանրագումարին գերազանցող մարդկային իրականության հետ կապելն իմաստային բարդ խնդիր է: Այս ընկալման մեջ պետք է փնտրել մետաֆիզիկայի աղբյուրը: Նման ընկալման մեջ մեր կենտրոնացումը անսահմանափակ ճկուն է և կարող է հաղթահարել նյութ-իմաստ երկընտրանքը: Թերևս, կենդանի և անշունչ ամեն ինչի նպատակը այս երկընտրանքի հաղթահարումն է: Նյութի նպատակը իմաստավորվելն է, իսկ իմաստի նպատակը՝ նյութին գերազանցելը: Այս երկընտրանքի մեջ, գուցե, հնարավոր լինի գտնել սիրո առաջին շունչը: Թերևս, «հրել-քաշելու» սկզբունքն ինքնին փոխակերպվել է նյութ-իմաստ սկզբունքի: Երբ ասվում է՝ «Սերը տիեզերքի հիմքում է», գուցե, հենց այս երկընտրանքներն է պետք նկատի ունենալ: Մարդկանց մեջ այս սերը, կարծես, ստեղծել է իր ա-

մենաուժեղ հիմքը: Ես նկատի ունեմ հետևյալը. մարդկանց մեջ նյութի ուսումնասիրությունը ինձ թվում է ճշմարտությանը ամենամոտ մեթոդը: Անհնար է թվում արդիականության սարսափելի մեկուսացած լաբորատորիաներում հասնել նյութի՝ ճշմարտությանն ավելի մոտ մեկնաբանությանը: Ավելին, քվանտային ֆիզիկայում դիտարկվողի և դիտորդի հարաբերությունները երբեք թույլ չեն տալիս ճշգրիտ չափումներ կատարել: Լաբորատոր պայմաններում ինչպես դիտորդը փոխում է նյութը, այնպես էլ դիտարկվողը կարող է ազատվել դիտորդից: Ուստի, ճիշտ ընկալումը մարդկանց մոտ հնարավոր է միայն ներհայեցման միջոցով: Ավելին, մարդուց ավելի գրագետ լաբորատորիա չի կարելի պատկերացնել: Դեմոկրիտեսը ոչ միայն կարողացավ այս մեթոդով հայտնաբերել ատոմը, այլև վաղուց որոշել էր ճիշտ մեթոդը: Մենք չենք ասում, որ լաբորատորիաներն անօգուտ են, մենք ասում ենք, որ մարդկային հիմնական սկզբունքների տեղը խորաթափանցության մեջ է:

Մենք կարող ենք ավելի զարգացնել մեր սկզբունքը: Մարդկանց մեջ ֆիզիկայի և քիմիայի բոլոր օրենքները հնարավոր է դիտարկել գրեթե կատարյալ մակարդակով: Ոչ մի ֆիզիկայի կամ քիմիայի լաբորատորիա չի կարող մոտենալ մարդու կառուցվածքի հարուստ մեխանիզմների մակարդակին: Ֆիզիկայի և քիմիայի մասին ավելի ճշգրիտ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել մարդու կառուցվածքում: Մարդու կառուցվածքում կարելի է ընկալել ինչպես նյութ-էներգիա փոխակերպումը, այնպես էլ ամենահարուստ քիմիական միացությունները: Էներգիայի և նյութի փոխհարաբերությունից իմաստ ստեղծելը

մարդկանց մեջ ամենահարուստ ձևով է տեղի ունենում: Մարդու ուղեղում հնարավոր է հասնել նյութ-էներգիա-միտք միասնությանը: Սա կարող է հանգեցնել այնպիսի հզոր հարցի, ինչպիսին է՝ «կարո՞ղ է մարդկանց մեջ իրականացված այս միասնությունը լինել նաև տիեզերքի հատկանիշներից մեկը»:

Այն փաստը, որ մարդիկ, որոնց հիմք ենք վերցնում ճշմարտությանը հասնելու համար, ունեն չափազանց հարուստ ընկալման ներուժ, հաստատում է մեր առաջին սկզբունքը: Հետևաբար, այս սկզբունքը կարելի է համարել որպես գիտելիք ձեռք բերելու էական միջոց և կայուն սկզբունք այն առումով, թե ինչ է ճշմարտությունը:

Երրորդ, մենք կարող ենք դիտարկել կենդանի-անշունչ երկընտրանքը մարդկանց ամենահարուստ օրինակներում: Կենդանի արարածների շարքում, որոնց մենք կարող ենք դիտարկել, մարդ արարածը պարունակում է առավել առաջադեմ հատկություններ: Մարդկանց մեջ կյանքի զարգացումը հասել է իր գագաթնակետին: Սրա հետ մեկտեղ, նյութական մասը նույնպես հասել է ամենաառաջադեմ մակարդակի՝ միահյուսված և զուգահեռ այս կենդանի էակի զարգացմանը: Մարդու ուղեղի նյութի դասավորությունը և նրա կենսունակության զարգացումը դեռևս լի են գաղտնիքներով: Գիտությանը հաջողվել է շատ սահմանափակ տեղեկատվություն ստանալ մարդու ուղեղի վերաբերյալ: Ուղեղում նյութի կազմակերպվելու ունակության և ամենավերացական ձևով մտածելու կարողություն ստացած կենդանի էակի միջև կապերը կանգնած են մեր առջև՝ որպես մեծ բացահայտում պահանջող խնդիր: Օրինակների հարստություն ասելով՝ նկատի ու-

նենք այս հոյակապ օրգանը: Ավելին, մարդու մարմնի մյուս օրգանները, հատկապես սիրտը, ինքնին հրաշք են: Անմիջապես արձանագրենք, որ հետազոտված մարդկային օրգանները չափազանց բարդ են բժշկությանը թողնելու համար: Ամբողջ գիտությունը պետք է ավելի բովանդակալից հետազոտության ենթարկվի: Մարմին-հոգի երկընտրանքի մեջ մարդուն բժշկության և հոգեբանության ասպարեզում թողնելը մեծագույն տգիտություն է և հանցագործություն է նույնքան, որքան սպանությունը:

Կարող ենք առաջ քաշել որոշ ենթադրություններ կենդանություն-անկենդանություն հարաբերությունների վերաբերյալ, որոնք պետք է դիտարկենք մարդկային օրինակում: Առաջին հերթին անհրաժեշտ է ընդունել նյութի մեջ կյանքի պոտենցիալ կարողությունը: Եթե այդ ունակությունը չլիներ, ապա մարդու կառուցվածքում նյութական կազմակերպվածությունը չէր կարողանա ուղեկցել մարդկանց բարձր զարգացած հույզերին ու մտածված կենսունակությանը: Այսպիսով, ինչպե՞ս կարող ենք ավելի ուժեղ ընկալել նյութի մեջ կյանքի ներուժը: Առաջին պատասխանը «հրել-քաշել» երկընտրանքը պոտենցիալ կենսունակության հիմքում դնելն է: Կարող է իմաստալից լինել այս հիմնարար սկզբունքը, որը դիտարկվում է ամբողջ տիեզերքում որպես պոտենցիալ կյանք: Երկրորդ, այս սկզբունքի հետ կապված մենք կարող ենք ցույց տալ, որ ալիքը մասնիկային բնույթ ունի: Այս մոտեցման մեջ կարող ենք ներառել նաև տիեզերքում գոյություն-դատարկություն սկզբունքն ու երկընտրանքը: Գոյությունն առանց դատարկության և դատարկությունն առանց գոյության անհնար է պատկերացնել: Եթե մեր մտածողության սահմաններից անդին անցնենք, ապա կհասկանանք, որ երբ հաղթահարվի գոյություն-դատարկություն երկընտրանքը, երկուսն էլ կվերանան: Ինչպե՞ս կարելի է անվանել այս դեպքում ձևավորված նորը: Սա երկրորդ մեծ հարցն է: Ոմանք, ինչպես սովոր են, կարող են անմիջապես պատասխանել՝ «Աստված»: Մինչդեռ այս հարցում չշտապելը մեզ կարող է ավելի բովանդակալից մտքերի հանգեցնել: Միգուցե, հասնենք կյանքի իմաստին և գտնենք մեր կյանքի առեղծվածների պատասխանները:

Ինչպես հայտնի է, ալիքի մասնիկային բնույթն անհրաժեշտ է վանման և ձգողականության համար: Յուրաքանչյուր ճառագայթային ալիքում առկա մասնիկի բնույթը նաև 300000 կմ/վրկ ամենաբարձր արագության պատճառն է: Սև խոռոչի կողմից լույսը կլանելու ընկալումն ավելի է խորացնում հանելուկը: Ո՞րն է հասանելի իրականությունը լույսի կլանումից հետո:

Սա ամենադժվար պատասխան ունեցող հարցերից մեկն է: Եթե սև խոռոչները մաքուր էներգիայի կղզիներ կոչենք, ապա ինչպե՞ս կանվանենք ճառագայթային էներգիան: Արդյո՞ք տիեզերքը ոչ այլ ինչ է, քան պարզապես մեծ սև խոռոչ-մատերիա երկընտրանք: Այս դեպքում մատերիան չէ՞ որ նյութ չլինողին տեսանելի է դարձնում: Այսպիսով, մենք չե՞նք կարող նայել տիեզերքին՝ որպես իրեն տեսանելի դարձնող մեծ, կենդանի գոյություն: Արդյո՞ք կյանքի բոլոր երկընտրանքներն առաջանում են այս համընդհանուր երկընտրանքից: Օրինակ՝ սեր-ատելություն, բարի-չար, գեղեցկություն-տգեղություն, ճիշտ-սխալ դիլեմաները կարո՞ղ են լինել այս համընդհանուրի արտացոլումը: Հարցերն անվերջ կարելի է բազմապատկել:

Ավելի ուսուցողական կարող է լինել այն հարցերով զբաղվելը, որոնց մենք ավելի լավ ենք տիրապետում և ուսումնասիրել ենք:

Ապացուցված է, որ նյութը էներգիայի կենտրոնացված կուտակում է: Հայտնի է Էյնշտեյնի առաջ քաշած հայտնի հավասարումը՝ մահացածի և ողջ մարդու քաշի միջև կա տասնութ գրամ էներգիայի տարբերություն: Այս դեպքում կյանքը էներգիայի հոսքի հատուկ համակարգ է՞: Արդյո՞ք այս էներգիան լիցքաթափվում է՝ պահպանելով իր գոյությունը: Այդ դեպքում անիմիզմը (հոգեպաշտություն) չի՞ լինի ստուգված համոզմունք կամ գոնե համոզմունք, որը պետք է հաշվի առնել: Արդյոք պետք չէ՞ լուրջ վերաբերվել այն համոզմունքին կամ մեկնաբանությանը, որ տիեզերքը լի է հոգիներով կամ Հեգելի գնահատականին համընդհանուր բանականությանը (Geist) և էներգիային առ այն, որ նյութը կենսունակության ոգի է:

Այս տեսակի հարցերը կարող ենք ավելի շատ բազմապատկել: Կարևորը հետևյալն է՝ կենդանության և անկենդանության հարաբերությունը չի կարելի հասկանալի դարձնել միջնադարյան դոգմատիզմի մետաֆիզիկական մեկնաբանություններով, և այն չի կարելի գնահատել որպես ճշմարտությանը մոտ կապիտալիստական արդիության հոգի-մարմին և սուբյեկտ-օբյեկտ տարբերակման տեսանկյունից: Ո՛չ ստեղծագործական ուժի սկզբունքը, որը կյանք է տալիս դրսից, ո՛չ էլ ոգի-նյութ երկընտրանքի վրա հիմնված մոտեցումները չեն կարող բացատրել մեր կյանքի հարստությունը: Մեր տված հարցերը և ներկայացրած օրինակները ցույց են տալիս՝ որքան կենտրոնանանք մարդկային կյանքի հարստության վրա և կա-

տարելագործենք մեր դիտողական ուժն, այնքան կարող ենք մեծացնել բոլոր զարգացումները, ներառյալ՝ հրաշագործությունները կենսունակությամբ ըմբռնելու մեր հնարավորությունները: Պետք է հավատալ, որ տիեզերքն ունի արդարության սկզբունք: Առանց պայմանների և իմաստի ոչինչ չի ծնվում: Բնությունն իր ձևավորման մեջ ավելի արդար է, քան մենք կարող ենք տեսնել: Ավելի նպատակահարմար կլինի պատասխանատվության ենթարկել քաղաքակրթական հասարակությանը մեր դիտորդական կարողությունների շփոթության, աղավաղման և կորստի համար: Արդար զարգացում է նաև մարդու ձևավորումը: Կարելի է ասել, որ ամբողջ համընդհանուր կարգը, կենսաբանական տիեզերքը և սոցիալական ինստիտուտները ծառայում են մարդու ձևավորմանը: Սրանից ավելի մեծ արդարություն կարո՞ղ է լինել: Եթե հասարակության հիերարխիկ և պետական ուժերը խեղաթյուրել և կոծկել են այս ճշմարտությունը, ապա դրա պատասխանատվությունը պետք է դնել այն ուժերի վրա, որոնք դիմել են այդ խեղաթյուրմանը: Այդ ժամանակ արդարություն իրականացնելու գործը կպատկանի արդարությանը հետամուտ մարդուն: Մարդն է, որ կարող է զարգացնել բոլոր տեսակի իմաստներն ու գործողությունները, որոնք անհրաժեշտ են արդարության իրականացման համար: Անշուշտ, այս գործին կարող են հավակնել մարդիկ, ովքեր ասում են՝ «ես արդարություն եմ փնտրում», և նրանք պետք է բովանդակալից, կազմակերպված ու ակտիվ լինեն՝ արդարության պահանջներին համապատասխան:

Մեր հիմնական տեսանկյունից հեշտ և հնարավոր է թվում կենսաբանական աշխարհում էվոլյուցիայի մեծ

բազմազանությունը գնահատելը: Կենդանի և ոչ կենդանի մոլեկուլների միջև անցումների շնորհիվ կարող ենք ավելի հեշտ ընկալել անցումը բուսական և կենդանական աշխարհների միջև: Գիտությունն այս հարցերում մեծ առաջընթաց է գրանցել: Չնայած դրա բոլոր անհամապատասխանություններին և անպատասխան հարցերին՝ մենք հասել ենք իմաստի լուրջ հարստության: Տիեզերքն ինքնին հրաշք է: Բուսական թագավորությունը՝ պարզունակ մամուռից մինչև հոյակապ պտղատու ծառ, խոտերից մինչև փշոտ վարդեր, ցույց է տալիս ապրելու ունակության ուժը: Հատկապես վարդի հոյակապ գեղեցկության և իր իսկ փշերով իրեն պաշտպանելու հատկությունը կարող է ինչոր բան բացատրել նույնիսկ ամենաանհասկացողին: Էվոլյուցիայի աչքի ընկնող կողմն այն է, որ ձևավորման հաջորդ փուլն իր մեջ կրում է նախորդը և պահպանում այն՝ որպես հարստացնող մաս և անդամ այնքան, որ վերջին բույսը շարունակում է գոյություն ունենալ իր «մայրական» դերում՝ որպես բոլոր բույսերի ամփոփում: Այսինքն, ինչպես շատերն են կարծում, էվոլյուցիոն զարգացումը չի շարունակվում միմյանց ոչնչացնող տարբեր տեսակների հիման վրա (դոգմատիկ դարվինիզմ), այլ հարստանալու և բազմանալու հիման վրա: Բուսական թագավորությունում կա զարգացում մեկ տեսակից մինչև շատ տեսակներ՝ պարզունակ մամուռից մինչև անսահման բազմազանություն: Բազմազանությունը պետք է դիտարկել որպես բույսերի լեզու և կյանք: Նրանք ևս ունեն ընտանիքներ, հարազատներ, երբեմն նաև՝ թշնամիներ: Բայց նաև սկզբունք է, որ յուրաքանչյուր տեսակ ունի իր պաշտպանական դիրքը: Առանց պաշտպանության կյանք գրեթե չկա:

Մեկ այլ հատկանիշ, որը պետք է դիտարկել, սեռական և անսեռ վերարտադրությունն է: Մինչ անսեռ վերարտադրությունը վերաբերում է վերարտադրության շատ պարզունակ վիճակին, սեռական վերարտադրությունը, որը տեղի է ունենում տարբերակված տեսակների միավորման միջոցով, գերիշխող սկզբունքն է: Միավորները, որոնք կրում են առնականությունն ու կանացիությունը միասին, դեռևս անցումային փուլերից են մնացել: Բազմանալու և տեսակների մեջ տարբերակվելու համար սեռերը պետք է ներկայացված լինեն տարբեր միավորներով: Բազմազանությանը հնարավոր չէ հասնել առանց տարբեր միավորների՝ իգականի և արականի բաժանելու: Այստեղ էլ հանդիպում ենք բնական հրաշքի. Էվոլյուցիայի անհրաժեշտություն է հակասական, անդամալույծ տեսակների ի հայտ գալը, որոնց հաճախ հանդիպում ենք միջսղային ամուսնություններում, և որոնք հանդիսանում են նույն միավորման՝ իգական և արական տարրերի առկայության շարունակությունը: Առնականություն-կանացիություն տարբերակումը կարող ենք վերագրել զարգացման սկզբունքին՝ հակասության և տարբերակման միջոցով դրական հիմքի վրա, որը տեսնում ենք ամբողջ տիեզերքում: Սա կարող ենք անվանել նաև դրական դիալեկտիկա: Ակնհայտ է, որ «նույնը» մնալու պնդումը զարգացման մերժում է: Հասկանալի է, որ բացարձակ ճշմարտության (մետաֆիզիկական մտքի) որոնման մեջ նույնականության ցանկացած սկզբունք ունակ չէ մեկնաբանելու տիեզերքը:

Մեկ այլ հարց, որը պետք է հաշվի առնել, այն է, թե ինչու է տիեզերքը ցանկանում զարգանալ: Ավելի ճիշտ՝ տիեզերքի առաջադիմական հատկանիշն ինքնին նրա կենսունակության ապացույցը չէ՞: Ինչ-որ բան կարո՞ղ է զարգանալ առանց ապրելու ունակության: Կենսաբանական ոլորտն էլ ավելի է հեշտացնում այս հարցի պատասխանը: Կենսաբանական զարգացման մեկ այլ կարևոր խնդիրը վերաբերում է Երկիր մոլորակի բացառիկությանը: Ասում են՝ այլ կենդանի մոլորակ երբևէ չի հանդիպել դիտարկված տիեզերքում: Այս մոտեցումը բավականին խնդրահարույց է: Նախ, բոլոր մոլորակները հայտնաբերելու մարդու հնարավորությունները շատ սահմանափակ են: Մարդիկ կարող են մեկնաբանել տիեզերքը այնպես, ինչպես մոծակը կարող է մեկնաբանել Երկիրը: Այն պնդումը, որ մարդը կարող է ամեն ինչ իմանալ, մետաֆիզիկական գաղափարներ ունեցողների մոլորությունն է: Սա Աստծո արարչագործությանը նման մոտեցում է:

Համընդհանուր կազմավորումը թվերի մեջ խեղդելը այնքան էլ բացատրական չէ: Ավելին, մենք դեռ աշխարհի իմաստությունը հասկանալու ամենասկզբում ենք: Դեռևս անհայտ է, թե այս ըմբռնումը մեզ ինչի կբերի: Չի կարելի անտեսել հաճախակի արտասանվող «ամեն կենդանի արարած ունի տիեզերք» արտահայտությունը: Զուգահեռ տիեզերք հասկացությունը կարող է ունենալ նաև բացատրական կողմեր: Եթե այսպիսի օրինակ բերենք, կարող ենք ավելի լավ բացատրել մեր միտքը. յուրաքանչյուր մարդու հյուսվածքի կենդանի բջիջ յուրատեսակ գոյացություն է: Նույնիսկ ուղեղի բջիջներում մտքեր են կազմավորվում: Այս բնույթի բջիջները կարո՞ղ են ասել՝

«տիեզերքն այնքան է, որքան մենք ենք կարծում»: Մյուս կողմից, այս բջիջները տեղյակ չեն մարդկանց և մարդկանցից դուրս գտնվող հսկայական տիեզերքի մասին: Բայց դա չի կարող վերացնել մարդկանց և այլ մակրո ու միկրո տիեզերքների գոյությունը: Արդյոք չե՞նք կարող մարդուն դիտարկել որպես այդպիսի մակրո բջիջ տիեզերքի ներսում: Եթե համարձակվենք դա անել, ապա հեշտությամբ կարող ենք եզրակացնել, որ գոյություն ունեն տարբեր տիեզերքներ: «Զուգահեռ տիեզերք» ասելով՝ մենք հասկանում ենք հետևյալը՝ եթե յուրաքանչյուր տիեզերք կախված է մի փուլից, մի ալիքային չափումից և այդպես է մեկնաբանվում, ապա հնարավոր է, որ անհաշվելի թվով տիեզերքներ նյութականանան: Ալիքային համակարգը, որը ծնում է մարդկանց, այս տիեզերքներից միայն մեկն է:

Այս բացատրությունները շահարկումներ զարգացնելու նպատակ չեն հետապնդում: Սա միայն նեղմտությունը հաղթահարելու փորձ է: Մենք ցանկանում ենք խուսափել հիվանդ մեթոդների և խեղաթյուրված գիտակցության ու համոզմունքների թակարդից, որոնց մեծ մասը հիերարխիկ և պետական կարգերի հետևանք է: Մեր մտածելակերպը հիերարխիկ և ստատիստական մեխանիզմների արդյունք է, որոնք ավելի շատ ստի և խեղաթյուրման մեքենաներ են, քան ենթադրվում է: Նրանք նաև ոչնչացրել են շատ ճիշտ մտքեր:

Կենդանիների թագավորությունն ինքնին համակարգ է: Սկզբում հայտնաբերվել է այն տեսակը, որը համատեղ ներկայացնում էր բուսական և կենդանական բջիջները: Ուշադիր դիտորդը կարող է նկատել, որ առանց բուսա-

կան աշխարհի չկա անցում դեպի կենդանական աշխարհ: Բուսական կյանքը կենդանականի նախապայմանն է: Բայց որ ամենից կարևորն է՝ զարգացած բուսական աշխարհը պայմանն է զարգացած կենդանական աշխարհի: Պոտենցիալ կենսունակությունը կենդանական աշխարհում կարող է հանգեցնել ավելի զարգացած հույզերի, ինչպիսիք են՝ տեսնելը, լսելը, ցավը, ցանկությունը, զայրույթը և սերը: Սննդի մշտական ձգտումը պահանջում է սովի անհրաժեշտության ավելի մանրամասն ուսումնասիրություն: Հեշտությամբ կարելի է հասկանալ, որ քաղցը կապված է էներգիայի պակասի հետ: Այստեղ ևս մեկ անգամ ի հայտ է գալիս էներգիայի և կենսունակության հարաբերությունը: Այն, ինչ տեղի է ունենում, երբ քաղցը բավարարվում է, անհրաժեշտ էներգիայի կուտակումն է:

Սեռական հարաբերության անհրաժեշտությունը նույնպես պահանջում է ուշադիր դիտարկում: Այս կարիքը, որը ստիպում է մարդուն չափազանց մեծ և ինտենսիվ ցանկություն զգալ, ներկայացնում է այնպիսի գործառույթ, ինչպիսին կյանքն է: Սեռականության մեջ էներգիայի ինտենսիվությունը մեզ կրկին ստիպում է մտածել կենսունակության հետ դրա կապի մասին: Այնուամենայնիվ, սեքսուալությունը չպետք է դիտարկել որպես կյանքի միակ պահպանող գործոն: Թերևս, կյանքի պահպանման պարզունակ ձևը սեռական ճանապարհն է: Սա կյանքի պահպանումն է քանակական հիմունքներով: Դիվերսիֆիկացիան և էվոլյուցիան հանգեցնում են կյանքի ավելի հարստացված ձևերի: Ընդ որում, սեռական հարաբերությունն իր հետ կրում է ոչ միայն կյանքի հանդեպ կիրքն ու ապրելու բնազդը, այլ նաև մահվան վախը, ավելի ճիշտ՝

հենց մահը: Յուրաքանչյուր սեռական հարաբերություն մասամբ մահ է: Որոշ կենդանիներ սատկում են զուգավորումից անմիջապես հետո: Ուստի, սեքսուալության հանդեպ բուռն նվիրվածությունն առաջացնում է նաև կյանքի ամենապրիմիտիվ վիճակն ու մահվան գիտակցումը: Միայն սեռականությամբ սահմանափակվելը ուժեղացնում է մահվան տարբերակը: Որքան շատ սեքսուալությունը վերածվի սիրո և գեղեցկության զգացումների և վերարտադրվի այդպես, այնքան այն կմոտենա անմահության: Անմահությունն արվեստի գործերում հենց այս ընկալման արդյունքն է: Մենք կարող ենք նաև մեկնաբանել սեռական վերարտադրությունը որպես պաշտպանության ձև: Որքան շատ եք վերարտադրվում, այնքան ավելի շատ կարող եք զգալ, որ կաք, կդիմանաք և կպաշտպանեք ինքներդ ձեզ:

Ավելի մոտիկից կքննարկենք սեռականությունը և վերարտադրումը մարդկային հասարակության մեջ: Մեծ սխալ է «սեր» համարել կրկնվող սեռական ակտից ստացած հաճույքը, որը միայն գոյատևում է երաշխավորում: Ընդհակառակը, սեռական ակտի վրա հիմնված հաճույքը սիրո ժխտում է: Կապիտալիստական արդիականությունը, որը քաղցկեղի նման բազմապատկում է սեքսիզմը, սպանում է հասարակությանը՝ սիրո անվան տակ: Իսկական սերը մեծ ոգևորությունն է, որը զգացվում է տիեզերքի ձևավորման լեզվից: «Աշխարհում ինչ կա՝ սեր է, մնացածը՝ ոչինչ» ասացվածքը կարող է լինել սիրո ճշմարիտ մեկնաբանություն: Սերը կախված է սեռական հաճույքի գերազանցումից, ավելի ճիշտ՝ բարոյական էակ հանդիսացող մարդու ազատության մակարդակի փոխադարձ

զարգացումից: Սեռական ցանկությունը նույնպես կապված է ազատության կորստի և նյութական անգործության հետ: Ավելի ճիշտ է ձևավորման ներդաշնակությանը վերագրել ոչ միայն տղամարդկանց և կանանց սերը, այլև տիեզերքի բոլոր տարրերի միջև սերը:

Զգացմունքների զարգացումն ինքնին հրաշք է: Օրինակ՝ ինչպե՞ս պետք է մեկնաբանենք տեսնելու ունակությունը: Միանշանակ է, որ տեսողությունը կյանքի ամենազարգացած տարրերից է: Հասկանալի է նաև, որ առանց լույսի տեսնելն անհնար է պատկերացնել: Տեսնելը միտք է: Կարևոր է կյանքի բոլոր առանձնահատկությունները՝ հատկապես սեքսուալությունը, դիտել որպես մտածելակերպ: Կյանքն ինքնին ինչ-որ իմաստով սովորելու կարողություն է: Այս առումով տեղին է Դեկարտի «Մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ» ասացվածքը: Եթե ավելի ընդհանրացնենք, ապա կարող ենք տիեզերքի ցիկլը կանոնների շրջանակներում մեկնաբանել որպես ուսուցում: Կանոնները մեզ հիշեցնում են սովորելու մասին: Տեսողության վրա հիմնված ուսուցումը նույնպես հիանալի զարգացում է: Հասկանալի է հետևյալ ասույթը՝ «Աստված ստեղծել է տիեզերքը, որպեսզի դիտարկի իրեն»: Այն դատողությունը, որ «Geist»-ը (համընդհանուր բանականություն) նյութականացվում է իր մասին իրազեկելու համար, ինչը մենք նկատում ենք Հեգելի մոտ, նույնպես կապված է տեսնելու հետ: Տեսնելն ու երևալը, թերևս, կայացման հիմնական նպատակներից են:

Հաճույքի և ցավի զգացումներն իրենց զգացնել են տալիս նաև կենդանիների կյանքում: Երկու զգացումներն էլ մեզ հիշեցնում են կյանքի տարբերության մասին: Ինչքան մարդ վայելում է կյանքը, այնքան կյանքն ավելի շատ է նկատվում, ինչքան ցավ է զգացվում, այնքան կյանքը նորից է նկատվում, ու այս անգամ մարդը չի ցանկանում այն որդեգրել ու շարունակել: Երկուսն էլ ուսուցման ամենաարդյունավետ դպրոցներն են: Հաճույքն ու ցավը դաստիարակչական բարձր արժեք ունեն: Հաճույքը մեծ բաներ է սովորեցնում, բայց հանուն դրա կարող են ամեն տեսակ խելագարության դիմել: Ցավը մեծ ուսուցչի դեր է խաղում՝ այդպիսով հանգեցնելով կյանքի արժեքի լուրջ գնահատմանը: Թեև հաճույքի վերջը շատ մոտ է ցավին, ցավի վերջում հաճելի կյանք ձեռք բերելու մեծ հավանականություն կա: Կենդանի էակները իրենց միջև եղած տարբերությունը բացահայտում են սովորելու միջոցով, ինչպիսիք են ավելի լավ տեսնելը, ավելին վայելելը և տառապելը:

Կյանքի և մահվան բավականին մետաֆիզիկական բնույթ ունեցող փոխհարաբերությունները մարդկային հասարակության մեջ դիտարկելն

ավելի ճշգրիտ մոտեցում կլիներ: Կենդանիների նկատմամբ ուշադրություն պահանջող կարևոր խնդիրը մսով սնուցվելու հարցն է: Բոլոր կենդանիները կարող են գոյատևել, երբ սնվում են բույսերով: Միս ուտելը պարտադիր կարիք չէ, որը պետք է բավարարվի: Բայց կա մսակերների լայն տարածում: Ինչպե՞ս բացատրենք սա: Չափազանց շատ վերարտադրումը, որ կյանքին սպառնացող վտանգ է, կարող է խնդիրը լուծող գործոն լինել: Թեև սեռական վերարտադրությունը կյանքն ապահովելու միջոց է, դրա չափազանց լինելը կարող է ոչնչացնել կյանքի տարբեր հնարավորությունները: Օրինակ՝ չափից դուրս շատացող մկները կարող են ոչնչացնել բույսերը:

Կենդանիները, ինչպիսիք են ոչխարները, այծերը և խոշոր եղջերավոր անասունները, նույնպես կարող են ոչնչացնել բույսերը: Թռչունների թագավորությունում ևս առկա է անհավասարակշիռ վերարտադրություն: Այս դեպքում օձերի, առյուծների և բազեների մեջտեղ գալը ոչ միայն ոչնչացման նպատակով է, այլև որպես կենդանական աշխարհի կայունության անհրաժեշտություն: Բնության մեջ աշխատանքի նման բաժանումը որպես մեծ անարդարություն տեսնելը կարող է վնասակար լինել: Բայց այստեղ լավ հավասարակշռություն կա: Եթե այս հավասարակշռությունը խախտվի, և օձերը, առյուծներն ու բազեները լցվեն ամենուր, ապա շատ քիչ ողջ կենդանի կմնա: Բնական համակարգերի ինքնակազմակերպումը հոյակապ բանականության արդյունք է:

Համակողմանիորեն կգնահատենք մարդկային հասարակության մեջ սեռական վերարտադրության կարգավորման մեծ նշանակությունը, նրա տեղը կյանքի պահպանման գործում և կապը բարոյականության հետ: Եթե վերադառնանք մարդու հարաբերություններին կենսաբանական տիեզերքի հետ, որը դիտարկել ենք որպես մեր հետազոտության հիմնական առարկա, կտեսնենք, որ այս աշխարհում բոլոր իրացումները բառացիորեն ամփոփված են մարդու մեջ: Բուսական և կենդանական աշխարհում առկա բոլոր կենսական բնութագրերին

կարող ենք ականատես լինել մարդկանց մեջ: Ինչ-որ իմաստով մարդ արարածը զարգացող բուսական և կենդանական աշխարհի և՛ նպատակն է, և՛ ժառանգորդը: Գերմարդկային արարածի գոյությունը կարելի է միայն վարկած համարել: Իրականում, մարդու ուղեղում մտածողության ահռելի ուժը, միգուցե, անհարկի է դարձնում գերմարդկայինի ձևավորումը: Կենդանի էակների հիմնական հատկանիշները համարվող սովորելու և մտածելու ունակության առումով ուղեղի զարգացումը մարդկանց մոտ հասել է իր գագաթնակետին: Տիեզերքի ինքնաճանաչումը տեղի է ունենում մարդկանց միջոցով: Թերևս, Աստվածաշնչյան «ես ստեղծել եմ մարդուն, որպեսզի ճանաչվի» մեջբերումը սրա համար է:

Անկասկած, մարդն ամբողջ բուսական և կենդանական կյանքի կուտակումն է: Բայց հակառակը չի կարող լինել: Այսպիսով, նույնիսկ եթե դուք զումարում եք բոլոր բույսերը և կենդանիները, դրանից դեռ մեկ մարդ չի ստացվում: Այստեղ անհրաժեշտություն կա մարդուն դիտարկել որպես առանձին աշխարհ: Սա ոչ մի կապ չունի տիեզերքի «մարդակենտրոն» ըմբռնման հետ: Ես չեմ խոսում պանթեիզմի մասին (բնություն-աստված միասնություն): Ավելի շատ կարիք եմ զգում բացատրելու մարդու՝ որպես յուրահատուկ տեսակի տարբերությունը: Մարդիկ այնքան կարևոր են, որ նրանց պետք է վերաբերվել որպես առանձին աշխարհի:

Հետևաբար, մարդուն՝ որպես հասարակության մեջ ինքնաիրացվող տեսակ, հետազոտության առարկա դարձնելը իմաստալից և կարևոր մեթոդ է՝ ճշմարտության և դրա ռեժիմի որոնման տեսանկյունից: Մարդկանց «պրիմատներից» բաժանելը և տեսակների զարգացման փուլերը մեր թեմայի համար կարևոր չեն: Մենք մարդաբանական գնահատական չենք տալիս: Անկասկած, հասարակության կամ խմբակային համակեցության բազմաթիվ օրինակների ենք հանդիպում ոչ միայն կենդանական,

այլն բուսական աշխարհներում: Իրենց բնույթով բոլոր տեսակները պետք է մոտ լինեն միմյանց և նույնիսկ ապրեն որպես համայնք: Ծառերը չեն կարող գոյություն ունենալ առանց անտառների, իսկ ձկները՝ առանց վտառների: Բայց ինչպես մարդիկ, այնպես էլ հասարակությունն ունի որակական տարբերություն: Հասարակությունն ինքնին, գուցե, գերմարդն է կամ այն կազմակերպությունը, որը ստեղծել և ստեղծելու է գերմարդուն: Եթե երեխային ծնվելուց անմիջապես հետո հասարակությունից հանենք ու զցենք անտառ՝ չապահովելով նրա կյանքը, նա չի կարողանա խուսափել պրիմատ դառնալուց: Երբ նրան մի քանի նմանատիպ մարդու հետ նույն միջավայրում դնենք, գործընթացը, որ կսկսվի, շատ նման կլինի պրիմատների մոտ սկսված գործընթացին: Բայց նույնը չի վերաբերում կենդանական համայնքներին: Նույնիսկ այս իրավիճակը բացահայտում է, որ մարդկային հասարակությունը բոլորովին այլ արժեք ունի: Հասարակության դերը մարդկանց, և մարդու դերը հասարակության կառուցման գործում եզակի է:

Անկասկած, չկա հասարակություն առանց մարդկանց: Բայց հասարակությունը որպես մարդկանց հանրագումար տեսնելը լուրջ սխալ է: Առանց հասարակության մարդը չի կարող ավելի հեռուն գնալ, քան պրիմատ լինելը: Մյուս կողմից, սոցիալական մարդիկ կարող են լինել ահռելի ուժ և հասնել մտքի մեծագույն ուժի: Մեկ անձի որոշումը (ինչպես միջուկային ռումբերը պայթեցնելու դեպքում) կարող է ամբողջ աշխարհը վերածել անապատի: Մարդը, որի մասին խոսում ենք, կարող է գնալ տիեզերք, անսահմանափակ բացահայտումներ անել և գյուտեր հորինել: Այս օրինակները բերում ենք սոցիալականության ուժը ցույց տալու համար: Չնայած սոցիալական կազմակերպումը «սոցիոլոգիայի» թեման է, խնդիրը, որը մենք փորձում ենք լուծել, բոլորովին այլ է: Առանց հասարակության հնարավոր չէ հասնել գիտելիքի և հաստատել ճշմարտության ռեժիմը: Այն ամենը, ինչ տեղի է ունենում անհատի ներսում, պետք է լինի սոցիալական: Այստեղ մենք խոսում ենք ոչ միայն մարդու մասին՝ որպես բույսերի և կենդանիների կամ նույնիսկ ֆիզիկական և քիմիական տիեզերքի ժառանգորդի, այլ հասարակության մեջ կազմավորված մարդու մասին:

Քաղաքակրթական բոլոր համակարգերը՝ ներառյալ կապիտալիստական արդիականությունը, մարդկանց դիտարկում էին որպես պատմությունից և հասարակությունից կտրված: Ավելի ճիշտ, այն բոլոր գաղափարներն ու կառուցակարգերը, որոնք քննարկվել և ձևավորվել են մարդու մասին, համարվում էին պատմությունից և հասարակությունից կտրված: Նույնիսկ ներկայացվեց որպես հասարակությունից վեր անհատների աշխատանք: Հենց այստեղից էլ հորինվել են քողարկված ու մերկ թագավորները, դիմակավորված ու դիմակազերծ աստվածները: Մինչդեռ, երբ մենք խորացնենք հասարակության մեր ըմբռնումը, կկարողանանք վերլուծել այս բոլոր թագավորներին և աստվածներին, ինչպես նաև բացատրել, թե որ գաղափարներից, որ սոցիալական շերտերից, հատկապես բռնակալություն և շահագործում առաջացնող որ սոցիալական համակարգերից են նրանք ծագում:

Մարդ-հասարակություն կապը իմաստալից կերպով բացահայտելու ունակությունը մեթոդի ամենահիմնական

խնդիրն է: Մինչ շատ գիտական թվացող Բեկոնը և Դեկարտը քննարկում են մեթոդաբանական խնդիրներ, իրականում կարծես թե անտեղյակ և կտրված են այն հասարակությունից, որտեղ գործում են: Մենք լավ գիտենք, որ հասարակությունները, որոնցից նրանք ազդվել են, այն երկրների հասարակություններն են, որոնց մենք այսօր անվանում ենք Անգլիա և Նիդերլանդներ, որոնք կառուցել են կապիտալիզմը՝ որպես համաշխարհային համակարգ: Նրանց կառուցած մեթոդները նաև սոցիալապես կապված գաղափարներ էին, որոնք լայնորեն բացեցին կապիտալիզմի դուռը:

Այսպիսով, ի՞նչ կարող ենք դիտարկել, եթե սկսենք ուսումնասիրել մարդկային հասարակությունը որպես հիմնարար կատեգորիա:

ա- Հասարակությունը մարդուն կենդանիներից որակապես բաժանող կազմավորում է: Սա բավականաչափ բացատրել ենք:

բ- Ինչպես հասարակությունը ստեղծվում է մարդկանց կողմից, այնպես էլ այն կերտում ու ստեղծում է մարդկային անհատների: Այստեղ հիմնական կետը, որ պետք է հասկանալ, հետևյալն է՝ հասարակությունները կամ համայնքները կառուցվում են մարդկային ձեռքերով և տաղանդներով: Հասարակությունները գերմարդկային կազմակերպություններ չեն: Թեև նրանք արտացոլում են իրենց ինքնությունը տոտեմից մինչև աստված, քանի որ խորապես ազդում են մարդկային հիշողության վրա, պարզ է, որ դրանք մարդկային հորինվածքներ են: Առանց

մարդ արարածի չկա հասարակություն, որը պետք է պահպանի տոտեմներին կամ աստվածներին:

գ- Հասարակությունները գտնվում են պատմական և տարածական սահմանափակումների ներքո: Այսինքն՝ հասարակություններն ունեն ժամանակային և աշխարհագրական պայմաններ, որոնցում կառուցվել են: Պատմությունից և աշխարհագրությունից կտրված սոցիալական կառուցվածքներ չկան: Սոցիալական ուտոպիաները դատարկ երազներ են՝ բոլոր հանգամանքներում և անժամանակ:

Պատմությունը, որի թեման ընդհանրապես կենդանի արարածներն են և մասնավորապես մարդիկ, վերաբերում է այն ժամանակներին, երբ կենդանի արարածներն իրենց զարգացման համար կախված են հատկապես մարդկանցից: Շատ ժամանակային ցիկլեր և ժամանակաշրջաններ, հատկապես սեզոնները, կարևոր են տեսակների ձևավորման համար:

Ավելին, չկա այնպիսի կազմավորում, որը տևողություն չունենա: Հասկանալի է, որ «հավերժական-հավիտենական» հասկացությունը հատուկ է միայն «փոփոխությանը»: Այսինքն՝ միակ բանը, որ չի փոխվում ու ժամանակավրեպ է, դա հենց փոփոխությունն է: Պատմության և հասարակության միջև կապն ավելի ամուր և կարճ է: Մինչ մենք խոսում ենք տիեզերքի միլիարդավոր տարիների մասին, հասարակությունների համար հազարավոր տարիներից այն կողմ անցնելը կարող է վավեր լինել միայն երկարաժամկետ հասկացության մեջ: Տարածված ժամանակաշրջաններն են օրը, ամիսը, տարին, դարը և այլն: Հասարակությունների տարածությունն էապես

կապված է բուսական և կենդանական էակների հետ: Բնեռների և հասարակածային շրջանների հասարակությունները շատ բացառիկ են: Ամենահարուստ բուսական և կենդանական աշխարհը կարող է նաև հիմք հանդիսանալ ամենաարդյունավետ հասարակությունների համար:

Համակարգը՝ հիերարխիկ և պետականակենտրոն ավանդույթների շրջանակներում ձևավորված և կառուցված բազմաթիվ մտքի դպրոցներով և կրոնական կառույցներով, սոցիալական պատմությունից և տարածությունից անջատված՝ փորձում է տիրել մարդու մտքին, կարծես, դա ճակատագիր է: Թեև կապիտալիստական համակարգում գիտությանը մեծ տեղ է հատկացվում, սակայն մեծ ուշադրություն է դարձվում նաև հասարակության մասին անհատական հիմունքներով մտածելուն:

Միշտ մութ է մնում հարցը, թե ո՞ր հասարակական կազմավորումը դեպի ո՞ր կրոնափիլիսոփայական մտքի համակարգին է տանում: Ինչպես հասարակության ժամանակն ու տարածությունը կառուցում են անհատին, այնպես էլ բավականաչափ ապացուցված է, որ անհատները նույնպես կառուցողական դեր են խաղում ապագայի կերտման գործում, հատկապես այն ձևավորմամբ, որ ստանում են: Հետևաբար, պատմական և տարածական չափումները մեթոդաբանական խնդիրների և ճշմարտության ընկալման անհրաժեշտ պայմաններից են:

դ - Մյուս կարևոր կետն այն է, որ սոցիալական իրողությունները կառուցված բնույթ ունեն: Սխալը, որ հաճախ մարդիկ անում են, սոցիալական ինստիտուտներին և կառույցներին հատկանիշ վերագրելն է, կարծես, դրանք բնական իրողություններ լինեն: Սոցիալական համակարգերի լեգիտիմության ռեժիմները ներկայանում են որպես անփոփոխ և սուրբ: Նրանք համակարգված քարոզում են, որ ունեն աստվածային հաստատություններ, և որ որպես այդպիսին են նշանակվել: Փորձ է արվում ներարկել, որ կապիտալիստական արդիականության մեջ վերջին խոսքն ասված է հասարակության մեջ, որ լիբերալ ինստիտուտներին այլընտրանք չկա, և որ նույնիսկ հասել է «պատմության վերջը»: Հաճախ հիշատակվում են անփոփոխ, անփոխարինելի սահմանադրություններ, քաղաքական ռեժիմներ: Սակայն համառոտ պատմության մեջ տեսնում ենք, որ այս «անփոփոխելիների» և «անսասան կառույցների» կյանքի տևողությունը մեկ դար էլ չհասավ: Այստեղ կարևորը գաղափարական և քաղաքական դիսկուրսների դիմելն է, որոնք առօրյայում կապելու են մարդկանց մտքերն ու կամքը: Այս գաղափարաքաղաքական հռետորաբանության խիստ կարիքն ունեն ուժի և շահագործման կենտրոնները: Շատ դժվար է կառավարել այսօրվա հասարակություններին՝ չդիմելով խիստ գաղափարական ու քաղաքական հռետորաբանության: Դրա համար էլ լրատվամիջոցներն այդքան զարգացել են: Կրկին՝ գիտական և ինտելեկտուալ կազմակերպությունները ճնշող մեծամասնությամբ կապված են ուժի և շահագործման կենտրոնների հետ:

Որքան ավելի շատ գիտակցենք, որ սոցիալական իրողությունները հաճախակի կառուցվող իրողություններ են, այնքան ավելի լավ կարող ենք դատել, որ դրանք ոչնչացման կամ վերակառուցման կարիք ունեն: Չկան անխորտակելի ու անփոփոխ սոցիալական իրողություններ: Հատկապես ճնշող և շահագործող ինստիտուտների էրո-

գիան և ոչնչացումը ազատ կյանքի անփոխարինելի պահանջն է: Սոցիալական իրականություն ասելով՝ հասկանում ենք հասարակության բոլոր գաղափարական և նյութական ինստիտուտները: Սոցիալական իրողությունները մշտապես հաստատվում են, ոչնչացվում, վերականգնվում կամ նորից են ստեղծվում համապատասխան ժամանակային և տարածական պայմաններում, սոցիալական բոլոր բնագավառներում՝ լեզվից մինչև կրոն, դիցաբանությունից մինչև գիտություն, տնտեսությունից մինչև քաղաքականություն, իրավունքից մինչև արվեստ, բարոյականությունից մինչև փիլիսոփայություն:

ե- Հասարակություն-անհատ հարաբերություններին վերացականորեն չնայելը կարևոր է: Անհատները մասնակցում են սոցիալական բոլոր ոլորտներում ստեղծված կառույցներին, որոնք ձևավորվել են պատմության ընթացքում, ունեն որոշակի լեզու և հաստատված ավանդույթներ: Իրենց մասնակցությունն են ունենում ոչ թե ինչպես ուզում են, այլ՝ հասարակության կողմից նախապես խնամքով պատրաստված ինստիտուտների ու ավանդույթների համաձայն: Անհատի սոցիալականացումը պահանջում է հսկայական կրթական ջանք: Ինչ-որ առումով հասարակության ամբողջ անցյալն ու մշակույթը յուրացնելուց հետո է միայն անհատը դառնում հասարակության անդամ: Սոցիալականացումը ձեռք է բերվում մշտական ջանքերով: Յուրաքանչյուր սոցիալական գործողություն նաև սոցիալականացման ակտ է: Ուստի անհատները չեն կարող խուսափել ձևավորվելուց ոչ թե այնպես, ինչպես իրենք են ցանկանում, այլ ինչպես իրենց հասարակությունն է ցանկանում: Անկասկած, քանի որ դասակարգային և հիերարխիկ հասարակությունները ճնշումների և շահագործման համար բաց հասարակություններ են, անհատի դիմադրության և ազատության պահանջը միշտ էլ գոյություն կունենա, և նա հոժարակամ չի ընդունի ստրկություն կերտող սոցիալականացումները: Նա ավելի կդիմադրի օտար, տարբեր, շահագործող հասարակությունների հետ ինտեգրմանը և ձուլմանը: Սակայն դեռևս փորձելու են նրան վերափոխել կամ նույնիսկ ոչնչացնել հասարակությունների և կրթական հաստատությունների անիվների տակ: Հասարակությունները, որոնք մանրացնում են անհատին իրենց ջրաղացի անիվների մեջ, ստեղծում են իրենց սեփական նյութերը՝ հասանելի ալյուրից և խմորից: Ե՛վ միջինստիտուցիոնալ հակասությունները, և՛ դիմադրող մարդը միշտ գոյություն կունենան, և անհատը հասարակության մեջ տեղ կգրավի փոխզիջումների վրա հիմնված հավասարակշռությունների շրջանակում: Ո՛չ հասարակությունն ունի անհատին բացարձակապես ոչնչացնելու ուժ, ո՛չ էլ անհատը հնարավորություն ունի ամբողջությամբ պոկվել հասարակությունից:

Մի խոսքով՝ մեթոդական ուսումնասիրությունը և ճշմարտության ռեժիմները, որոնք հասարակությանը դնում են ճշմարտացի մոտեցման վրա և կենտրոնանում մարդկանց վրա, կարող են ավելի բովանդակալից արդյունքներ տալ:

Չորրորդ՝ մարդկային մենթալիտետի ճկունությունը ամենազարգացած մակարդակում է և պետք է մեծապես ազդի մեր հետազոտության իմաստալից լինելու հնարավորությունների վրա: Չճանաչելով մարդկային մենթալի-

տետի բնույթը՝ մեթոդի և ճշմարտության գաղափարները մնում են օդում:

Հաճախ ենք նշել, որ մարդկային մտածելակերպը, որը փորձում ենք ճանաչել, երկակի կառուցվածք ունի: Մտավոր կառուցվածքը, որը բաղկացած է էվոլյուցիայի առումով ավելի հին մասից (ուղեղի աջ կիսագունդ), որտեղ զարգանում է հուզական մտածողությունը, և նոր մասից (ուղեղի ձախ կիսագունդ), որն ավելի հակված է վերլուծական մտածողության և բաց է շարունակական զարգացման համար և այս հատկանիշի շնորհիվ ունի մեծ ճկունություն: Կենդանական աշխարհում հույզն ու միտքը մոտ են իրար: Զգացմունքները սովորածին արձագանքում են պայմանավորված և անվերապահ ռեֆլեքսներով, այսինքն՝ կատարում են իրենց պահանջները: Սրանք անմիջական արձագանքներ են: Նույն կառուցվածքները գոյություն ունեն մարդկանց մեջ: Օրինակ, մարմինն անմիջապես արձագանքում է ջերմությանը: Այստեղ վերլուծական մտածողության կարիք չկա: Բայց Էվերեստ բարձրանալու համար հարյուրավոր պայմաններ պետք է վերլուծվեն: Միայն բոլոր համապատասխան հանգամանքների վերլուծությունից հետո է որոշում կայացվում ճանապարհ ընկնել: Զգացմունքային մտածողության մեջ սխալվելու տեղ չկա: Գործում ենք այնպես, ինչպես մեր բնազդն է արձագանքում: Մինչդեռ վերլուծական մտածողությունը կարող է տարիներ տևել: Մեթոդը, ուսումնասիրությունն ու ճշմարտության որոնումը պետք է հիմնված լինեն նման մտածելակերպի վրա: Առանց մեր մտքի աշխատանքային կարգը իմանալու ճիշտ մեթոդը և ճշմարտության իմացությունը չեն կարող խուսափել պատահական լինելուց:

Ուստի ինքնին միտքը լավ ճանաչելը պետք է առաջնահերթություն լինի:

Մեր մտքի առաջին առանձնահատկությունն այն է, որ այն ունի շատ ճկուն կառուցվածք: Կարելի է ասել, որ մեր մտքից դուրս տիեզերքի՝ մեզ հայտնի բոլոր կառույցներում ազատ ընտրության հնարավորությունը շատ սահմանափակ է: Ազատության տարածքը կարելի է դիտարկել շատ նեղ շրջանակներում: Մենք չգիտենք, թե ինչպես է ազատ ընտրությունը տեղի ունենում մակրոտիեզերքի ենթաատոմային մասնիկների և կառուցվածքների մեջ: Բայց, նայելով տիեզերքում առկա բազմազանությանը, արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ դա հնարավոր է միայն մասնիկների աշխարհում և մակրոտիեզերքում ճկուն գործելու և ազատ ընտրություն կատարելու ունակությամբ: Մարդու ուղեղում ճկունության այս շրջանակը մեծապես ընդլայնված է: Մենք գոնե ունենք պոտենցիալ, անսահմանափակ գործողության ազատություն: Իհարկե, չենք մոռանում, որ այդ ներուժը հնարավոր է ակտիվացնել միայն սոցիալականացման միջոցով:

Մեր մտքի երկրորդ առանձնահատկությունն այն է, որ մեր մտավոր ճկունությունը բաց է ճիշտ ընկալումների լայն շրջանակի, ինչպես նաև՝ կեղծ ընկալումների համար: Այս հատկանիշի հիման վրա ճնշման և զգացմունքների ցանցում ճկունությունը ցանկացած պահի կարող է խեղաթյուրվել: Այդ իսկ պատճառով ճնշումների և խոշտանգումների մեխանիզմները կիրառվում են զազարի քաղաքականության հետ մեկտեղ, որը հիմնված է զգացմունքները որսալու, խաբելու և մոլորեցնելու վրա: Մասնավորապես, հիերարխիկ և պետականակենտրոն կանո-

նակարգերը, որոնք հազարավոր տարիներ ճնշում են գործադրել մարդկային մտքի վրա, ստեղծել են ահռելի հետևանքներ՝ գործնականում կառուցելով իրենց մտածելակերպը: Հայտնի հատկանիշ է, որ միտքը պարգևների զոհ է դառնում: Չնայած դրան՝ մեր մտածելակերպը, որն ունի նաև դիմադրության հատկանիշ, ուրույն հատկանիշներ է դրսևորում ճիշտ ճանապարհով գնալու և մեծ ճշմարտություններին հասնելու առումով: Այս որակների մեջ որոշիչ դեր է խաղում մեծ մարդկանց ինքնուրույն միտքը: Ազատ ընտրությունները լավագույնս իրականացվում են, երբ մտքերը մնում են անկախ: Հարուստ ընկալումներն ու անկախությունը սերտորեն կապակցված են: Մտքի անկախությունը նրա՝ ավելի արդար գործելու կարողությունն է:

Նշեցինք, որ համընդհանուր կարգը գտնվում է ճշմարտության և արդարության միջև փոխհարաբերությունների տակ: Այնուհետև, կարելի է ասել, որ ըստ համընդհանուր կարգի՝ արդար միտքը հասել է ազատ ընտրության հնարավորությունը առավելագույնս օգտագործելու դիրքորոշմանը: Այդ իսկ պատճառով ազատության պատմությունը (սոցիալական պատմությունը), որը դաստիարակչական ամենամեծ ուժն է, դաստիարակում է մեր միտքը և դրան պատրաստում ճիշտ ընտրության: Հոգեվերլուծական մոտեցումները փորձում են չափել մեր մտքի խորությունն աճող տեմպերով: Հոգեվերլուծությունը հետզհետե դառնում է կարևոր՝ որպես գիտելիքի նոր ոլորտ: Այնուամենայնիվ, հոգեվերլուծությունն ինքնին բավարար չէ ճշգրիտ և օգտակար տեղեկատվության հասնելու համար: Դրանում մեծ դեր է խաղում յուրովի

վերաբերմունքն անհատի նկատմամբ: Մարդկանց հասարակությունից մեկուսացված համարելը կարող է հանգեցնել շատ ոչ ադեկվատ և անառողջ տեղեկատվության: Սոցիոհոգեբանությունը, որը ցանկանում է լրացնել այս բացը, առայժմ այնքան էլ արդյունավետ չէ: Սոցիոլոգիան ճիշտ չի հաստատվել, որ սոցիոհոգեբանությունն էլ ճիշտ արդյունքներ տա: Հոգեբանությամբ մենք կարող ենք լավ ճանաչել կենդանիների մտքերը: Մենք կարող ենք նաև հոգեբանության միջոցով ճանաչել մարդուն, որը բնորոշվում է որպես գերկենդանի (սուպեր կենդանի): Այնուամենայնիվ, դեռ մարդուն որպես սոցիալական կենդանի ճանաչելու ճանապարհի սկզբում ենք:

Մեթոդը և տեղեկատվական համակարգը նախագծելիս՝ մենք ավելի լավ ենք հասկանում, որ հաջող արդյունքների հասնելը թողնված է պատահականությանը՝ առանց լավ իմանալու մեր մտքի կառուցվածքը: Միայն այն դեպքում, երբ տրամադրվի մտքի ճիշտ և խորը սահմանում և ազատ ընտրության դիրք (սոցիալական ազատություն), մեր մեթոդը և գիտելիքների ռեժիմը կարող են գրագետ պատասխաններ տալ ճիշտ ընկալումներին: Այս պայմաններում մեր մեթոդական աշխատանքը մեծացնում է ավելի ճշգրիտ գիտելիքներով անհատ և ավելի ազատ հասարակություն դառնալու մեր հնարավորությունները:

Հինգերորդ՝ մետաֆիզիկական բնավորություն ունենալու մարդու կարողությունը մեթոդական և գիտելիքի համակարգային առումով իրենից եզակի օրինակ է ներկայացնում: Գիտելիքի հասանելիության մեթոդը և գիտությունը (իմացաբանություն) կարելի է ավելի կոմպետենտ դարձնել՝ վերլուծելով մարդկանց մետաֆիզիկա-

կան բնութագրերը: Մարդկանց հասկանալը մետաֆիզիկայի ստեղծման և կառուցման մեջ կարևոր հետազոտական թեմա է: Սոցիալական ամենաքիչ լուծված խնդիրներից մեկն այն է, որ մեզ մոտ նույնիսկ բացակայում է մետաֆիզիկական մարդուն բնորոշելու մակարդակը: Ինչպե՞ս կարելի է մետաֆիզիկական լինել: Սա ո՞ր կարիքից է բխում: Որո՞նք են դրա դրական և բացասական կողմերը: Հնարավո՞ր է ապրել առանց մետաֆիզիկայի: Որո՞նք են հիմնական մետաֆիզիկական հատկությունները: Արդյո՞ք մետաֆիզիկան գործում է միայն մտավոր և կրոնական ոլորտներում: Ի՞նչ կապ կա հասարակության և մետաֆիզիկայի միջև: Արդյո՞ք մետաֆիզիկան դիալեկտիկայի հակառակն է, ինչպես կարծում են, և արդյոք կարո՞ղ է սահմանափակվել դրանով: Այս թեմայի վերաբերյալ հարցերի թիվը կարող ենք էլ ավելի մեծացնել:

Քանի որ մարդիկ մեր գիտելիքի հիմնական առարկան են, ապա այս աղբյուրից բավարար գիտելիքներ ձեռք բերելու մեր պահանջը թերի կլինի՝ առանց իմանալու մետաֆիզիկական մտքերն ու ինստիտուտները, որոնք այս թեմայի ամենահիմնական բնութագրիչներից են: Խոսքը մի ոլորտի մասին է, որտեղ ոչ սոցիոլոգիան, ոչ հոգեբանությունը խնդիրներ չեն առաջացնում: Շատ մտքի դպրոցներ, հատկապես կրոնական մտքինը, գնահատվում են որպես մետաֆիզիկական, և այս փաստը մետաֆիզիկական խնդիրն էլ ավելի անլուծելի է դարձնում: Մետաֆիզիկայի խնդրին մեր մոտեցման հիմքը կայանում է նրանում, որ այն սոցիալական մարդու հիմնական հատկանիշն է: Մետաֆիզիկան սոցիալական կառուցման իրականություն է, առանց որի սոցիալական մարդիկ չեն

կարող գործել: Եթե մենք մարդկանց մետաֆիզիկայից վերացնենք, մենք նրանց կվերածենք կա՛մ սուպեր կենդանու (այս հայեցակարգը, որը Նիցշեն օգտագործում էր գերմանացիների համար, ապացուցված էր նացիստական Գերմանիայում), կա՛մ գերհամակարգչի: Այս իրավիճակին հասած մարդկությունը գոյատևելու որքա՞ն հնարավորություն կարող է ունենալ՝ որպես մարդ:

Եկեք խոսենք այն մասին, թե ինչ է մետաֆիզիկական մարդը:

ա - Բարոյականությունը մետաֆիզիկական մարդու հատկանիշն է

բ - Կրոնը կարևոր մետաֆիզիկական հատկանիշ է

գ- Արվեստն իր բոլոր ճյուղերով կարելի է բնութագրել միայն որպես մետաֆիզիկական:

դ- Ինստիտուցիոնալ հասարակությունը, և նույնիսկ հասարակությունը որպես ամբողջություն, ավելի հարմար է մետաֆիզիկական սահմանման համար: Այս հատկանիշները դեռ կարող ենք թվարկել: Հետևաբար, զարմանում եմ, թե ինչու և ինչպես մարդը կարող է լինել մետաֆիզիկական:

Առաջինը մարդու մտածելու կարողությունն է: Որպես ինքնագիտակ տիեզերքի տեսակ՝ մարդը պետք է իրեն կառուցի ֆիզիկականից վեր՝ վերացնելու այն սարսափը, որը նա զգում է թե՛ ցավի, թե՛ ուրախության առումով: Այլ կերպ նա չի կարող հաղթահարել ֆիզիկական ցավն ու ուրախությունը: Պատերազմներին, մահին, ցանկությանը, կրքին, գեղեցկությանը և այլ ընկալումներին դիմակայելու համար մետաֆիզիկական մտքերն ու ինստիտուտները անհրաժեշտություն են, որից դժվար է հրա-

ժարվել: Եթե Աստված չկա, այդ կարիքները կարող են բավարարվել հորինելով, արվեստ ստեղծելով և գիտելիքները զարգացնելով: Այլ տեսանկյունից, մետաֆիզիկայի մասին ֆիզիկայից դուրս մտածելը չի պահանջում ո՛չ դատապարտում, ո՛չ գովասանք: Մարդն իսկապես այն էակն է, որն ամենաշատն է հաղթահարում ֆիզիկայի սահմանները: Մարդու գոյաբանական բնավորության պահանջն է, որ նա ապրի մետաֆիզիկապես, ֆիզիկայից դուրս: Միայն ֆիզիկական գոյատևման կողմնակից լինելն անիմաստ է: Ավելի ճիշտ, ֆիզիկական մնալը կարող է հանգեցնել միայն մեխանիկական մարդու սահմանմանը: Սա մի մոտեցում է, որը Դեկարտն արդեն սահմանել էր, բայց փորձեց ազատվել գիտական բացատրություն չունեցող «հոգի» հասկացությունից:

Երկրորդ, այն, որ հասարակությունը չի կարող կայուն լինել առանց բարոյականության, պահանջում է մետաֆիզիկա:

Հասարակությունը կարող է կարգավորվել միայն ազատ դատողություն համարվող բարոյականությամբ: Չնայած ամբողջ ռացիոնալությանը՝ Խորհրդային Ռուսաստանի և փարավոնական Եգիպտոսի փլուզումը կարող ենք վերագրել նրանց բարոյականության պակասին: Միայն ռացիոնալությունը չի կարող պահպանել հասարակությանը: Միգուցե, կարող է անդամներին վերածել ռոբոտների և զարգացած կենդանիների, բայց չի կարող նրանց պահել որպես մարդ: Թվարկենք բարոյականության որոշ որակներ. Ցավին դիմանալու և կարիքները բավարարելու կարողություն, հաճույքի, ցանկության և կրքի սահմանափակումներ, վերարտադրությունը կապել

պարտադիր սոցիալական, այլ ոչ թե ֆիզիկական կանոնների հետ, որոշում կայացնել՝ հետևելով ավանդույթներին, կրոնին և օրենքներին, թե՞ ոչ: Օրինակ, վերարտադրության հանգեցնող սեռական հարաբերությունները կարգավորում է բարոյականությունը, և դա մարդկային տեսակի համար պարտադիր պահանջ է: Մենք չենք կարող հասարակությանը պահպանել առանց բնակչությանը վերահսկելու: Միայն այս հարցն ինքնին բացահայտում է բարոյական մետաֆիզիկայի մեծ անհրաժեշտությունը:

Երրորդ՝ արվեստով մարդը ստեղծում է յուրահատուկ տիեզերք: Հասարակությունը պահպանվում է միայն այնպիսի հիմնական ոլորտների ստեղծագործություններով, ինչպիսիք են ձայնը, նկարչությունը և ճարտարապետությունը: Հնարավո՞ր է պատկերացնել հասարակություն առանց երաժշտության, գրականության և ճարտարապետության: Այս բոլոր ոլորտներում ստեղծագործությունները մետաֆիզիկական նշանակություն ունեն: Այս ստեղծագործություններն անփոխարինելի են հասարակության պահպանման համար: Արվեստը՝ որպես ամբողջական մետաֆիզիկական ֆիկցիա, բավարարում է մարդու էսթետիկ լինելու կարիքը: Ինչպես մարդն իր բարոյական վարքագիծն իմաստավորում է լավի կամ վատի ընտրությամբ, այնպես էլ իմաստավորում է իր գեղարվեստական վարքը գեղեցիկի կամ տգեղի մասին դատողությամբ:

Չորրորդ՝ քաղաքական դաշտը նույնպես լի է մետաֆիզիկական դատողություններով: Ոլորտն ինքնին բաղկացած է ամենահզոր մետաֆիզիկական կոնստրուկցիաներից: Մենք չենք կարող քաղաքականությունը բացատրել ֆիզիկայի օրենքներով: Ֆիզիկայի օրենքներով կառա-

վարելու առավելագույնը ռոբոտացումն է, այլ կերպ ասած՝ ֆաշիզմի կողմից «նախիրին ուղղորդելն է»: Եթե հաշվի առնենք, որ քաղաքական ոլորտը նշանակում է նաև ազատ ընտրել և գործել, նորից կհանգենք քաղաքական մարդու մետաֆիզիկական կերպարին: Արիստոտելի՝ «Մարդը քաղաքական կենդանի է» արտահայտությունը մեծ մասամբ այս իմաստն է հիշեցնում:

Հինգերորդ՝ պետք է ուշադիր մատնանշենք, որ օրենքը, փիլիսոփայությունը, կրոնը և նույնիսկ «գիտությունը» մետաֆիզիկայով հագեցած ոլորտներ են: Մենք գիտենք, որ պատմական հասարակության մեջ այս բոլոր ոլորտները լի են մետաֆիզիկական աշխատանքներով թե՛ քանակական, թե՛ որակական առումներով: Անհատական և սոցիալական կյանքում մետաֆիզիկայի գերիշխող դիրքը որոշելուց հետո կարող ենք ավելի բովանդակալից մոտեցումներ մշակել դրա վերաբերյալ:

1 - Պատմական զարգացման մեջ մետաֆիզիկական մոտեցումները կա՛մ ամբողջությամբ փառաբանվում և դիտվում էին որպես հիմնարար ճշմարտություն, կա՛մ հակառակորդների կողմից քննադատվում էին որպես ամբողջովին խարդախ դաշտ և համարվում էին իրականություն չունեցող, մարդկանց խաբելու համար նախատեսված, բառերի ու սարքերի կույտ: Հեշտությամբ կարելի է պնդել, որ երկու մոտեցումներում էլ պատմական հասարակության ընկալումը կա՛մ անտեղյակ է, կա՛մ չափազանցված: Երկու մոտեցումներն էլ պաշտպանողներն անտեղյակ են, թե որ սոցիալական և անհատական առանձնահատկություններից ու կարիքներից է բխում մետաֆիզիկան: Փառաբանող խումբը մի կողմ է թողել մետաֆիզի-

կայի կապը ֆիզիկական տիեզերքի հետ և սխալվում է՝ կարծելով, որ մետաֆիզիկան անսահման ազատություն է: Այս խմբի անդամները կա՛մ ժխտել են մտքի և ոգու կապը նյութական աշխարհի հետ, կա՛մ այլասերել են այն և ընկել մոլուցքների ու չափազանցությունների մեջ՝ վերափոխված աստվածային պատվերից մինչև հենց մարդկանց աստվածացումը: Անկասկած, այս զարգացումների վրա մեծ ազդեցություն ունի հիերարխիկ և պետականակենտրոն կարգը:

Այն խումբը, որը ժխտում է մետաֆիզիկայի կարևորությունը՝ որպես իրենց դրոշակ, հարձակվել է մատերիալիստական աշխարհի, նյութական քաղաքակրթության և վերջերս՝ ռացիոնալության և պոզիտիվիզմի վրա: Այնուամենայնիվ, հետագայում ավելի լավ հասկացվեց, որ կապիտալիստական արդիականությունը, հատկապես հիմնված ռացիոնալության և պոզիտիվիզմի վրա և առաջնորդվելով «ֆաշիստական նախիրի» գաղափարախոսությամբ, «ռոբոտ-մեխանիկական մարդկանցով» և «սիմուլյացիաներից» բաղկացած ապրելակերպով, հանգեցրեց պատմական հասարակության կործանմանը և շրջակա միջավայրի ոչնչացմանը: Անխուսափելի էր, որ ֆիզիկայի օրենքներին չափից ավելի նվիրվածությունը հասարակությանը կբերեր կործանման և քայքայման: Այսպիսով, ապացուցվեց, որ «գիտականությունը» ամենավատ մետաֆիզիկան էր, եթե, իհարկե, սոցիալական կյանքը իմաստ ունի: Պետք է շեշտեմ, որ «գիտականությունը», որը ամենածանր մատերիալիզմն է, իշխանության և շահագործման ամենալավ պատրաստված փորձագետն է, հետևաբար, գիտակցաբար, թե անգիտակցաբար, կանգ-

նած է ամենախաբուսիկ դիրքում և ներկայացնում է մետաֆիզիկայի ամենամնացորդային ձևը:

2 - Նրանք, ովքեր ոչ մի կողմում չեն, և որոնց կարելի է համարել «նիհիլիստ», պնդում են, որ պարտադիր չէ, որ իրենք լինեն այս կամ այն կողմում, մետաֆիզիկային դեմ կամ կողմ: Նրանք պնդում են՝ կարելի է ապրել լիովին ինքնուրույն և անկախ: Հարկ է նշել, որ անվնաս թվացող այս խումբն, ըստ էության, ամենավտանգավորն է: Մյուս երկու կողմերն առնվազն մեծ իդեալներ ունեն, գիտակցում են այն արժեքները, որոնք ներկայացնում են: Նրանք հաստատակամ են հասարակության ձևավորման և անհատի վերակառուցման հարցում: Մյուս կողմից, լիովին անկախ խումբը թեև իրականում ապրում է հասարակության ներսում և հասարակության արժեքներով, կարծում է, որ նիհիլիստական (ժխտողական) կեցվածքով կյանքը հնարավոր է:

«Գիտնականները» մետաֆիզիկներին ամենամոտ խումբն են: Այս հատվածը, որի թիվը կապիտալիստական արդիականության հետ ձնագնդի պես ավելացել է, բաղկացած է փլուզված ու քայքայված հասարակության գաղտնազերծված (դասակարգից դուրս, դատարկության մեջ նետված, կոյուղու մեջ ընկած) տարրերից: Այս հատվածին կարող ենք անվանել կենդանացմանն ամենամոտը գտնվող խումբ: Ֆուտբոլային խուլիգանները տեսանելի օրինակն են, որն ամենամոտն է այս հատվածին. նմանատիպ խմբերը արագորեն բազմանում են: Այս օրինակներով կարելի է ապացուցել, որ կապիտալիստական արդիականությունը մեծացնում է քաղցկեղը: Մետաֆիզիկայի երկու պատմական մոտեցումներն էլ ի վերջո միավորվում են արդիականության գիտականության պոզիտիվիստական ըմբռնման մեջ: Մինչ նրանց կրոնը պոզիտիվիզմն է, որը քողարկված մետաֆիզիկա է, նրանց աստվածը ազգային պետությունն է:

Դիմակազերծ աստվածն ազգային պետությունների տեսքով բոլոր ժամանակակից հասարակություններում լայնածավալ ծեսերով և խորհրդանիշներով սրբազործված է:

3- Կարծում եմ՝ և՛ անհրաժեշտ է, և՛ հնարավոր՝ ավելի հավասարակշռված մոտեցում մշակել: Ավելի ճիշտ, իմանալով, որ մետաֆիզիկան սոցիալական կառուցման իրողություն է, ես իմ հիմնական պարտքն եմ համարում զարգացնել մի մետաֆիզիկա, որը բարոյականության, արվեստի, քաղաքականության և մտքի մեջ մոտ կլինի «լավին, գեղեցիկին, ազատին և ճշմարիտին:

Մետաֆիզիկան ո՛չ մերժելու, ո՛չ ընդունելու կեցվածք որդեգրելը և առանց լիակատար անկախության ամբարտավան մոլորության մեջ ընկնելու պատմական հասարակության մեջ մեր «բարի, գեղեցիկ, ազատ և ճշմարիտ» որոնումները շարունակելն «առաքինի կյանքի» էությունն է: Ես հավատում եմ, որ ապրելու այս առաքինի արվեստն է հասարակության մեջ կյանքը իմաստալից դարձնում:

Իհարկե, դատապարտված չենք մետաֆիզիկայի: Բայց մենք չենք կարող «լավագույնը, ամենագեղեցիկը, ազատն ու ճիշտը» գտնելուց ու զարգացնելուց հրաժարվել: Ինչպես ճակատագիր չէ դատապարտված լինելը չարի, տգեղի, ստրկության ու սխալի, այնպես էլ անհնարին չէ լավ, գեղեցիկ, ազատ ու ճիշտ ապրելակերպը: Մենք պարտավոր չենք հուսահատությունից և անպատասխա-

նատվությունից առաջացած նիհիլիստական կյանքով ապրել: Այս հարցի շուրջ պայքարը շարունակվում է՝ հասարակության վաղ կառուցումից ի վեր: Այսօրվա եզակի կողմն այն է, որ մենք ապրում ենք այնպիսի համակարգի քայքայման ժամանակաշրջանում, ինչպիսին կապիտալիստական արդիականությունն է: Լավի, գեղեցիկի, ազատի և ճշտի պայքարի համար պահանջվում են մտքի և գործողությունների ինքնատիպ դիրքորոշումներ և սոցիալական նոր կառուցումներ: Առկա է առավել գիտական որոնումների (մեթոդի և ճշմարտության ռեժիմի) անհրաժեշտություն, ինչպես նաև՝ այս ուղղությամբ սիրո մակարդակի կրքով բուռն ջանքեր գործադրելու անհրաժեշտություն:

Կապիտալիստական արդիականության հաղթահարման և դեմոկրատական արդիականության զարգացման ու տարածման խնդիրների պատասխանները գտնելու համար այն փաստարկները, որոնք մինչ այժմ փորձել եմ ներկայացնել, պետք է դիտարկել որպես մշակման կարիք ունեցող նյութ: Այդ նպատակով անհրաժեշտ է լույս սփռել հետմոդեռնության բեկումնային մեթոդների ու տեղեկատվական համակարգերի վրա, ինչպես նաև քննադատել պաշտոնական արդիականության հանգեցրած մեթոդներն ու տեղեկատվական ռեժիմները (ճշմարտության ուղին): Ահա թե ինչին է ուղղված մեր ուսումնասիրությունը: Մենք բացատրեցինք, թե ինչպես և ինչու պետք է կենտրոնանանք մարդու վրա՝ որպես հիմնական խնդիր: Կարևոր է մնում անհատի և հասարակության ճիշտ սահմանումը և ընկալումը: Սոցիոլոգիայի, սոցիոհոգեբանության և մարդաբանության այս ջանքերն արդյունավետ

չեն, քանի որ ենթարկվում են արդիականության լուրջ աղավաղումների և խրված են գիտելիք-իշխանություն ցանցերում: Անհատական ջանքերը, որոնք մեծ արժեք ունեն այս ոլորտներում, համակարգված և կազմակերպված չեն: Մտքի դպրոցների մակարդակով ներդրողները, հատկապես Ֆրանկֆուրտի դպրոցը, Ֆերնան Բրոդելը, նախ Նիցշեն հետո նաև Միշել Ֆուկոն և Վալերշտեյնը, շատ արժեքավոր մոտեցումներ ցուցաբերեցին այս հարցերի և ժամանակաշրջանի (արդիականության տարրալուծման և նոր հետմոդեռնության շրջանը. մենք ուզում ենք այն անվանել ժողովրդավարական արդիականություն) վերաբերյալ: Այդուամենայնիվ, նոր մեթոդներն ու գիտելիքի ռեժիմները հեռու են համակարգված լինելուց: Ջանքերը շատ են ու արժեքավոր, բայց կցկտուր: Դրա հիմնական պատճառներից մեկը, ինչպես խոստովանել է ինքը՝ Վալերշտեյնը, կապիտալիստական համակարգի թունավորումն է: Ջանքեր գործադրողները բառի բուն իմաստով թրթռում են արդիականության ճիրաններում:

Օրինակ, կարևոր են Նիցշեի այն մաքսիմները, ինչպիսիք են՝ «արդիականությունը հասարակությանը վերածում է չարիքի, նսեմացնում և հակադրվում է հասարակությանը»: Կարծես թե, նա ժամանակին հիսուն տարի հետոն է տեսել, և «սուպեր շիկահեր կենդանի» տերմինը, որը նա օգտագործել է, արտահայտում է «ֆաշիստական նախիրի» գաղափարը: Հասկանալի է, որ նա խիստ կարծիք է հայտնել իր «Այսպես խոսեց զրադաշտը» աշխատության մեջ, երբ հայտարարեց, որ արդիականացումը և ազգ-պետության ձևավորումը վաղ թե ուշ կհանգեցնեն «ֆաշիստական նախիրի» ձևավորմանը: Երբ ճապո-

նացիների մասին խոսելիս՝ նա «մրջյուն ազգ» ձևակերպումն է օգտագործել և նշել, որ խաղաղաշտ դուրս կգան այդ մրջյուն հասարակությունները, բառացիորեն կապիտալիստական դարաշրջանի մարգարեի դեր է կատարել:

Մաքս Վեբերը, «հասարակությունը երկաթե վանդակում փակելու» ընկալմամբ արդիականությունը գնահատելիս, կարևոր դիտարկում է անում: Մինչ ռացիոնալությունը համարում է աշխարհի կախարդանքը կորցնելու պատճառ, ընդգծում է քաղաքակրթության նյութական բնույթը:

Ֆերնան Բրոդելը խստորեն քննադատում է սոցիալական գիտությունները, որոնք կտրված են պատմության և տարածության միավորներից: Թեև ժամանակի և տարածության միավորից խուսափող նարատիվները գնահատում է որպես «իրադարձությունների դատարկ կույտեր», այդուամենայնիվ, զգալի ներդրում ունի մեթոդի խնդրի լուծման գործում: «Կարճ տևողություն-էպիզոդիկ պատմություն», «կոնյունկտուրային տևողություն-ցիկլային ճգնաժամի տևողություն» և «երկարատև կառուցվածքային տևողություն» հասկացությունները, որոնք Բրոդելը ներկայացրել է պատմությանը, աչք են բացում:

Ֆրանկֆուրտի դպրոցի քննադատությունը լուսավորության և արդիականության նկատմամբ բեկումնային է: Հեղինակավոր և ազդեցիկ է Ադորնոյի գնահատականն առ այն, որ արդիականության քաղաքակրթությունը հանգեցրեց «համակենտրոնացման» ճամբարների և դա «դարաշրջանի մութ ավարտ»ն է: Նա հատկապես հայտնի է իր «Սխալ կյանքը չի կարելի ճիշտ ապրել» արտահայտությամբ: Սրանով նա կարծես մեծ ընկալման է հասել՝ բացահայտելով, որ արդիականությունը մեթոդական ու գիտելիքի առումով սխալ է հաստատված: Լուսավորության և ռացիոնալության քննադատությունները նույնպես աչք են բացում:

Բավականին ուսանելի է, որ Միշել Ֆուկոն արդիության մեջ երկնային աստծո մահվանը ավելացրեց մարդու մահը: Մասնավորապես, վճռականությունը, որ ժամանակակից իշխանությունը նշանակում է մշտական պատերազմ թե՛ հասարակության ներսում և թե՛ դրսում, ուժեղ, բայց դեռ չեփված վճռականություն է:

Նրա գնահատականները այնպիսի հասկացությունների շղթայի վերաբերյալ, ինչպիսիք են իշխանությունը, գիտելիքը, բանտը, հիվանդանոցը, ապաստանը, դպրոցը, զորանոցը, գործարանը, հասարակաց տունը, թեև անուղղակիորեն, բայց նպաստում են այն գաղափարին, թե ինչպես պետք է ստեղծվի ազատ տեղեկատվական համակարգը, ինչպես նաև մեթոդը: «Իշխանություն-պատերազմ-ազատություն» վերլուծության մեջ, որը նա չկարողացավ ավարտին հասցնել վաղաժամ մահվան պատճառով, Միշել Ֆուկոն, կարծես, ուզում է հայտարարել, որ արդիականությունը մարդկանց սպանում է հասարակության ներսում և դրսում մշտական պատերազմական իրավիճակի պատճառով: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ազատությունը հասարակական կյանքի մի ձև է, որը կարողացել է խուսափել պատերազմից: Այդ դեպքում ազատությանը հնարավոր չէ հասնել առանց ոչնչացման բոլոր միջոցներն արտադրող արդյունաբերությունը, ռազմատենչությունը, շահույթի օրենքը և կանոնավոր բանակ-

ները վերացնելու և դրանք հասարակության ինքնապաշտպանությամբ ու էկոլոգիայով փոխարինելու:

Վալերշտայնը կապիտալիստական աշխարհակարգի ընկալման մեջ հաստատակամ է: Նա կատարյալ ներկայացրել է ժամանակակից համակարգը 16-րդ դարից մինչև մեր օրերը: Այնուամենայնիվ, նա լիովին հստակ չէ թե՛ համակարգը գնահատելու (ինչպես Մարքսը՝ նա անհրաժեշտ է համարում կապիտալիստական փուլը և հակված է այն հաստատելու), թե՛ համակարգին և նրա ելքին հակադրվելու հարցում: Վալերշտայնը կարծես թե խոստովանություն է անում, երբ դա կապում է բուրժուական համակարգի քաղցրացման հետ: Նա կարևոր թեզ է արտահայտում, երբ ասում է, որ սոցիալիստական համակարգը, ինչպես Խորհրդային Ռուսաստանը, կապիտալիստական արդիականությունը հաղթահարելու իշխանություն է տալիս, և որ դրա լուծարումը ավելի շուտ կթուլացնի կապիտալիստական լիբերալիզմը, քան կամրապնդի այն: Սակայն այն չի կարող նույն կոմպետենտությունը դրսևորել համակարգի քայքայման և կրկին ի հայտ գալու հարցում: Նա իրավացիորեն կանխատեսումներ չի անում այն մասին, թե երբ և ինչպես կավարտվի 1970-ականներից հետո արդիականության (կապիտալիզմի) ունեցած կառուցվածքային ճգնաժամը: Այնուամենայնիվ, պետք է ասել, որ յուրաքանչյուր փոքր բովանդակալից միջամտություն կարող է հանգեցնել մեծ արդյունքների: Մենք տեսնում ենք, որ նա շատ է հեռացել խիստ դետերմինիզմից: Կարելի է ասել, որ նա ունի մեթոդի և տեղեկատվական համակարգի վերաբերյալ ամենագրագետ գնահատականը:

Այս համատեքստում, անկասկած, կարելի է նշել շատ այլ մտավորականների անուններ: Մյուրեյ Բուկչինի էկոլոգիայի վերլուծությունները, մեթոդի և տրամաբանության վերաբերյալ Ֆեյերաբենդի քննադատություններն ու առաջարկությունները բեկումնային են: Այս բոլոր մտավորականներին պակասում է գիտելիքի և գործողության միասնությանը գրագետ հասնելու կարողությունը: Դրանում, անկասկած, ազդեցություն է ունեցել կապիտալիստական արդիականության ահռելի ինքնամփոփ ուժը: Թեև մարքսիստական դպրոցը հավակնում է լինել կապիտալիզմի ամենակոշտ գիտական քննադատը, բայց հեգնանքով պետք է նշել, որ դա չի խանգարել նրան դառնալ համակարգի համար ամենաօգտակար գործիքը գիտելիքի և ուժի առումով և չի կարողացել խուսափել լիբերալիզմի ձախ թևը լինելուց: Հարյուր հիսուն տարվա փորձը դրա բավարար ապացույցն է: Սրա հիմնական պատճառը կարող ենք վերագրել այն փաստին, որ այս դպրոցն իր մեթոդը և իր բոլոր գիտելիքները ինդեքսավորում է «տնտեսական ռեդուկցիոնիզմին»: «Գիտական սոցիալիզմը», որը շատ պարզ է վերաբերվում հասարակության մետաֆիզիկական և պատմական բնույթին, իշխանության երևույթը վերածում է պարզ կառավարական հանձնաժողովի և մոգական դեր վերագրում տնտեսաքաղաքական վերլուծությանը, չի կարողացել խուսափել պոզիտիվիզմի տարբերակ լինելուց: Թեև այն հիմնադիր դեր է վերագրում սոցիոլոգիային նույնքան, որքան Էմիլ Դյուրկհեյմը և Մաքս Վեբերը, այն չի կարողանում մեթոդական և իմացաբանության առումով հաղթահարել իր դիրքը՝ որպես լիբերալիզմի ձախ դպրոց: Հերթական անգամ պարզ է

դառնում, որ կարևորն ու վճռորոշը ոչ թե մտադրություններն են, այլ հասարակության մեջ գերիշխող համակարգի (մեթոդ, գիտելիք-ուժ, տեխնիկական ուժ) ձուլվող ու ինտեգրվող ուժային կենտրոնները: Կապիտալիստական արդիականությունը հնարավոր չէ հաղթահարել առանց կարևոր ուժ հանդիսացող տնտեսական հզորության և այլ հիմնարար մետաֆիզիկական ուժերի հետ պատմահասարակական ճիշտ վերլուծության ենթարկելու: Հնարավոր չէ խնդիրները վեր հանել, լուծումներ առաջարկել ու գործի դնել. այս իրավիճակը կոպիտ պոզիտիվիզմի մեջ ընկնելուց բացի, այլ ոչ մի արդյունքի չի բերում: Ներկայիս տեսությունն ու պրակտիկան համարժեքորեն ապացուցում են այս փաստը:

Անարխիստական դպրոցները, որոնք առաջացել են որպես կապիտալիստական արդիականության արմատական քննադատություն, կոմպետենտ են գիտելիքի մեթոդով և տեսությամբ: Նրանք մարքսիստների նման չեն խոսում կապիտալիզմի առաջադեմ լինելու մասին: Դրանք կարողացան հասարակությանը նայել բազմաթիվ տարբեր կետերից, որոնք գերազանցում են տնտեսական կրճատմանը: Նրանք գրագետ են խաղում համակարգի «ապստամբ երեխաների» դերը: Չնայած նրանց բոլոր բարի մտադրություններին՝ այս շարժումները, ի վերջո, մեղավոր են: Եվ հակառակ իրենց բոլոր բարի նպատակներին՝ այս շարժումները չէին կարող խուսափել աղանդներից, որոնք համառորեն պաշտպանում էին իրենց համակարգի մեղսագործությունից: Մարքսիզմի մասին ասածս վավեր է նաև այս շարժումների համար. համակարգն ու դրա հաղթահարման խնդիրները ճիշտ սահմանելուց և

դեմոկրատական արդիականության մեթոդն ու գիտելիք-գործող ուժը գրագետ օգտագործելուց դրանք հեռու են մնում, և սա հիմնական խնդիրն է:

Մենք կարող ենք նմանատիպ գնահատականներ տալ բնապահպանական, ֆեմինիստական և մշակութային շարժումների տեսություններին և պրակտիկային: Այս շարժումները հիշեցնում են արդիականության երկաթե վանդակից ազատված փոքրիկ կաքավների: Անընդհատ անհանգստանում ենք, թե որտեղ և երբ են դրանց որսալու: Բայց դեռ կարևոր է դրանց տեսնել որպես հույսի շարժումներ: Նրանք կարող են մեծ ներդրում ունենալ, երբ այլընտրանքային հիմնական հոսքը զարգանա: Սոցիալ-դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումները բավականին վաղ ինտեգրվեցին ժամանակակից համակարգին և դարձան նրա շարժիչ ուժերը: Դրանց հաջողվել է դառնալ հիմնական լիբերալիզմի երկու հզոր աղանդ:

Կարծում եմ, որ իմ հակաարևելյան մոտեցումը հակիրճ ներկայացնելը կնպաստի թեմայի վերաբերյալ եզրակացության գալուն: Դիտելով ինքս ինձ արդիականության դեմ՝ հասկանում եմ, որ մեծ հակասության մեջ եմ: Ես կարող եմ անմիջապես բացատրել դրա երկու պատճառ. Առաջինը դասական մերձավորարևելյան մշակույթի ազդեցությունն է: Այս մշակույթն ունի արմատացած հակասություններ և, հետևաբար՝ խնդիրներ կապիտալիստական արդիականության հետ: Առաջին հերթին, մերձավորարևելյան մշակույթը շատ արմատական է հասարակությանն առաջնահերթություն տալու հարցում: Անհատականությունը հեշտությամբ չի կարող դեմք գտնել հասարակության մեջ: Սոցիալական նվիրվածությունը

անհատականության գնահատման հիմնական չափանիշն է: Հասարակության հանդեպ նվիրվածությունը շատ բարձր է: Կրոնն ու ավանդույթը մեծ ազդեցություն ունեն դրա վրա: Հասարակությունից կտրվելուն արհամարհում են և ծաղրում, համայնք փոխելուն են լավ աչքով չեն նայում, բայց երբ ձեռք են բերվում ավելի որակական պարտավորություններ, ի հայտ է գալիս սուբլիմացիա: Նրանց, ովքեր տեղ են զբաղեցնում հիերարխիկ համակարգում և կառավարման մակարդակներում, նախանձով են նայում: Այս ընկալման մեջ շատ արդյունավետ է նաև Մերձավոր Արևելքի ավանդական հիերարխիկ և պետականակենտրոն մշակույթը: Այս հատկանիշների ընդհանուր ազդեցության շնորհիվ այն հեշտությամբ չի հանձնվում արտաքին մշակույթներին, այդ թվում՝ ժամանակակից մշակույթին: Ավելի ճիշտ՝ դժվար կձուլվի այս մշակույթներին:

Հետևաբար, զարմանալի չէ, որ «ումմայի» մշակույթը, որն ուժեղ ավանդույթ է, դեռևս գերադասելի է ազգ-պետականամետությունից, որն այսօրվա ամենաուժեղ շարժումներից է: Որովհետև ազգ-պետությունը կապիտալիստական մոդեռնիզմի արդյունք է, օտար է: Քաղաքական իսլամիզմը և ազգ-պետություն ազգայնականությունը համեմատելիս, որոնք երկուսն էլ, ըստ էության, ազգայնականություն են՝ գերադասելի է ավելի շատ տեղական իսլամիստական ազգայնականությունը: Առանց այն էլ արդիականության հետ անհամատեղելիությունը շարունակվում է կյանքի շատ ոլորտներում: Մշակութային և ոչ մի վայրում կապիտալիստական արդիականության դեմ դիմադրություն չի իրականացվել, բացի Մերձավոր Արևելքից: Եթե նույնիսկ իրականացվել է, ապա այն կլանվել է

կապիտալիստական արդիականության կողմից և չի կարողացել խուսափել գերիշխող արդիականությանը ձուլվելուց: Նույնիսկ այս համեմատությունը բավարար է մշակութային կառույցի պատմահասարակական մնայունությունն ապացուցելու համար:

Երկրորդ պատճառն այն է, որ թեև ես մեծ հետաքրքրություն եմ ցուցաբերել արևմտյան մտածելակերպի նկատմամբ, բայց վաղուց ամեն մի տենդենցի հիվանդագին կերպով չեմ մոտենում: Թեև այն այնքան էլ խորը արմատներ չունի և հիմնված չէ ամուր մեթոդի վրա, բայց քաջատեղյակ եմ այն մեթոդի և գիտելիք-գիտություն կուտակմանը, որը հանգեցրեց արդիականության ճշմարտության իմ հետազոտությանը. Ես տեսա դրա հստակ գերազանցությունը: Հետևաբար, այս ժամանակակից մշակույթին արագ արձագանքեցի այնպես, ինչպես Մերձավոր Արևելքի մշակույթին: Թեկուզ ուշ, բայց հասկացա, որ նրանք երկուսն էլ եկել են նույն քաղաքակրթական հարթակից: Խելամտությամբ տեսա, որ երկու մշակույթների հիմնական աղբյուրը հիերարխիկ և պետականակենտրոն կառույցներն են, որոնք առնվազն հինգ հազար տարվա վաղեմություն ունեն: Հետևաբար, համարձակություն ունեցա նույն համառությամբ քննադատել երկու մշակույթների ընդհանուր կողմերը: Դժվար չէ տեսնել, որ այս քննադատություններում անհատապաշտությունը գնահատվում է որպես հասարակությանը մկան պես կրծող երևույթ: Դժվար չպետք է լինի որոշել, որ կապիտալիստական լիբերալիզմը, որը պնդում է, որ հիմնված է անհատի ազատության վրա, իրականում մարդկային հասարակությունը ոչնչացնելու արվեստ է, և որ դրա աղբյուրը

ավանդական վաճառական մշակույթն է: Կարելի է բացատրել, որ վաճառական մշակույթը կապված է բազմաթիվ հին ավանդույթների հետ, ներառյալ՝ Մերձավոր Արևելքի երեք հիմնական միաստվածական կրոնները: Առևտրի հիմքը հանդիսացող ապրանքափոխանակությունն ու ապրանքաշրջանառությունը առաջատար դեր են խաղացել մարդկային հավաքականություն հանդիսացող հասարակությունների և համայնքների փտման և քայքայման գործում: Կոմերցիոն մտածելակերպը շատ ուժեղ մերձավորարևելյան ավանդույթ է: Աստվածների գյուտից և հասարակության մեջ դրանց սրբացումից մինչև պետական կառավարման արվեստի դավադրություն, բարոյականության մեջ ստի և կեղծավորության կառուցվածքային տեղակայում. այս ամենը վճռական ազդեցություն է ունենում բազմաթիվ կասկածելի խորհրդանիշների, ինքնության, լեզվի և կառուցվածքի պահպանման վրա: Արևմտյան Եվրոպայի ներդրումը կայանում է նրանում, որ նա այս համակարգը Մերձավոր Արևելքից վերցրել է և Վերածննդի, Ռեֆորմացիայի և Լուսավորության դարաշրջանների շահագործման հիման վրա այն դարձրել գերիշխող սոցիալական համակարգ: Մերձավոր Արևելքի հասարակություններում առևտրականներին և նրանց հաստատություններին բարենպաստ չեն վերաբերվում և առաջնային նշանակություն չեն տալիս: Ընդհակառակը, նրանց միշտ կասկածանքով են վերաբերվում: Իսկ Եվրոպայում կապիտալիստական արդիականությունը ձեռք բերեց այն, որ առևտրային համակարգը դարձրեց հասարակության պսակը և ամբողջ գիտությունը, կրոնն ու արվեստը դրեց այս նոր հասարակության ծառայության

տակ: Այն, ինչ Մերձավոր Արևելքում անհասկանալի էր և երկրորդական, Եվրոպայում դարձավ հայտնի և առաջնային:

Այսօրվա Մերձավոր Արևելքում մոդայիկ է դարձել եվրոպական արդիականությունը քննադատելը և նույնիսկ արմատական իսլամի և բռնության միջոցով այդ արդիությանը հակադրվելը: Բայց, իմ կարծիքով, այսպիսի մոտեցում ունեցողները և այսպես գործող կազմակերպությունները՝ Էդվարդ Սաիդից մինչև «Հեզբոլլահ» շարժում, որոնք հավակնում են լինել հակաարևելյան և արդիականության թշնամիներ, իրականում հենց արդիականության ներսում են ձևավորվել: Ինչպես մարքսիստական ավանդույթը, նրանք նույնպես արդյունքում չեն կարող խուսափել արդիականությանն անպատվաբեր կերպով ծառայելուց: Ինչպես որ նրանց առաջացումը բուն արդիականության շնորհիվ է, այնպես էլ նրանց բնույթն է՝ սովամահ մարդկանց նման մուրալ արդիականությունից և նույն մոտեցմամբ պաշտպանել արդիականությունը, անկախ նրանից՝ հաջողակ են, թե անհաջող: Նրանք կրում են միայն ավանդույթի հագուստն ու մորուքը: Նրանց հոգիներն ու մարմինները բեռնված են արդիականության ամենահետամնաց մնացորդներով:

Կարծում եմ՝ քննադատության իմ մեթոդը և տեղեկատվությունը գնահատելուս ձևը թավ տողերով ներկայացրել եմ: Առնվազն որոշակի լուսավորություն, թեև սահմանափակ, ձեռք է բերվել այն մեթոդի և գիտության սահմանման հարցում, որը հանգեցրեց կապիտալիստական արդիականությանը: Թեև համոզված չենք դրա ճշգրտության մեջ, բայց հնարավորություն ունենք «բարելավել գի-

տության մեր մեթոդն ու ոճը՝ ազատական և ժողովրդավարական ելքերին հասնելու համար», որոնք պետք է նախընտրենք արդիականության ապրած կառուցվածքային «քաոսի» ժամանակաշրջանում: Ավելի ըմբռնելի դարձնելու համար կարող ենք մեր բացատրությունը թվարկել հետևյալ վերնագրերի ներքո.

1- Կապիտալիզմի և գիտության մեթոդի ու ըմբռնման (պարադիգմայի) կապը, որի հիմքը դրել են Ռոջերը և Ֆրենսիս Բեկոնն ու Դեկարտը, պետք է լավ տեսնել և քննադատել այս համատեքստում:

2- Հստակ պետք է տեսնել, որ սուբյեկտիվություն-օբյեկտիվ տարբերակումը խորացնելու և այն բազմաթիվ երկընտրանքներում արտացոլելու նպատակն այն է, որ ինդիվիդուալիզմը (սուբյեկտը) գնահատում է հասարակությանը (օբյեկտը) որպես ռեսուրս, որը բաց է բոլոր տեսակի չարաշահումների համար:

3- Գիտության այս մեթոդը և ըմբռնումը հասարակության բուրժուա-պրոլետարիական բաժանումն ընդունեցին որպես բնական և ճանապարհ հարթեցին պրոլետարին որպես օբյեկտ օգտագործելու համար:

4- Կապիտալիստական արդիականությունը գիտատեխնիկական ֆանտաստիկայի հիմքը դրեց «Գիտությունը ուժ է» ասացվածքով և գիտելիք-իշխանություն միասնությունը դարձրեց համակարգի հիմնական գենքը:

5- Կապիտալիստական արդիականությունը, որը կարևոր դեր է ունեցել կրոնի և մետաֆիզիկայի աբ-

սուրդների ու մոլուցքների բացահայտման գործում, գիտությունը վերածել է պոզիտիվիզմի տեսքով նոր կրոնի՝ ստեղծելով սեփական կրոնը՝ կրոնի և մետաֆիզիկայի դեմ պայքարի անվան տակ:

6- Լիբերալիզմը իր պաշտոնական գաղափարախոսությունը դարձնելու միջոցով այն հասել է ամենաուժեղ գաղափարական հեգեմոնիային՝ «անտեսանելի ձեռք, անտեսանելի միտք» տեսքով՝ մի կողմից այն օգտագործելով որպես ամենահաշտարար գործիք, մյուս կողմից՝ որպես զենք բոլոր հակադիր գաղափարախոսությունները ինտեգրելու և յուրացնելու համար:

7- Լիբերալիզմն ու պոզիտիվիզմը ֆորմալացնելու ընթացքում այն վարկաբեկեց շատ այլ մտքի դպրոցների և գաղափարական շարժումների և համառ էր այդ ջանքերում այնքան ժամանակ, մինչև իր մեջ ներառեց նրանց հակառակորդներին:

8- Այն վարկաբեկեց փիլիսոփայությունն ու բարոյականությունը՝ այդպիսով նվազեցնելով համակարգի հակառակորդների հնարավորությունները հեռանկարը զարգացնելու և դիրքորոշվելու (ազատ ընտրություն= բարոյականություն) հարցում:

9- Չափից դուրս կարգապահելով գիտությունը՝ կապիտալիստական արդիականությունը ոչնչացրել է նրա ներքին ամբողջականությունն ու իմաստը. Այն բացատրեց փղին իր մազերով, իսկ անտառը՝ ծառերով: Իմանալու նպատակն այլևս կյանքի իրական իմաստը բացահայտելը չէ, այլ փող աշխատելը: Գիտություն-իմաստություն գծից անցում կատարվեց

գիտություն-իշխանություն-փող գծին: Գիտություն-իշխանություն-կապիտալ արդիականությունը նոր սուրբ դաշինք է:

10- Կապիտալիստական մոդեռնիզմը՝ իր դասակարգային քաղաքակրթությամբ, կանանց վերածել է ամենաառաջադեմ ստրուկների՝ դարձնելով նրանց կին (ամուսնական հարաբերություններում): Բացի այդ, կապիտալիստական մոդեռնիզմը՝ իր դասակարգային քաղաքային քաղաքակրթությամբ, ամորձատում էր տղամարդկանց՝ տալով նրանց քաղաքացիության ինքնություն և այդպիսով նրանց վերածելով կանանց (ամուսնության մեջ նրանց դնելով կանանց դիրքում): Այս երկու գործընթացների ավարտին հասարակությունն ընդհանրապես դարձավ կնոջ նման և դրանով իսկ կառավարելի դարձավ:

11- Արդիականության մեջ իշխանությունը նշանակում է մշտական պատերազմ ինչպես հասարակության ներսում, այնպես էլ հասարակությունների միջև: Պետության և հասարակության տարբերությունն անիմաստ է դարձել.«Բոլորը բոլորի դեմ պատերազմական վիճակը», որը Հոբսն ասում էր նախակապիտալիստական հասարակության մասին, ըստ էության, հասել է իր լիարժեք ձևին կապիտալիստական արդիականության պայմաններում: Ցեղասպանություններն այս պայքարի գագաթնակետն են:

12- Կապիտալիստական արդիականության համակարգում կենտրոն-ծայրամաս ընդլայնման գործընթացի ավարտը, էկոլոգիական ոչնչացումը՝ մինչև անկայուն մակարդակ, գործազրկությունը, աղքատությունը և ցածր աշխատավարձը, բյուրոկրատիայի՝ դրսի աշխարհին կուլ տալու չափերին հասնելը, աստվածային հասարակության փլուզումը, համաշխարհային ֆինանսների հեգեմոնիզացումը, կապիտալի ամենամակաբուծական հատվածը, որն անջատված է արտադրությունից և այս բոլոր զարգացումների դեմ դիմադրության ցանցերի զարգացումը հասարակության ճնշող մեծամասնության մոտ և բոլոր ոլորտներում ստեղծում է կառուցվածքային ճգնաժամ:

13- Կառուցվածքային ճգնաժամի ժամանակաշրջանները իրենց հետ տանում են մի գործընթաց, որի ընթացքում կողք կողքի կարող են տեղի ունենալ հեղափոխական և հակահեղափոխական, ինչպես նաև դեմոկրատական-ազատական բեկումներ և տոտալիտար-ֆաշիստական հեղաշրջումներ:

Նրանք, ովքեր ամենահեղինակավոր ձևով մշակում են մեթոդ և գիտական համակարգեր և դրանք որպես հիմք են դնում իրենց գործողությունների համար, նոր սոցիալական համակարգի կառուցման գործում ամենահաջողակը կլինեն:

14- Ժողովրդավարական, էկոլոգիական, ազատական և արդարացի շարժումները կարող են ստեղծել ձևավորումներ, որոնք կարճ ժամանակում փոքր և զրաֆետ սկզբնական քայլերով կորոշեն երկարաժամկետ ապագան՝ կառուցվածքային ճգնաժամի և քաոսի պայմաններում:

Այս փաստերի հիման վրա՝

1- Սոցիոլոգիայի գնահատումը պատմական և տարածական չափումներով գործող ուղեցույց է:

2- Կապիտալիստական արդիականությունը, որ փորձել ենք տասնչորս կետերով սահմանել, բազմաթիվ ոլորտներում դրսևորված քաղցկեղային կառույց է, որին հակադրվելով՝ պետք է լուծումներ մշակել համակարգից դուրս:

3- Գաղափարային առումով հաղթահարել սուբյեկտիվություն-օբյեկտիվություն տարբերակման վրա հիմնված բոլոր կոպիտ երկատվածությունները, ինչպիսիք են իդեալիզմ-մատերիալիզմ, դիալեկտիկա-մետաֆիզիկա, լիբերալիզմ-սոցիալիզմ, դեիզմ-աթեիզմ, և հիմք ընդունել իմաստաբանությունը (մեկնաբանության արվեստը), որն ընդգրկում է բոլոր գիտական նվաճումները:

4- Լավ, գեղեցիկ, ազատ և ճշմարտության վրա հիմնված մարդկային մետաֆիզիկան չպետք է անմասն մնա ինչպես քննադատական մեթոդներում, այնպես էլ նոր կառուցողական քայլերում:

5- Ժողովրդավարական քաղաքական դիսկուրսը որպես հիմք ընդունելը:

6- Ժողովրդավարական քաղաքականության դիսկուրսով հազարավոր հասարակական կազմակերպությունների ստեղծում (սկսած երեք հոգուց մինչև հազար հոգի՝ կախված գործառույթներից, առավելություններից և անհրաժեշտությունից) բոլոր ոլորտներում, որտեղ կա ճգնաժամ և իշխանություն:

7- Ստեղծել նոր հասարակությամբ ազգ, որը պետք է կառուցվի որպես ժողովրդավարական ազգ: Չանտեսել այն փաստը, որ ժողովրդավարական ազգը կարող է լինել ազգ-պետությունից առանձին, բայց նաև նրա հետ կողք կողքի կամ նույնիսկ միահյուսված:

8- Ժողովրդավարական ազգի քաղաքական կառավարման ձև մշակել և համեմատել հայտնի որևէ կատեգորիայի հետ: Ստեղծվելիք կառավարման ձևը կարող է լինել տեղական, ազգային, տարածաշրջանային և համաշխարհային դեմոկրատական կոնֆեդերալիզմի հիման վրա (տարբեր ազգեր կարող են կազմակերպվել որպես մեկ ժողովրդավարական ազգ: Այն կարող է կազմակերպվել՝ որպես ազգային պետություն և դեմոկրատական ազգ՝ նույն ազգի ներսում: Տարածաշրջանային դեմոկրատական կոնֆեդերացիաները և ժողովրդավարական ազգերի համաշխարհային համադաշնությունը չափազանց անհրաժեշտ են ներկայիս Միավորված ազգերի կազմակերպության համեմատ և կարող են ավելի արդյունավետ լինել համաշխարհային և տեղական-ազգային խնդիրների լուծման համար):

9- Ժողովրդավարական հասարակության զարգացում՝ ի դեմս ինդուստրիալիզմի, որը ժառանգություն է արդիականության և նրա ամուր հենասյուների վրա (արդիականությունը հիմնված է եռակի սյունի վրա՝ ա- կապիտալիստական պրոդյուսերականիզմ, բ- ինդուստրիալիզմ, գ- ազգ-

պետականություն), տնտեսության էկոլոգիականացում և տեխնոլոգիա:

10- Սոցիալական պաշտպանությունն ապահովում է ժողովրդական միլիցիան:

11- Արական կարգի փոխարեն՝ իր ամուր հիերարխիկ և պետական հիմքերով, պետք է կառուցվեն ընտանեկան նոր համակարգեր՝ հիմնված կանանց խորը ստրկությունից դուրս գալու, ազատության և հավասարության վրա:

Այս վերնագրերը բավարար են մեր պարադիգմատիկ տեսակետը արտահայտելու համար, որը մենք կարող ենք ավելի մեծացնել և մանրամասնել: Մենք լավ գիտենք, որ կապիտալիստական արդիականության ժամանակաշրջանը համընկնում է ազատության և հավասարության ուտոպիաների ժամանակներին, երբ սկսվեց դատաստանը: Մարդիկ մեծ ջանքեր են գործադրել այդ ուտոպիաներն իրականացնելու համար: Արյուն է հոսել օվկիանոսի չափ: Անհամար տանջանքներ ու տառապանքներ են եղել: Մենք չենք կարող դրանք ապարդյուն համարել: Ընդհակառակը, այս բոլոր խնդիրները լուծելու մեր փորձն է լուսավորել մեր ճանապարհը՝ ճիշտ մեկնաբանելով պատմությունը և մեր կյանքը ինտեգրելով մեր ուտոպիաներին, որպեսզի կարողանանք վերադառնալ սիրով լի հետաքրքրաշարժ կյանքի: Ուտոպիստական և մեծ հույս ունեցող կյանքին անցնելը դժվար ջանքեր է պահանջում:

Մենք ամբարտավան կերպով չենք ձևացնելու, թե մեթոդի և գիտության համակարգվածությունը մեզնով է սկիզբ առնում: Բայց բոլոր հարցերում, որոնց փորձել եմ

անդրադառնալ, փորձել եմ ցույց տալ, որ ինչ-որ բան այն չէ, և որ սա սկզբունքորեն պարադիգմատիկ է: Ուզում եմ ընդգծել, որ իմ մեկնաբանության և իրագործման ջանքերը չպետք է դիտարկել որպես նոր համակարգի արմատական կայացում, ոչ էլ որպես իմ քննադատության լիակատար մերժում: Ի վերջո, կարևոր է քննադատել կապիտալիստական արդիականությունը, որը հանգեցրել է իմ իրավիճակի նման միլիոնավոր իրադարձությունների և ողբերգությունների (անթիվ ջարդեր, ցեղասպանություններ և պատերազմներ): Հատկապես, երբ ժողովուրդը և տարածաշրջանը, որին ես պատկանում եմ, անցնում են պատմության ամենադաժան ողբերգական գործընթացով, մտավորական լինելու նվազագույն պայմանն է ճիշտ մեկնաբանել պատասխանատվության ենթակա բոլոր գործոնները: Սակայն, եթե ինձ դատում են որպես չափազանց ընդգրկուն և արդյունավետ կազմակերպության ղեկավար, բնական է, որ հիմնական պարտականությունս բաղկացած է հարցերից և պատասխաններից՝ իմ ասածի շրջանակներում: Եթե որևէ վայրում և ժամանակում ճնշումը, չարաշահումը, քայքայումն ու փակուղին խորն են, և կյանքը մահից ավելի վատ՝ անպատիվ կերպով է անցնում, մենք, կարծես, այլ ելք չունենք, քան ընդունել արմատական պարադիգմատիկ մոտեցում: Այսուհետ այս մոտեցումը կպահպանվի:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Այս բաժնում կփորձեմ մեկնաբանել այն հիմնական գործոնները, որոնք հանգեցրել են այսօրվա քաղաքակրթությանը իրենց պատմաաշխարհագրական հարթություններում: Մենք հիմա լավ գիտենք, որ հասարակությանը ճանաչելու ճանապարհը նրա պատմական ու աշխարհագրական պայմաններն իմանալն է:

Մարդկանց պրիմատներից բաժանելուց մինչև գյուղատնտեսական հեղափոխության պատմությունը ներկայումս հասնում է յոթ միլիոն տարվա, իսկ գտնվելու վայրը Արևելյան Աֆրիկայի Ռիֆ գիծն է: Ե՛վ հնագիտական մնացորդները, և՛ իրար մոտ մարդկային տեսակների խիտ ներկայությունը տարածքում առայժմ հաստատում են այս թեզը: Թեև հստակ հայտնի չէ՝ բաժանումը տեղի է ունեցել մուտացիայի (հանկարծակի տարբերակման) թե՞ էվոլյուցիայի միջոցով, բայց դա կարևոր չէ մեր թեմայի համար: Մեր մարդկային նոր տեսակի առավելությունն այն է, որ կոկորդի համակարգը հարմար է բազմաթիվ տարբեր ձայնային ձևերի և ուղեղի մեծ տրամագծի համար: Այն փաստը, որ Արևելյան Աֆրիկայի Ռիֆն ունի և՛ անապատ, և՛ անտառ, և՛ լճեր, ռազմավարական նշանակություն ունի տեսակների անվտանգության համար: Կարելի է կարծել, որ նրանք կորցրել են իրենց կենդանական մորթին ու մտերմացել են այսօրվա մարդկանց հետ, հատկապես երկար ժամանակով լիճ փախչելու արդյունքում: Կլիման նույնպես չափազանց հարմար է: Ռիֆի մեկ այլ առավելությունն այն է, որ այն բնական ճանապարհ է կազմում դեպի Տավրոսի լեռներ, երբ հետևում են նույն հովտին և ափերին: Այս ճանապարհը կազմում է երկու մայրցամաքի (Ասիայի և Աֆրիկայի) միացման և բաժանման, ինչպես նաև խզվածքի գիծը: Ենթադրվում է, որ մարդիկ միլիոնավոր տարիներ Ռիֆում ապրել են կլաններով: Կարելի է փաստել, որ մշտական միգրացիա է նկատվում դեպի Աֆրիկայի ներքին տարածքներ: Բազմաթիվ տվյալներով հաստատվում է, որ դեպի աշխարհ հիմնական բաշխումը տեղի է ունեցել Ռիֆի հյուսիսային գծում: Ենթադրվում է, որ շատ տեսակներ, այդ թվում՝ Homo Sapiens-ը (մտածող մարդ), տարածվել են նույն ճանապարհով: Մինչ այժմ աշխարհի այլ մասերում մարդանման տեսակ չի հայտնաբերվել: Բոլոր հայտնաբերված տեսակները ծագում են Արևելյան Աֆրիկայից:

Աշխարհի տարբեր մասերում, ավելի մեծ առատությամբ, առնվազն մեկ միլիոն տարեկան բրածոներ են հայտնաբերվել: Ընդունված է, որ բոլոր տեսակները տարածվել են ամբողջ աշխարհում մինչև չորրորդ սառցադաշտային շրջանը:

Ենթադրությունները ցույց են տալիս, որ այս երկար ժամանակաշրջանում մարդկային տեսակն ապրել է 20-30 հոգանոց տոհմերով և ապրուստը վաստակել հավաքչությամբ ու որսորդությամբ: Ընդհանուր ընդունված տեսակետ է, որ երկու գործողություններն էլ արդյունավետ

են ձեռքերի և ոտքերի զարգացման համար: Բրածո մնացորդները ցույց են տալիս, որ նրանք ավելի ապահով են մնացել քարանձավներում, լճի մեջտեղում տեղակայված կղզյակներում և սյուների վրա կառուցված խրճիթներում: Կարելի է ասել՝ սեփականությունն ու ընտանիքը դեռ ձևավորված չեն եղել, և կլանը ինքնին ընտանիք է եղել: Ենթադրվում է, որ նրանք ունեցել են ժեստերի լեզու, (մարմնի և վոկալ լեզու) և հնչյունները չեն կարողացել խորհրդանշել: Ավելի լավ ենք հասկանում, որ շատ երկար գործնական գործընթաց է պահանջվում, որպեսզի լեզուն ձեռք բերի խորհրդանշական հատկանիշներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մոտավորապես 150-200 հազար տարի առաջ Sapiens տեսակը մոտեցել է խորհրդանշական լեզվին: Նույն հետազոտությունը ցույց է տալիս, որ խորհրդանիշ լեզուն, որը ժամանակակից լեզուների նախահայրն է և հնարավորություն է տալիս հաղորդակցվել խորհրդանշական արժեք ստացող հնչյունների հետ՝ ժեստերի լեզվի փոխարեն, սկզբում տարածվել է նույն Ռիֆի գծից դեպի հյուսիս և հետո տարածվել է աշխարհով մեկ՝ մոտավորապես հիսուն հազար տարի առաջ: Խորհրդանշական լեզվի միջոցով հասկանալը մեծ առավելություն է տալիս: Կարելի է կարծել, որ այն խմբերը, որոնք ավելի լավ են հասկանում ու գործում, առավելություն ունեն: Պատմության փուլից այլ տեսակների արագ անհետացումը կարող է կապված լինել այս զարգացման հետ: Ժամանակաշրջանը նաև չորրորդ սառցե դարաշրջանն է: Այլ կանխատեսումները ներառում են, որ երկու զարգացումների բախումը հանգեցրեց նեանդերթալցիների վերջին, որն այն ժամանակ առավել տարածված տեսակ էր: Աշխարհի նոր վարպետը բեմում է իր ողջ վեհությամբ. Homo Sapiens՝ մտածող և խոսող մարդ: Մենք ի սկզբանե չենք տեսնում լեզուների և ռասաների տարանջատում: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ նրանք ավելի մեծ համայնքներում կիրառում էին պլանավորված որս, օգտագործում էին քարանձավները որպես տներ և տաճարներ, և որ կանայք մասնագիտացած էին սնունդ հայթայթելու, իսկ տղամարդիկ՝ որսի մեջ: Որոշ հնագիտական գտածոներ ապացուցում են, որ խոսող տեսակը զարգացած է եղել դրա հիման վրա: Ֆրանսիայի և Իսպանիայի միջև գտնվող տարածաշրջանում և Հաքքարիի որոշ քարանձավներում հայտնաբերված ժայռապատկերները բավականին արտահայտիչ են և թվագրվում են այս ժամանակաշրջանին: Այն փաստը, որ երկու շրջաններն էլ հանդիսանում են Աֆրիկայից Արևելյան և Արևմտյան Միջերկրական ծովերով միգրացիայի համար առաջին բարենպաստ տարածքները, համահունչ է ընդհանուր միգրացիայի տեսությանը:

1- Ի՞ՆՉ Է ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ-ԶԱԳՐՈՍ ԿԱՄԱՐԻՆ

Բազմաթիվ փաստարկներ կան, որոնց հիման վրա կարելի է ենթադրել, որ Արևելյան Աֆրիկայի Ռիֆից ելքի գլխավոր հավաքատեղին և դեպի աշխարհ տարածման կենտրոնը Տավրոս-Զագրոս կամարն է: Նախ, այս կամարը Ռիֆի բնական ճանապարհի վերջն է: Այսքան հեռու հնարավոր է հասնել ալիքների տեսքով: Փաստը, որ այն բառացիորեն փակում է ինչպես Սահարայի, այնպես էլ Արաբական անապատի արևելյան և արևմտյան դար-

պասները, Սուեզի և Արևելյան Միջերկրական ծովի ափերը դարձնում է բնական ընդարձակման ճանապարհ: Միջերկրական ծովի հարավային ափը նաև Ջիբրալթարի նեղուցից Իսպանիա և Եվրոպա տանող երկրորդ կարևոր ուղին է: Աշխարհագրական պայմանների պատճառով նրա կառուցվածքն այնքան արդյունավետ չէ, որքան Արևելյան միջերկրածովյան աշխարհագրությունը. արանքում լուրջ խոչընդոտներ և սնունդ հայթայթելու հետ կապված խնդիրներ կան: Ամենահիդեալական երթուղին անցնում է Արևելյան Միջերկրական ափից Տավրոս-Զագրոս լեռնաշղթաներով ձևավորված ոլորանով, որը նաև կոչվում է Բարբերը մահիկ[7]: Այս տարածքն այնքան հարմար է, որ անհնար է մնալ ու զարգացած հասարակություն չդառնալ:

Այստեղից կարող ենք եզրակացնել երկրորդ կետը. կլիմայի համապատասխանության, բնական դաշտային դասավորության մեջ առատ մրգերի և բույսերի, որսի կենդանիների հարուստ բազմազանության, անվտանգության տեսակետից կատարյալ քարանձավների, բազմաթիվ գե-

[7] Միջին Արևելքի տարածաշրջաններից մեկի պայմանական անվանումն է, որն առաջարկել է Չիկագոյի Համալսարանի հնագետ Ջեյմս Հենրի Բրեսթեդը՝ 1906 թվականին: Քարտեզի վրա տարածաշրջանն ունի կիսալուսին հիշեցնող ձև: Հարավից սահմանակից է Սաուդյան Արաբիայի, Սիրիական ու հյուսիս- արաբյան անապատներին, հարավ-արևմուտքից՝ Սինային, հարավ - արևմուտքից այն ողողում է Միջերկրական ծովը, հյուսիսում եզերում է Տավրոսը և Հայկական լեռնաշխարհը, արևելքում՝ Զագրոսի լեռներն են: Նրա կազմի մեջ են մտնում Միջագետքը և Լևանտը՝ պատմական Սիրիան և Պաղեստինը: Ներկայումս այդ տարածքն զբաղեցնում են Լիբանանը, Պաղեստինը, Իսրայելը, Սիրիան, Իրաքը, Թուրքիայի հարավ-արևելքը և Հորդանանի հյուսիս-արև-մուտքը: Նրա կազմի մեջ հաճախ ներառնում են նաև Եգիպտոսը:

տերի և առուների առկայության հաշվին Տավրոս-Զագրոս կամարն ավելի հարմար է մարդկային համայնքների համար: Այն այնքան բարենպաստ է կյանքի համար, որ հետագայում հանգեցրեց «Դրախտ» հասկացությանը մարդկության հիշողության մեջ: Նկատի ունենալով այս տարածքի դրական առանձնահատկությունները մոտակա շրջանների անապատների համեմատ՝ հասկանալի է, որ մարդկային հիշողության մեջ հաստատվել է դժոխք-դրախտ երկընտրանքը՝ որպես հիմնական հասկացություններից մեկը: Այս առանձնահատկությունների շնորհիվ մենք հեշտությամբ կարող ենք ենթադրել, որ Արևելյան Աֆրիկայի Ռիֆից հետո այս տարածքը մարդկային տեսակների երկրորդ ամենակարևոր համակենտրոնացման տարածքն է: Չափազանցություն չէ այն անվանել մարդկության պատմության մեջ քաղաքակրթական զարգացման «ինկուբացիոն վայր»: Այն կարող է սրբացվել նաև որպես վայր, որտեղ մարդկության էպիկական պատմությունը սկսեց գրվել, ավելի ճիշտ՝ ձևավորվել: Հաջորդ մեծ հեղափոխությունները լինելու են այս սրբության էպոսի արդյունքը:

Երրորդ, մոտ հիսուն հազար տարի առաջ այդ վայրում կենտրոնացումները զարգացան խորհրդանշական լեզվի հիման վրա: Շատ պարզունակ հաղորդակցման գործիքից, ինչպիսին է ժեստերի լեզուն, անցումը խորհրդանշական լեզվով հաղորդակցվելուն, զարգացման մեծ ներուժ ունի: Հաղորդակցման այս նոր լեզվի ձևավորումը մարդկային տեսակի համար ապահովում է սոցիալականացման, պաշտպանության և սննդի ձեռքբերման հսկայական հնարավորություններ: Թերևս, սա պատմության

մեջ ամենամեծ հեղափոխությունն է, որը դեռևս չի հայտնաբերվել և անվանակոչվել: Կարող է տեղին լինել առաջին մեծ հեղափոխությունն անվանել «ԼԵԶՎԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ», որովհետև այս աշխարհագրության մեջ ոչ մի հեղափոխություն այնքան չի ծառայել սոցիալականացմանը, որքան այս հեղափոխությունը: Ամեն օր հայտնաբերված նոր բույսերի և որսի կենդանիների միջոցով ստեղծվում է սուրբ հայեցակարգ, սկիզբ է դրվում տնամերձ բնակավայրերին (առաջին անգամ ապահով բներում ապրելը), և չորս եղանակները դրսևորվում են իրենց ամենաիդեալական ձևով: Երբ այս ամենը դառնում է հայեցակարգային, ձևավորվում է մեծ համայնքների ընդհանուր լեզուն, և հետևաբար, առաջին անգամ նրանց առանձնացող «ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ»:

Ցավալի է, որ այսօր ինքնության դաժան ցեղասպանություն է տեղի ունենում այս տարածքներում, որտեղ ձևավորվել է առաջին բացահայտված էթնիկությունը: Գործընթացը, որը մենք անվանում ենք հասարակական մեծ զարգացում, տեղի է ունենում, ավելի ճիշտ՝ կառուցվում է այս հարուստ փաստերով ու հասկացություններով: Հայեցակարգային զարգացումը հանգեցնում է ինտելեկտուալ զարգացման: Հզոր ենթադրություն է, որ այն մարդիկ, ովքեր հասկանում և ինտեգրվում են հասկացություններին, չեն կարող մնալ նեղ կլանային հասարակության մեջ, այլ մեծ դինամիկա են ձեռք բերում ավելի բարձր սոցիալականացման համար: Կարծում եմ, որ սա ամենահիմնարար խնդիրներից մեկն է, որը պետք է ուսումնասիրվի թե՛ մարդաբանական, թե՛ նախապատմական ժամանակների առումով: Մեծ հնագետ և պատ-

մաբան Գորդոն Չայլդը պետք է իրավացիորեն հասած լիներ այնպիսի ինտուիցիայի, որ նա իր ամենակարևոր աշխատությունը՝ իր գիրքը, որը նկարագրում է թե ինչ էր տեղի ունենում այդ ժամանակաշրջանում այս աշխարհագրության մեջ, (եթե նույնիսկ հաջորդ փուլի զարգացումների մասին է, ապա հեշտությամբ կարելի է ասել նաև առաջին փուլի համար) անվանեց «ԻՆՉ ԿԱՏԱՐՎԵՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ»: Պետք է նաև հատուկ ընդգծեմ, որ տարածաշրջանի անցյալը հնարավոր չէ լուսավորել և վերլուծել միայն հնագիտական մեթոդներով. բազմաթիվ գիտական առարկաների տվյալները ինտեգրելով՝ կենսաբանությունից մինչև բանասիրություն, աշխարհագրությունից (հատկապես կլիմայական և գյուղատնտեսական աշխարհագրությունից) մինչև սոցիոլոգիա, մարդաբանությունից մինչև աստվածաբանություն, հնագույն ժամանակների պատմությունը լուսավորելու գործում շատ կարևոր զարգացումների կարելի է հասնել: Այն, ինչ մենք անում ենք այստեղ, պարզապես ուշադրություն հրավիրելն ու գործի անցնելու կոչն է:

Երկրաբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ չորրորդ սառցադաշտային շրջանը սկսել է ավարտվել մոտավորապես քսան հազար տարի առաջ: Քանի որ դա հաստատվում է նաև այլ գիտական տվյալներով, կարելի է ասել, որ սա մոտ է ճշմարտությանը: Ապացուցված է, որ տասը հազար տարի առաջ Արաբիայում և Սահարա անապատում տեղումներն ու կանաչապատումն ավելի առատ էին: Այս հարմարավետությունը համընկնում է մոտավորապես նույն ժամանակահատվածում հովվության մշակույթի զարգացման հետ: Այնուամե-

նայնիվ, մեկ այլ կարևոր զարգացում է սեմական լեզվի խմբի առաջացումը, որը գերազանցում է Աֆրիկայի բնօրինակ լեզվական կառուցվածքներին: Սեմական մշակույթն, ըստ էության, «հովվի մշակույթ» է: Օրինակ, հովվությունն այնքան կարևոր է դարձել, որ դեռևս գոյություն ունի կենդանիների վերաբերյալ մշակութային մեծ զանգված, ինչպիսիք են ուղտերը, ոչխարները և այծերը: Նկատելի է նաև, որ էթնիկ պատկանելությունը ձևավորվում և այլ ինքնություն է ձեռք բերում այս հիմքի վրա: Այն փաստը, որ շատ ուժեղ էթնիկ (ցեղային) մշակույթը դեռևս ուժի մեջ է մնում, ապացուցում է այս զարգացումը: Այս մշակույթի ազդեցությունը կարելի է առատորեն տեսնել շումմերական և եգիպտական քաղաքակրթությունների բազմաթիվ դիսկուրսներում: Կախված կլիմայից, որը բարենպաստ է մնացել մինչև մոտ վեց հազար տարի առաջ, սեմական մշակույթը պատմության մեջ առաջին անգամ, կարծես, իր մշտական հետքն է թողել շատ լայն տարածության վրա՝ Սահարա անապատից մինչև Արևելյան Արաբիա և հյուսիսում գտնվող վարելահողեր: Սեմական մշակույթը Արևելյան Աֆրիկայի Ռիֆի մշակույթի շարունակությունն է և հանդիսանում է դրա առաջադեմ փուլը: Այս մշակութային սերունդը հետագայում միաստվածական կրոնների հաստատմամբ կամրապնդի իր ինքնատիպությունը:

Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ շումմերական և եգիպտական քաղաքակրթությունների ձևավորման որոշիչ գործոն լինելուց բացի, այս մշակույթը կհամարվի պատմության մեջ որպես առաջին զավթիչ ցեղեր համարվող Արամիտների և Ապիրուսի («Արևելքից և Արևմուտքից եկող փոշոտ և կեղտոտ մարդիկ») ձևավորման գործոն, որոնք գործում են երկու քաղաքակրթություններում: Կարելի է պնդել, որ սեմականները պատմության արշալույսին շատ կարևոր կազմավորում էին, և նրանց ոտնաձայները զգացնել տվեցին: Պատճառը, որ նրանք իրենց զարգացվածությամբ չեն կարողանում գերազանցել հյուսիսային վարելահողերում գտնվողներին, թերևս, այնտեղ ավելի ուժեղ մշակույթի զարգացումն է, քան իրենցն է: Միգուցե, տեղին է այս կազմավորումներին, որոնց կարող ենք նաև բնութագրել որպես փուլ առ փուլ գյուղատնտեսական մշակույթին անցում կատարողների, ընդհանրապես «դաշտային մշակույթ» անվանելը: Փաստորեն, կարելի է այս հասարակական ուժերին, որոնք պատմության մեջ «արիացիներ» են կոչվել, որպես «դաշտային ֆերմեր, հողատերեր» կոչել («արի» բառը քրդերեն նշանակում է «հող, հող և դաշտ», որն այս տարածքների առաջին մշակութային ինքնությունն է): Կարելի է գյուղատնտեսության ստեղծողներ համարել արիացիներին, ովքեր առաջին անգամ բացեցին Տավրոս-Զագրոս կամարը գյուղատնտեսության զարգացման համար՝ որպես սեմականների հյուսիսային տարածքների առանցքային հատված:

Այս զարգացման մեջ որոշիչ դեր են խաղում կլիման և հողի կառուցվածքը, բուսականությունը և կենդանիների տեսակները: Թեև սեմական տարածքներում գյուղատնտեսությունը հնարավոր է միայն շատ սահմանափակ օազիսներում, շատ քիչ տեսակների վրա, ինչպիսիք են արմավենին, կորի՝ (այլ կերպ հայտնի է որպես Բարբեր մահիկ) յուրաքանչյուր հատվածի մշակության համար շատ բարենպաստ լինելու հաշվին ձիթենին, պիստակը,

կաղինը (կաղնու ընտանիք), գիհին (մրգատուների ընտանիք), խաղողի վազը (խաղողի ընտանիք): Այն նաև տարածք է, որտեղ ընտելացման համար հարմար կենդանիների բազմաթիվ տեսակներ, այդ թվում՝ վայրի ոչխարներ, այծեր, խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, շներ և կատուներ են շրջում հոտերով: Լեռների բարձրացող հատվածներում կան ընդարձակ անտառներ: Չորս սեզոնները դրսևորվում են իրենց ամենահիդեալական ձևով: Անձրևներն այս տարածքներում գրեթե կանոնավոր ռոռգում են հիշեցնում: Բազմաթիվ առուների և գետերի ափերը շատ հարմար են բնակեցման համար: Այս բոլոր բարենպաստ պայմաններում «պատմության արշալույսը» զարգացում է, որին պետք է սպասել:

Երկրաբանական և հնագույն գրառումները ցույց են տալիս, որ այդ տարածքում սառցադաշտերը նահանջել են դեպի բարձր լեռնային շրջաններ մինչև տասնհինգ հազար տարի առաջ: Հարյուր հազարավոր տարիների ընթացքում մարդկային տեսակի ամենակարևոր համակենտրոնացման տարածքը լինելու, լեզվական ինտենսիվ հեղափոխության և սեմական մշակույթի պարտադրման արդյունքում տարածաշրջանն անցավ կարճատև մեսոլիթի ժամանակաշրջանով (միջին քարի դար): Ենթադրվում է, որ հետո անցել է նեոլիթյան ժամանակաշրջանով: Հաքքարիի քարանձավները հուշում են, որ մեսոլիթյան և ավելի վաղ ժամանակաշրջանները ինտենսիվորեն գոյություն են ունեցել: Հատված քարերը նույնպես բազմաթիվ ապացույցներ են տալիս այս թեմայի վերաբերյալ: Բազմաթիվ ապացույցների ենք հանդիպում, որ տարածաշրջանում մշակութային զարգացման իրական վերելքը

սկսվել է նեոլիթից, և որ այս մշակույթը տեղափոխվել է մոտ տասներկու հազար տարի առաջ: Այս դարաշրջանը, որը մենք կարող ենք անվանել նաև գյուղատնտեսական, դաշտային և գյուղական հեղափոխության դարաշրջան, նախապայման է և՛ մարդկության, և՛ քաղաքակրթության (գրավոր պատմություն) ավելի նեղ իմաստով: Դա ինքնին հսկայական մշակութային ժամանակահատված է: Այս մշակույթի կարևորությունը դեռ պատշաճ կերպով չի ընկալվել և պատմության մեջ իր արժանի տեղը չի գտել, այդ իսկ պատճառով՝ որքան էլ շեշտադրվի, տեղին է: Գորդոն Չայլդը ճշմարտությանը ավելի մոտ է, երբ ասում է, որ այս տարածքում նեոլիթյան մշակույթը պակաս կարևոր չէ, քան Արևմտյան Եվրոպայի վերջին չորս դարերի մշակույթը: Այս դարում այնքան գյուտեր են արվել, որ դրանք հնարավոր չէ հաշվել: Հեղափոխական համարվող զարգացումներ են տեղի ունեցել գյուղատնտեսության և արհեստագործության բոլոր ոլորտներում՝ տրանսպորտի, բնակարանային, արվեստի, կառավարման և կրոնի ոլորտներում: Հազարավոր նոր երևույթներ են հայտնաբերվել և անվանվել ամեն բնագավառում:

Այսպիսով, ձևավորվեց «արիական լեզուների խումբը», որն ունի ամենամեծ բառապաշարը սեմականությունից հետո և նույնիսկ ունի սեմական հովվական լեզվի նեղ բառապաշարին շատ գերազանցող բառապաշար: Կարծես դրվել է մարդկության հավիտենական հիշողության հիմքը: Իր մշակույթի հետ մեկտեղ այս լեզվախմբի տարածումը Հնդկաստանից մինչև Եվրոպայի ափերը կարևոր ցուցանիշ է, որը ևս մեկ անգամ հաստատում է մեր վերլուծությունը: Արիական լեզվախումբը ծագել է ոչ թե

Եվրոպայում, Հնդկաստանում և այդ երկուսի միջև եղած (Հյուսիսային Սև ծով, ռուսական տափաստաններ, իրանական բարձրավանդակներ) շրջաններում, ինչպես կարծում են շատերը, այլ Բարեբեր մահիկի առանցքային շրջանում: Այս փաստը հաստատում են ինչպես արիական բառի ստուգաբանական լուծումը, այնպես էլ հնդեվրոպական բոլոր լեզվախմբերում օգտագործվող հիմնական բառերի կապը էթնիկական կառուցվածքների հետ: Ավելին, այն հանգամանքը, որ մշակույթի առանցքային շրջանը հենց այս տարածքն է, պահանջում է, որ բառի և լեզվի կառուցվածքը, բնականաբար, հաստատվի հենց այստեղ: Գոյություն ունեցող էթնիկ մշակութային կառույցները և այլ պատմական վկայությունները լիովին հաստատում են այս փաստը:

Հետևաբար, լեզվի և մշակույթի երկրորդ սերնդի գոյությունը, պատմությունը և տարածումը պատմական նշանակություն ունեն ինչպես սոցիալական զարգացման, այնպես էլ նրա քաղաքակրթական փուլը հասկանալու համար: Կարելի է ասել, որ բոլոր նախորդ շերտերը լուծարվեցին այս երկու հիմնական լեզվամշակութային խմբերի մեջ: Երրորդ լեզու-մշակութային խումբը կարելի է նշել, որ նկատվել է միայն Սիբիրի հարավային նախալեռներում՝ (Յակուտիա և այլն) նույն սառցադաշտի շրջանի ավարտից հետո: Այս մշակույթի հայրենիքը, որը, հավանաբար, դեպի հարավ է տարածվել 9 հազար տարի առաջ, Չինաստանն է: Կարելի է ասել, որ երրորդ ամենամեծ հյուսիսային գոտին կազմված է այս մշակույթից, որի արևմտյան եզրը ձգվում է մինչև ֆինները, իսկ արևելյան եզրը՝ թուրքերը, մոնղոլները, թաթարները, կորեացիները,

վիետնամցիները և ճապոնացիները: Մենք ունենք հավաստի հնագիտական, ստուգաբանական և էթնոլոգիական ապացույցներ, որ Ամերիկա մայրցամաքում բնիկ ամերիկյան մշակույթը նույնպես Բերինգի նեղուցով տարածման նույն շրջանի արդյունքն է: Այս խմբում կարող ենք ներառել նաև էսկիմոսներին: Թեև Աֆրիկայի՝ դեռևս կենդանի մշակույթներից շատերը պահպանում են իրենց բնութագրերը, որոնք թվագրվում են հարյուր հազարավոր տարիների պատմություն ունեցող, դրանք դեռ զգում են սեմական խմբի ուժեղ ազդեցությունը: Սա հատկապես վերաբերում է սուահիլի լեզվի խմբին: Հնարավոր է նաև հանդիպել կլանների, որոնք միլիոնավոր տարիներ առաջ ապրել են անտառներում, լեռների գագաթներին և անապատների խորքերում:

Ըստ այս աղյուսակի, երբ 6 հազար տարի հետ ենք գնում, տեսնում ենք, որ մարդկությունը ձեռք է բերել երեք հիմնական լեզվական և մշակութային խմբեր, որոնք կվերածվեն քաղաքակրթության մեր երկրագնդի շատ տարածքներում, հատկապես հարավում, միջինում և հյուսիսում: Այս մշակույթների միջև ինտենսիվ անցումները բնական են: Այսօր էլ նկատվում է, որ այս մշակույթները պատմության և աշխարհագրության ազդեցությամբ տարբերվում են:

Մեր թեմայի տեսանկյունից կարևոր խնդիրը հնդեվրոպական քաղաքակրթության ակունքներն ուսումնասիրելիս՝ հիմնական աղբյուրը ճիշտ բացահայտելն է: Պատմագիտությունն առաջնահերթություն է տալիս ժամանակի և տեղի ազդեցության հիմնական մշակույթի սահմանմանը: Այսօր մենք հստակ գիտենք, որ նույնիսկ կապիտա-

լիստական մշակույթը շատ կտրուկ միջուկային տարածում ունի: Պատմության անաղբյուր, մտացածին ու անլուրջ ըմբռնումները ծանր հարված են հասցնում մեր գիտակցությանը: Նրանք, ովքեր չեն կարողանում պատմական գիտակցությունը բերել կենսական մեկնաբանությունների, չեն կարող իմաստալից մեկնաբանել ներկան: Հնարավոր չէ գրագետ հասկանալ և ապրել պատմություն չունեցող հասարակության մեջ:

«Շումմերական քահանայական պետությունից մինչև դեմոկրատական քաղաքակրթություն» վերնագրով իմ նախորդ ճառում քաղաքակրթության աղբյուրը գնահատելիս՝ ես որոշ քննադատություններ ստացա Եփրատ-Տիգրիս ավազանի և շումմերական քաղաքակրթության նկատմամբ իմ չափազանց կրճատողական մոտեցման առնչությամբ: Նկատի ունենալով այս քննադատությունները՝ ես պետք է պնդեմ, որ ոչ թե ռեդուկցիոնիստական դիրքում եմ, այլ կարևորում եմ հիմնական աղբյուրը: Եթե պատմության հոսքը համեմատենք գլխավոր գետի հետ (սա անխուսափելի է սոցիալական զարգացման գոյաբանական կառուցվածքի տեսանկյունից), ապա ես այս մտքերի նախագիծը ներկայացնում եմ, որպեսզի մտքեր արտահայտեմ հիմնական մշակույթի և կողմնակի ճյուղերի խնդրի վերաբերյալ. Ավելի ճիշտ՝ ուշադրություն եմ հրավիրում: Ինչպես այսօրվա գերիշխող քաղաքակրթությունը, այսինքն՝ կապիտալիստական արդիականությունը, հիմնված է հնդեվրոպական քաղաքակրթության ծագման վրա, այնպես էլ հնդեվրոպական մշակույթը հիմնված է արիական մշակույթի, նրա շումմերական և եգիպտական ճյուղերի վրա: Եթե մենք չկարողանանք ճիշտ վերլուծել մարդկային քաղաքակրթության մեջ գլխավոր գետերի ու նրանց վտակների խնդիրը, մենք չենք կարողանա ճիշտ ընկալել և իմաստավորել մեր ներկան: Որոշ կողային վտակներ թափով հոսում են դեպի մայր գետ, որոշները՝ չորանում կես ճանապարհին: Բացի այդ, որոշիչ նշանակություն ունի նաև աղբյուրը, որտեղից սկիզբ է առնում գլխավոր գետը: Եթե ցանկանում ենք գրագետ ըմբռնման հասնել սոցիալական զարգացման վերաբերյալ՝ իր պատմաաշխարհագրական չափումներով, ապա պետք է փորձարկել մեթոդի պահանջները խնդիրների լուծման համար:

2- Արիական լեզվի և մշակույթի տարածման հիմնախնդիրները

Պատմության մեջ մշակույթի և քաղաքակրթության վրա հիմնված մոտեցումները սահմանափակ են: Գոյություն ունեցողներն էլ տարբեր տեսակետներ ունեն: Այն խնդիրները, որոնք փորձում ենք այստեղ լուծել, չենք դնում մշակույթի և քաղաքակրթության հիմքում: Մենք պետք է գնահատենք մշակույթի և քաղաքակրթության տեղն ու ժամանակը սոցիալական զարգացման մեջ՝ համաչափ նրանց ներդրմանն ու վճռականությանը: Հակառակ դեպքում ձեռքի տակ եղած պատմությունը «իրադարձությունների կույտից» այնկողմ (ինչը հիմնականում այդպես է) որևէ նշանակություն չի ունենա: Այս հատկանիշի հետ սերտորեն կապված է պատմական գիտության բնույթը, որը չի սովորեցնում, բայց խանգարում է սովորել: Պատմական շարադրանքը բաղկացած է կրոնի, դինաստիայի, թագավորի, պատերազմի, ցեղի և նմանատիպ փաստերի թվային ցուցակից: Այն ներկայացնում է զաղա-

փարական ջանքեր՝ միտքն ու սոցիալական հիշողությունը պատրաստելու իշխանություն ունեցողների և չարաշահումներ անողների համար, գիտակցաբար ստեղծված շղարշ՝ ավելի շուտ սոցիալական զարգացումը սովորելը կանխելու, քան սովորեցնելու համար: Նման արտահայտությունները հնագույն քարոզչական գործիքներ են, որոնք օգտագործվում էին գաղափարական հողի վրա բարձր վճռականությամբ օրինականություն ապահովելու համար:

Եկեք ավելի ընդլայնենք մեր վերլուծությունը՝ հավատարիմ մնալով մեթոդի և տեղեկատվական համակարգի վերաբերյալ մեր բացատրությանը: Արիական լեզու-մշակույթ խմբի անվանման վերաբերյալ մեկ այլ քննադատություն է այն, որ այն կարող է ռասիզմի հոտ կրել, քանի որ Հիտլերը նույնպես օգտագործել է այս հասկացությունը: Նրանց պետք է ասել՝ «Սոցիալիզմ» բառը ևս ներառված է Հիտլերի կուսակցության անվան մեջ: Արդյո՞ք պետք է ասենք «ռասիզմի հոտ է գալիս» և հրաժարվենք սոցիալիզմից: Ավելին, ֆաշիզմը չափազանց հաջողակ է շատ տարբեր գիտական և գաղափարական հայեցակարգերի հաջող օգտագործման մեջ, այսինքն՝ իր «դեմագոգիկ» ջանքերի մեջ: Եվ, քանի որ իրականությունն այսպիսինն է, մենք, բնականաբար, չենք պատրաստվում հրաժարվել գիտությունից ու գաղափարախոսությունից: Մինչդեռ արիական լեզու-մշակույթի վրա հիմնված ազգայնականությունը մտքովս երբեք չի անցել: Հպարտությամբ և պատվով պետք է նշեմ, որ ես ազգայնականության դեմ ամենաբովանդակալից մեկնաբանությունն ունեցողներից մեկն եմ: Եթե ուզում ենք հասկանալ, թե այսօր

ինչ վայրագություններ են տեղի ունենում Իրաքում, ապա նախ պետք է ընդունենք, որ պատմության և սոցիոլոգիայի մեր գիտելիքները սնանկ են: Միայն դրանից հետո իրավունք ունենք քննադատելու և պատմահասարակագիտական նոր առաջարկներ մշակելու: Այն, ինչ մենք փորձում ենք անել, այս մարդկային ողբերգության ըմբռնման և հաղթահարման գործում փոքրիկ ներդրում ունենալն է:

«Շումմերական քահանայական պետությունից մինչև դեմոկրատական քաղաքակրթություն» խորագիրը կրող ճառիս մեջ մանրակրկիտ բացատրածս թեմային՝ իր հիմնական կետերով, նաև այստեղ պետք է տեղ տամ:

ա- Ասում ենք, որ պատմաաշխարհագրական պայմաններից է կախված արիական լեզու-մշակույթ խմբի դերը խորհրդանշական լեզվի ձևավորման մեջ և խորը արմատավորված մշակութային ենթակառուցվածքի համար: Մոտավորապես մ.թ.ա. 10000-ից մինչև 4000թթ. ընկած ժամանակահատվածն այն «երկար ժամանակաշրջանն» է, երբ այս լեզուն և մշակույթը լավ ինստիտուցիոնալացվել են: Այս ժամանակաշրջանում հայտնագործվեցին գյուղատնտեսության համար նախատեսված բոլոր տեսակի խեցեղենը, գութաններն ու կենդանիների զրահները, անիվները, ջուլհակները և ձեռքի ջրաղացները, ինստիտուցիոնալացվեցին արվեստն ու կրոնը: Բնակչության մեծ աճով ապացուցվել է շատ արդյունավետ բուսական և կենդանական ծագման մթերքների առկայությունը: Նոր և կատարելագործված ու մշակված քարերից միայն կացիններ, դանակներ, ջրաղացներ, անիվներ, ճարտարապետական և այլ գեղարվեստական ու կրոնական գործեր չեն պատրաստվել: Ժամանակաշրջանում, որը մենք անվա-

նում ենք քալկոլիթի ժամանակաշրջան, հանքերից էլ ավելի օգտակար գործիքներ էին պատրաստում: Մենք այսօր հանդիպում ենք դրանց բազմաթիվ օրինակների: Զագրոսի լանջերին՝ Բրադոստյան պեղումների կենտրոններում, Չայոնուում և վերջերս Ուրֆայի մոտ գտնվող Գյոբեքլիթեփեում կատարված պեղումներում հայտնաբերվել են 11 հազար տարվա վաղեմություն ունեցող բազմաթիվ գործիքներ, տների և կրոնական ճարտարապետության հիասքանչ օրինակներ՝ պատրաստված փորագրված քարից: Նույնիսկ այսօր տեղացիների կողմից օգտագործվող մշակութային այս գործիքները և դրանք արտահայտող բառային խմբերը լույս են սփռում հիմնական տարածքի ինքնության վրա: Այնպիսի բառերի օգտագործումը, ինչպիսիք են ջեռ (աշխարհ-տեղ), երդ (տեղ, հող, դաշտ), ջին (կին, կյանք), ռոժ (արև), բռա (եղբայր), մուր (մահ), սոլ (կոշիկ), նեռ (նոր), գա (եզ), գրան (մեծ, ծանր), մեշ (քայլ), գուդա (աստված) և տասնյակ այլ բառեր, բազմաթիվ եվրոպական լեզուներում այսօր լույս է սփռում ծագման խնդրի վրա: Այս բառերը, որոնք դեռևս արմատներ են մնացել հայտնի համայնքների լեզուներում, ինչպիսիք են քրդերը, պարսիկները, աֆղանները և բելուջները, որոնք իսկական ժողովրդական խմբեր են (ամենահին բնակեցված ժողովուրդներ), ապացուցում են, որ արիական լեզու-մշակույթի խումբը չի ծագում Եվրոպայից և Հնդկաստանից, այլ ճիշտ հակառակն է: Այս մշակույթի օրոք, որի պատմական արմատները գրավոր կարող ենք գտնել շումմերական տեքստերում, և որոնք առնվազն 12 հազար տարվա վաղեմություն ունեն, ինչպես ապացուցված է բազմաթիվ տարածաշրջանային կենտրոններում արված

հնագիտական պեղումներով, մինչ Եվրոպան ապրում էր «հին քարի դարը», Հնդկաստանը նման ժամանակաշրջան էր ապրում: Մենք ի վիճակի ենք հեշտությամբ ցույց տալու, որ արիական լեզվի և մշակույթի այս «երկար ժամանակաշրջանում» մարդկությունը ստեղծել և ինստիտուցիոնալացրել է այն հիմնական կենսագործիքների կեսը, որոնք մարդկությունն այսօր օգտագործում է:

Որոշ կենտրոններում մեր ներկայացրած օրինակներից զատ, հազարավոր այլ օրինակներ սպասում են ընդհատակում: Բացի այդ, վավերական ժամանակաշրջանի ժողովրդական խմբերը, որոնք դեռ գոյություն ունեն այսօր, կենդանի հնագիտական կենտրոններ են: Մենք այդ մարդկանց գոյությունը տեսնում ենք որպես ինքնություն՝ (էթնիկական տարբերակում) առնվազն 6 հազար տարի առաջ: Եվս մեկ անգամ պետք է փաստեմ, որ եթե այն, ինչ տեղի է ունենում մշակութային այս առանցքային կենտրոնում (Բարեբեր մահիկ) լիարժեք արտահայտված չլինի իմաստային առումով, պատմագիտությունը մեծ թերություններ կունենա:

բ- Մենք ամենևին չենք կարող անտեսել սեմական լեզվի և մշակույթի տեղը՝ որպես կարևոր կողմնակի ճյուղ: Կասկած չկա լեզվամշակութային այս կառույցի հարստության վրա, որը պատմական առումով իր տարբերությունն է արտահայտում նույն ժամանակաշրջանում, թերևս, ավելի հարուստ է հովվային ու տոհմային մշակույթով: Այս առումով այն կարող է ավելի զարգացած լինել, քան արիական լեզվամշակութային խումբը: Դրա հետքերը գտնում ենք շումմերական տեքստերում: Այս տեքստերում հովվի և դաշտային մարդկանց մրցակցու-

թյունն ու հակամարտությունները երկու հիմնական ճյուղերի տեսքով հիշատակվում են որպես էպոս: Որքա՜ն նման է այսօրվա Իրաքին: Էպիկական կառուցվածքը զարգացած է լեզվում և մշակույթում: Քանի որ անապատի միատեսակ գծերը նման են, երկնային աստծո «Էլ, Ալլահ» ձևավորումը կարող է համընկնել այս ժամանակաշրջանների հետ: Ցեղային հասարակության առաջին տարբերակված, հիասքանչ ինքնությունը, հավանաբար, բարձրացել է երկնքի պես և ձեռք է բերել «Էլ, Ալլահ» սուրբ հասկացություն: Հնարավոր է, որ Դյուրկհեյմի մեկնաբանությունը, որի համաձայն՝ աստված հասկացությունը «սոցիալական ինքնություն» է, հաստատվում է «Էլ, Ալլահ»-ի օրինակով:

Սեմական մշակույթում «շեյխ, սեյյիդ» հասկացությունները պետք է ամենավաղը ձևավորված լինեին: Քաղաքակրթական շրջանում դրանք վերածվելու են «մարգարե և էմիր» հասկացությունների:

Թեև Եգիպտոսի փարավոնական քաղաքակրթությունը սեմական մշակույթի դաշտում է, սակայն սեմական մշակույթի ներդրումը դրա մեջ չի նկատվում: Մենք չենք հանդիպում որևէ նյութական, հայեցակարգային կամ ինստիտուցիոնալ վկայության, որ հովիվների մշակույթը մ.թ.ա. 4000-ականներին նման քաղաքակրթական մշակույթի առաջացման համար ճանապարհ է հարթել: Իրականում պատմական փաստաթղթերը ցույց են տալիս, որ Եգիպտոսը զգում էր, որ այս մշակույթը շատ օտար է իր համար: Լեզվի կառուցվածքում նույնպես նմանություն չկա: Սեմական մշակույթը՝ իր աքքադական, բաբելոնական, ասորական, քանանական և իսրայելական ինքնություններով, առաջին շերտում մոտավորապես մ.թ.ա. 2500-ականների գրավոր պատմության մեջ է իր տեղը գտնում: Արաբական ինքնությունը ի հայտ եկավ շատ ավելի ուշ՝ մոտավորապես մ.թ.ա. 500-ական թվականներին: Արամեները, Արամիտները, Ապիրուսները հիմնականում շումմերական և եգիպտական կոնցեպտուալիզացիաներ են: Մեծ հավանականություն կա, որ Փյունիկիայում, Պաղեստինում և նույնիսկ Իսրայելում ապրող համայնքները հետագայում միաձուլվել են սեմական լեզվին և մշակույթին (ինչպես եգիպտական փարավոնական մշակույթը): Սկզբում այս ծովային ցեղախմբերի մշակույթը միահյուսված էր արիական մշակույթի հետ: Կան ապացույցներ, որ այս ցեղերը կորցրել են իրենց սկզբնական բնական վիճակը սեմական գաղթի ալիքների ժամանակ:

Շումմերական աղբյուրները, հնագիտական գրառումները և որոշ պահպանված ավերակներ, որոնք դեռ գոյություն ունեն, բավականաչափ նյութ են տալիս ապացուցելու, որ սեմականներն աստիճանաբար հարձակվել կամ գաղթել են արիական լեզվի և մշակույթի տարածք: Կարելի է ասել, որ այս հարձակումներն ու գաղութացումները սկսվել են մ.թ.ա. 5000-ականներին: Մասնավորապես, աքքադական, բաբելոնական, ասորական, արամեական և արաբական գաղթօջախները համապատասխան շերտերով իրենց հետքն են թողել Վերին Միջագետքում: Ասորական և արաբական ազդեցություններն ավելի ուժեղ են: Արաբներն իսլամի հետ միասին նաև ինտենսիվ ձուլման մեջ էին: Իսլամացումը միահյուսվել է արաբացման հետ: Արիական մշակույթն ու լեզուն մեծ դիմադրություն ցույց տվեցին այս արշավանքին, գաղութացմանն ու ուծացմա-

նը և ժամանակ առ ժամանակ կարողանում էին կանխել հարձակումը, արշավանքը, գաղութացումն ու ձուլումը: Պատմության մեջ որպես հայտնի օրինակներ կարող ենք ներկայացնել շումմերական քաղաքակրթության հիմնադիրներին, եգիպտական քաղաքակրթության առաջամարտիկներին, հիքսոսներին և եբրայեցիներին: Ընդունելի ամենահավանական մեկնաբանությունն այն է, որ շումմերների առաջին ռահվիրաները գաղթել են Ստորին Միջագետք Թել Հալաֆի ժամանակաշրջանում (մ.թ.ա. 6000-4000 թթ.), որը Վերին Միջագետքում արիական հիմնական մշակույթի ամենազարգացած դարաշրջանն էր, և այնտեղ այս մշակույթը տեղափոխել են ավելի բարձր փուլ: Քաջ հայտնի է, որ աքքադական, բաբելոնական և ասորական ազդեցությունները հետագայում ներառվել են շումմերների լեզվական և մշակութային կառուցվածքում:

Շումերներին ոչ թե գաղթական խմբեր անվանելը, այլ Թել Հալաֆի դարաշրջանի մշակութային ընդլայնումը վերագրելը պատմության ավելի ճիշտ մեկնաբանություն կլինի: Որոշ խմբեր, գուցե, գաղթել են արիական մշակութային տարածքից: Բայց ամենատպավորիչ տարրը մշակույթի տարածումն էր, որն այն ժամանակ ամենաուժեղն էր (համընդհանուր առումով): Այստեղ միջինասիական կամ կովկասյան ազդեցություններ փնտրելը, ինչպես երբեմն պնդում են, անհեթեթ է: Որովհետև Շումերի հիմնադրման դարաշրջանում (մ.թ.ա. 5000թ.) այս տարածքները ավելի շատ հին քարե շրջանում էին և նոր էին ծանոթանում արիական մշակույթին: Շումմերական մշակույթի պես բարձր, զարգացած մշակույթը չի պարունակում նման տարրեր՝ ո՛չ բովանդակությամբ, ո՛չ էլ ձևով:

Հարձակողական ուժերը արիական լեզու-մշակույթ գոտին հաղթահարելու համար հեռու են այդքան զարգացած լինելուց: Քանի որ ճիշտ չէ մշակույթները զտված համարել, և փոխկապակցվածությունը միշտ հնարավոր է, կարելի է կարծել, որ Կովկասի և Կենտրոնական Ասիայի որոշ տարրեր գաղթել են դեպի Բարեբեր մահիկ և շումմերական գոտի, որոնք ժամանակի Եվրոպան և ԱՄՆ-ն էին: Փաստորեն, շատ տարբեր և հիմնականում աղքատ մշակութային խմբեր աշխարհի շատ տարբեր հատվածներից հոսում են այսօրվա Եվրոպա և հաստատվում: Ճիշտ այնպես, ինչպես այսօրվա եվրոպական մշակույթը տարածվում է աշխարհով մեկ, արիական լեզուն և մշակույթը հնարավորություն էին տալիս նմանատիպ տարածման՝ հատկապես ինստիտուցիոնալացման և բնակչության վերելքի փուլից հետո (հատկապես Թել Հալաֆի ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 6000-4000): Նրանց ներքին միգրացիան կարող ենք համեմատել աղքատ բանվորների՝ Եվրոպա արտագաղթի հետ:

գ- Կարևոր է մշակութային առանցքային տարածք հանդիսացող Նեղոսի հովտի զարգացումները ճիշտ մեկնաբանելը: Այս հովտում գյուղատնտեսական մշակույթը զարգացնելը և այն եգիպտական փարավոնական քաղաքակրթության ձևափոխելը անհամատեղելի է սեմական մշակույթի լեզվի և կառուցվածքի հետ: Սեմական մշակույթը բովանդակային առումով, կարծես թե, չունի այդ կարողությունը: Նույնիսկ եգիպտական լեզվի կառուցվածքը բացահայտում է իր տարբերությունը՝ չպարունակելով սեմական որևէ տարր: Սուդանի, Եթովպիայի և Աֆրիկայի ավելի հարավային այլ մասերի մշակույթը նույն-

պես հեռու է հին քարե դարից այն կողմ անցնելուց: Ուստի տեսականորեն հնարավոր չի համարվում, որ դրանք տանեն դեպի եգիպտական մշակույթ, ավելի ճիշտ՝ սա չի դիտարկվում: Տեսականորեն չի համարվում, որ գաղթական խմբերը, որոնք աֆրիկյան ցեղերի շարունակությունն են, երկար ժամանակ կզարգանան Նեղոսի հովտում: Որովհետև նրանց անհրաժեշտ են գյուղատնտեսական հեղափոխության ապրանքներ և գործիքներ: Մենք ոչ մի գյուղատնտեսական բույսի հետք չենք գտնում Նեղոսի հովտում, որն, օրինակ, ինքնաբուխ աճում է Բարեբեր մահիկում: Կենդանական աշխարհում եգիպտական էշից բացի շատ օրինակների չենք հանդիպում: Տեսական ենթադրությունները հուշում են, որ նույն ժամանակաշրջանում այս տարածաշրջան է հասել արիական մշակույթի մի ճյուղ, որը տարածվել է աշխարհով մեկ: Պետք չէ մոռանալ, որ Արևելյան Աֆրիկայի Ռիֆի հովիտը մոտ է Նեղոսին, և մարդկանց հոսքերը հարավից հյուսիս, ինչպես նաև հյուսիսից հարավ, հնարավոր և սպասելի են: Գերազանց մշակույթները միշտ կրել են իրենց ազդեցությունն այս հնագույն ուղիների վրա: Ինչպես որ եգիպտական քաղաքակրթությունը համընկնում է մ.թ.ա. 4000-ականների հետ, և ճիշտ այնպես, ինչպես որ Բարեբեր մահիկի վերելքից առաջացավ շումերական մշակույթը, սա կարող է նշան լինել, որ արիական մշակույթը սկսվեց մոտ մ.թ.ա. 5000-ականներին: Բովանդակությունը, ձևաչափը և տրանսպորտային միջոցները թույլ են տալիս գալ այս եզրահանգմանը: Ըստ էության, նույն ճանապարհով մ.թ.ա. 2000-ականների սկզբին Հիքսոսները, ապա մ.թ.ա. 1700-ական թվականներին՝ եբրայեցիները (ինչպես արձանագրում է պատմությունը) Եգիպտոսում գաղութ հիմնեցին և նույնիսկ բարձրացան կառավարիչների դիրքի: Սրանք օրինակներ են, որոնք ապացուցում են մեր գաղափարը: Թեև արիական տարածքում մշակույթի տարածման ուժը աստիճանաբար թուլացավ, նրա նմանատիպ հոսքը դեպի սեմական տարածքներ հետագայում շարունակվեց:

դ- Այն բանից հետո, երբ արիական մշակույթն իրեն դրսևորեց Բարեբեր մահիկում և հասավ ուժեղ ինստիտուցիոնալացման, նրա տարածումը դեպի Արևելք՝ մինչև այսօրվա Իրան, Աֆղանստան, Պակիստան և Հնդկաստան, նույնպես շատ արդյունավետ եղավ: Կրկին պետք է շեշտեմ, որ այստեղ փոխանցվողն ավելի շատ մշակույթն է, քան մարդկանց խմբերը, ոչ թե ֆիզիկական, այլ մշակութային ազդեցությունները: Արիական մշակույթի փոխանցման նախանշանները հանդիպել են Իրանի բարձրավանդակներում մ.թ.ա. 7000-ականներին, իսկ մոտավորապես մ.թ.ա. 4000-ական թվականներին սկսել են արդյունավետ լինել Հնդկաստանում: Այս ազդեցությունը Թուրքմենստանի բարձրավանդակներում մ.թ.ա. 5000 թվականներ է հասնում: Ենթադրվում է, որ նախորդ մշակութային շերտերը եղել են տարրեր, որոնք ունեցել են հին աֆրիկյան ծագում և դեռ պահպանվել են հին քարի դարում: Մշակութային մնացորդները և որոշ խմբերի ֆիզիկական կառուցվածքները (հատկապես Հնդկաստանում) ամրապնդում են այս թեզը: Ճիշտ այնպես, ինչպես Եգիպտոսում և Շումերում, չկան տեղական զարգացումների արդյունքում ձևավորված մշակութային առաջխաղացման տեսական և գործնական ապացույցներ:

Թեև որոշ քննադատներ այսպիսի մտածողությունը համարում են չափից դուրս ռեդուկցիոնիստական, սակայն պետք է հիշեցնել, որ մշակութային հեղափոխությունները պատմության մեջ եղել են սահմանափակ և շատ դժվար իրագործելի: Եկեք մտածենք եվրոպական մշակույթի մասին: Ուրիշ ոչ մի տեղ նման օրինակ չկա: Չափազանց տեղին է նման գաղափար առաջ քաշել Բարեբեր մահիկի մշակույթի մասին՝ կախված դրա ժամանակաշրջանից: Հարյուր հազարավոր տարիների սովորությունների մեջ խրված և ոչնչացման եզրին կանգնած խմբերից մշակութային մեծ հեղափոխություն ակնկալելը և դա դրանց վերագրելը տեսականորեն և մշակութային մնացորդներով աջակցություն չի կարող ունենալ: Մշակութային ընդլայնումը մ.թ.ա. 3000-ական թվականներին դեպի արևելք՝ Իրանի արևմուտքում գտնվող Էլամի շրջանում, թվում է, թե թռիչք է կատարել դեպի Սուս-կենտրոն քաղաքակրթություն, որն ավելի շատ հիշեցնում է շումմերական գաղութ: Այս քաղաքակրթությունը միանշանակ շումմերական ազդեցության արդյունք է: Դեպի ավելի արևելք՝ ներկայիս Պակիստանի Փենջաբ գետի ափին գտնվող Հարապպա և Մոհենջոդարո քաղաքների հիմքերը թվագրվում են մ.թ.ա. 2500-ական թթ: Հասկանալի է, որ դրանք շումմերների հետքերով գնացող գոյացություններ են: Սրանք հարկադրված տեսություններով մշակութային այլ կառույցների սկզբնական հիմքեր համարելը չպետք է դիտարկվի նմանատիպ պատճառներով: Թեև այսպես կոչված ինքնատիպ մշակութային շերտը գրեթե նման է «հին քարի դարին», քաղաքային բնօրինակ քաղաքակրթությունը դրանցից բխեցնելը նման է էշին որպես ձի մա-

տուցելուն: Մեր միտքը ճիշտ հասկանալու առումով ուսանելի է հիշել, թե ինչու միլիոնավոր տարիների ընթացքում կյանքի նման մակարդակ ունեցող հազարավոր խմբեր չկարողացան քաղաքակրթություններ ստեղծել և մշակութային մեծ հեղափոխություններ իրականացնել ավելի զարգացած աշխարհագրական շրջաններում:

Անկասկած, այս ոլորտները նպաստել են մշակութային զարգացմանը, և բազմաթիվ սինթեզներ են իրականացվել: Դիֆուզիան և տեղայնացումը փոխկապակցված են և հիմնականում կամավոր են: Ընդ որում, տարածվում են ոչ թե գաղութատիրական խմբավորումները, այլ զարգացող նյութական ու հոգևոր արարիչ արժեքները: Էքսպանսիոնիստական մշակույթները, որոնք հաստատվել են այս եղանակով, միշտ դիտվել են որպես «աստծո կողմից տրված սուրբ հրաշքներ»: Կարևոր է կյանքի արժեքը նյութապես և հոգեպես փառաբանող մշակութային ընդլայնումները չշփոթել գաղութատիրության, ներխուժման և բռնի ձուլման հետ: Մշակութային էքսպանսիաների չնչին մասն է իրականացվել դաժան հարձակումների, գաղութատիրության և բռնի ձուլման տեսքով: Դրանց մեծ մասը խանդավառությամբ ընդունվել և յուրացվել են այլ համայնքների կողմից, քանի որ այն ապացուցում է կյանքի որակի գերազանցությունը: Մշակութային դիֆուզիոն խնդիրն անքակտելի է դարձել պատմության նկատմամբ եղ ազգայնական մոտեցումներով: Մեթոդական և տեղեկատվական համակարգային առումով շատ կարևոր է չընկնել ազգայնականության ծուղակները, որոնք աղավաղում, քողարկում, ժխտում և ուռճացնում են իրական պատմական հոսքերը:

ե- Արիական մշակույթի համեմատությունը չինական հիմնական մշակույթների հետ շատ հետաքրքիր թեմա է հետազոտության համար: Ենթադրվում է և ապացուցելի է, որ Չինաստանի մշակույթում նեոլիթյան վերին փուլը թվագրվում է և հասել է մինչև մ.թ.ա. 4000 թվական: Նկատի ունենալով, որ արիական մշակույթը Եվրոպայից տեղափոխվել է Հնդկաստան մոտավորապես նույն ժամանակահատվածում՝ կարելի է հեշտությամբ ասել, որ այն՝ որպես ամուր թեզ, տեղափոխվել է նաև Չինաստան: Չինական մշակույթը, ամենայն հավանականությամբ, սնվել է արիական մշակույթով, բայց հատկապես նրա աշխարհագրությունը (Հուանհե՝ Դեղին գետի ափերը) և պատմական պայմանների բավականին փակ ու յուրահատուկ կառուցվածքը գերիշխող դեր են տվել տեղական զարգացմանը: Ազդեցություն հաստատ կա: Այնուամենայնիվ, տեղական մշակութային առանձնահատկությունները յուրովի հանգեցրին «նեոլիթյան» հեղափոխության՝ ճիշտ այսօրվա Չինաստանի պես: Ինչպես պատմական մեծ զարգացումը և աշխարհագրական ու ժողովրդագրական պայմանները հանգեցրել են «սեփական «կոմունիզմի», նաև հանգեցրել են «սեփական կապիտալիզմի»: Քանի դեռ կոմունիզմը և կապիտալիզմը չեն ինտեգրվել Չինաստանի բնավորությանը, չի կարող լինել չինական կոմունիզմ և կապիտալիզմ: Արտաքին աշխարհին ուժեղ դիմադրությունը և դրա ձախողումից հետո հակառակորդ մշակույթների (ճապոնացիներ, կորեացիներ, թուրքեր, մոնղոլներ, վիետնամցիներ և այլն) արագ ընդունումը Չինաստանի մշակութային խմբին պատկանող ցեղերի հիմնական բնութագրերն են: Նրանց շատ ուժեղ դիմադրողական

կողմն ու ընդօրինակելու և յուրացնելու արտասովոր ունակությունը հավասարազոր են: Սա պետք է որ խորը և ընդհանուր հատկանիշ լինի նրանց մշակույթի մեջ:

Նեոլիթյան մշակույթը, և ավելի ուշ՝ քաղաքակրթական փուլը, Չինաստանի միջոցով փոխանցվել են խմբի մյուս անդամներին: Գուցե, ավելի լուսավորիչ է չինացիների խմբերում սեմականներին որպես արաբներ պատկերացնելը: Ինչպես սեմական մշակույթը, այնպես էլ չինական մշակութային խումբը չի կարողացել ցույց տալ արիական մշակույթի ապրած ունիվերսալացումը: Այս դեպքում ավելի բացատրական կարող է լինել նախ արիացիներին, հետո սեմականներին, իսկ հետո Չինաստանին դիտարկելը:

զ- Արիական լեզու-մշակույթ խմբի և հնդեվրոպական լեզու-մշակույթ խմբերի հարաբերությունների պարզաբանումը շատ ավելի կարևոր է և պատմագիտության, թերևս, հիմնարար խնդիրներից մեկն է: Այս հարաբերությունը լրոզված շրջանակ է, որի շուրջ շատ ենթադրություններ են արվել, բայց ընդհանուր մեկնաբանության հնարավոր չի եղել հասնել: 19-րդ դարում, երբ պարզվեց արիական լեզվախմբերի և հնդեվրոպական լեզվախմբերի ընդհանրությունը, մեծ հետազոտություններ կատարվեցին: Հասկական մեկնաբանություններ են մշակվել խմբերի հիմնական աղբյուրի՝ «նախնյաց լեզվի և մշակույթի» վերաբերյալ: Քննարկումներ եղան նրա ծագման մասին, որոնք վերաբերվում էին հունական մշակույթին, հնդկական և նույնիսկ հյուսիսային եվրոպական մշակույթին և գերմանացիներին: Այնուամենայնիվ, երբ ապացուցվեց Արևելյան Աֆրիկայի Ռիֆում պրիմատից անջատումը և

Բարեբեր մահիկի նեոլիթական-գյուղատնտեսական հեղափոխությունը, վերը նշված բոլոր վարկածները անվավեր եղան: Մարդկության պատմության երկու հիմնական կիզակետերը մեծ նշանակություն են ձեռք բերել. փորձենք հակիրճ ներկայացնել.

Բանավեճերն այն մասին, թե Բարեբեր մահիկի լեզվամշակութային որ խումբն է վավերական, ավելի մեծ նշանակություն են ստացել: Նախաքրդական, պարսկական, աֆղանական և բելուջական խմբերը, որոնք, ինչպես մենք ենք մեկնաբանում, կոչվում են «արիական» խմբեր, սկսեցին առաջնահերթություն ստանալ: Հատկապես երբ հասկացվեց հուրիների լեզվական կառուցվածքը, որոնք քրդերի նախնիներն էին, պարզ դարձավ արիական լեզվամշակութային պատկանելությունը՝ հիմնված իրական ժողովուրդների վրա: Այն թեզը, որն անձամբ ես ճիշտ եմ համարում, հետևյալն է՝ նեոլիթյան հեղափոխության միայն առանցքային շրջանը կարող էր ստեղծել այս լեզուն և մշակույթը: Պարզ է դարձել, որ առանցքային շրջանը Տավրոս-Զագրոս համակարգի գծած կորն է, և որ այս շրջանը, որը նաև կոչվում է Բարեբեր մահիկ, կազմում է արիական լեզվի և մշակույթի կենտրոնը: Վերջին հնագիտական պեղումները, ստուգաբանական ուսումնասիրությունները և էթնոլոգիական համեմատություններն օրեցօր ամրապնդում են այս թեզը: Այսպիսով, հնդեվրոպական լեզվամշակութային խմբերին տանող սկզբնաղբյուրային խնդիրը մեծապես լուծվեց:

Քանի որ «ժամանակաշրջանը» շատ երկար է, իսկ աշխարհագրությունը՝ շատ լայն, իրատեսական չի լինի արիական լեզու-մշակույթի տարածված քարտեզը տալ

այնպես, ինչպես կա: Այնուամենայնիվ, կարելի է հեշտությամբ մեկնաբանել, որ դեպի հարավ և արևելք համանման տարածում է զարգացել նաև դեպի Եվրոպա՝ հյուսիսային և արևմտյան ուղղությամբ: Ենթադրաբար մ.թ.ա. 5000-ական թվականներին սկսված տարածման այս ալիքները մ.թ.ա. 4000-ականներին Արևելյան Եվրոպայում, իսկ մ.թ.ա. 2000-ականներին՝ Արևմտյան Եվրոպայում են ամբողջությամբ բնակեցվել: Սա ընդունված հիմնական տեսակետն է: Հայտնի պատմաբանները, հատկապես Գորդոն Չայլդը, Եվրոպայի պատմությունը նույնպես հիմնում են այս տարիների վրա: Նախորդ շրջանը կազմում է «հին քարի դարը»: Ենթադրվում է, որ մեսոլիթյան (միջին քարի դար) ժամանակաշրջանը եղել է ներկայիս Հարավային Ֆրանսիայի և Իսպանիայի միջև ընկած տարածաշրջանում, որտեղ երեսուն հազար տարի առաջ հոմո սապիենսը դարձել է գերիշխող տեսակ՝ Հյուսիսային Աֆրիկայից առաջացած տարածման արդյունքում: Մենք ի վիճակի չենք ուսումնասիրել եվրոպական նեոլիթը և գյուղատնտեսական հեղափոխությունը: Բայց ես կարծում եմ, որ սկզբնաղբյուրային խնդիրը պարզված է իր կարևորության պատճառով: Ես ենթադրում եմ, որ այստեղ ընդլայնումը ոչ թե ֆիզիկական, գաղութատիրական է, այլ՝ մշակութային: Եվրոպայի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն վերցրել է նեոլիթյան ժամանակաշրջանն իր ամենաստեղծագործական կողմերով, հնարավորություն է ունեցել միանգամից կամ համեմատաբար կարճ ժամանակահատվածում մարսել տասը հազար տարվա փորձը : Կարելի է ասել, որ ինչպես Եվրոպան չորս դար շարունակ իր մշակութային էքսպանսիայի

տարածքն է դարձրել այսօրվա աշխարհը, այնպես էլ հենց ինքը դարձել է նախ նեոլիթյան հեղափոխության, ապա Հռոմի քաղաքակրթական և քրիստոնեության հոգևոր նշանակության հեղափոխության տարածքը: Երեք մեծ հեղափոխություններն էլ տարածվեցին Եվրոպայում և տարածվեցին հիմնականում մշակութային հիմքերի վրա: Բացի Հռոմեական կայսրության անթիվ պատերազմներից, տարածումը ձեռք բերվեց ոչ թե գաղութատիրության և բռնի ձուլման ոճով, այլ բարձրակարգ մշակույթները որպես «աստվածատուր» ընդունելու ճանապարհով: Երբ ձեռք բերվեց մարդկության մոտ 10 հազար տարվա մեծ մշակութային կուտակմանն այս տեսակ հասանելիությունը, դրվեցին հետագա եվրոպական մեծ հեղափոխությունների հիմքերը (Վերածնունդ, Ռեֆորմացիա և Լուսավորչական՝ քաղաքական, արդյունաբերական և գիտական հեղափոխություններ): Եվրոպան այս մեծ հեղափոխություններն իր առանձնահատուկ տաղանդներով չի իրականացրել: Այս հիմքը փորվել է, երբ պատմության գլխավոր գետի և նրա վտակների հոսքի արագությունը մեծանում էր, և դրանք հոսում էին միասին: Անկասկած, «սառցադաշտային ժամանակաշրջանի» վերջում ստեղծված շատ բարենպաստ կլիմայի շնորհիվ, որը համընկավ նույն ժամանակաշրջանի հետ, Եվրոպան՝ հագեցած թարմ անտառներով, փարթամ կանաչ և հումուսով բերրի հողով, կատարեց քաղաքակրթական մեծ թռիչք, որը այսօր թողնում է իր հետքը՝ առկա բոլոր պայմանների սինթեզով: Հարկ եղած դեպքում այս պատմության մանրամասներն ավելի մոտիկից կուսումնասիրենք:

3 – ԲԱՐԵԲԵՐ ՄԱՀԻԿԻՑ ԲԽՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՃԻՇՏ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Այն, ինչ փորձում եմ մեծ կարևորությամբ բացատրել այս խորագրի ներքո, ժամանակի և տարածության որոշակի սոցիալական հարթության ազդեցությունն է որոշակի ապրելակերպի վրա: Խնդիրը, որի վրա փորձել եմ մանրամասնորեն կենտրոնանալ նաև մեթոդի հարցում, այն է, որ սոցիալական իրողությունները մարդու ձեռքով «կառուցված իրականություններ» են: Այս խնդիրն այնքան կարևոր է, որ իրազեկման ցանկացած գործունեություն, որը ձեռնարկվում է առանց դրա իմաստը լիովին հասկանալու, կարող է «ուսումնառությունն» ու «իմաստը» վերածել անտեղյակության և անիմաստության առարկայի: Իմ պնդումն այն է, որ կապիտալիստական արդիականության տգիտությունն ավելի խորն է, քան «Աբուջահիլի» տգիտությունը, որը մեծ կրոններն իրենց առաջացման պայմաններում քննադատում և դատապարտում են: Դրա հիմնական պատճառը պոզիտիվիզմն է, որը, թերևս, նյութապաշտության վրա հիմնված ամենածանր կրոնն է: Այս կրոնը, որը մենք կարող ենք թարգմանել որպես «պոզիտիվիզմ», շնորհիվ իր բնույթի արդեն մետաֆիզիկական է՝ որպես մարդկային մտածելակերպի արդյունք:

Այդ նպատակով ես մեթոդի գլխում երկար քննարկել եմ, որ մարդիկ մենթալիտետի առումով մետաֆիզիկական բնույթ ունեցող արարածներ են: Պոզիտիվիզմը, թերևս անգիտակցաբար, չի տեսնում, որ այս փաստացությունը հին շրջանի ամենածանր «կռապաշտու-

թյունն» է: Ես խստորեն պնդում եմ այն միտքը, որ փաստացիությունը հավասար է կռապաշտությանը: Պոզիտիվիզմը իրականությունը մեկնաբանելու միջոց չէ: Դա նաև փաստերի վրա հիմնված գիտության փիլիսոփայություն չէ, թեև պնդում կա, որ այդպես է: Որովհետև նման փիլիսոփայություն չի կարող լինել: Ամեն մի տեսարան ու ձայն, որը գրավում է աչքը և դողացնում է ականջը, փաստ է: Յուրաքանչյուր զգացում նույնպես փաստ է: Ո՞ր խենթ կամ տգետ մարդը կարող է մտածել, որ տիեզերքի իրականությունը բաղկացած է դրանցից: Պլատոնի կարծիքով փաստերը նույնիսկ պատկերներ չեն համարվում: Նիցշեի տեսանկյունից լավագույն դեպքում դրանք կարող են լինել պարզ ընկալումներ: Կարելի է ընդգծել ընկալում-փաստ հարաբերությունը: Ճիշտ այնպես, ինչպես մենք կենտրոնանում ենք օբյեկտ-սուբյեկտի վրա:

Ցավոք, արդիականությունը փաստացիության վրա կառուցված կյանքի պատկերն է: Ես գիտակցաբար օգտագործում եմ «պատկեր» բառը: Որովհետև արդիականությունը ոչ թե կյանքի էության, այլ դրա ամենամակերեսային ձևի մասին է: «Սխալ կյանքը չի կարելի ճիշտ ապրել» արտահայտությունը, որը Ադորնոն ներկայացրեց, բայց չկարողացավ լուծել, հրեական ցեղասպանության առջև նրա մեծ հիասթափության արդյունքն է: Սա իրականում առանցքային արտահայտություն է, բայց առանց բացատրության: Որտե՞ղ է կյանքի հիմնական սխալը, ո՞վ է պատասխանատու սխալ կյանքի համար, ինչպե՞ս է այն կառուցված, ի՞նչ կապ ունի սխալ ապրելակերպը գերիշխող սոցիալական համակարգի հետ: Այս և նմանատիպ հարցերի պատասխանները չկան: Ադորնոն բավարարվում էր

իր թեզի արմատները լուսավորության և ռացիոնալ գործընթացի վրա հիմնելով: Սակայն թեման, այսինքն՝ սխալ ապրելակերպը, երկիմաստ է մնացել:

Նման ջանք կա նաև Միշել Ֆուկոյի դեպքում: Ֆուկոն ասում է՝ «արդիականությունը մարդու մահն է» և այդպես թողնում: Ինչպե՞ս կարող է նման հայտնի փիլիսոփան մեկ նախադասության մեջ տեղավորել այնպիսի կենսական թեմա, ինչպիսին է մարդկային մահը: Նրա վաղաժամ մահվան մասին խոսելն այնքան էլ իմաստ չունի, երբ դա բացատրելու ենք: Կարևոր ճշմարտությունը բացատրություն է պահանջում, նույնիսկ եթե այն մեկնաբանության վերջին շնչում է: Մահվան շեմին գտնվելու ժամանակ՝ Կոպեռնիկոսը չմոռացավ հրապարակել իր աշխատանքը՝ բացատրելով, որ «Երկիրը պտտվում է արևի շուրջ»: Ճշմարտության նման մեկնաբաններ շատ կան ինչպես Արևմուտքում, այնպես էլ Արևելքում: Պոստմոդեռնիզմի քննադատները ճշմարտությունն ասում են փոքր-ինչ ամաչելով, քանի որ խորապես ներգրավված են կյանքի դեմ արդիականության կատարած հանցագործության մեջ: Այսինքն՝ կիրառում են ստրկության ու իշխանության մեջ թաթախվածների, իշխանության տեղեկատվական համակարգով տոգորվածների ընդհանուր ոճը՝ մի քիչ եզոպոսյան ոճ:

Կրկնենք, որ այն, ինչ մենք փորձում ենք բացատրել, ճիշտ և սխալ կյանքի կառուցումներ են: Կարող է՞ր ճիշտ կառուցվել ոչ միայն կապիտալիստական արդիականությունը, այլև հնագույն այլ քաղաքակրթությունների պարտադրած կյանքը: Մի՞թե այն տերությունների համակարգերը, որոնք պաշտոնապես հիմնավորում են կյանքը՝

շումմերական քահանաներից մինչև աստված-արքաներ, եգիպտական աստված-արքաներից մինչև պարսկական Կիսրա, Իսքենդերից մինչև հռոմեական կայսրեր, իսլամական սուլթաններից մինչև եվրոպացի միապետներ, չեն կարող կյանքի սխալ հիմնավորման համար նույնքան պատասխանատվություն կրել, որքան կապիտալիստական արդիականությունը: Մի՞թե սխալ կյանքն ավելի ու ավելի չի հաստատվում այս օղակներով, որոնք նրանք դնում են սոցիալական զարգացման վզին, ինչպես շղթայի օղակները: Բավական չէ՞ սխալ ապրելակերպի համար բացառապես պատասխանատու համարել արդիականությունը և նրա պատերազմի ու ցեղասպանության կարգը: Պատասխանը նույնքան խորն է, որքան հարցի արմատները: Կենտրոնանալով Բարեբեր մահիկի մշակութային մեծ հեղափոխության և այն ապրելակերպի վրա, որին այն հանգեցրեց, մենք ուզում էինք հասնել այս բոլոր խնդիրների արմատներին: Անկասկած, մենք չենք կարող ամբողջությամբ բացատրել մշակույթն ու հասարակությունը: Դրա համար անհրաժեշտ կլինի ավելացնել բազմաթիվ տարրեր: Բայց դժվար է հերքել, որ հիմքը մշակույթն է: Ընթացքում պետք է նաև բացատրենք, թե ինչ նշանակություն ենք տալիս «մշակույթ» հասկացությանը: Սրանով նկատի ունենք պատմություն իմաստալից «երկար ժամանակաշրջանում» և մի վայր, աշխարհագրություն, որն ունի հասարակության գոյատևման անփոխարինելի հատկանիշներ: Այս ժամանակավոր պատմությամբ ու աշխարհագրությամբ չէ, որ մենք հասարակությանը զրոյից իմաստավորում ենք: Այնուամենայնիվ, ուզում ենք նշել, որ դրանք հիմնարար դեր են խաղում հասարակական կյանքի բազմաթիվ ձևավորումներում: Անհրաժեշտ ենք համարում նաև հետևյալ բացատրությունը՝ հասարակությունները բաղկացած են ժամանակի և տարածության մեջ գրանցված կյանքի շրջանակներից, և յուրաքանչյուր շրջանակ ունի իր տարբերությունը, բայց, միևնույն ժամանակ, նաև կախվածությունը մյուսից:

Սեմական հասարակությունների և չինական հասարակության միջև կյանքի տարբերությունները, որոնք հիմնված են տասը հազար տարի առաջվա վրա, իմաստավորվում են այն չափով, որը որոշում է նրանց կյանքն այսօր: Կարելի է փաստել, որ նույն հարցը վերաբերում է արիական կյանքի մշակույթին: Մյուս կողմից, «իմաստաբանությունից» կարող ենք եզրակացնել, որ կյանքի այս հիմքում ընկած մշակույթը ֆորմալացվել է հիերարխիայում և պետությունում՝ դիմակավորված կամ դիմակազերծ, բացահայտ կամ մերկ թագավորների իշխանության՝ ներքո և ենթարկվել է իմաստային մեծ աղավաղումների՝ դարձնելով այն խոցելի բոլոր տեսակի այլանդակությունների, պատերազմների ու ցեղասպանությունների նկատմամբ: Կարող են լինել կյանքեր տարբեր օղակներում՝ հորիզոնական, ինչպես նաև պաշտոնական և ոչ պաշտոնական կյանքեր՝ ուղղահայաց: Այդուհանդերձ, սոցիալական կյանքը հիմնական սկզբնաղբյուրում այն էությունն է, որը որոշում է ձևերը բոլոր այս օղակներում:

Մի փոքր ավելի բացատրենք մշակույթ հասկացության բովանդակությունը: Անկասկած, կլանային հասարակությունն ունի նաև մշակույթ և, հետևաբար, կյանք: Մարդկային հասարակության մեջ ունիվերսալ հատկանիշ ունեցող կլանային համայնքներում կյանքը իմաստա-

յին առումով նույնն է: Լեզուն և մտքի կառուցվածքը կատարվում են նշաններով: Նրանց և պրիմատների, հետևաբար, նաև կենդանիների միջև հեռավորությունը շատ չի մեծացել: Կլանային կյանքի պատմություն պատմելը նման է ամեն ինչ պատմելուն: Հիմնական կարիքների բավարարումը, անվտանգությունը և վերարտադրությունը այն եռանկյունն է, որը կապում է գրեթե բոլոր կենդանի էակներին: Նախապես մեկնաբանել ենք սրա կապը մենթալիտետի սահմանափակումների հետ: Կյանքի տարբերության զարգացումը նշանակում է մտավոր ճկունության զարգացում, անցում լեզվով արտահայտվելուն, որն էլ հնարավոր է դարձնում ավելի մեծ հասանելիությունը դեպի նյութական կառույցներ:

Այսպիսով, մշակութային զարգացումը նյութական առարկաների ամբողջական արտահայտությունն է, որն աճում է մտքի ճկունության և խորհրդանշական լեզվի զարգացման հետ: Մինչ մշակույթը նեղ իմաստով արտահայտում է հասարակության մտածելակերպը, կարծրատիպերը և լեզուն լայն իմաստով արտահայտում են հասարակության նյութական կուտակումների ավելացումը (բոլոր գործիքները, որոնք բավարարում են կարիքները, սննդամթերքի արտադրության, պահպանման և փոխակերպման եղանակները, տրանսպորտը, պաշտպանությունը, պաշտամունքը, գեղեցկության գործիքները): Հասարակությունների մշակութային մտածելակերպի և գործիքների նմանություններն ու տարբերությունները, նրանց աղքատության և հարստության միջև եղած անհավասարությունները որոշում են կյանքի տարբեր և նման մակարդակները:

Պետք է կրկնենք, որ մտավոր և նյութական կուտակումները կառուցված են մարդու կարողությամբ և այս առումով արտահայտվում են որպես սոցիալական իրականություն: Այս դեպքում ավելորդ չէր լինի մատնանշել կլանային-հասարակական կյանքի նմանությունը, որը տևեց միլիոնավոր տարիներ ողջ հին քարի դարում, և որ կլանները բնօրինակ շատ տարբերություններ չունեին: Այդ իսկ պատճառով մենք մեծ նշանակություն ենք տալիս մշակութային մեծ սերունդների առաջացմանը: Որովհետև յուրաքանչյուր մեծ մշակութային սերունդ նշանակում է մեծ ու տարբերվող կյանքի զարգացում: Այս առումով սոցիալական զարգացումը հնարավոր է նույնացնել մշակութային զարգացման հետ: Եթե ձևակերպենք, կստացվի հետևյալը՝ որքան մտավոր ճկունություն և ազատություն, այնքան խորհրդանշական լեզվական իմաստաբանություն և մտքի հարստություն, որքան նյութական մշակույթի գործիքներ, այնքան սոցիալական կյանքի զարգացում:

Սոցիալականությունը որպես կառուցված իրականություն, որն այս գլխի հիմնական ենթադրությունն է, ըստ էության, նշանակում է մարդկային ստեղծագործություն: Անկասկած, նրա մեջ անտեսված չեն նյութի քանակն ու կենսաբանական զարգացումը: Մենք գիտենք, որ դրանք հետազոտվում են որպես ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության փաստեր: Բացի այդ, մարդաբանությունն ու հոգեբանությունը, որոնք ուսումնասիրում են մարդկանց որպես տեսակ և միտք, իմաստ են ստեղծում իրենց իսկ ոլորտներում: Թեև քննադատություններ ունենք, բայց կարող ենք նաև դասեր քաղել գիտության

մասնատված վիճակից: Պատճառը, թե ինչու ենք մենք հաճախ նշում, որ սոցիալական իրականությունն ունի ընկալման այլ մակարդակ, ավելի լավ հասկանալն է դրա և այլ գիտությունների միջև եղած տարբերությունը: Առանց այս տարբերությունը որսալու մենք չենք կարող խուսափել պոզիտիվիստների կատարած մեծ սխալի մեջ ընկնելուց և «գիտականություն» հիվանդությունից: Այս հիվանդ վիճակի արդյունքը կապիտալիստական արդիականության ժամանակաշրջանում տեղի ունեցած ցեղասպանությունն է: Կրկին պետք է շեշտեմ, որ ցեղասպանությունը, որը սարսափեցրել է Ադորնոյին և որը, ըստ նրա, ոչ մի աստվածային կամ մարդկային մոտեցում չի կարող բացատրել, թե ինչու է տեղի ունեցել, այն մեծ հանցագործությունն է, որ նա վերագրում է կյանքի սխալ կառուցմանը: Ադորնոն նշում է, որ բոլոր գրքերը պետք է նետվեն կրակի մեջ՝ հիմնվելով ցեղասպանության հանցագործության նկատմամբ ներկայիս հեռանկարների և մտածելակերպի պատասխանատվության վրա: Կարևոր դիտարկում է նշել, որ ցեղասպանության զոհերին այլ իմաստով հնարավոր չէ հիշել: Ժամանակակից կյանքն ու պոզիտիվիզմը հրաժարվում են ընդունել այս փաստը: Տպավորություն է, որ նա կարծում է, թե, չնայած ցեղասպանություններին, դեռևս կարելի է սոցիալական կյանքով ապրել: Կամ էլ Ադորնոն ապշած է, քաշվում է իր պատյանի մեջ և մահանում այս հանցագործության համարձակության պատճառով, որը չպետք է տեղ գտնի ոչ մի գրքում, հետևաբար և մտքում՝ առանց այս հանցագործությունը իր հիմնական հիմքերով ոչնչացնելու:

Այն, ինչ ես փորձում եմ անել, այս «ՀԱՄԱՐՁԱԿ» աղբյուրները և դրա հաղթահարման հնարավոր ուղիները խնդրահարույց դարձնելն է: Միևնույն ժամանակ փորձում եմ բացահայտել արձագանքելու մեր կարողությունն ու իմաստավորել այն: Մենք չենք կարող անտեսել, որ շարունակվող արդիականությունը հանգեցնում է ավելի ու ավելի ինստիտուցիոնալացված ցեղասպանական կենտրոնների: Իրաքյան իրականությունը մեր աչքի առաջ պարզ և սարսափելի կերպով բացահայտում է Մերձավոր Արևելքի բոլոր վարչակարգերի բացահայտ կամ քողարկված ցեղասպանական բնույթը և մեղսակցությունը ցեղասպանությանը, որը տեսել են ոչ միայն ցեղասպանության ենթարկվողները, այլ նաև նրանք, ովքեր հետևել են այդ գործընթացին: Բայց մյուս կողմից կա նաև ազատ կյանքի ահռելի որոնում: «Ազատ կյանքն ու ցեղասպանությունը» երբեք միասին ապրելու երկընտրանք չեն կարող լինել: Եթե այսպես մտածենք ու ապրենք, երբեք չենք կարող մեղսակից լինել այս հանցագործությանը: Այդ ինչպե՞ս պատահեց, որ կյանքի ամենահարուստ իմաստը ծնած այս հողն ու պատմությունը սրան հասավ: Արդյո՞ք մի կողմից էթնոսների պատերազմը, որը հանգեցրեց կյանքի առաջին իմաստին, իսկ մյուս կողմից արդիականության վերջին մեծ աստծո գլխավորած պատերազմները հանգեցրին սրան: Սա նշանակում է, որ անհնար է խուսափել խնդրին կրկին ու կրկին անդրադառնալուց, պատասխան տալուց և համապատասխան գործողություն իրականացնելուց:

Մի քիչ էլ գրական լեզվով պիտի նկարագրեմ Բարեբեր մահիկի կյանքի համը: Սկսեմ Դիարբեքիր-Չայոնու

պեղումների նախաձեռնող Փ. Բրեյդվուդի դիտարկումից: Բրեյդվուդն ասում է՝ «աշխարհում ոչ մի տեղ կյանքն այնքան իմաստալից չի կարող լինել, որքան Տավրոս-Զագրոս լեռնաշղթայի կոր ստորոտներում»: Հետաքրքիր է, թե ի՞նչ զգացումներ են ստիպել այս մարդուն, ով մեծացել է շատ հեռավոր մշակույթում, ասել այս խոսքերը: Որպես քաղաքակրթությունը լավ ճանաչող հնագետ և պատմաբան՝ ինչո՞ւ է նա ամենաբովանդակալից կյանքը տեսնում այս մշակութային դաշտում, երբ այսօրվա բնակիչները ցանկանում են ժանտախտից փրկվելու պես փախչել այս հողերից՝ հարմարվելով նույնիսկ Եվրոպայի ամենացածր աշխատավարձին: Նրանք միգրացիան ընդունում են որպես իրենց ճակատագիր, կարծես իրենց ոչ մի սուրբ կամ գեղագիտական արժեքներ չեն մնացել, և ասես այդ արժեքներին այլևս հնարավոր չէ հասնել:

Պետք է խոստովանեմ, որ մի պահ ես էլ, տրվելով արդիականության այս հիվանդությանը, ուզում էի փախչել այս հողի ամեն ինչից, այդ թվում՝ ծնողներիցս: Հաճախ ինքս ինձ խոստովանում եմ, որ դա իմ ամենամեծ սխալն է կյանքում: Բայց ես նաև գիտեմ, որ ամբողջովին կտրված չեմ այն իրականությունից, որը դիտարկում է Բրեյդվուդը: Որպես այդ ստորոտներին մեծացած երեխա՝ ես միշտ ուզել եմ թափառել՝ տեսնելով լեռների գագաթները՝ որպես աստվածների ու աստվածուհիների սուրբ գահ, իսկ նախալեռները՝ որպես նրանց ստեղծած դրախտի մաս: Մականունս «սարի խենթ» էր, երբ դեռ երեխա էի: Ավելի ուշ իմացա, որ այս կյանքը հիմնականում պատկանում էր Դիոնիսոս աստծուն: Դիոնիսոսը շրջում էր Բախաս կոչվող ազատ ու արվեստագետ աղջիկների ուղեկցությամբ:

Միասին ուտում, խմում, զվարճանում էին: Ես սիրում էի այս աստվածային կյանքը: Փիլիսոփա Նիցշեն նույնպես այս աստծուն գերադասեց Զևսից, և նույնիսկ իր շատ ասացվածքներ ստորագրեց որպես «Դիոնիսոսի աշակերտ»: Երբ գյուղում էի, թեև դա չէր համապատասխանում կրոնի պահանջներին, միշտ պատրաստ էի թվացյալ նշանադրություն խաղալ աղջիկների հետ կամ լինել նրանց աչքի լույսը: Ըստ իս՝ բնականն այսպես պետք է լինի. ես երբեք չեմ հանդուրժել գերիշխող մշակույթի՝ կանանց կալանքի տակ պահելը: Ես չճանաչեցի այն օրենքը, որը նրանք անվանում են պատիվ: Իմ պատասխանը դեռևս այն է կանանց հետ անսահմանափակ ազատ քննարկմանը, խաղալուն, կյանքի մնացած բոլոր սուրբ բաները կիսելուն: Բայց ինչ էլ որ մենք դա անվանենք, ինչ էլ որ լինի պատճառը, իմ պատասխանը բացարձակ ոչ է միմյանց նկատմամբ ստրկական հավատարմությանը, որը հիմնված է իշխանության և սեփականության գարշահոտության վրա:

Ես միշտ աստվածուհու ներշնչանքով ողջունում էի այս լեռներում գտնվող ազատ կանանց խմբերին և փորձում էի այդ կերպ «ընկալել»: Հաճախ եմ հիշում, երբ պարբերաբար լուրերով լսում էի, որ «բեռնատարների և տրակտորների մեջ խցկված մի խումբ հարավարևելյան կանայք հողագործության գնալու ճանապարհին մահացել են տրանսպորտային պատահարից» նախադասությունը, այնպիսի զայրույթ էի զգում այդ կանանց այսպես կոչված տերերի՝ տղամարդկանց, ընտանիքի, հիերարխիայի և պետության հանդեպ, որ երբեք ոչ մի այլ հարցում չեմ ունեցել: Ինչպե՞ս է հնարավոր, որ աստվածուհու

տոհմից նման անկում լինի: Երբեք թույլ չեմ տվել, որ գիտակցությունս ընկալի մտքիս ու հոգուս կողմից բացարձակապես չընդունված այս անկումը: Ինձ համար կինը կամ աստվածուհու սրբության մեջ պետք է լինի, կամ ընդհանրապես չլինի: Ես միշտ մտածում եմ այս ասացվածքի ճշմարտացիության մասին. «Հասարակության մեջ կանանց կենսամակարդակը այդ հասարակության գնահատման հիմնական չափանիշն է»: Մորս համար օգտագործել եմ նեոլիթյան դարաշրջանի «մայր աստվածուհու մշակույթից ժառանգված» տերմինը: Նա էլ նրանց պես գեր էր: Արդիականության կերտած արհեստական մոր ֆենոմենն ինձ խանգարեց դրա մեջ սրբություն տեսնել: Թեև կյանքումս մեծ ցավ եմ ապրել, բայց ոչ մի իրադարձության համար երբեք լուրջ չեմ լացել: Սակայն արդիականության կաղապարները կոտրելուց հետո ես մորս և մերձավորարևելյան բոլոր մայրերին միշտ հիշում և նայում եմ ծանր սրտով և արցունքն աչքերիս: Ամենավառ ու սրտաճմլիկ հիշողություններիցս մեկը համարում եմ այն, որ մի անգամ կես ճանապարհին իջեցնել տվեցի և կում արեցի ջրհորի ջրից, որը մայրս մեծ դժվարությամբ տանում էր: Խորհուրդ եմ տալիս բոլորին արդիականությունը ոչնչացնելուց հետո իրենց ծնողական հարաբերություններին նայել մտավոր բոլոր օրինաչափություններում: Ես կցանկանայի, որ նրանք արտացոլեն նեոլիթից սկսված նույն տեսակետը «գյուղի բոլոր հարաբերություններում»: Արդիականության ամենամեծ հաղթանակը, անկասկած, այն է, որ նա ոչնչացրեց տասնհինգ հազար տարի շարունակ կառուցված մշակույթի մասին մեր հայացքը և կարողացավ այս մշակույթը ոչնչի հասցնել: Հասկանալի է, որ

ազնվականություն, ազատ հայացք, դիմադրություն և կյանքի հանդեպ կիրք չի կարելի ակնկալել անհատներից և համայնքներից, որոնք այդքան ավերվել և նսեմացվել են:

Ողորանների ստորոտում ամեն մի բույս ու կենդանի ինձ համար կրքի առարկա էր: Ես նրանց նայում էի այնպես, կարծես նրանք սուրբ նշանակություն ունեին, միմյանց համար ստեղծված ընկերներ էինք: Սիրով էի վազում նրանց հետևից: Իմ սերը մի քիչ այդպիսին էր: Սակայն կա մի բան, որի համար ինձ մինչ օրս էլ չեմ ներում՝ որսածս թռչունների գլուխներն առանց խղճահարության պոկելը: Ոչինչ ինձ վրա այնքան չի ազդել, որքան այս իրադարձությունները՝ օգնելով ինձ տեսնել սուբյեկտ-օբյեկտ ըմբռնման հիմքում ընկած խորը վտանգը: Իմ էկոլոգիական ընտրությունը սերտորեն կապված է մանկությանս կրքի ու մեղքի այս խոստովանության հետ: Ես որսորդական մշակույթից ժառանգած այս մեծ հոգևոր վտանգը կարող էի վերացնել միայն քողազերծելով ուժն ու պատերազմները, որոնք «ուժեղ, շահագործող, տիրող մարդու» արվեստն էին (դիմակավորված և դիմակազերծ աստվածներ և քողարկված ու մերկ թագավորներ), ոչ այլ ինչ, քան որսորդություն: Եթե մենք չհասկանանք բույսերի և կենդանիների լեզուն, մենք չենք կարողանա հասկանալ ինքներս մեզ, ոչ էլ լինել էկոլոգիապես սոցիալիստ: Այսպես ես կիմաստավորեի ինձ չլքած բույսերի ու կենդանիների մասին հիշողությունները: Երբ հիշում եմ լեռների ստորոտից սկսվող հարթավայրերում գարնան սկզբից մինչև աշնան վերջ հորս կողմից հողի պատրաստումը արտադրությանը, մթերքների հավաքումն ու կալսումը, հացահատիկի հավաքումը, դժվարությամբ եմ կարողանում

զսպել այն զգացմունքային բեռը, որը երբեք չի տվել որևէ այլ վեպ: Շատ եմ ափսոսում, թե ինչո՞ւ մենք չկարողացանք լիովին հասկանալ Աստծո այդ ուխտավորներին և ընկերանալ նրանց հետ: Չնայած իմ բոլոր հարաբերությունները ընկերական էին, բայց դեռ չեմ կարողանում ներել, որ արդիական այդ սարսափելի հարաբերությունների պատճառով չկարողացա նույնիսկ սգալ հորս մահը: Հայրս, թերևս, հայրերից ամենաթույլն էր, բայց նա Աստծո մաքուր ու անբիծ ծառաներից էր: Իմ կարծիքով ամենաթանկը ֆերմեր հայրերն են:

Գյուղական բոլոր հարաբերություններն ինձ թվում էին անհայտ դարաշրջանի սին ջանքեր, որոնց ժամանակն անցել էր: Քաղաքում ապաստանելն էլ, իբր գյուղից փախչելու համար, հանցագործություն եմ համարում: Չեմ կասկածում, որ մարդկանց համար իդեալական կյանք ձեռք կբերվի էկոլոգիական գյուղերում, ոչ թե արդիականության (ամբողջ քաղաքակրթության) քաղցկեղային քաղաքային կառուցվածքում: Քաղաքը թույլատրված տարածք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ լիովին համատեղելի լինի էկոլոգիական գյուղերի հետ:

Այս լեռնաշղթաների ստորոտներում ապրած և ապրող մարդկանց՝ Ամանոսից մինչև Զագրոս, ես համարում եմ աստվածների ու աստվածուհիների սուրբ ուխտավորներ՝ նստած իրենց գահերին՝ լեռների գագաթին: Կարծում եմ, որ արդիականության համեմատ հետամնացության մեղադրանքն այժմ միանգամայն ճիշտ է:

Առաջընթացի և հետամնացության տարբերությունը գաղափարական դատողություն է, քանի որ լուծել կապիտալիստական արդիականության մտածելակերպը, որը

ոչ միայն հետամնաց, այլև մարդկության հանդեպ թշնամաբար է տրամադրված, նշանակում է հասնել իրական մարդկային հիմքերին: Կարծում եմ, որ սրանով հասել եմ դեպի ազատություն մեծ վերադարձի:

Արդիականության դժոխքից ազատվելու դեպքում, որը բաղկացած է ՊՐՈՖԻՏԻԶՄԻՑ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶՄԻՑ և ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ, ամեն ինչ ավելի լավ է ընկալվում. դա բերում է կյանքի իմաստի հարստության: Ես Նյու Յորքի հետ չէի փոխի նեոլիթյան բլուրը, որին ես նայում էի մեծ հետաքրքրությամբ և կրքով:

Ոչ մի իմաստ չունեցող քաղաքները, որոնք բացել են իրենց բոլոր դռները ավելի «շահավետ կյանքի», մարդ արարածներին «երկաթե վանդակի» մեջ դնող և կյանքը սպանող «ինդուստրիալիզմի հրեշների» առջև, ոչ այլ ինչ են, քան 72 լեզվանի «Բաբելոնի» պատճեն, որտեղ ոչ ոք միմյանցից ոչինչ չի հասկանում: Կասկած չունեմ, որ մարդկության փրկությունը ուրբանիզմի այս քաղցկեղային կառույցի ոչնչացման մեջ է:

Ես պատմեցի այս կարճ պատմությունը, որպեսզի ասոցացնեմ այն կյանքի մշակույթի հետ, որտեղից գալիս ենք: Եթե մենք չկարողանանք գրագետ ըմբռնել այս ապրելակերպը, որը կառուցված սոցիալական իրականության արտադրությունն է, չենք կարող խուսափել «արդիականության հիմարների» դերը խաղալուց:

Քաղցկեղային արդիականությունը գերեվարում է բոլորին, նույնիսկ՝ լեռան վրա գտնվող հովվին: Քաղցկեղային արդիականությունը, ըստ էության, նշանակում է կյանքի վերջ: Ես սա բացատրել եմ ամենակարկառուն փիլիսոփաների խոսքերով և ամենաշատը ես եմ այդպես

կարծում: Եթե մենք չազատվենք այս քաղցկեղային արդիականությունից, մենք չենք կարող ապրել ազատ կյանքով և նրա բերած հարստությամբ: Իսկ մեր միտքն ու կամքը ազատ կյանքը հնարավոր են դարձնում: Վաղ թե ուշ մենք կհասկանանք, որ «մեր սխալ կառուցված կյանքը հնարավոր չէ ճիշտ ապրել»:

Եկեք մի փոքր ավելի գիտական լեզվով բացատրենք մեր պատմությունը: Բարեբեր մահիկում կառուցված սոցիալական իրողությունները շարունակում են գոյություն ունենալ այսօրվա կյանքում: Ե՛վ մտածելակերպը, և՛ նյութական մշակույթի տարրերն, ըստ էության, նման են՝ չնայած քանակական և որակական որոշ փոփոխությունների: Լեզուն ընդհանուր է իր հիմնական կառուցվածքով: Մտածողության ուղիները շարունակում են տարբերվել գիտական, կրոնական և գեղարվեստական ոլորտներում: Պաշտպանական և հարձակվողական պատերազմներ կային երեկ և կան նաև այսօր: Ընտանիքը՝ որպես հիմնական ինստիտուտ, պահպանում է իր իրականությունը:

Տարբերությունները զարգացել են՝ ելնելով պետական ինստիտուտի աճից: Պետությունը, որն անընդհատ ընդարձակում է իր տարածքը հասարակության դեմ, իր կողմից սեփականացված սոցիալական մտածելակերպը և նյութական մշակույթի կուտակումները մշտապես ենթարկել է քանակական և որակական փոփոխությունների՝ ըստ իր կարիքների: Հակառակ տարածված կարծիքի, սոցիալական զարգացումները իրականում շարունակվեցին՝ չնայած պետության գոյությանը: Մենք կփորձենք հասկանալ պետական կազմավորումների սոցիալական հետևանքները՝ շումմերական քահանայական պետությունից մինչև կապիտալիստական արդիականության ազգային պետություն, և նրանց ստեղծած քաղաքային մշակույթի հիմնական գործառույթը, որը կոչվում է քաղաքակրթություն: Մասնավորապես, կտեսնենք, որ դասակարգումը չի բացահայտում պետությանը, ավելի շուտ պետությունը ճյուղերով դասակարգ է տարածում:

Կարծում եմ, որ «տնողություն» հասկացության դերը, որն աչքի է ընկնում Ֆերնան Բրոդելի գնահատականներում, սոցիալական զարգացման մեջ պատշաճ կերպով չի ընկալվում: Հատկապես տնողություն-մշակույթ, տնողություն-քաղաքակրթություն և տնողություն-հասարակություն ձևերը բացատրության կարիք ունեցող հասկացություններ են: Տնողություն հասկացության այս որոշումը հզոր ներդրում է պատմության մեջ, բայց այն պատմագիտության մեջ գրագետ կերպով չի կարողանում կիրառվել: Այստեղ վերլուծության մեջ կփորձեմ համարձակորեն օգտագործել այս հայեցակարգը:

ա- «Ամենաերկար ժամանակաշրջանի» հասարակությունը, այսինքն՝ Բարեբեր մահիկի հասարակությունը, որը ձևավորեց նեոլիթյան հեղափոխության մեջ գլխավոր «գետը»՝ զարգացավ չորրորդ սառցադաշտային շրջանի ավարտից հետո, կամ վերապրեց նմանատիպ նոր սառցադաշտային ժամանակաշրջան կամ միջուկային աղետ, անկանխարգելելի հիվանդություն: Այս հասարակությունը պետք է շարունակի իր վավերականությունը, մինչև հասնի մի կետի, որտեղ ֆիզիկապես չկարողանա պահպանել իր գոյությունը: Չինական և սեմական ծագման մշակույթները որպես ճյուղեր մասնակցում են այս «երկարատև» հասարակությանը: Այլ՝ ավելի փոքր մշա-

կութային վտակները հիմնական գետի համար մեկական առվակ են: Պետք է լավ հասկանալ թեզի ներքին կառուցվածքը: Կառուցված հասարակությունն այնքան ուժեղ է իր մտածելակերպով և նյութամշակութային տարրերով, որ ոչ մի ներքին սոցիալական պատճառ չի կարող այս ընթացքում կործանել այս հասարակությանը: Այս ժամանակահատվածի համար մենք կարող ենք օգտագործել «հիմնական մշակութային հասարակություն» հասկացությունը: Դրա օրինաչափությունները, բովանդակությունը և կուտակումները հաճախակի, նույնիսկ եթե բազմիցս կրկնում եմ, ունի պատճառ՝ հասնել «հիմնական մշակութային հասարակության» սահմանմանը, որը համապատասխանում է «ամենաերկար ժամանակաշրջան» հասկացությանը: Որովհետև տնտեսություն և հասարակություն հասկացությունները նպաստում են սոցիոլոգիային այս նոր իմաստներով: «Պատմության վերջի» հայեցակարգով լիբերալ սոցիալիստներն արդեն իսկ կեղծ մետաֆիզիկայով ցանկանում են իրենց սոցիալական ընկալումները հավերժ վավեր համարել: Մարքսիստները և այլ «ապոկալիպտիկ» մոտեցում ունեցողները խոստանում են «հավերժական երջանկության դարաշրջան», որն անջատված է ժամանակի տարածության չափումից: Հոռետեսները հիմնականում հիշում են անցյալ «ոսկե դարը» և խոսում ներկա «թիթեղյա դարաշրջանի» անիմաստության մասին:

«Ամենաերկար ժամանակաշրջան» հասկացությունն ավելի գիտական է, քան այս բոլոր սոցիալական տեսությունները: Այն առաջարկում է հասկանալի փաստարկներ սոցիալական համակարգի սկզբի և ավարտի, ինչպես

նաև կոնկրետ պայմանների վերաբերյալ: Այն ոչ պատմությունը պատում է իրադարձությունների զանգվածով, ոչ էլ ընկնում սոցիալական նեղ ձևերի պարբերական պարզության մեջ: Ո՛չ ակնթարթային իրադարձությունները, ո՛չ սոցիալական ձևերն ի վիճակի չեն համակողմանիորեն մեկնաբանել կյանքի իմաստը: Դրանք կարող են հասնել միայն մասնակի արտահայտությունների:

Ամենաերկար ժամանակահատվածում հիմնական մշակութային հասարակության մեջ տեղ կա բոլոր տեսակի կրոնական, պետական, գեղարվեստական, իրավական, տնտեսական, քաղաքական և այլ հիմնարար ինստիտուտների համար: Ինստիտուտները մշտապես փոփոխվում են իրենց քանակական և որակական առումներով: Ոմանք դառնում են շատ փոքր, նրանց հակադրությունները դառնում են ավելի մեծ: Թեև դրանցից մի քանիսը անհետանում են, նրանց գործառույթները շարունակում են նշանակություն ունենալ կամ այլ, կամ նոր հաստատություններում: Ամբողջական ըմբռնմամբ կարող ենք ասել, որ բոլոր հասկացությունների և ինստիտուտների միջև գոյություն ունի կառուցողական դիալեկտիկական հարաբերություն: Հիմնական մշակութային հասարակության յուրահատկությունը նրան չի զրկում ամուր գործընկերներից և ներքին նոր կազմավորումներից:

Այս պահին մենք կարող ենք հասկանալ «Էվոլյուցիոնիստների» և «ստեղծագործողների» պայքարը: Ստեղծագործողները տեղյակ են «ամենաերկար ժամանակ» հասկացությանը, այստեղից են ստանում իրենց հիմնական ուժը: Տիեզերքի, Աստծո կողմից ստեղծման տնտեսության և ավարտի մասին չափածոները կարելի է բացատրել մշա-

կութային ըմբռնմամբ: Եթե սոցիոլոգիապես մեկնաբանենք, ստեղծագործական հայացքը գիտակցում է կառուցված հասարակության սուրբ, վեհ, շքեղ հատկանիշը: Իրականում բոլոր երեք Սուրբ գրքերը (Թորան, Աստվածաշունչը և Ղուրանը) մեկնաբանություններ են, որոնք փորձում են բացատրել Բարեբեր մահիկի հրապուրիչ, սուրբ կյանքը: Մարդկության մեծամասնության՝ այս երեք կրոններին պատկանելությունը բխում է նրանց մշակած մեկնաբանությունների բնույթից: Պնդելը, որ նոր մշակութային կյանքը, որը տեղի է ունեցել հրաշքով (այս հայեցակարգը հասկանալի էր ժամանակաշրջանի մարդկության համար) հավերժ կտևի, և սա հիմնական համոզմունք դարձնելը ցույց է տալիս այս մշակույթի տպավորիչ ուժը: Եկեք մտածենք սրա մասին. մարդկային խմբերը, որոնք որպես կլաններ ապրել են միլիոնավոր տարիներ և ոչ մի կերպ չեն կարողացել խուսափել պրիմատ լինելուց, բախվում են արտասովոր սոցիալական կառուցվածքի, որը կարելի է բացատրել միայն հրաշքով՝ Բարեբեր մահիկի հեղափոխությամբ: Կարո՞ղ են նրանք սա չընդունել որպես սուրբ, վեհ, աստվածային ու տոնական:

Անմիջապես հիշեցնենք, որ այնպիսի սոցիոլոգներ, ինչպիսիք են Դյուրկհեյմը և այլ գիտնականներ, չեն անցել հասարակությունը որպես իրադարձությունների և ինստիտուտների հանրագումարից բաղկացած մարդկանց խմբեր տեսնելուց այն կողմ: Նման արտահայտությունները, ինչպիսիք են դասակարգը, պետությունը, տնտեսությունը, իրավունքը, քաղաքականությունը, փիլիսոփայությունը և կրոնը, չեն գերազանցում իրադարձությունների և ինստիտուտների տրամաբանությունը:

Բայց այս մոտեցումները չեն ուզում հասկանալ, թե ինչու չեն կարող գտնել այնքան արժեք, որքան Աստվածաշունչը: Նրանց պատմվածքի ամենակարևոր թուլությունը կայանում է նրանում, որ նրանք երկար ժամանակ չեն կարողանում հասկանալ իրենց հասարակության կարևորությունը: Կրկին պետք է շեշտեմ, որ մարդկությունը խորը հիշողություն ունի սեփական պատմության մասին և հեշտությամբ չի հրաժարվում դրանից: Հակառակ տարածված կարծիքի՝ հասարակությունների նվիրվածությունը սուրբ կրոնական գրքերին պայմանավորված չէ վերացական աստծով և որոշ ծեսերով: Նրանք մեծ հարգանք ունեն, քանի որ զգում են, որ այս գրքերում կգտնեն իրենց կյանքի պատմությունների իմաստն ու հետքը: Այս գրքերն անփոխարինելի են, քանի որ կենդանի հասարակության հիշողության դեր են խաղում: Դրանում տեղ գտած իրադարձություններն ու հասկացությունները՝ ճիշտ են, թե ոչ, երկրորդական մանրամասներ են: Երբ Ֆերնան Բրոդելը իրավացիորեն ասում է՝ «պատմությունը պետք է դառնա սոցիոլոգիական, սոցիոլոգիան՝ պատմական», նա ուշադրություն է հրավիրում մեթոդի և գիտության մեջ հիմնարար սխալի վրա: Քանի դեռ պատմության մեջ ժամանակ-հասարակություն հարաբերությունները իմաստալից չեն որոշվել, պատմության և սոցիոլոգիայի առանձին նարատիվները չեն կարող խուսափել սոցիալական իրականության լուրջ վնասից և իմաստը կորցնելուց: Հավաքեք այնքան փաստագրված իրադարձություններ, որքան ցանկանում եք, հիշեք այնքան սոցիալական հաստատություններ և կանոններ, որքան ցանկանում եք, բացատրեք դրանք փաստաթղթերով, սա-

կայն եթե պատասխան չլինի այն հարցերին, թե որտեղ, երբ, ինչ համատեքստում և ինչ են ասում տեղի ունեցող իրադարձությունները, պատմության և սոցիոլոգիայի ներդրումը իմաստաբանության մեջ կլինի ոչ այլ ինչ, քան կոպիտ նյութ:

Թեև էվոլյուցիոնիստներն ավելի լավ են կարողանում բացահայտել իրադարձություններն ու փաստերը, բայց չեն կարող խուսափել քննադատությունից, քանի որ սոցիալական տնողության հասկացության իմաստը բացակայում է նրանց մոտ: Սոցիալական հիշողությունն ավելի կարևոր է, քան փաստերի և իրադարձությունների էվոլյուցիան: Մարդկանց համար իմաստաբանությունը առաջ է գալիս փաստական գրառումներից: Այնտեղ նրանց կյանքը հոսում է գետի պես: Այն, որ նրանք Աստծուց չեն հրաժարվում, սոցիալական հիշողության ուժի շնորհիվ է: Ինչպես հետագայում ավելի համապարփակ կմեկնաբանենք, հասարակությունն Աստված հասկացությունը նույնացնում է իր անցյալի հիշողության հետ: Պոզիտիվիզմը արդիականության հիվանդություն է և չի կարող չքննադատվել, քանի դեռ այն հակադրվում է հասարակության հիշողությանը և, հետևաբար, նրա մետաֆիզիկային: Ինչպես հիշողություն չունեցող մարդիկ կյանքում մեծ դժվարությունների են հանդիպում և դառնում մանկամիտ, այնպես էլ հիշողության կորստով հասարակությունները կանգնած են իրենք իրենց մոռանալու և կորցնելու վտանգի առաջ: Հիշողությունը կորցրած հասարակությունները չեն կարող խուսափել հեշտ շահագործումից, օկուպացվելուց և ձուլվելուց:

Չնայած պոզիտիվիստները պնդում են, որ գիտականորեն սահմանում են հասարակությունը, սակայն պոզիտիվիզմը մտքի այն դպրոցն է, որն ամենաքիչն է ճանաչում հասարակության իրական հոսքը: Կոպիտ և նյութապաշտ կերպով հասարակությանը որպես անպատմություն զանգված մեկնաբանելով՝ նրանք ճանապարհ են հարթում ամենավտանգավոր սոցիալական գործողությունների համար՝ հասարակության ամենաաղավաղված և թերի սահմանմամբ: Սոցիալական ճարտարագիտության հայեցակարգը կապված է պոզիտիվիզմի հետ: Նրանք կարծում են, որ արտաքին միջամտությամբ կարող են հասարակությանը ցանկալի ձև տալ: Այս մոտեցումները, որոնք նաև արդիականության պաշտոնական ըմբռնումն են, ձևավորում են հասարակության ներսում և դրսում իրականացվող իշխանության և շահագործման պատերազմների օրինական հիմնավորումները:

բ- Մենք կարող ենք կառուցվածքային տնողության հայեցակարգը հարմարեցնել սոցիալական զարգացման հիմնական ինստիտուցիոնալ վերափոխումներին: Հիմնական կառույցների կառուցման և քանդման ժամկետների սահմանումը կարող է նպաստել սոցիալական իրականության ըմբռնմանը: Ստրկական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական հասարակությունների միջև տարբերությունները կարող են ենթարկվել իմաստալից մեկնաբանությունների՝ հիմնված մարդկանց ճնշումների և շահագործման վրա:

Կառուցվածքային տնողությունները հասարակության այս ձևերի հետ կապելը հանգեցրել է նշանակալի գրականության ստեղծմանը: Այնուամենայնիվ, քանի որ

դրանք չեն կարող իմաստալից կապ հաստատել ամենաերկար և ամենակարճ տևողության հասկացությունների հետ, այնքան էլ արդյունավետ չեն և ընկնում են իմաստի կլիշե կրկնության մեջ:

Նեղլիթյան հասարակությունը կարելի է մեկնաբանել ինչպես կառուցվածքային հասարակության, այնպես էլ հիմնական մշակութային հասարակության տեսությունների հետ սերտաճած: Թեև յուրահատուկ ինստիտուցիոնալ կառույցների, մտածելակերպի և նյութական կյանքի կուտակումների առկայությունը կարելի է բացատրել «կառուցվածքային տևողությամբ», այն կարելի է բացատրել նաև «ամենաերկար տևողության» հայեցակարգով, քանի որ դրա շարունակական մշակութային ազդեցությունները շարունակվում են մինչև հնարավոր ֆիզիկական ոչնչացումը կամ փլուզումը: Հիմնական մշակութային հասարակության ժամանակաշրջանների սուբյեկտները, թեև տարբեր փոփոխությունների են ենթարկվում, ըստ էության, մտածելակերպի ձևեր են և մարդկանց մեծ խմբեր, ինչպիսիք են գիտությունը, արվեստը, կրոնը, լեզուն, ընտանիքը, էթնիկ պատկանելությունը և այլն, որոնք, ամենայն հավանականությամբ, գոյատևում են մինչև ժամանակաշրջանի ավարտը: Բացի այդ, էկոլոգիան, կապված գիտության բոլոր ճյուղերի արդյունքների հետ, այն թեմաներից է, որը կարող է ուշադրության կենտրոնում դրվել՝ որպես այս ժամանակաշրջանում տնտեսության ինստիտուցիոնալացման գիտություն: Ժողովրդավարական քաղաքականությունն այն խնդիրներից է, որը պետք է մշտապես գոյատևի և՛ որպես գիտություն, և՛ որպես ինստիտուտ:

Չնայած կառուցվածքային ժամանակաշրջանների ամենահիմնական ինստիտուտը պետության կայացումն ու կյանքն է՝ հիերարխիան, դասակարգերը, որոնք գոյություն ունեն պետության հետ, սեփականությունը՝ որպես պետական սահմաններ, հող-հայրենիքը, քահանայական պետությունը, տոհմական պետությունները, հանրապետությունը և ազգային պետությունները՝ որպես պետական ձևեր, կարևոր են: Կառուցվածքային ժամանակաշրջանի կարևոր թեմա են նաև կրոնական ձևերը: Կառուցվածքային տևողության խնդիրներից են նաև այն հարցերը, որոնք տարբերակում են հասարակությունները՝ ըստ իրենց արտադրության եղանակների (նեղլիթ, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական, սոցիալիստական): Կառուցվածքային տևողության մաս է նաև ինստիտուտների փլուզման հարցը: Տեղին կարող է լինել կառուցվածքային հարցերը ուսումնասիրող սոցիոլոգիայի ենթաճյուղն անվանել «կառուցվածքային սոցիոլոգիա»: Տեղին կլինի ամենաերկար ուսումնասիրության առարկաները անվանել «հիմնական մշակութային սոցիոլոգիա»՝ իր ամբողջական շրջանակի պատճառով:

գ- Միջնաժամկետ և կարճաժամկետ հարցերը բազմաթիվ իրադարձություններ և փաստեր են թե՛ թվային առումով, թե՛ որակապես: Բոլոր մշակութային և կառուցվածքային փոփոխություններն ու վերափոխումները կարճ և միջին ժամանակաշրջանների հարցեր են: Միջնաժամկետ խնդիրները փոփոխություններ են, որոնք մի փոքր ավելի երկարատև են, բայց տեղի են ունենում նույն կառուցվածքային ինստիտուտներում: Օրինակ՝ այս հատեքստում կարելի է դիտարկել տնտեսական ճգնաժա-

մերը, քաղաքական ռեժիմի փոփոխությունները, բոլոր տեսակի տնտեսական, սոցիալական, քաղաքական և գործող կազմակերպությունների ստեղծումը: Անհատի բոլոր սոցիալական և սոցիալականացման գործունեությունները նույնպես կարճաժամկետ հիմնական խնդիրներից են: Լրատվամիջոցները հիմնականում հիմնված են կարճաժամկետ իրադարձությունների և փաստերի վրա: Կառուցվածքային յուրաքանչյուր հաստատությունում ամենօրյա իրադարձությունները նույնպես կարևոր տեղ են գրավում կարճ ժամանակահատվածում:

Քանի որ այն հիմնված է կարճ ժամանակահատվածում տեղի ունեցող իրադարձությունների վրա, տեղին կլինի այս սոցիոլոգիան անվանել Օգյուստ Կոմի սոցիոլոգիա: Այլ կերպ ասած՝ «դրական սոցիոլոգիա» տերմինը (առանց անտեսելու դրա հիմնարար քննադատությունը) կարող է տեղին լինել: Իրոք, պետք է լինի սոցիոլոգիայի բաժին, որը կուսումնասիրի իրադարձությունները: Հատկապես քաղաքական ժամանակաշրջաններում իրադարձությունները կշիռ ու վճռականություն են ձեռք բերում: Դրական սոցիոլոգիայի ինտեգրումը, որը էպիզոդիկ պատմություն է, հիմնական մշակութային սոցիոլոգիայի և կառուցվածքային սոցիոլոգիայի հետ փոխլրացնող կլինի:

դ- Բացի այդ, բոլոր ունիվերսալ իրադարձություններն ու կազմավորումները, ներառյալ՝ սոցիալական իրադարձությունները, պահանջում են միջավայր, որը մենք անվանում ենք քվանտային և քաղաքային: Քվանտային և քաղաքային միջավայրերը ստեղծագործության միջավայրեր են: Թեև դրանք դեռ խորությամբ չեն ուսումնասիրվել, սա-

կայն դրանց գոյությունը հաստատ է: Բոլոր երկար, միջնաժամկետ և կարճաժամկետ կազմավորումները, որոնք պահպանվում են «իրադարձություններով» ինչպես «ամեն պահի», այնպես էլ «կարճ ընդմիջումներով», այն հիմնարար թեմաներից են, որոնցով զիտությունը զնալով ավելի է հետաքրքրվում: Չի կարելի անտեսել «ստեղծման պահը», որը մենք կարող ենք նաև անվանել «քվանտային պահ» և «քաղաքային բաց»: Տիեզերքում ազատության հնարավորությունը իրականանում է հենց այս «պահին»: Ազատությունն ինքնին կապված է «ստեղծման պահի» հետ: Թեև դրանք ունեն տարբեր որակներ, բնության և հասարակության բոլոր կառույցները «ստեղծման պահերի» կարիք ունեն թե՛ կառուցման, թե՛ զոյատևման և կյանքի տևողության առումներով:

Այնուհետև տեղին կլինի անուն մտածել սոցիոլոգիայի համար, որը սոցիալական տեսանկյունից ամենակարճ ժամանակի ստեղծման հարցերին է անդրադառնում: Իմ անձնական առաջարկն այն է, որ տեղին կլիներ սոցիալական իրադարձություններում «ստեղծման պահին» առնչվող սոցիոլոգիան անվանել «ազատության սոցիոլոգիա»: Կարծում եմ՝ ամենակարևորն այն է, որ ազատության սոցիոլոգիան, որը մենք կարող ենք նաև անվանել մտածելակերպի սոցիոլոգիա, չափազանց անհրաժեշտ ճյուղ է մարդկային մենթալիտետի անհավատալի ճկունության պատճառով, որը հասցրել է հասարակության եզակի կարողությանը և դրա առաջացրած ստեղծագործականությանը: Ազատության միտքն ու կամքը քննելը պետք է լինի առաջնային խնդիր: Ավելին՝ «ստեղծման պահի» զարգացումը ազատության ասպեկտով զարգացում է: Հետևա-

բար՝ ազատության սոցիոլոգիան ամենից շատը կզարգանա, քանի որ այս «քվանտային պահը» և «քաոսային բացը» սոցիոլոգիայի հիմնական առարկաներից է: Այն որոշակի իմաստով կարող ենք անվանել Ստեղծագործության սոցիոլոգիա, քանի որ ամենաշատը ընդգրկում է սոցիալական ոլորտը, հետևաբար նրան ամենաշատը հուզում է դա:

Բացի այդ, թեպետ այն չի առնչվում մեր թեմայի հետ, բայց անհրաժեշտ է ընդհանուր գաղափարի առումով նշել նաև «աստղագիտական շրջանի» մասին: Այս շրջանի թեմաները դեռ որոշված չեն: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, «արևի» և «երկնքի կղզիների» ձևավորումը, դրանց փլուզումը, տիեզերքի հնարավոր «ընդլայնման» և «կծկման» բնույթը և, համապատասխանաբար, հիմնական «ձգողականության» և «վանման» ուժերը կարող ենք ներառել «աստղագիտական շրջան» հասկացության մեջ: Տիեզերքի գոյության տևողությունը նույնպես քննարկվող թեմաներից է:

Հարկ եղած դեպքում և՛ կբացատրենք, և՛ կփորձենք կիրառել սոցիոլոգիական վերլուծության մեթոդի մասին այս մտքերը համապատասխան հարցերի շուրջ: Նշենք, որ աշխատում եմ փորձնական կարգով: Բնական է, որ մեր մտքերը կոնցեպտուալ արժեք ունեն:

Երբ ուսումնասիրում ենք Բարեբեր մահիկի սոցիալական զարգացումները սոցիոլոգիական այս տեսանկյուններից, մենք տեսնում ենք, որ ազատության սոցիոլոգիան տարածաշրջանում նեոլիթյան հեղափոխության ընթացքում ականատես է եղել սոցիալական պատմության առումով քաոսի ամենաարդյունավետ շրջանին:

Ճամփորդական խմբերը, որոնք իրենց ապրուստը վաստակում էին որսորդությամբ և հայթայթմամբ, լուծարեցին սոցիալական կառույցները, որոնք առաջացել էին իրենց նախկին փորձառություններից: Սառցադաշտերից դեպի լեռների գագաթներ արագ նահանջից հետո, նրանք անցում կատարեցին նստակյաց կյանքին՝ փնտրելով գյուղատնտեսության վրա հիմնված ապրուստի միջոց: Հարյուր հազարավոր տարիների կլանային համայնքները կանգնած են ավելի մեծ կառույցներով փոխարինվելու առջև: Մենք գտնվում ենք մի փուլում, երբ տեղի է ունենում մենթալիտետի ամբողջական փոխակերպում և վերելք: Հին կլանային մտածելակերպի և ժեստերի լեզվից հիսպառ չպոկված լեզվական կառուցվածքի փոխարեն տեղի է ունենում անցում դեպի գյուղի ավելի լայն բնակչության և ազգային պատկանելության մտածելակերպին: Խորհրդանշական լեզվական համակարգը զարգանում է արագ տեմպերով: Ի հայտ են գալիս սննդամթերքի և տրանսպորտի նոր տեսակներ, առաջանում են ջուլհակությունը, խեցեգործությունը, ինչպես նաև ճարտարապետական, կրոնական և գեղարվեստական թեմաներ, որոնք բոլորն էլ պահանջում են անվանման նոր սխեմաներ և մտավոր օրինաչափություններ:

Մինչ նոր հասարակությունը հիմնականում հիմնված է գյուղական կյանքի վրա, կլանային կապերը վերածվում են էթնիկական կապերի: Նյութական կառուցվածքի այս նոր ձևերը չեն կարող շարունակվել կամ նույնիսկ սկսվել առանց ավելի իմաստալից մտավոր շրջանակի: Թեև «տոտեմական հավատքը», որը հին կլանային հասարակության ինքնությունն է, շարունակվում է, այդուամենայնիվ,

նեոլիթյան հասարակության՝ որպես մտածելակերպի փոխակերպման և լեզվի խորհրդանիշը «մայր-աստվածուհու» կերպարն է: Մինչ տոտեմների թվերը նվազում են, մայր-աստվածուհու կերպարները գրավում են իրենց տեղը: Այս ֆիգուրները խորհրդանշում են մայր-կնոջ, ում դերն աճում է: Կրոնական տեսանկյունից սա ավելի բարձր փուլ է և իր հետ բերում է շատ հարուստ կոնցեպտուալիզացիա: Լեզվի մեջ առանձնանում են իգական սեռի վերջածանցները: Խորհրդանշական լեզվական վերջածանցներում իգական տարրը երկար ժամանակ պահպանում է իր գերիշխող դիրքը: Նույնիսկ այսօր այս հատկությունը տեսնում ենք բազմաթիվ լեզուներում: Մայր-աստվածուհու հետ սոցիալականությունը սրբություն է ստանում: Նոր հասարակություն նշանակում է նոր հասկացություններ և անվանումներ: Քանի որ այն գործընթացը, որը մենք անվանում ենք մտավոր հեղափոխություն, պահանջում է ստեղծագործականություն, մենք պետք է այն ներառենք ազատության սոցիոլոգիայի մեջ: Այն, որ այս գործընթացը ինտենսիվորեն վերապրել է, մի հարց է, որի շուրջ համակարծիք են առաջատար պատմաբանները: Հազարավոր փաստերը նշանակում են հազարավոր մտածելակերպի հեղափոխություններ և անուններ: Պայթյուն է տեղի ունենում, որն ավելի ընդգրկուն, օրիգինալ ու ստեղծագործ ջանքեր է պահանջում, քան մենթալիտետի հեղափոխությունը Եվրոպայում: Պատմությունից կարելի է պարզել, որ այն բոլոր հասկացությունների և գյուտերի մեծ մասը, որոնք մենք այսօր օգտագործում ենք, իրականացվել են հենց այս ժամանակաշրջանում:

Եթե կոպիտ դասակարգում անենք, ապա դա սոցիալական ստեղծագործության շրջան է, երբ գիտատեխնիկական հայտնագործություններն այսօրվա համեմատությամբ արվել են առնվազն կիսով չափ: Կրոն, արվեստ, գիտություն, տրանսպորտ, ճարտարապետություն, հացահատիկ, միրգ, ընտանի կենդանիներ (եղջերավոր և մանր), ջուլհակություն, խեցեղեն, խոհանոց, փառատոներ, ընտանիք, հիերարխիա, կառավարություն, պաշտպանություն և հարձակում, նվերներ, գյուղատնտեսական գործիքներ և այլն. այս ցանկը, որը կարելի է թվարկել, այսօր էլ գտնվում է հասարակական կյանքի հիմնական ցանկի մակարդակի վրա, քանի որ այն ենթարկվել է քանակական և որակական զարգացման: Երբ նայում ենք նեոլիթից մնացած գյուղին և ընտանիքի կառուցվածքին, տեսնում ենք, որ ամենաազնիվ արժեքները, հատկապես սոցիալական բարոյականությունը, հարգանքը, սերը, բարիդրացիությունը և համագործակցությունը, որոնք ուժ են տալիս հասարակությանը և իմաստավորում են կյանքը, շատ ավելի բարձր են կապիտալիստական արդիականության արժեքային դատողություններից (կամ անբարոյականությունից): Հասարակության այն հիմնական մտածելակերպը, որը երբեք չի հնանա, էապես կրում է այս շրջանի դրոշմը:

Դրական սոցիոլոգիայի առումով տարածաշրջանի իրադարձություններով հարուստ կյանքը նույնպես իր ժամանակաշրջանի համեմատ շատ հարուստ է: Կլանային հասարակության միապաղաղ որսորդական, պաշտպանական և հավաքչական կյանքի համեմատ՝ Բարեբեր մահիկում իրադարձություններն ու նոր երևույթները

ծաղկում են: Բազմաթիվ իրադարձություններ և երևույթներ, որոնք նոր անվանում են ստացել, ցուցադրում են մարդկային ձայնն ու գործողությունները իրենց ամենահարուստ տեսքով: Սուրբ գրքերի բացատրություններից մենք կարող ենք նաև եզրակացնել, որ այն հիմնական իմաստը, որը ժամանակաշրջանը թողեց մարդկային մտքին, հետագայում հանգեցրեց «դրախտ» հասկացությանը: Թերևս, մենք կանգնած ենք դրական սոցիոլոգիայի ամենահաջող պահերից մեկին դեմ հանդիման: Մարդկության համար աստղերի ցնցուղի նման զարգացում կա: Իրադարձություններն ու երևույթները, որոնք լույսի, աստղի պես վառ են, հեղեղում են աշխարհի չորս կողմերը, սերմանում ու ՄՇԱԿՈՒԹԱՅՆԱՑՆՈՒՄ սոցիալական զարգացման դրախտային երազանքը և նույնիսկ այս երազանքի իրականացման պահերը:

Կառուցվածքային սոցիոլոգիայի առումով հնարավոր է դիտարկել բոլոր ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների հետքերը, որոնք իրենց հետքը թողել են Բարբեբեր մահիկի սոցիալական զարգացման վրա: Հատկապես մ.թ.ա. 6000-4000 թվականներն ընկած ժամանակահատվածը ամբողջական ինստիտուցիոնալացման շրջան է: Որոշվել են բնակավայրերը, որոնց վրա հիմնվելու են գյուղերի և քաղաքների բոլոր կառույցները, հիմնվել են բնակավայրերը, առաջացել է հիերարխիա, ինստիտուցիոնալացվել է կրոնը, առաջացել են առաջին տաճարները, գոյացել է էթնիկ պատկանելությունը, պարզվել են լեզվական կառույցները, պարզվել են թաղային ավանդույթները: Իսկ բարոյականությունն ու իշխանությունը, կարծես թե, հաստատել են իրենց ամենաուժեղ շրջանը: Այսինքն, կարծես թե հաստատվել է նեոլիթյան հասարակության և գյուղատնտեսական ու գյուղական հեղափոխության մնայունությունը և հետևաբար՝ ինստիտուցիոնալացումը: Սոցիալական կառույցները, որոնք կազմում են կառուցվածքային սոցիոլոգիայի հիմնական խնդրո առարկան, առաջին անգամ նման ուժեղ ձևավորում են ցուցադրում Բարբեբեր մահիկում: Մենք դեռ շատ բան ունենք սովորելու այս կառույցների իրականությունից, որոնք այսօր դեռ պետք է ուսումնասիրվեն որպես ինքնատիպ ինստիտուցիոնալացումներ: Փաստորեն, որքան շատ ուսումնասիրենք ոլորտի կառույցները՝ որպես մարդկության առաջին ինստիտուցիոնալ արժեքներ, այնքան ավելի հիմնավոր եզրակացությունների կկարողանանք հանգել կառուցվածքային սոցիոլոգիայի կայացման վերաբերյալ: Պետք է քաջ հայտնի լինի, որ այսօրվա կառուցվածքային սոցիոլոգիան տառապում է «իմաստաբանության» լուրջ բացակայությամբ: Եթե այն իրեն ուսումնասիրեր որպես ընդհանուր սոցիոլոգիայի մաս, դա կան

Բարեբեր մահիկի հիման վրա, կարող է պահպանել իր գերակայությունը: Չնայած տեսականորեն անհնարին չէ, որ Չինաստանից կամ սեմական մշակույթից ծագող քաղաքակրթությունը դառնա հեգեմոն ուժ, բայց գործնականում դա շատ դժվար է: Փաստորեն, չնայած թե՛ «իսլամական հարձակումներին», թե՛ «մոնղոլական» ծագման զանգվածային հարձակումներին, հնդեվրոպական մշակույթը (հետևաբար՝ սկզբնական մշակույթը, արիական լեզուն և մշակույթը) երբեք չի կորցրել իր հեգեմոնական բնույթը: Միգուցե, Չինաստանն ապագայում նոր հարձակում ձեռնարկի: Այնուամենայնիվ, շատ քիչ հավանական է, որ այն կներխուժի և կգաղութացնի ամբողջ աշխարհում զգալի ներկայություն ունեցող հնդեվրոպական մշակույթը՝ առանց արտաքին գործոնների հրաշագործ աջակցության (օրինակ՝ Չինաստանի մշակութային շրջանից դուրս խոշոր բնական և սոցիալական աղետներ):

Մենք կարող ենք նաև նույնացնել հիմնական մշակութային սոցիոլոգիան ընդհանուր սոցիոլոգիայի հետ: Այս դեպքում մտածելակերպի, ընտանիքի ինստիտուտի և էթնիկ-ցեղային միավորների (հատկապես երեք հիմնական մշակույթների վրա հիմնված, բայց նաև մյուս բոլոր մշակույթներում ներառվածների) փոփոխություններն ու փոխակերպումները կարող են դառնալ ընդհանուր սոցիոլոգիայի առարկա: Առավել կարևոր է, որ «քաոսի և քայքայման միջավայրերը», որոնց հանդիպել և ապրել են ազատության սոցիոլոգիան և կառուցվածքային սոցիոլոգիան՝ որպես իրենց հիմք և արդյունքներ, ուսումնասիրվեն ընդհանուր սոցիոլոգիայի շրջանակներում:

Հասարակության երկրորդ՝ հիմնական փուլը, որը վեր է սլացել Բարեբեր մահիկում, սկսած «Շումմերական քահանայական պետությունից», կլինի «քաղաքակիրթ հասարակության» փուլը: Քաղաքակիրթ հասարակությունն, ըստ էության, հիերարխիա-դինաստիկ ծագում է, որը հիմնված է Բարեբեր մահիկի մշակույթի վրա: Կախված արտադրության ձևի զարգացման հիման վրա սննդի առատության և բազմազանության աճի ու ուրբանիզացիայի համակցումից՝ քաղաքակիրթ հասարակության էությունն այն է, որ ցանկացած հիերարխիա- դինաստիկ խումբ մոբիլիզացնում է հին «ուժեղ մարդու» հնարավորությունները և անցումը դեպի «պետական» կազմակերպություն:

Բարեբեր մահիկում այս ուղղությամբ բազմաթիվ նախաձեռնությունների ականատեսն ենք ոչ միայն Ներքին, այլև Վերին և Միջին Միջագետքում: Մինչ այդ նախաձեռնություններից որոշները դառնում են մշտական, որոշները հանգամանքների պատճառով չեն կարողանում գոյատևել: Պետությունն Աստվածաշնչում մեկնաբանվում է որպես լևիաթան (հրեշ, որը դուրս է եկել ծովից): Մեր հաջորդ թեման կլինի այս հրեշի արյունալի, շահագործող և երբեմն ցեղասպանական երթը սոցիալական զարգացման մեջ ուսումնասիրելը: Կուսումնասիրենք նաև այն ուղիները, որոնցով նա ստրկացնում և շահագործում է մարդկանց դիմակավորված և դիմակազերծ աստվածների, բացահայտ և մերկ թագավորների միջոցով և գործիքների ներքո, որոնք օգտագործվում էին արվածը օրինականացնելու համար:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դիմակավորված աստվածների և շղարշված թագավորների դարաշրջան

Կապիտալիստական արդիականության պաշտոնական գաղափարախոսություն համարվող պոզիտիվիզմի պատճառած ամենամեծ վնասը սոցիոլոգիայի ոլորտում էր: Պոզիտիվիստների կողմից գիտության անվան տակ ռեդուկցիոնիստական մոտեցմամբ սոցիալական խնդիրների օբյեկտիվացումը, ինչպես ֆիզիկայում, ստեղծել է անհաղթահարելի խնդիրներ: «Գիտական սոցիալիզմի» անվան տակ սոցիալական ոլորտը՝ հատկապես տնտեսությունը (հասարակության նյութական ոլորտը), որը համարվում է, այսպես կոչված, ռեալ սոցիալիզմի հետաքրքրության ոլորտը, նույն մեթոդով են ուսումնասիրել և իմաստային խնդիրները մղել են դեպի ավելի բարդ իրավիճակ, որը դժվար է լուծել: Ֆիզիկական մոտեցման մտածելակերպը, որը թաքնված է նույնիսկ կենսաբանության հետևում, կապիտալիզմին տվել է այնպիսի ուժ, որը ոչ մի զենք չի կարող ապահովել: Մեթոդների բաժնում փորձել եմ ցույց տալ, որ այս մեթոդը կապիտալիզմի ամենահիմնական պարադիգմն է: Առանց դրան հաճախակի անդրադառնալու հնարավոր չէ առաջ գնալ: Օբյեկտիվացնելով հասարակությանը և մտովի բաց լինելով իրենց հետ այդպես վարվելու համար՝ նրանք չեն կարողանում գիտակցել, որ, հակառակ իրենց պնդումների, հենց ամենասկզբից զինաթափում են պրոլետարիատին և մյուս աղքատ մարդկանց, որոնց անունից նրանք գործում են (հատկապես «գիտական սոցիալիստներին»):

Մենք ցույց կտանք, որ հասարակությանը որպես ֆիզիկական բնույթի կամ նույնիսկ կենսաբանական բնույթի երևույթ պատկերացնելը ինքնին նշանակում է հանձնվել կապիտալիստական արդիականությանը:

Մեծ ցավով և զայրույթով պետք է փաստեմ, որ մեծ դժբախտություն էր «գիտական սոցիալիզմի» անվան տակ 150 տարուց ավելի ազնիվ պայքար տանել կոպիտ մատերիալիստական պոզիտիվիզմի հետ, որը հենց սկզբից դատապարտված էր պարտության: Անկասկած, այս վերաբերմունքի հիմքում ընկած է «դասականությունը», որի համար նրանք այդքան պայքարում են: Բայց այս դասակարգը ոչ թե բանվորներն ու այլ աշխատավորներն են, ովքեր ստրկաբար դիմադրում են պրոլետարացմանը, ինչպես իրենք են կարծում, այլ «մանր բուրժուական» դասակարգը, որն արդեն հալվել և հանձնվել է արդիականությանը: Պոզիտիվիզմը հենց այս դասակարգի կույր հայացքի և կապիտալիզմի դատարկ արձագանքի գաղափարախոսությունն է: Այս բուրժուական առևտրական դասակարգը, որը չգիտի, թե իրականում ինչպես է ձևավորվում սոցիալական կյանքը և միշտ եղել է ստերիլ սեկտիզմի հիմքը, այն սոցիալական հատվածն է, որին գաղափարապես գերիշխող պաշտոնական կարգն ամենահեշտն է գրավում:

Ինչ վերաբերում է սոցիալական մոտեցմանը, ապա պոզիտիվիզմը ժամանակակից կռապաշտության տեսակ է: Կռապաշտությունն աստվածության դատարկ շրջանակն է, որը կորցրել է իր իմաստը: Երբ աստվածությունը, որը ժամանակին հասարակության համար հետաքրքրաշարժ և սուրբ հասկացություն էր, կորցնում է այդ գործառույթը, մնում է նրա կռապաշտական ձևը: Հասկանալի է, որ իմաստաբանությունից զուրկ մարդիկ պաշտում են կուռքերին: Նրանք ոչ միայն չգիտեն, որ կուռքերը ծագում են ֆունկցիոնալությունից, այլ ընդհակառակը՝ կարծում են, որ կռապաշտությունը կբերի իմաստ և կտանի դեպի նախկին փառքն ու սրբությունը: Բավականին լուսավորող կլինի այս համատեքստում վերլուծել հակակուռքերի կրոնները: Ես չեմ կասկածում պոզիտիվիզմի դատապարտված պոզիտիվիստների կռապաշտությանը: Մոդեռնիզմի բնագավառի փիլիսոփաներն իրենք են ասում, որ այս ժամանակակից կռապաշտները «կառչում են սպառման առարկաներից՝ կարծես դրանք կուռքեր են»:

Մարքսը և նրա դպրոցը կարծում էին, որ իրենք կարող են հասարակությունը, պատմությունը, արվեստը, օրենքը և նույնիսկ կրոնը բացատրել տնտեսական վերլուծության միջոցով: Անկասկած, բոլոր սոցիալական ինստիտուտներն ազդում են միմյանց վրա, ինչպես մարմնի հյուսվածքները: Բայց երբ մեր ոլորտը սոցիալական է, ամեն ինչ փոխվում է: Սոցիալական ինստիտուտները, որոնք մարդկային մտքի հորինած կառույցներ են, նման չեն կենսաբանական հյուսվածքի: Իրականում նրանք նման չեն մարդու մարմնի հյուսվածքին: Մարդկային միտքը նման է ժայթքող հրաբխի, որն անընդհատ իմաստ և կամք է արտադրում

սոցիալական միջավայրում: Ոչ մի այլ կենդանի տեսակի մեջ դրա համարժեքը չկա: Որոշ նմանությունները ֆիզիկական իրադարձությունների հետ, հավանաբար, կարելի է դիտարկել քվանտային աշխարհում: Չմոռանանք, որ մարդու միտքն ինքնին աշխատում է քվանտային կարգով: Նյութական աշխարհը (ներառյալ սոցիալ-տնտեսական կառուցվածքը) ներկայացնում է քվանտային ֆունկցիոնալության սառեցումն ու համակցումը: Չափազանց ակնհայտ է, որ քննարկում է անհրաժեշտ այն թեմայով, որ միտքն է կառավարում հասարակությանը: Դա մի խնդիր է, որն ավելորդ է դարձնում ապացուցելը, որ նույնիսկ սոցիալական տնտեսությանը հասնում ենք մտածելակերպի ուսումնասիրությամբ:

Պետք է նորից ու նորից ընդգծեմ, որ սոցիոլոգիայի պատմականացումը և պատմության սոցիոլոգիականացումը էական պայմաններ են իմաստաբանության առաջընթացի համար: Այս մեթոդի մեկ այլ առավելությունն այն է, որ այն ավելի հավատարիմ է մնում պատմության մեկնաբանմանը, ինչպես այն եղել է: Ես չեմ հերքում սպեկուլյատիվ մտածողության կարևորությունը: Ընդհակառակը, այս մտածելակերպն օգտակար լինելու համար պետք է կարողանա ֆիքսել պատմական զարգացումները, երբ դրանք ընթացքի մեջ են: Ասելը, թե «պատմությունը որոշվում է ենթակառուցվածքով» կամ հակառակը՝ «պատմությունը կազմված է պետության գործողություններից», ինչքան էլ իրադարձություններ թվարկվեն ու վերլուծվեն, ոչ այլ ինչ է, քան պատմության իրական իմաստաբանության խեղաթյուրում: Ակնհայտ է, որ պատմությունը, հետևաբար նաև հասարակությունը, չի կարող բացատրվել այս

մեթոդով: Այն, ինչ արվում է այստեղ, պատմություն չէ, այլ սոցիալական ֆիզիոլոգիա: Բացատրելը, թե ինչպես են սոցիալական ինստիտուտները (ֆիզիոլոգիայում՝ հյուսվածքները) ազդում միմյաց վրա կամ իրար որոշում, անշուշտ պատմության շարադրանք չէ. Դա շատ կոպիտ փաստացիություն է:

Իմաստալից պատմությունից խոսելու համար առանցքային խնդիրն է իմանալ, թե ինչպես է պատմության հոսքի ուժն իրականացվում ներկայում: Ինչ միտք ու կամք էլ որ աշխատի, այդ պահին արդյունավետ է: Այդ իմաստն ու կամքը որսալ՝ նշանակում է իրական պատմություն կերտել կամ մեկնաբանել: Սա կարող է լինել ինչպես տնտեսական քայլ, այնպես էլ կրոնական գործողություն: Կարևորը ոչ թե ատրճանակն է, այլ այն պահը, երբ սեղմում են ձգանը, և ձեռքը, որը սեղմում է ձգանը: Փորձեք վերլուծել զենքի տնտեսական, գեղարվեստական, քաղաքական և ռազմական արժեքը, որքան ուզում եք: Դրանք կարող են արժեքավոր լինել՝ որպես պատմվածքի զարդեր: Բայց նորից պետք է կրկնեմ, որ, պատմական հոսքի մասին խոսելիս, պետք է հասկանալ, որ ատրճանակի ձգանն անընդհատ շահագործվում է դրա տիրոջ կողմից: Կարելի է ասել, որ զենքի պատրաստման համար մեծ վարպետություն և խնայողություն է պահանջվում: Դա կարող է լինել, բայց այս մոտեցումն ընդհանրապես չի հասկանում, թե ինչպես պետք է արտահայտել պատմությունը: Պետք չէ մոռանալ, որ պատմությունը միշտ գործող զենք է: Ձգանը սեղմող ձեռքը ինքնին փամփուշտներով լի ատրճանակ է, որը միշտ աշխատում է: Սա լավագույնս գիտեն նրանք, ովքեր պատմության ընթացքում պատասխանատու են եղել ռազ-

մավարական կառավարման համար: Պատմությունից մի օրինակ կարող է ավելի հասկանալի դարձնել այս իրավիճակը. Հռոմեական կայսրերից մեկը՝ Վալենտինիանուսը, 364 թվականի մարտի 28-ին՝ կայսր դառնալուց մոտ մեկ ամիս անց, իր եղբորը հաստատեց որպես համակայսր՝ Վալենս Օգոստոս անվամբ: Նրանք, ովքեր ընտրել են իրենց եղբորը, ասում են, որ կարճ ժամանակ անց հրաժարվել են այս ընտրությունից: «Մեկ անգամ ընտրելով՝ դու կորցրել ես առարկելու իրավունքը» ասելով՝ Վալենտինիանուսը լավ բացատրում է պատմության ինչ լինելը:

Կապիտալիստական նորագույն պատմության իմաստի համար մեթոդի այս հաշվետվության կարևորությունը կբացատրեմ համապատասխան բաժնում:

Քաղաքակրթության պատմության մեջ մտնելու համար չանտեսենք մեթոդի խնդիրը, որպեսզի կարողանանք ներդրում ունենալ իմաստագիտության մեջ: Մեկնաբանության արժեքը ոչ միայն պատմությունը բացատրելու նրա ուժն է, այլև այն կարողությունը՝ ծառայելու նրանց, ովքեր միշտ քայլում են պատմության իշխանության ներքո, բայց դեռ ի վիճակի են նախաձեռնող լինել: Նրանց համար, ովքեր պատմության զոհերի դերում են, իրական պատմական մեկնաբանությունը նրանց գիտակցություն և կամք տալու ուժն է, նրանց զոհի դերից հեռացնելը և, ուժ տալով, նրանց ազատությունն աշխուժացնելը: Եթե պատմա-սոցիալական մեկնաբանությունը դատապարտում է նրանց, ովքեր զոհաբերվում են (բոլոր տեսակի ճնշվածները-շահագործվողները) իրենց զոհաբերողներին, և, «շուտով փրկություն կլինի» ասելով, շեղում է նրանց ուշադրությունը, որքան էլ պնդի, թե գիտական նշանակություն

ունի, միևնույնն է, եթե այս մեկնաբանության հեղինակները չարամիտ ու գիտակցաբար շեղողներ չեն, ապա կոպիտ անփութության իրավիճակում են. պատմության կուռքերի մասին պատմողներն են:

1- ԻՆՉՊԵ՞Ս ՊԵՏՔ Է ՄԵԿՆԱԲԱՆԵՆՔ ՇՈՒՄՄԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քանի որ մեր թեման կառուցվածքային սոցիոլոգիայի ներածությունն է, այս նպատակով մենք կներառենք շումերներին: Քաղաքակրթության պատմությունը չենք գրում, բայց մեկնաբանություններս պետք է ընկալել որպես ներդրում դրանում: Ես փնտրում եմ հետևյալ հարցի պատասխանը՝ պատմական մեկնաբանության մեջ ինչպե՞ս պետք է գնահատենք շումերական օրինակը: Պատասխանները պետք է նպաստեն թե՛ մեթոդաբանական հստակությանը, թե՛ պատմության ներածությանը: Օրինակը տարբեր տեսանկյուններից դիտարկելն օգտակար է:

ա- Այս քաղաքակրթությունը, որը կառուցվել է Ստորին Միջագետքի հարուստ և եղեգնուտ հողերում, որտեղ Տիգրիսն ու Եփրատը մոտենում և միանում են միմյանց, ավելի հյուսիսում անցավ մի հոյակապ փուլով, որը կոչվում է նաև Թել Հալաֆի շրջան (մ.թ.ա. 6000-4000 թթ.): Հայտնի է, որ սննդի առատությունն ու բազմազանությունն ապահովվել է նեոլիթյան ինստիտուցիոնալացման այս փուլում: Որքան էլ որ արտադրական տեխնիկան է ճանապարհ հարթել դրա համար, այդուամենայնիվ, գյուղի հասարակությունն է, որ ծնել է այդ տեխնիկան բացահայտող մտածելակերպը: Բնակավայր նշանակում է դաշտ, որոնք, միմյանց սնուցելով, հանգեցնում են սոցիալական ինստիտուցիոնալացման զարգացման: Ինստիտուցիոնալացումը, ինչ-որ իմաստով, սոցիալական մտածելակերպի կազմակերպումն է, կոլեկտիվացումը: Այն հանգամանքը, որ սեզոնները բարենպաստ են, և անձրևները բավարար են, ոռոգումն առաջնահերթություն չի դարձնում: Բայց ոռոգման կարևորությունը հասկանալի է: Ապացուցված է, որ մ.թ.ա. մոտ 3000 թվականին Վերին Միջագետքի բազմաթիվ գյուղական բնակավայրեր մոտեցել են քաղաք լինելու սահմանին, և հնագիտության տասնյակ օրինակներ կան, որոնք հայտնաբերվել են այդ տարածքներում:

Բազմաթիվ թմբերի մեջ հայտնաբերվել են պարիսպներ, որոնք քաղաքի որոշիչ ցուցիչներ են: Այնուամենայնիվ, սահմանափակ ոռոգումը և անձրևների վրա հիմնված բերքահավաքը հանգեցնում են ավելի մեծ աճի և քանակի ավելացման: Ստորին Տիգրիսը և Եփրատը շատ հարմար են ոռոգման համար. հողն առատ է և բերրի: Ապացուցված է, որ մ.թ.ա. 5000 թվականին առաջին գյուղացիները եկել են այստեղ հյուսիսից՝ Թել Հալաֆի մշակույթից: Փաստորեն, ժամանակաշրջանը ստիպում է մշտական շարժունակություն ունենալ՝ պայմանավորված բնակչության աճով: Մեծացող ու աճող գյուղերը չորս ուղղություններով տարածվելու միտում ունեն: Մենք փորձել ենք այս գործընթացն ամփոփել ուրվագծորեն: Մինչ դուք ավելի հարավ եք շարժվում, տեղումների նվազումը ոռոգման անհրաժեշտություն է առաջացնում, ինչը պահանջում է համապարփակ կազմակերպում: Մենք նկատում ենք, որ իդեալական կազմակերպումը տեղի է ունենում զիկկուրատ կոչվող տաճարների մերձակայքում:

Զիկկուրատների երեք փոխկապակցված գործառույթներն առանցքային են ամբողջ շումմերական հասարակության բացահայտման համար: Առաջին գործառույթը մարմնավորված է զիկկուրատների ամենացածր հարկում գտնվող հողագործների մեջ: Այստեղ տեղավորվում են նաև գործիքագործներ: Երկրորդ գործառույթը վարչական պարտականությունն է, որը կատարում են երկրորդ հարկում նստած քահանաները: Քահանան պետք է հաշվարկներ կատարի աճող արտադրական աշխատատեղերի համար և լեգիտիմություն (համոզելու ուժ) ապահովի աշխատողների կոլեկտիվ աշխատանքի համար: Այսինքն՝ թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ գործերը պետք է միասին կառավարել: Երրորդ գործառույթը կատարում են երրորդ հարկում գտնվող աստվածները (որոշ իմաստով առաջին պանթեոնի օրինակ): Ինչպես ես պնդում եմ «Շումմերական քահանայական պետությունից դեպի դեմոկրատական քաղաքակրթություն» խորագիրը կրող պաշտպանական ճառումս, զիկկուրատը հոգևոր ազդեցության տեսանկյունից գրեթե նման է ավելի ուշ ի հայտ եկած քաղաքակրթությունների մոդելի: Սա այնքան իդեալական կազմակերպություն է, որ համարվում է հիմնական մոդել: Այն ծնել է քաղաքային հասարակությունը, որի թիվն անցնում էր հարյուր հազարից, և որի բնակչությունն այսօր գերազանցում է միլիոնները: Իրականում, ինչպես նախկինում նշեցի, դա քաղաքային հասարակության մեջ ինստիտուցիոնալացված պետական տիպի կազմակերպության արգանդն է: Զիկկուրատն իր ժամանակին ոչ միայն քաղաքի կենտրոնն էր, այլև հենց ինքը քաղաքը: Քաղաքները նույնպես բաժանված են երեք հիմնական ստորաբաժանումներ. տաճարը (*Mabet՝* աստծո վայր, տուն), որը օրինականության ստեղծման և ապահովման վայրն է, քաղաքային կառավարիչների համար մի փոքր ավելի մեծ նստավայրը և ամենամեծ հատվածը՝ աշխատողների համար նախատեսված բնակավայրերը: Զիկկուրատն այս երեք գործառույթները միասին է կատարում և սա անում է՝ որպես աշխարհում հաստատության առաջին օրինակ:

Երբ մի փոքր ուշադիր ենք ուսումնասիրում, տեսնում ենք, որ քահանան, անկասկած, առաջին ձեռներեցն է եղել: Կախված ժամանակաշրջանից՝ նա կապիտալիստ է (սա ասում եմ ավելի լավ հասկանալի լինելու համար, այլապես արդիականությունը կապիտալիստին չի փոփոխել), շեֆ կամ տեր: Նա պատմական կարևորության գործեր ունի անելու: Նա այն քաղաքի հիմնադիրն է, որը իր հետքը կթողնի նոր հասարակության վրա: Նրա շուրջ կձևավորվի ոչ թե պարզ գյուղ, այլ քաղաք: Եթե նկատի ունենանք, թե որքան դժվար է սա նույնիսկ այսօր, ապա ավելի հասկանալի է դառնում քահանայի առջև ծառացած առաջադրանքի հսկայածավալ լինելը:

Քաղաքի կառուցման համար մեծ թվով բանվորներ են անհրաժեշտ: Նրանց որտեղի՞ց է պետք գտնել: Շատ դժվար է մարդկանց հեռացնել կլանից ու էթնիկ պատկանելությունից: Գործազրկությունն այսօրվա նման ինստիտուցիոնալացված չէր: Էթնիկ պատկանելությունից հեռացող մեկ-երկու հոգին բավարար չեն աշխատուժի կարիքը բավարարելու համար: Մենք դեռ չենք մտել մարդկանց բռնի ստրկացման շրջան: Քահանայի միակ առավելությունը, հավանաբար, աստծո զենքն օգտագործելն է: Հենց այստեղ է ի հայտ գալիս քահանայի մեծագույն գործա-

ռույթներից մեկը՝ ԱՍՏՎԱԾԱՇԻՆՈՒԹՅԱՆ խնդիրը: Թեման շատ կարևոր է: Եթե այս խնդիրը չհաջողվի լուծել, չի իրականացվի նոր քաղաքի ու հասարակության ծրագիրը, հետևաբար՝ առատ արտադրությունը: Այս օրինակը շատ լավ բացատրում է, թե ինչու են առաջին պետական կառավարիչները քահանաներ եղել: Զիկկուրատը պետք է վերապլանավորի, միանա նախագծին և կառուցի ոչ միայն քաղաքը, առատ արտադրությունը և նոր հասարակությունը, այլ նաև հասկացությունների, հաշվարկների, մոգության, գիտության, արվեստի, ընտանիքի և նույնիսկ առաջին փոխանակման աշխարհը: Քահանան առաջին սոցիալական ինժեներն է, առաջին ճարտարապետը, առաջին մարգարեն, առաջին տնտեսագետը, առաջին գործարարը, առաջին գլխավոր աշխատողը, առաջին թագավորը:

Ավելի մոտիկից աչք նետենք քահանայի հիմնական աշխատանքներին.

բ- Քահանայի ամենակարևոր գործը նոր կրոնի ու աստծո կերտումն է: Իմ մեկնաբանությամբ՝ շումմերական քահանաների կրոնի գյուտի էությունն այն է, որ նրանք թվացյալ անջատված անցումային կապ են ձևավորել հնագույն «տոտեմ» պաշտամունքի և կռապաշտությանը գերազանցող Աբրահամական կրոնի միջև: Այն իրենից ներկայացնում է տոտեմիկ կրոնի համալիրի ստեղծում, որը որոշում է հասարակության ինքնությունը Աստծո հետ՝ որպես երկնքում կարգավորող ուժի հասկացություն: Ընդհանուր ընդունված մեկնաբանություն է, որ տոտեմը ներկայացնում է ինքնության արտահայտություն, որը որոշում է կլանը և նրա ընդլայնված ձևը՝ ցեղը: Ցանկացած առարկա, որը կարևոր է կլանի կյանքում, կարող է դառնալ տոտեմ: Կլանները հիմնականում որպես տոտեմ օգտագործում են սուբյեկտներ, որոնք ուժի դրսևորում են արտահայտում: Առյուծի, բազեի, օձի, գայլի, արևի, քամու, անձրևի, կարևոր բույսերի և ծառերի անունները, որոնք մենք դեռ հանդիպում ենք ցեղային անվանումներում, թվագրվում են այս ժամանակաշրջանից: Մայր-կնոջ շուրջ սրբության կառուցումը, որը նեղլիության դարաշրջանի շարժիչ ուժն է, հիշեցնում է արական սեռի քահանայի կերպարի ստեղծումը: Տոտեմական և երկնային աստվածների պատկերները կարևորություն են ստանում մայր-աստվածուհու տեսքով՝ պտղաբերության և առատության խորհրդանիշով:

Մայր աստվածուհին հետագայում մեծ պատերազմ է մղելու շումմերական քահանա աստվածների դեմ: Հատկապես խորամանկ արական աստծու՝ Էնկիի և կին աստվածուհու գլխավոր կերպարի՝ Ինաննայի հակամարտությունը շումմերական էպոսների հիմնական թեման է: Այս պայքարի հիմքում շահերի տարբերությունն է Վերին Տիգրիս-Եփրատ ավազանի գյուղերի շուրջ կենտրոնացած, շահագործում թույլ չտվող մայրերի և կանանց ղեկավարությամբ նեղլիության գյուղական հասարակության և քահանայի կողմից կառուցված քաղաքային հասարակության միջև, որը նոր է սկսել առաջանալ, և որն առաջին անգամ թույլ է տալիս շահագործումը: Պատմության մեջ առաջին անգամ ի հայտ են գալիս լուրջ «սոցիալական խնդիրներ»: Երկու հասարակությունների առաջնորդող ուժերի պայքարը, անկասկած, պայմանավորված է սոցիալական խնդիրներով: Բայց, ինչպես տեսնում ենք

պատմության մեջ, այս կռվի լեզուն ու հասկացությունները պայմանավորված են այդ ժամանակաշրջանի մտածելակերպով: Որովհետև այսօրվա մտածելակերպը գոյություն չուներ: Հասարակությունն ինքնին արտահայտվում է միայն կիսաստվածային ինքնության միջոցով: Մարդկային միտքը հեռու է ինքնության վերացական ըմբռնումից:

Այդ ժամանակ խելացի մարդիկ կարծում էին, որ բնությունը կենդանի է, լի է աստվածներով ու ոգիներով (ըստ իս՝ սա այսօրվա համեմատ հետամնաց մեկնաբանություն չէ, այլ առաջադեմ ու ճշտին մոտ մեկնաբանություն է): Նրանց դիպչելը կարող է վտանգավոր հետևանքներ ունենալ: Նրանք բոլորն էլ ունեն սրբություն, և նրանց մեծ խնամքով և հարգանքով պետք է մոտենալ: Նրանց հանդեպ ցուցաբերվող ամենափոքր անհարգալից վերաբերմունքը կարող է աղետ բերել: Ուստի, նրանց չբարկացնելու համար պետք է ուխտել ու զոհ մատուցել: Այնքան կարևոր դարձավ սրբերին և Աստծուն զոհաբերություններով զոհացնելը, որ մարդկանց համար իրենց երեխաներին, երիտասարդ տղաներին և աղջիկներին զոհաբերելը ավանդույթ դարձավ: Սա սարսափելի ավանդույթ է, բայց ենթադրվում է, որ հասարակությունը ոտքի վրա է մնում դրանով: Այս ավանդույթը երկար ժամանակ խեղաթյուրված է եղել քահանաների և միանձնուհիների կողմից: Բայց հաստատ է, որ դրա էությունը կապված է սրբության ու պաշտպանության հետ: Մարդկային համայնքների միջև բոլոր տեսակի հարաբերություններն արտահայտվում են որպես այս սրբերի և աստվածների հարաբերություններ և հակասություններ: Այսպես են կառուցվել

միտքն ու լեզուն: Այսօր չկա «դրական գիտական լեզու»: Մարդկությունը վերջին 200 տարիների ընթացքում գիտի դրական գիտության այս նոր լեզուն, ավելի ճիշտ՝ իր կրոնը: Երբ փորձում ենք մեկնաբանել պատմությունը, երբեք չպետք է անտեսենք այս փաստը: Ուստի, Ինաննայի ու Էնկիի կռիվը սոցիալական կատաղի կռիվ է: Անկասկած, այս պայքարը նյութական հիմք ունի: Փաստորեն, տեսնում ենք, որ այս մեկնաբանությունը հաստատվում է նաև այսօրվա Թուրքիայում տեղի ունեցող ծեծկռտուքով: Եվս մեկ անգամ մոտիկից տեսնում ենք, թե ինչպես է պատմության դիալեկտիկան տեղի ունենում պոզիտիվիստական և գիտական համարվող ԺՀԿ-ի (Ժողովրդահանրապետական կուսակցություն) և մետաֆիզիկական ԱԶԿ-ի (Արդարություն և զարգացում կուսակցություն) միջև, որը կպնդում է, որ հավատարիմ է իսլամական հավատքին և կրոնին: Պետք է լավ հիշենք, որ չկա ռազմական, քաղաքական կամ տնտեսական պայքար, որը կրոնը չներառի սոցիալական հակամարտության մեջ: Հակառակ դեպքում մենք նույնպես կհայտնվենք «ռեալ սոցիալիզմի» իրավիճակի մեջ:

Երկնային «Էն» և երկրային «Էնկի» աստվածները, որոնց հորինել են շումմերական քահանաները, արական սեռի կերպարներ են: Այս իրողությունն արտացոլում է շումմերական քաղաքային հասարակության մեջ ընդգծված տղամարդկային ուժը, այսինքն՝ տղամարդիկ սրբացվում և աստվածացվում են: Սա այնպիսի օրինություն է, որ նոր գերագույն առաջնորդը՝ արական սեռի ներկայացուցիչը, հենց հասարակությունն է, որը ձեռք է բերել «սրբություն և աստվածություն՝ գետնից մինչև երկինք»:

Եթե մի փոքր խորանանք, թե ինչ է արվել, ավելի լավ կհասկանանք, որ փառաբանվել է «քահանայական դասը»: Ինաննայի հավատքի մեջ խորանալու դեպքում էլ կտեսնենք մայր-կանանց սոցիալական ուժը, որոնք նեոլիթյան դարաշրջանի ստեղծագործ և առաջնորդող ուժերն էին:

Չնայած շումմերական հասարակության մեջ հավասարակշռությունն աստիճանաբար վատանում էր՝ ի վնաս կանանց, մ.թ.ա. մինչև 2000-ական թթ. Այս պայքարը հավասար էր: Ավելի ուսանելի կլինի ուսումնասիրել տղամարդկանց և կանանց պայքարն իր պատմական համատեքստում մինչև մեր օրերը: Կփորձենք դա անել:

Քահանան չափազանց գաղտնի էր պահում զիկկուրատի վերին հարկը, որը նա պահում էր հետզհետե նվաղող աստվածների համար: Քահանայապետն արձանագրում է, որ ոչ ոք, բացի իրենից, չպետք է բարձրանա այս հարկ: Այս մարտավարությունը կարևոր էր նոր կրոնական զարգացման համար: Այս եղանակով նա ձեռք է բերում մարդկանց հարգանքը, առաջացնում է նրանց հետաքրքրասիրությունը և զարգացնում նրանց կախվածությունը: Քահանայապետն այստեղ հանդիպում է Աստծուն ու անընդհատ իր զրույցը տարածում հասարակությանը: Ամեն ոք, ով ցանկանում է լսել Աստծո խոսքը, պետք է լսի քահանայապետի «խոսքը», քանի որ նա Աստծո միակ լիազորված խոսնակն է: Այս ավանդույթը փոխանցվել է նաև աբրահամական կրոններին: Մովսես Մարգարեն խոսեց Աստծո հետ Սինա լեռան վրա և ստացավ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ: Հիսուս Քրիստոսի մեկ այլ անունն է «ԱՍՏԾՈ ԽՈՍՆԱԿ»: Նա նաև բազմիցս փորձեց

խոսել Աստծո հետ, բայց սատանան ձախողեց այդ փորձը: Բայց, ի վերջո, նա կարողացավ խոսել: Միրաչը (Miraç)[8] ցույց է տալիս, որ նույն ավանդույթը շարունակվում է իսլամում: Վերին հարկը կդասավորվի ավելի շքեղ՝ որպես հունահռոմեական կրոնի պանթեոն: Աբրահամյան կրոններում սինագոգը, եկեղեցին և մզկիթը կվերակազմավորվեն՝ դառնալով էլ ավելի հոյակապ: Հասարակության մեջ կրոնական դասի աճող դերը հստակ տեսանելի է:

Քահանայապետը նա է, ով Աստծո տանը հասնում է մտքի կենտրոնացմանը: Որպեսզի նոր հասարակության կարգավորումն արդյունավետ լինի, չափազանց կարևոր է, որ այդ կարգավորումը լինի Աստծո հետ երկխոսության համաձայն: Աստվածներին ներկայացնող որոշ արձաններ առաջին անգամ են տեղադրվում այս հարկում: Այս նորամուծությունն ավելի է մեծացնում մարդու հետաքրքրասիրությունը: Հայեցակարգային աստծո խորհրդանշական կուռքերն ու ֆիգուրներն անհրաժեշտ են համարվում: Իրականում այդ ժամանակաշրջանի մարդկային հիշողությունը լիովին հակված է մտածելու նման ֆիգուրների, այլ ոչ թե վերացական հասկացությունների միջոցով: Ոչ ֆիգուրալ, այսինքն՝ բանավոր, վերացական միտքը շատ դժվար է հասկանալ: Մարդկային համայնքները ինտենսիվորեն զգում են ժեստերի լեզվի ազդեցությունը (որոշակի իմաստով ֆիգուր և մարմնի լեզու): Ուստի, ֆիգուրներով և կուռքերով աստված հասկացությունը չափազանց հասկանալի է: Մայր-աստվածուհու շրջանի

[8] Իսլամական կրոնի պատմություն այն մասին, որ Մուհամեդ մարգարեն բարձրացել է երկինք, տեսել Ալլահին ու մյուս աշխարհները և վերադարձել:

շատ գերկանացի կերպարներ ավելի համեստ են և մարմնավորում են մայր-կնոջ:

Այսպիսով, չափազանց ուսանելի է, որ զիկկուրատի վերին հարկը Աստծո տան, պանթեոնի, եկեղեցու, սինագոգի, մզկիթի և համայնքի (համալսարանի) առաջին օրինակն է: Այս պատմական կազմավորումները, որոնք շղթայված են միմյանց, նշանակում են նաև հասարակության սուրբ հիշողություն և ինքնություն: Աստվածաբանությունը, որը նաև հայտնի է որպես թեոլոգիա, ուսուցանում է այս հիշողությունը՝ փիլիսոփայորեն այն որակելով որպես վերացական և իր առաջին օրինակից անջատված:

Պատմության մեջ ամենամեծ խեղաթյուրումները կատարվել են աստվածաբանության մեջ: Անկասկած, աստվածաբանության դերը գիտության և փիլիսոփայության զարգացման գործում չի կարելի հերքել: Բայց, քանի որ նրանք դա անում են՝ չորոշելով աստվածության սոցիալական աղբյուրը և ապաստան գտնելով վերացականի ու կուռքի մեջ, իրենց կերտած հասարակության հետ միասին դառնում են ամենապատասխանատու դասակարգը ընդհանրապես քաղաքակրթության և այսօրվա քաղաքակրթության ձևավորման հարցում: Ճիշտ աստվածաբանական մեկնաբանությունները, որոնք անդրադառնում են իրենց սկզբնաղբյուրներին, անկասկած, մեծ ներդրում ունեն իմաստագիտության մեջ: Այնուամենայնիվ, աստվածաբանների գերակա ասպեկտն այն է, որ նրանք գիտակցաբար կամ ինքնաբուխ կերպով իրականացնում են իմաստի ամենախորը աղավաղումները՝ պայմանավորված բոլոր պաշտոնական, պետական և հիերարխիկ կարգերում իրենց ունեցած դիրքերով: Կարևոր է հասկանալ

այս փաստը: Այսօրվա Մերձավոր Արևելքը հասկանալու համար մենք կփորձենք հասկանալի դարձնել այս խնդիրները՝ վերլուծելով դրանք և յուրաքանչյուր կարևոր փուլում դրանց նոր ձևերը:

գ- Քահանայի երկրորդ կարևոր գործը սոցիալական ճարտարագիտությունն է: Նա և՛ ծրագրում, և՛ կառուցում է նոր հասարակությունը, և՛ անձամբ ղեկավարում է այն: Այս առաջադրանքը կատարվում է Զիկկուրատի երկրորդ հարկում, որը քահանաների հարկն է: Քահանաները՝ որպես Աստծո փոխանորդներ, կբազմանան այնքան, որպեսզի կարողանան կազմել սուրբ դաս՝ քահանայապետի գլխավորությամբ: Որպես յուրաքանչյուր քաղաքի իշխող փոքրամասնություն՝ նրանք կկազմեն առաջին հիերարխիկ (սրբազան իշխող) կաստան: Իզուր չասացինք, որ քահանաները եղել են նաև պրոֆեսորի (գիտնականի) առաջին նախագիծը: Մինչ քահանաները նյութական արժեքների արտադրության իրագործումը հանձնարարում են առաջին հարկի տղամարդկանց (օգտագործման սկիզբը), իրենք հիմնականում զբաղվում են գիտությամբ և գիտության կարգավորմամբ՝ Աստծո հետ միասին: Միջնահարկի քահանայի սենյակներում դրվել են գրչության, մաթեմատիկայի, աստղագիտության, բժշկության, գրականության և, իհարկե, աստվածաբանության հիմքերը: Միջնահարկը նույնպես դպրոց-համալսարանի մակետն է: Այն աստվածապաշտ տաճարների և քահանայական դպրոցների նախատիպն է: Անկասկած, աճող քաղաքային հասարակության գործերի կառավարումը այս գործունեության հիմնական գործոնն է: Պետք է լավ հասկանալ, որ նյութական գործունեությունը երբեք ինքնուրույն չի ի-

րականացվում, այսինքն՝ «ազատ բանվորներով» չի լինում, ինչպես Մարքսն է մեկնաբանում: Ոչ մի դասակարգային հասարակությունում՝ ներառյալ կապիտալիստական ժամանակաշրջանը, մասնավոր կամ կոլեկտիվ սեփականության սեփականատերերը չեն կարող ազատ աշխատավորներ ունենալ: Ճնշումների և օրինականության չենթարկվող որևէ մեկը չի կարող ազատ աշխատել ուրիշների ունեցվածքի վրա: Այս ամենը հարկ եղած դեպքում կմեկնաբանենք:

Քահանաները վարչական պարտականությունները կատարում են զգալի օրինականությամբ: Նրանց ամենամեծ հմտությունն այս հարցում Աստծո խոսնակ լինելն ու գիտության մենաշնորհը վերցնելն է: Նրանց դերը՝ որպես Աստծո խոսնակներ, ինչպես նաև գիտական հայտնագործությունները նրանց հսկայական վարչական ուժ են տալիս: Չմոռանանք, ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺ Է նաև կապիտալիզմում: Հիշեցնենք, որ այս գիտության հիմքերը դրվել են նեոլիթյան հասարակության մեջ, հատկապես Թել Հալաֆի ժամանակաշրջանում (մ.թ.ա. 6000-4000 թթ.): Այս շրջանում որոշիչ են մայր-կին աստվածուհիների ավանդները: Պետք է լավ հասկանալ, որ մայր-կինն առաջին ուսուցիչն է բույսերի, ընտանի կենդանիների, խեցեգործության, ջուլհակության, հղկման, տան, սրբության տան բոլոր հարցերում: Մայր աստվածուհի Ինաննայի ամենամեծ գաղափարը Էնկի Աստծո հետ իր պայքարում այն է, որ նա 104 մեծ գյուտերի տերն է, և որ Էնկին գողացել է դրանք իրենից: Ինաննայի այս խոսքերը շատ լավ բացատրում են այն փաստը, որ կանայք առաջին ստեղծագործ ուժն են շատ հարցերում: Այսպիսով, գյուտերի մեծ

մասը կատարել են մայր-կանայք: Տղամարդ կառավարիչները դրանք գողացան նրանցից: Մենք կտեսնենք, որ քաղաքակրթական փուլը որոշ չափով կառուցվել է այս հիմքի վրա:

Բացահայտումների մեջ քահանաների ներդրումը չի կարելի թերագնահատել: Քաղաքակրթության մեջ գիտության հիմքերում նրանց հորինած գրի, աստղագիտության, մաթեմատիկայի, բժշկության և աստվածաբանության դերը որոշակի է: Տեղին է ասել, որ գիտության սկզբնավորման գործընթացում գերիշխող տեղ ունեին շումմերական քահանաները: Ինչպես հայտնի է, ճշմարտացի է այն ասույթը, որ պատմության մեջ առաջին շումմերական արքաները կոչվել են քահանա-արքաներ: Քահանա-արքաները քաղաքային հասարակության առաջին թագավորներն էին: Առաջին հերթին, ամեն քաղաք ունի քահանա-արքա: Այն օրինականությունը, որ նրանք ապահովում են գիտության և աստվածաբանության հիման վրա, թագավորական վարչակազմ լինելու հիմնական պատճառն է: Սակայն սա միևնույն ժամանակ կլինի նրանց թույլ կողմը:

Որոշ ժամանակ հետո դինաստիաների ժամանակաշրջան է մուտք գործվելու: Դրանում հիմնարար դեր է խաղալու «ուժեղ մարդու» շուրջ գտնվող զինվորական շրջապատը, որի հետ դաշինք է կնքում դինաստիայի ղեկավարը: Նա կհաղթահարի դժվար «քահանայական խաղը»: Այս թեմային ավելի ուշ կանդրադառնանք:

դ - Ամենաներքևում աշխատողների հարկն էր: Թերևս մենք պետք է լավ հասկանանք այս «առաջին հարկի աշխատողներին», քանի որ նրանք հիմք են հանդիսացել

առաջին ստրկացմանը, սերֆիզացիային և բանվորականացմանը: Որտե՞ղ և ինչպե՞ս են նրանք առաջացել: Ո՞րն էր ուժի և համոզելու դերը դրանում: Ո՞ր համայնքից և ինչի՞ դիմաց են նրանք տրամադրվել: Նրանց մեջ կանայք կայի՞ն: Ո՞րն էր կնոջ և ընտանիքի դերը: Այս հարցերին պատասխանելը կարևոր լուսավորություն կբերի:

Առաջին աշխատանքային խմբերի ձևավորման մեջ, հավանաբար, քահանայի համոզիչ ուժն առաջին տեղում է: Կարելի է կարծել, որ առաջին արտադրական գործունեության մեջ ոռոգման և դրա արդյունքում ստացված առատ բերքի շնորհիվ աշխատողներն ավելի լավ էին սնվում, քան այնտեղ, որտեղից եկել էին: Նրանք, ովքեր ցեղային հակամարտությունների հետևանքով տարաձայնություններ ունեին, բնակչության աճի և գաղթի հետ մեկտեղ, տաճարը կարող էին ընկալել որպես փրկության միջոց: Տաճարի կառուցման և արտադրության մեջ լուսա ունենալու սուրբ գաղափարն էլ է կարևոր դեր խաղացել՝ որպես մեկ այլ գործոն:

Մերձավորարևելյան ավանդույթներում հաճախ է հանդիպում, որ յուրաքանչյուր ընտանիքից և ցեղից երեխաներ որոշակի սահմաններում ծառայում են տաճարին: Տաճարային աշխատանքը ընդհանուր կատեգորիա է և նույնիսկ պատվի աստիճան է կրում: Նրանք, ովքեր աշխատում են տաճարում, ավելի պատվով են ընդունվում հասարակության մեջ: Դա ինչ-որ կերպ կարելի է համեմատել քրիստոնեական վանականության հետ: Այն ունի նաև աղանդավորությանը նմանվող տարրեր: Շեյխի սեփականությունում աշխատելը պատիվ և վարձատրություն է բերում:

Զիկկուրատները ուշագրավ են նրանով, որ կազմում են հավաքական աշխատանքի առաջին և մաքուր օրինակը: Օրինակ, որոշ սոցիոլոգներ (Մաքս Վեբեր) այս աշխատանքը գնահատում են որպես «Փարավոնի սոցիալիզմ»: Պարզ է, որ զիկկուրատները կոմունիստական պրակտիկայի առաջին օրինակն են: Աշխատանքային խմբում ընդգրկված են նաև արհեստագործական համայնքները: Այս ամենը միասին վերցրած հիշեցնում է գործարանային արտադրություն: Ավելորդ ապրանքը պահվում է: Հասկանալի է, որ սա լավ համակարգ է սովի դեմ: Այս գործելաոճն ահռելիորեն մեծացնում է քահանաների իշխանությունը: Ոչ մի ընտանիքի կամ ցեղի սա չի կարող հասու լինել: Կա համայնք և իշխանություն, որը գերազանցում է բոլոր ընտանիքներին ու ցեղերին: Չկա այնպիսի օրինակ, որը նույնքան հստակ կբացահայտի նոր հասարակության ու պետության սաղմնային վիճակը, որքան զիկկուրատները:

ե - «Ի՞նչ եղավ կնոջ և ընտանիքի դիրքի հետ զիկկուրատ համակարգում» հարցը նույնպես կարևոր է: Շումմերական տեքստերում առատորեն կարելի է տեսնել մայր աստվածուհու կրոնի հակադրությունը զիկկուրատ քահանաների կրոնին: Այդ հակադրությունը դրսևորվում է տարբեր ձևերով: Կին քրմուհիները տաճարներ են կառուցում իրենց իսկ տնօրինությամբ: Գրեթե յուրաքանչյուր քաղաք ունի հովանավոր աստվածուհի: Վառ օրինակ է Ուրուկ քաղաքի (այսօրվա Իրաքի անունը պետք է ծագի Ուրուկից) աստվածուհի Ինաննան: Այս առումով Ուրուկ քաղաքն ուսումնասիրության արժանի օրինակ է, որն իր նշանակությունը գտավ պատմության մեջ՝ որպես առա-

ջին շումմերական քաղաք-պետություն: Այն հայտնի է նաև որպես առաջին թագավոր Գիլգամեշի քաղաք: Հավանաբար, Ուրուկը քաղաք-պետության առաջին օրինակն է: Մ.թ.ա. 3800-3000 թվականները պատմության մեջ հայտնի են որպես Ուրուկի ժամանակաշրջան: Այն, որ Ուրուկի հիմնադիր աստվածուհին Ինաննան է, արտացոլում է նրա հնությունը և այն հանգամանքը, որ մայր-կնոջ դերը դեռևս գերիշխող է: Ուրուկի պայքարը Էրիդուի դեմ (Էնկի աստծո քաղաքը, թերևս, առաջին քահանայական պետությունը) էպիկական է: Այն ոչ միայն կանանց դեմ տղամարդկանց պայքարի հստակ և ուժեղ օրինակ է՝ ի դեմս Ինաննայի և Էնկիի, այլ նաև ցույց է տալիս դրա էպիկական կողմը: Կին աստվածուհիների կերպարները ժամանակի ընթացքում նվազում են: Բաբելոնյան ժամանակաշրջանում կանայք, կարծես, վճռական պարտություն են կրել: Կանայք այժմ պաշտոնական, հանրային և մասնավոր մարմնավաճառներ են, ինչպես նաև ստրուկներ:

Հայտնի է, որ որոշ զիկկուրատներում կանայք դեր են խաղացել որպես սիրո օբյեկտ: Ավելին, լավագույն ընտանիքների դուստրերի համար պատիվ է սիրո օբյեկտ լինել: Էլիտար ու արտոնյալ աղջիկներին տանում են այնտեղ: Հոյակապ է քահանայական կարգով կանանց ներկայացումը: Նրանք բոլոր տեսակի գեղեցկության թրեյնինգներ են անցնում պալատական միջավայրում՝ զիկկուրատներում, և հմտանում են որոշ գործունեության մեջ (արվեստ, երաժշտություն): Նրանք ներկայացվում են շրջակա մարզերի էլիտար տղամարդկանց, և, երբ ոմանց հետ համաձայնության են գալիս, ամուսնանում են: Այս ոճով տաճարի և՛ եկամուտը, և՛ արդյունավետությունը զգալիորեն

աճում են: Միայն ազնվական ընտանիքների տղամարդիկ կարող են կանանց վերցնել տաճարից: Ավելին, քանի որ նրանք տաճարային կրթություն են ստացել, այս կանայք ներկայացնում են տաճարային գործունեությունը նոր ցեղերի ներսում և կապվում են նոր հասարակություն-պետության հետ:

Կանայք, ինչ-որ իմաստով, նոր քահանայական հասարակություն-պետության ամենաարդյունավետ գործակալներն են: Սա մի մեթոդ է, որը պետությունները, հատկապես Իսրայելը, դեռ ակտիվորեն օգտագործում են: Կանանց այս կոլեկտիվացումը «հասարակաց տան» նախատիպն է: Երբ կինը ընկնի, նա տաճարների ազնվական աստվածուհուց և սիրող կնոջից կվերածվի «հասարակաց տան» ամենավատ, անօգնական, ինքնագովազդվող «աշխատողի»: Շումմերական հասարակությունն այս առումով առաջինը լինելու պատիվն ու անպատվությունն ունի:

Բայց ես չեմ կարող չասել հետևյալը. իդեալական կլիներ, եթե այս մեթոդը չչարաշահվեր և ավելի արժանապատիվ մակարդակի հասներ: Աղջիկների համար դժվար է առողջ մեծանալ այնպիսի միջավայրում, որտեղ և՛ մայրը, և՛ կինը օրինակ են, իսկ հայրն ու տղամարդն առաջնորդ: Ո՛չ գիտելիքը, ո՛չ ֆինանսական միջոցները դա թույլ չեն տալիս: Կանացի խնամքը պահանջում է հմտություն և զգումար: Կանանց տաճարները կարելի է համարել իդեալական տարածք դրա համար: Բայց տղամարդկանց գերակշռող հասարակությունը տապալում է այս ինստիտուտը ճնշումների և չարաշահումների միջոցով: Շումմերական օրինակը բավականին ուսանելի է այս թեմայով:

Սա մի ինստիտուտ է, որին հասարակությունը նախանձում է և մրցում է իր դուստրերին դրան տալու համար: Իմ կարծիքով՝ շումմերական կանանց տաճարն առաջին անհասանելի օրինակն է:

Աղջիկները զարգացման մեծ հնարավորություններ են գտնում այս տաճարներում (որը կարելի է համեմատել այսօրվա աղջիկների ինստիտուտների հետ): Նրանց հիմնական նպատակը ոչ թե ամուսին ընտրելն է, այլ նոր հասարակություն-պետությունն առաջնորդելը: Նրանք անփոխարինելի ներդրում են կատարում ավելի ազնիվ, ավելի սիրառատ հասարակական կյանքում: Իդեալական հասարակության մեջ պարտադիր է աղջիկներին կրթել սուրբ և ազնվական տնային ու դպրոցական համակարգում:

Կանանց կրթությունը, հատկապես յուրաքանչյուր փոքր կամ մեծ ընտանիքում, շատ հետամնաց է և չունի այլ նպատակ, քան սերմանել ընդհանուր հասարակության (տղամարդկանց հասարակության) ստրկությունը: «Ազատ կանանց ինստիտուտները» կարող են դեր խաղալ որպես ժամանակակից տաճարներ: Սրան կփորձեմ անդրադառնալ իմ **«Ազատության սոցիոլոգիա»** պաշտպանության մեջ, որը նախատեսում եմ պատրաստել: Կանդրադառնամ նաև ընտանիքի խնդրին՝ որպես ամբողջություն:

Հասկանալի է, որ զիկկուրատների կանացի դասավորությունները նույնպես մշակվել են նոր հասարակություն-պետության ծառայության համար: Հասկանալի է, որ քահանաները իսկապես կախարդական են մտածել և

իրենց նոր հասարակություն-պետությունը կազմավորել են իդեալին մոտ:

Զիկկուրատների դերը «առևտրի»՝ որպես նոր զարգացող հասարակական գործունեության մեջ, շատ պարզ է: Թեպետ տեքստերում դա, որքան գիտեմ, նշված չէ, բայց ենթադրում եմ, որ նրանք նաև առևտրական տան դեր են կատարել: Ավելցուկային արտադրանքը և արհեստագործական գործիքները կարող են վաճառվել: Պատմությունը մ.թ.ա 4000-3000 թվականները մեկնաբանում է որպես դարաշրջան, երբ առաջին անգամ զարգացավ առևտուրը: Շումմերական հասարակությունը համընկնում է այն դարաշրջանի հետ, երբ նվերների համակարգից (համայնքների և ընտանիքների միջև նվերների համակարգ) անցում կատարվեց փոխանակման համակարգին և սկսվեց համատարած ապրանքայնացումը (փոխանակման արժեքով արտադրություն): Հետևաբար, ակնկալվում էր, որ այն կլինի «գլխավոր առևտրական հասարակություն»: Որ դա այդպես է, հասկանալի է պատմության օրինակներից (դրա օրինակները կարելի է գտնել պեղումներում):

Հավանաբար Մ.թ.ա. 3500-3000 թվականներից սկսած՝ Ուրուկի գաղութատիրական համակարգի ականատեսն ենք: Ուրուկի գաղութները Տավրոս-Զագրոս համակարգում, թերևս, պատմության մեջ պետության անունից առաջին գաղութացման քայլի հետևանքն են: Դինաստիկ գաղութներն ավելի հին են: Բացի այդ, տարբեր ցեղերի գաղութները չեն համարվում իսկական գաղութացում: Գաղութի համար անհրաժեշտ է «մետրոպոլիտ» քաղաք: Որպես շատ հայտնի «մետրոպոլիա»՝ Ուրուկը պետք է գաղութներ ունենար: Հետագայում հայտնի են Ուր (մ.թ.ա.

3000-2000 թթ.) և Ասորեստանի (մ.թ.ա. 2000-1750 թթ.) գաղութները: Իմ անձնական կարծիքով՝ Փենջաբում գտնվող Հարապպա և Մոհենջո-Դարո հնագույն քաղաքները (մ.թ.ա. 2500թ.) և բուն եգիպտական քաղաքակրթությունը (մ.թ.ա. 4000թ. - մ.թ.) լայն իմաստով շումմերական քաղաքակրթությունից բխող գաղութային կարգեր են: Թեև այն զարգացել է ինքնուրույն և անմիջական հարաբերություններ չի ունեցել շումմերական քաղաքների հետ, սակայն Տիգրիս-Եփրատից սկիզբ առած գերիշխող քաղաքակրթությունն է:

Հաստատ է, որ առևտուրն ակտիվ դեր է ունեցել քահանայական կարգում: Որովհետև, բացի սեփական ավելցուկային արտադրանքի առևտուր անելուց, նրանք նաև առևտրի միջոցով պետք է բավարարեին իրենց պակասող ապրանքի կարիքների զգալի մասը (շատ ապրանքներ բացակայում էին Միջագետքի ստորին հովտում գտնվող քաղաքի համար: Հետևաբար, առևտուր կամ բռնագրավում էր անհրաժեշտ: Երկուսն էլ, գուցե, տեղի են ունեցել): Դրանով է պայմանավորված գաղութատիրական կարգը, որը ցանցի պես շրջապատում է տարածաշրջանը: Այդ նպատակով բազմաթիվ գաղութներ ստեղծվեցին Եփրատի և Տիգրիսի ափերին: Մենք հանդիպում ենք դրանց բազմաթիվ հետքերի: Տարածված է եղել հատկապես փայտանյութի, մետաղի և տեքստիլի առևտուրը:

Ինչպես ընդգծված կերպով փորձեցինք ցույց տալ, միանշանակ է, որ զիկկուրատի շուրջ ձևավորվել է նոր հասարակություն-պետության նախատիպ: Գրեթե վստահ կարող ենք ասել, որ մեր ողջ քաղաքակրթական համակարգի վրա ազդած պետություն-հասարակության կոնկ-

րետ զարգացման առաջին օրինակը ծագում է շումմերական զիկկուրատից: Մյուս օրինակները՝ Եգիպտոսից մինչև Չինաստան, գնում են նույն ճանապարհով: Պետական քաղաքակիրթ հասարակության ծնունդն իսկապես անցնում է «քահանայական տաճարների արգանդով»: Մենք չենք գտնում որևէ այլ կոնկրետ օրինակ, որ խմորված լինի այլ ձևերով:

Այսպիսով, ելնելով զիկկուրատի օրինակի մեր մեկնաբանությունից, կարող ենք ասել, որ շումմերական հասարակության հետ թևակոխել ենք դիմակավորված աստվածների և քողարկված արքաների առաջին դարաշրջանը: Ճիշտ այնպես, ինչպես առաջին դիմակավորված աստվածները շումմերական քահանաներն էին, նրանց հաջորդեցին քողարկված արքաները (քաղաքական հագուստով): Ի՜նչ շուքով ու վեհ քայլվածքով:

զ - Տեսնում ենք, որ տոհմական պետությունը եկել է քահանայական պետություն-հասարակությունից հետո: Այն, որ սոցիալական զարգացումը, ինչպիսին պետական հասարակությունն է, բեռնված է իմաստով, առաջնահերթություն է դարձնում քահանայի տեսակը: Ի սկզբանե լեզիտիմության և կանոնակարգման համար անհրաժեշտ են խելացի մարդիկ: Կա սոցիալական կառուցվածք, որն իրեն պետք է արդարացնի: Դժվար չէ մեկնաբանել, որ դա չի կարելի հաստատել քաղաքական-ռազմական իշխանության միջոցով: Որպեսզի հարկադրանք իրականացվի, արտադրության և առևտրի համար բաց, դրան հասած հասարակության և կառավարման համակարգ է անհրաժեշտ: Նոր հասարակությունը պետք է ինստիտուցիոնալիզացվի այս առումով: Քաղաքական-ռազմական իշխա-

նությունը կարող է իմաստալից լինել միայն այն դեպքում, եթե տիրի նման ինստիտուցիոնալացված հասարակությանը: Հակառակ դեպքում քաոս զարգացնելուց այն կողմ դեր խաղալ չի կարող:

Անկասկած, Միջագետքում դինաստիաների պատմությունը հին է ու ամուր: Քանի որ էթնիկ պատկանելությունը ձեռք է բերում տարբեր ինքնություններ, անխուսափելի է, որ տոհմային զարգացումը տեղի ունենա այն մարդկանց շուրջ, ովքեր փորձ են ձեռք բերում ցեղը պաշտպանելու, այն արտադրողական տարածքներում հաստատելու և դրա ներքին խնդիրները լուծելու յուրաքանչյուր ցեղային-կլանային կարգերում: Հավանաբար առանձնանալու է մի ընտանիք և ցեղ: Նա կա՛մ կստեղծի, կա՛մ կստանձնի ցեղային իշխանությունը: Դրանում, անկասկած, որոշիչ է ցեղի անդամների համաձայնությունը: Նրանց միջև գործում են ազգակցական կապերը: Օտարի համար տեղ չկա (կարելի է անդամ դառնալ պատշաճ կերպով ցեղին միանալու, ձուլվելու դեպքում): Դա սոցիալական զարգացման ամենաուժեղ ինքնության առաջացումն է կլանային ինքնության թուլացումից հետո, հատկապես սկզբնական ձևավորման շրջանում: Մեկնաբանություն կա, որ պատմականորեն այս զարգացումը տեղի է ունեցել հիմնականում մեր թվարկությունից առաջ՝ մոտ 5000 տարի առաջ: Դրա աղբյուրը շումմերական հասարակությունը չէ: Շատ հավանական է, որ ցեղային զարգացումն առաջին անգամ տեղի է ունեցել արիական լեզվամշակութային խմբերում: Թերևս, կարելի է ասել, որ նմանատիպ զարգացում տեղի է ունեցել սեմականների շրջանում, գուցե, նույնիսկ ավելի վաղ՝ մ.թ.ա. 9000-6000-ականներին:

Ստորին Միջագետքում դինաստիայի իշխանության ձևավորումը դիտարկում ենք մինչև մ.թ.ա. 5000-ականներ: Ալ-Ուբեյդի շրջանը (մ.թ.ա. 5000-4000 թթ., կենտրոնը՝ Էրիդուում), որը եղել է Ուրուկի ժամանակաշրջանից առաջ, ուժեղ է եղել դինաստիաների առումով: Սակայն չենք նկատում, որ նրանք անցել են պետական կազմակերպման: Զարգացումներ կան, որոնք ապացուցում են, որ նրանք գնում են յուրատեսակ գաղութացման: Մ.թ.ա. 5000-4000-ական թվականներին արիական մշակութային շերտերում հանդիպում ենք սեմական էլիտար ընտանեական բնակավայրերի: Առաջին սեմական գաղութատիրությունը նկատվում է Վերին Տիգրիս-Եփրատ ավազանում, որն այսօր մենք անվանում ենք Հարավարևելյան:

Պետք է շատ լավ հասկանալ տոհմական համակարգի մի առանձնահատկություն. սա մի առանձնահատկություն է, որն այսօր խիստ մտահոգիչ է: Ընտանիքը և ընտանիքում բազմաթիվ որդիներ ունենալն, ըստ էության, տոհմական գաղափարախոսության հիմնաքարն է: Թե՛ բազմակի կանանց հետ ամուսնությունը, թե՛ անընդհատ տղաներ ունենալը տոհմական գաղափարախոսության հիմնական պահանջներն են: Սրա հասկանալի պատճառը քաղաքական իշխանություն ունենալն է: Ինչպես քահանան է առաջնորդում իր «իմաստային» ուժի հիման վրա, այնպես էլ դինաստիայի հզոր անձը ղեկավարելու է իր «քաղաքական» ուժի հիման վրա: Քաղաքական իշխանություն հասկացությունը նշանակում է ուժի կիրառում, հարկադրանք, երբ դրան չեն ենթարկվում:

Մինչդեռ քահանայի զորության պարագայում, եթե չես հնազանդվում, այնպիսի հոգևոր զորություն, ինչպիսին է «աստծո բարկությունը», ունի խթանիչ ազդեցություն: Քաղաքական իշխանության հիմնական աղբյուրը «ուժեղ մարդու զինվորական շրջապատն է»: Նախորդ որսի շրջանում, հատկապես այն ժամանակահատվածում, երբ մայր-կինն արդյունավետ էր, տղամարդը, կարծես, թակարդում էր:

Մի խոսքով, այս երևույթը (ընկալումը) հասկանալու համար անհրաժեշտ է հասկանալ մայր-կին կարգը, ընտանիքի իրականությունը՝ մայր-կին եզրույթում ամուսինը կա՛մ ակնհայտ չէ, կա՛մ շատ մշուշոտ է: Մայր-կինն այնքան էլ «կին չէ, ով ի վիճակի է սիրով զբաղվել իր սիրելի տղամարդու հետ»: Սերն ու սեքսիստական հասարակությունը դեռ օրակարգում չեն: Կինը ոչ մի տղամարդու հետ ամուսնությամբ կապված չէ: Տղամարդը ո՛չ այն վիճակում է, որ տիրի կնոջը, ո՛չ էլ նրան անվանի «իմ կինը»: Որսը հոգնեցուցիչ աշխատանք է, որն անարժեք է, եթե այն շատ արդյունավետ չէ: Տղամարդկանց՝ երեխաներ ունենալու ձևը հասարակության մեջ շատ հեռու է զարգացած լինելուց: Երեխաները պատկանում են մայր-կնոջը: Իր բնույթով հնարավոր չէ, որ մայր-կինն ընկնի ցանկության ետևից կամ սեռական հարաբերություն փնտրի հաճույքի համար: Յուրաքանչյուր կենդանի էակ ունի սեքսուալություն: Գոյություն ունի վերարտադրողական նպատակներով սեռականության վիճակ: Երեխաների համար քրտնաջան աշխատելը հիմնական պատճառն է, թե ինչու են երեխաները պատկանում մայրերին և կանանց: Թե՛ ծննդաբերությունը, թե՛ դաստիարակելը և կերակրելը նրան տալիս են այս իրավունքը: Ուստի, անհեթեթ է խոսել հայրական իրավունքների մասին այն ժամանակ, երբ սոցիալական նշանակություն չունի հայտնի է՞ երեխայի հայրը, թե՞ ոչ: Այնուամենայնիվ, մոր եղբայրներն ու քույրերը նույնպես կարևոր են, քանի որ նրանց հետ է մեծացել: Մորեղբայրն ու մորաքույրը իրենց ուժը ստանում են այս ամենահին մայր-կին օրենքից: Այդ դեպքում մայր-կնոջ ընտանիքը բաղկացած է մորեղբորից, մորաքրոջից (նրանց երեխաները, եթե այդպիսիք կան) և իր իսկ զավակներից: Սա արտահայտում է նաև մայրապետական ընտանիքը: Նեոլիթյան շրջանի անկյունաքար եղած մայր-կինն ու նրանից ներշնչված մայր աստվածուհու պաշտամունքի սոցիալական արտահայտությունը կարելի է այսպես մեկնաբանել՝ բացի մորեղբայրներից, տղամարդիկ աննշան են: Ամուսին լինելն ու հայրությունը չեն կառուցվել:

Դինաստիան կզարգանա այս կարգը գաղափարախոսական և պրակտիկայի առումով շրջելու արդյունքում: Այս կարգում, որը նաև կոչվում է պատրիարքություն, հայրիշխանությունը արմատավորվելու է փորձառու «տարեց տղամարդու», զինվորական շրջապատով «ուժեղ տղամարդու» և շամանի՝ ինչ-որ նախաքահանայական սրբության առաջնորդի դաշինքով:

Տարեց տղամարդու փորձառությունը վերաբերում է նրա կյանքի փորձին: Կարելի է մտածել տարեցների ավագանու մասին: Ավագների իշխանությունը, որը գրականության մեջ կոչվում է գերոնտոկրատիա, վաղ զարգացում է ցեղերի ներսում: Տարեց տղամարդը իմաստուն մարդ է, ում հետ կարելի է խորհրդակցել և իմաստություն

ձեռք բերել: Համայնքը նրա կարիքն ունի: Օգտագործելով այս փորձը՝ նա փորձում է հաղթահարել ծերության դժվարությունները: Նման հավասարակշռություն է հաստատվում համայնքի հետ:

«Ուժեղ տղամարդը» այն ուժն է, որը մայր-կին սեղմակից փախչել ցանկացող տղամարդը ձեռք է բերում իր արդյունավետ որսորդական դիրքով: Ֆիզիկական ուժը և որսի տեխնիկան մեծացնում են հաջող որսի հնարավորությունը: Միասնությունը, որը նա հաստատում է երիտասարդների հետ, ովքեր ցանկանում են օգտվել այս հատկանիշից, նրան ավելի հաջողակ է դարձնում: Թերևս, այս հիմքի վրա է առաջացել պատմության մեջ առաջին ռազմական շքախումբը: Պատմության ընթացքում որսորդ տղամարդը ակնհայտ առավելություն է ունեցել կանանց նկատմամբ: Այն դաշինքը, որը նա հաստատեց ցեղի մեծերի հետ, կամրապնդի պատրիարքությունն ընդդեմ մայրիշխանության:

Դաշինքի վերջին օղակը շամաններն են, որոնք հասարակության բուժում բաժանողներն ու հրաշագործներ են: Շամանը կրում է քահանայի և կախարդի ընդհանուր գործառույթները: Նա մանկավարժ է, թերևս, հասարակության առաջին փորձագետը: Եթե նույնիսկ այն խառնվում է շամանիզմին, միևնույնն է՝ շամանի փորձաքննությունը համայնքում աստիճանաբար դառնում է ինստիտուցիոնալ: Շամանը նույնպես հիմնականում արական սեռի է: Դինաստիայի կառուցման գործում այս ուժերի դաշինքով մայրիշխանական կարգը մեծ հարված կրեց: Նրանց միջև բուռն պայքարի հետքերի ենք հանդիպում շումմերական տեքստերում: Տղամարդն այս հրամանով երեխաների

տերն ու հայրն է, նա ցանկանում է ունենալ շատ երեխաներ (հատկապես՝ իշխանության համար տղաներ), և, դրանից ելնելով, մայր-կնոջ ձեռքից վերցնում է նրա բոլոր խնայողությունները: Սեփականության կարգը զարգանում է: Քահանայական պետության կոլեկտիվ սեփականությանը զուգահեռ զարգացել է նաև տոհմի մասնավոր սեփականությունը: Երեխաների հայրությունն այս առումով նույնպես անհրաժեշտ է: Այլ կերպ ասած՝ հայրության իրավունքները էական են ժառանգությունը երեխաներին (հիմնականում տղամարդկանց) փոխանցելու համար:

Դինաստիան, պատրիարքությունը և հայրությունը վկայությունն ու ապացույցն են, որ դասակարգային հասարակությունը մոտենում է: Քահանայական պետության հետ իրենց հակամարտությունների ժամանակ դինաստիաները «քաղաքական հեղափոխություն» արեցին՝ օգտվելով իրենց ռազմական հզորությունից: Այս ուղղությամբ բազմաթիվ կռիվներ ու քաղաքական ցնցումներ են հանդիպում շումմերական տեքստերում: Փաստորեն, Ուրուկ քաղաք-պետությունից հետո կառուցված «Ուր նահանգների համակարգը» տոհմական բնույթ ունի: I. II. և III. Ուր դինաստիան շեշտում է այս զարգացումը: Դինաստիկ իշխանությունը ավելի աշխարհիկ քաղաքական համակարգ է առաջացնում, քան քահանաների աստվածաբանական իշխանությունը: Ստեղծվում են նոր աստվածներ: Քահանաներն այժմ կրճատվել են՝ որպես քաղաքական ղեկավարության օգնականներ, բայց դեռ մեծ դեր ունեն: Սակայն նրանք աստիճանաբար ավելի ու ավելի են կորցնում իրենց իշխանությունը և դառնում ընդամենը կարգը լեգիտիմացնող, սրբացնող քարոզիչներ: Դիմակա-

վորված աստվածները՝ պետություն ստեղծողները, այժմ թագավորին ստորադասվող երկրորդ և երրորդ շարքերում են: Պետությունը կազմող քահանայական դասի օրինականության զրահն օգտագործելու համար տոհմական թագավորներն այլևս չեն վարանի իրենց «աստված-արքա» հռչակել: Քանի որ դասակարգումը խորանում է, և քաղաքների թիվը օրեցօր ավելանում է, հասարակության այն տեսակը, որը մենք անվանում ենք «շումմերական քաղաքակրթություն», կապացուցի իր մշտականությունը և կդառնա ինստիտուցիոնալ: Մերձավորարևելյան հասարակության մեջ տոհմի հնագույն ավանդույթը պահպանվել է մինչև մեր օրեր: Միջին Արևելքում այնպիսի համակարգերի զարգացման բացակայությունը, ինչպիսիք են հանրապետությունը և ժողովրդավարությունը, սերտորեն կապված է քահանաների և դինաստիաների վրա հիմնված պետականացման հետ:

Շումմերական քաղաքակրթական հասարակության մոդելը որոշեց աշխարհում քաղաքակրթության զարգացումը առնվազն այնքան, որքան նեոլիթյան մոդելը: «Քաղաքակրթության» և «մշակույթի» տարբերությունը՝ որպես հասկացություն, կապված է դասակարգի հետ: Քաղաքակրթությունը կապված է դասակարգային մշակույթի և պետության հետ: Քաղաքակրթությունը, առևտուրը, աստվածաբանության և գիտության ինստիտուցիոնալացումը, քաղաքական և ռազմական կառուցվածքի զարգացումը, բարոյականության փոխարեն օրենքի շեշտադրումը և արական սեռը նոր քաղաքակիրթ հասարակության գերիշխող ցուցանիշներն են: Այս հատկանիշների հանրագումարը ինչ-որ իմաստով կարելի է անվանել քաղա-

քակիրթ հասարակության մշակույթ: Այսպիսով, երկու հասկացությունները նույնական են դառնում և օգտագործվում նույն իմաստով:

Բարբեր մահիկից ծագած նեոլիթյան սոցիալական մշակույթը տարածվել է ամբողջ աշխարհում: Այնուհետև տեղի ունեցավ երկրորդ խոշոր տարածումը: Բարբեր մահիկի նեոլիթյան մշակույթը կանացի էր՝ կանանց գերիշխող հասարակություն էր: Նոր տարածված մշակույթը արական է: Այն կբազմապատկվի՝ ամուսնանալով այլ հասարակությունների հետ: Այս անալոգիան տեղին է: Կարելի է ենթադրել, որ նեոլիթյան մշակույթը տարածվել և ինստիտուցիոնալացվել է, քանի որ ավելի շատ մայրաստվածուհի դուստրեր են մեծացել ամբողջ աշխարհում: Արական գերիշխող մշակույթ արտահայտող քաղաքակիրթ հասարակությունը կնշանակի որդիների ինստիտուցիոնալացում այն տարածքներում, որտեղ այն տարածվում է: Քաղաքակիրթ տղամարդը աղջիկներին կդարձնի իր «կանայք» ու այս կերպ աղջիկներին կկապի իր հետ: Այսպիսով, իգական սեռի գերիշխող հասարակությունը կտարրալուծվի արական գերիշխող հասարակության մեջ: Արդյունքում, և մինչև այսօր, մեր քաղաքակրթության առնականությունը կշարունակի աճել և ամրապնդվել:

2 – ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

Շումմերական հասարակության մեր մեկնաբանություններն ընդհանրացնելն ու մանրամասնելն ավելի կզորացնի մեր լուսավորության և հասկացողության ուժը:

Այն, ինչ պետք է անել, քաղաքակրթությունը վերլուծելու միջոցով մտածելակերպի ու ինստիտուտների հսկայական քանակության դիմակները հանելն է ու բացահայտել դրանց հետևում կանգնած դեմքերն ու իրական շահերը բացահայտելը, ինչպես նաև հասարակության պարզ ու կոնկրետ վիճակները տեսանելի դարձնելը:

Մեր պատմական հասարակությունը ցանկանում է ներկայանալ որպես երիտասարդ «ժամանակակից դար»՝ մատնանշելով հին քաղաքակրթության ծերությունը: Այստեղ տարօրինակ մի բան կա. երիտասարդությունը վերաբերում է մոտ ժամանակում երևույթի ծնունդին: Եթե, ինչպես ապացուցեցինք, շումմերական հասարակությունը ներկայացնում է մեր քաղաքակրթության ծնունդը, ապա երիտասարդությունը պետք է դրան համապատասխան որոշվի: Այս դեպքում «նոր» և «երիտասարդ» ածականները խաբեություն են. հասկանալի է, որ մենք ամենահին քաղաքակրթական հասարակությունն ենք: Ժամանակը հակառակ կողմից կարդալու միջոցով ծերերին երիտասարդ տեսք տալը քաղաքակիրթ հասարակությանը դիմակավորելու շարունակությունն է:

Հիմնական հարցը, որը պետք է տրվի, հետևյալն է՝ քաղաքակիրթ հասարակությունը, որը մենք կարող ենք նաև քաղաքային քաղաքակրթություն անվանել, ինտենսիվ դիմակավորման կարիք ինչո՞ւ ունի:

Շումմերական քահանաների դիմակավորման շքեղ վարպետությունը շարունակվում էր անխափան: Ինչո՞ւ աստվածությունը, որն ի սկզբանե վեհ ու իմաստալից բովանդակություն ուներ, վերածվեց ապամարդկայնացման և անիմաստության հիմնական հասկացության:

Քաղաքակիրթ հասարակությանը կողմ և դեմ բազմաթիվ կարծիքներ են հնչել: Բայց ամենադժվար բանը, որ պետք է արտահայտել ու դրանում հաջողել, դա քաղաքակրթությունն արմատապես քննադատելն է ու այն հաղթահարելու պրակտիկայով զբաղվելը: Սա ցույց է տալիս արված մեկնաբանությունների ձախողումը: Ընդհանուր դատողություն է, որ մարդկության ազատության ցանկության վրա հսկայական ճնշում կա: Հաճախ ասում են, որ քաղաքակրթությունն արդեն հասել է անկայուն վիճակի: Հեգելը քաղաքակրթության պատմությունը գնահատում է որպես «արյունոտ սպանդանոցային արարողություն»: Ոչ մի տարի չի անցնում առանց պատերազմի: Ճնշման տակ գտնվող կյանքը ներկայացվում է այնպես, կարծես դա բնության օրենք է: Չարաշահումը հասցվել է կյանքի ամբողջական կանոնի մակարդակի: Ազնվությունը, մաքրությունը և բարոյական մնալը համարվում են հիմարություն:

Այն, ինչին ուզում եմ հասնել, հետևյալն է՝ քաղաքակիրթ հասարակությունը պետք է մեկնաբանել այն համատեքստում, որը դրան զերազանցել ցանկացող քննադատությանը հնարավորություն կտա: Ինչպես երևում է բազմաթիվ դպրոցների, հատկապես մարքսիստների ջանքերից, քաղաքակիրթ հասարակությունը չի կարող հաղթահարվել՝ ինքնուրույն քննադատելով կապիտալիստական արդիականությունը: Դրա ամենահիմնարար գործոնը քաղաքակիրթ հասարակությունը վերլուծելու ձախողումն է, որին այն կապված է շղթայի օղակի պես: Եվրոկենտրոն աշխարհայացքը, կարծես, չեզոքացրել է նույնիսկ իր ամենակատաղի հակառակորդներին: Ինչպես

նեոլիթյան մշակույթի և եվրոպական քաղաքակրթության հարաբերությունների դեպքում, մեզ ամենաշատը անհրաժեշտ է եվրոպական քաղաքակրթության և նախորդ քաղաքակրթությունների պատմության ու հասարակության միջև փոխհարաբերությունների հասկանալի մեկնաբանությունը: Թեև դա շատ սիրողական է, բայց այն փաստը, որ ես բանտարկվել եմ այս քաղաքակրթության ամենադաժան ճնշման տակ, անհրաժեշտ մեկնաբանություն մշակելը ինձ համար և՛ իրավունք է, և՛ պարտականություն:

ա- Քաղաքակրթությունը մեկնաբանելն առաջին հերթին կառուցվածքային սոցիոլոգիայի խնդիր է: Եթե գիտություն լինելու հիմնական պայմանը ոչ թե պոզիտիվիզմի ճահիճում թավալվելն է, այլ «իմաստաբանությանը» ծառայելը, որը գերազանցում է սուբյեկտ-օբյեկտ տարբերակմանը, ապա դա ամենից շատ անհրաժեշտ է կառուցվածքային սոցիոլոգիայի ոլորտում: Ինչպես բժշկի արածը ախտորոշումն ու բուժումն է, այնպես էլ ընդհանուր սոցիոլոգիայի միակ պարտականությունը պետք է լինի հասարակության ախտորոշումն ու բուժումը: Իմանալու համար կարող է լինել միայն մեկ պատճառ՝ իմաստավորել կյանքը, որին մենք այնքան կապված ենք: Կյանքը իմաստավորելը մեզ թույլ կտա հասկանալ կառուցվածքայնության խնդիրը և վերականգնել անառողջները, եթե այդպիսիք կան:

Քաղաքակրթական հասարակությունը կառույցների այն խումբն է, որտեղ իմաստաբանությունն ամենադժվարն է: Այս զանգվածի գոյությունը սերտորեն կապված է հենց իմաստաբանության աղավաղման և իմաս-

տազրկման հետ: Զինված իր բոլոր զենքերով՝ նա տարօրինակ էակ է՝ լևիաթան, որի նպատակն է ստիպել մահամերձ զոհին խոստովանել «ՍՈՒՏԸ»՝ որպես վերջին բառ, այլապես «ԿՈՆՉՆԱՑՆԻ» նրան հնարավոր բոլոր եղանակներով: Այս էակին, սյսինքն՝ քաղաքակրթությանը, կարելի է պատշաճ կերպով համեմատել բոլոր տեսակի հրեշների հետ: Բայց սա շատ հետամնաց մոտեցում է: Հատկապես, եթե մենք ունենք գիտնականի ինքնություն, սա մեզ ավելի հեռու չի տանում, քան մանկական երազանքները (հրեշավոր երազներ): Հրեշին գրագետ նույնականացնելը բավարար չէ: Դա բուժում է, որը պետք է շտապ իրականացնել: Ակնհայտ է, որ բուժման բոլոր փորձերն ապարդյուն են անցել: Վերջին փուլում պյունահեղությունը, սարսափելի ցավերով ու ցեղասպանություններով լի կյանքը, ամենավատը՝ սովը, գործազրկությունը, բոլոր տեսակի հիվանդությունները և էկոմիջավայրի (բացարձակապես անհրաժեշտ կենսամիջավայրի) ոչնչացումը վերջին իրավիճակի զեկույց է, որը կարող եմ տեղավորել մեկ նախադասության մեջ: Եթե մեր կառուցվածքային և ազատության սոցիոլոգիաները ցանկանում են խուսափել աղբակույտ լինելուց, որտեղ բնակվում են հազարավոր մարդիկ, ովքեր պնդում են, որ զբաղվում են հասարակագիտությամբ, նրանք պետք է ապացուցեն իրենց ուժը ախտորոշման և բուժման մեջ: Հակառակ դեպքում, ինչպես Ադորնոն էր ասում, «ցեղասպանության ճամբարներից հետո երկնքի բոլոր աստվածները՝ այսպես կոչված գիտնականները, ասելու ոչ մի խոսք չեն ունենա»:

Քաղաքակրթությունն ավելին է, քան պարզապես «արյունոտ սպանդանոցների արարողություն». այն

մարդկային գոյության առաջնային պատճառ հանդիսացող ազատության իմաստի մշտական ցեղասպանությունն է: Մնում է կյանքի միջուկը: Քաղաքակրթությունն ամենապարզ բնորոշմամբ այն է, ինչ մնում է ազատ կյանքի իմաստը դատարկելուց հետո:

Երբ նայում ենք ամենապարզ կենդանի էակին, տեսնում ենք, որ այն իմաստ է տալիս կյանքին: Սա այնպիսի իմաստ է, որ հնարավորություն է տալիս հասնել միլիոնավոր տեսակների, արմատավորվել ժայռերի վրա, անհրաժեշտության դեպքում գոյատևել բևեռային ցրտերին, թռչել և մշակել անսահմանափակ տեխնիկա, որոնց մարդկային հայտնագործությունները նույնիսկ չեն կարող հասնել: Ուրիշ ի՞նչ իմաստ կամ անիմաստություն ունի քաղաքակիրթ հասարակությունը, քան ստի և կազմակերպված ուժի միջոցով կյանքի ամենաառաջադեմ էակներին սկզբում իմաստազրկելու և վերջին փուլում ինքնասպանության եզրին հասցնելու ուժը:

Սոցիոլոգիայի եվրոպական կենտրոնացված փուլում այս ուժը նորից քաղաքակրթության մեջ ներմուծելու խոստումը դարձավ Աստծո վերջին «խոսքը», ինչպես այն կոչվում է քրիստոնեության մեջ: Այս խոսքերից հրաժարվելը ամենապարզ կենդանի արարածի կյանքի իմաստի նկատմամբ հարգանքի պահանջ է: Ամենազարգացած բարոյականություն ունեցող էակը ոչնչով չի կարող բացատրել նման անբարոյականությունը: Կրկին հիշեցնենք՝ ԱՍՏՎԱԾՆԵՐԻՆ ԱՍԵԼԻՔ ԲԱՌ ԱՆԳԱՄ ՉԻ ՄՆԱՑԵԼ:

Արդյոք պետական կառույցների և անուղղակի կառույցների ստեղծման ու փլուզման պատմությունները չե՞ն, որոնք նրանց օժանդակ են, որ կոչվում են պատմություն: Արդյոք այս պատմության միակ նպատակը, որը նկարագրում է տոհմերի վերելքն ու անկումը, այն չէ՞, որ նոր դինաստիաները խարդավանքների և բռնակալության միջոցով բարձրացնեն իշխանության թագը և հասնեն «նախիրի հովվությանը»: Արդյոք սրա միակ նպատակը անհրաժեշտության դեպքում «նախիրին» բրդի, կաթի, մսի և կաշվի համար շահագործելը չէ՞:

Հերոսական պատմություններից ո՞րն է զերծ բռնակալությունից և չարաշահումից: Արդյոք նրանք, ովքեր հայտարարել են, որ տեր են կանգնել իրենց ցեղին, ժողովրդին և կրոնին, ապացուցել է՞ն, որ ճանաչում են որևէ այլ արժեք, քան իշխանության թագը:

«Սպանդանոցի» ինստիտուտից բացի ի՞նչ անվան կարող է արժանի լինել քաղաքակիրթ հասարակությունը, որն առանց պատերազմի մեկ տարի և մարդկային որևէ տարածք չի թողել:

Գիտության, արվեստի և տեխնիկայի զարգացման մասին պատմություններից ո՞րն իրական գյուտարարների կյանքի գնով չի եղել կամ չի յուրացվել:

Արդյոք որպես կարգուկանոն, կայունություն եւ խաղաղություն ներկայացվող իրականությունը ոչ այլ ինչ չէ՞, քան «գառների լռություն»: Կամ ի՞նչ ավելի խորը իմաստ ունի այն, քան ստրուկների, ճորտերի, բանվորների և բոլոր ճնշվածների հպատակեցումը պատկերող թատերական սեանս: Այս քաղաքակրթության վերաբերյալ հարցերը կարելի է անսահմանափակ ավելացնել և աստիճանաբար խորացնել: Իսկապես սարսափելին այն է, որ նրանք համարձակվում են այս պատմությունը ներկայացնել որպես փառահեղ պատմություն, սուրբ կրոն, գեղեցկության

և սիրո էպոս, հրաշալի գյուտեր, դրախտ, որին մի օր հասնելու ենք, բարեկամություն, ջենթլմենություն և դաշինք: Ավելին՝ դա ամբարտավանորեն ներկայացնել որպես մարդկության բացարձակ ճակատագրական երթ:

Այս հարցերն ուղղելու իմ նպատակն, անկասկած, հավատարմությունն է կյանքի իմաստի համար պայքարող բոլոր ապստամբների իրական հերոսության, սրբության, էպիկական սիրո և ընկերակցության իրական էությանը, ցույց տալ իմ խոր հետաքրքրությունն ու հարգանքը նրանց վերջին չասված խոսքերի ու հիշատակի նկատմամբ: Եթե անհրաժեշտ է վարդի ծառի պես փշեր ունենալ, ինչն անհրաժեշտ է գեղեցիկ վարդերը պաշտպանելու համար, դա անելը նշանակում է իմանալ, թե ինչպես պետք է պայքարել ազատ մարդկային կյանքի պաշտպանության համար, որի իմաստային ուժը, թերևս, անսահման գեղեցկությունն է:

բ - Մեր բարոյական դատողություններից անցնենք տեսական դատողություններին: Շատ կարևոր է հասկանալ «դասակարգություն» հասկացությունը՝ իր բոլոր առումներով, հատկապես նրա դերը պատմական հոսքում, որի մասին հակառակորդները հաճախ են խոսում կապիտալիստական արդիականության ժամանակաշրջանում: Հակառակ դեպքում, այս հայեցակարգը չի կարող ամենաանմիտ «դեմագոգիկ մաստակից» և դրա իմաստաբանությունը քողարկելու գործիքներից այն կողմ անցնել:

Առաջին բանը, որ պետք է իմանալ դասակարգն իսկապես հասկանալու համար, այն է, որ այն կազմում է կազմակերպված իշխանության ձեռքերն ու ոտքերը: Այս

օրգաններն ինքնուրույն նշանակություն չունեն: Նմանությունը կարող է չափից դուրս սոցիոկենսաբանական լինել, բայց տեղին է: Հավանաբար, անվիճելի է, որ Լևիաթանը քաղաքակիրթ հասարակության մեջ ամենակազմակերպված իշխանությունն է: Եթե պետությունը մեկնաբանենք որպես ուժային հարաբերությունների ամենազարգացած ամբողջություն, որը հնարավոր է դարձնում դասակարգային հասարակության մեջ համընդհանուր ճնշումն ու շահագործումը, արդյոք ճնշվածներն ու շահագործվողները չե՞ն դառնա այս հարաբերությունների ցանցի անբաժանելի մասը: Միթե՞ քաղաքակրթությունը ոչ միայն պետական կազմակերպություն, այլ նաև կրոնից մինչև տնտեսություն կառուցվածքի և կազմակերպման ուժ չէ: Չէ՞ որ այս կազմակերպված իշխանության հիմնական գործառույթն է ստեղծել անթիվ հորիզոնական և ուղղահայաց սոցիալական շերտեր՝ հիմնականում ստրուկներ, ճորտեր և բանվորներ:

Ուզում եմ ընդգծել հետևյալը՝ կազմակերպված ուժային կառույցում ձեռքերին ու ոտքերին երբեք առարկայական արժեք ձեռք բերելու հնարավորություն չի տրվում: Եթե կառավարությունը հաջողակ կազմակերպություն է, դա նշանակում է, որ նա հասել է բացարձակ գերիշխանության իր աշխատողների նկատմամբ, որոնց նա որակում է որպես կոպիտ: Սա նշանակում է, որ նրանք կորցնում են իրենց առարկայական արժեքը իշխանության պայմաններում, եթե նույնիսկ նախկինում դա կար: Այդ իսկ պատճառով ապստամբած ստրուկներն ու բանվորները՝ Սպարտակից մինչև Փարիզյան կոմունա, հաջողության շանս չունեին: Նրանք կարող են հաջողակ լինել մեկ

պայմանով, եթե կարողանան արժեքավոր լինել իշխանության համար՝ որպես թարմ արյուն: Սա ոչ այլ ինչ է, քան վերաինտեգրում քաղաքակիրթ հասարակությանը: Գիտական սոցիալիզմի 150 տարվա փորձառություններն այս իրականությունը հակիրճ բացատրելու համար ամենավառ և դիպուկ օրինակի արժեք ունեն:

Ուրեմն, ուժային հարաբերություններում ընդգրկվելու և այս արդյունքների միջև հարաբերություն չկա՞: Հիմնական բանը, որ պետք է հասկանալ, դա դասակարգի հանձնառության և որակի մակարդակն է իշխանության պաշտոնական հարաբերություններում, և արդյոք դասակարգն ինքնուրույն ո՞ւնի գործողություն և իմաստային արժեք: Դասակարգի վերին շերտը լինի տերը, ավագը, շեֆը, թե բուրժուական կամ ստորին շերտը՝ ստրուկ, ծառա կամ բանվոր, միևնույնն է՝ իշխանության հարաբերություններում հանդիպում են նույն գաղափարաքաղաքական մոտեցմանը: Նրանց ներքին առարկությունները մեծ արժեք չունեն: Այս հարաբերությունն այնպիսի ցանց է, որ ունի հազար ու մի հանգույց: Եթե նույնիսկ առարկեք կամ նույնիսկ պատռեք մեկը, դրանցից հազարը անմիջապես կմիջամտեն: Ճիշտ այնպես, ինչպես նա վերականգնում է պատռվածքը, բաց չի թողնում պատռողին՝ առանց հնարավորինս ամուր կապելու հաջողության: Անհրաժեշտության դեպքում դա անում է պատռողի գլուխը կտրելով:

Դիտարկենք ցեղի բանվորներին՝ շումմերական քահանաների և տոհմապետերի կողմից հաստատված պետություն-իշխանություն հարաբերությունների առաջին նախագծում աշխատող աշխատողներին: Աշխատակիցը,

ում քահանան սկսում է ստրկացնել, գտնվում է զիկկուրատի վերին հարկում գտնվող նորաստեղծ աստվածների (սրբության հասկացություններ, այնքան զորավոր, որ ոչ մի նյութական ուժ չի կարող դրանց ազդեցությունն ապահովել անհատի վրա) հսկայական օրինական ազդեցության տակ: Առանց այն էլ, եթե այդպես չլինի, նրան այնտեղ չեն թողնի: Երկրորդ՝ նրանք ավելի լավ են սնվում, քան նախկինում: Այլընտրանք չկա, որը կապահովի ավելի լավ սնուցում: Երրորդ՝ սեռական կրքի առումով միշտ գեղեցիկ հուրիների իրականությունը զարդարում է նրանց երազանքները: Կանանց վիզուալիզացիան նպաստում է կարգուկանոնին, հնազանդությանն ու սիրուն, գուցե, նույնիսկ ավելի շատ, քան լրատվամիջոցներն ու բանակները:

Դասակարգի շրջանակներում այս նոր առարկան ոչ թե ազատության ապստամբ է, այլ լավագույն դեպքում ազատության դավաճան կամ ազատ կյանքի հասկացողությունից դատարկված փաստ, ուրիշ իրադարձություն: Դինաստիայի պարագլուխը նման պրակտիկայի կիետևի պետություն-իշխանություն հարաբերություններին անդրադառնալու ժամանակ: Ավելի տեսանելի, ուժեղ կազմակերպությունը, որը հիմնված է ամուր շահերի վրա, հիմնական դաշինքային ուժերի ներսում առաջին պայմանն է: Տոհմական ընտանիքն ունի լեգիտիմություն, որին հարգում և որից վախենում են ընդլայնված տոհմային հարաբերություններում: Ցեղային ավանդույթները մշտապես բարձրացնում են հիերարխիան: Նույնիսկ աննշան անկարգությունները կա՛մ լուծվում են ցեղային խորհրդում խաղաղ ճանապարհով, կա՛մ հաղթահարվում հակամարտու-

թյամբ: Ռազմավարական մոտեցում չի կարող լինել դասակարգային կերպարը ներկայացնելը որպես տոհմի ամենաթույլ կողմը, որը հարաբերությունների նման խճճված վիճակում պետություն դառնալու ճանապարհին է:

Ուզում եմ զալ հետևյալին՝ դասակարգությունը քաղաքակրթության հիմնական բնութագրիչներից է, սակայն, թեև տեսականորեն դա անհնարին չէ, բայց այն հեռու է ռազմավարական նշանակություն ունենալուց՝ որպես դասակարգային հեղափոխությունների հիմք: Գործնականում այն հեռու է արդյունավետ լինելուց: Բոլոր քաղաքակրթություններն ու կառավարությունները, որոնք տապալվեցին, տապալվեցին իրենց ծառաների և աշխատողների հետ միասին: Իրենց ծառաների ու բանվորների կողմից տապալված կառավարությունները կա՛մ շատ քիչ են, կա՛մ էլ, եթե կան, ապա նոր իշխանությունը հնից ոչ պակաս դաժանության ու չարաշահման մեքենա լինելուց բացի այլ իմաստ չունի:

Պատմությունը որպես դասակարգային պատերազմներից բաղկացած դիատարկելը չափազանց ռեդուկցիոնիստական տեսակետ է: Ճնշումն ու շահագործումը քաղաքակրթության պահպանման եղանակն են, հետևաբար հանդիսանում են այն համակարգը, որի վրա հիմնված է քաղաքակրթության պատմությունը: Բայց նրա գաղափարախոսությունը, քաղաքականությունը և նույնիսկ տնտեսագիտությունը այլ կերպ են աշխատում: Ավելի ճիշտ՝ ճնշված դասն ընդդեմ դասակարգի տրամաբանությունը պատմության ընթացքի գործելաոճը չէ: Այստեղ չենք քննարկում ստրկության մեջ լինելու սարսափը, ստրկական համակարգի ստորացուցիչ բնույթը և ազատության ժխտումը: Իշխանության և քաղաքակրթության համակարգերի հաստատումն ու փլուզումը տեղի են ունենում տարբեր իմաստներով և ռազմավարություններով, իսկ դասակարգի դեմ դասակարգային տրամաբանությունը նշանակում է կա՛մ միտումնավոր մասնակցել իշխանության գործող համակարգին (քաղաքակրթությանը) իշխանության նոր ձևով, կա՛մ հակառակը՝ չնայած քաղաքակրթությանը հակադրվելուն՝ թարմ արյուն ներարկել նույն այդ քաղաքակրթության մեջ և դրանից այն կողմ չանցնել (խորհրդային և չինական փորձառություններ): Սա դեռ քննարկվում է: Միգուցե, կարելի է քննադատություն հնչեցնել, որ այս քննարկման մեջ մենք չափից դուրս շատ ենք նվազեցնում իշխանությունը, և որ ելք ու իշխանությունից ազատում չենք ցույց տալիս: Նշեմ, որ այս հարցին համակողմանիորեն կանդրադառնամ իմ պաշտպանական ճառի «Ազատության սոցիոլոգիա» բաժնում: Որպես պատասխան՝ ասեմ, որ ազատությունն ունի սոցիալական դաշտ, տրամաբանություն և ռազմավարություն, որն առնվազն նույնքան տարբեր է, որքան իշխող գաղափարախոսությունը, քաղաքականությունն ու կազմակերպությունը:

գ - Թեև քաղաքակրթությունների միջև բախման կամ դաշինքի հարցն այսօր գործնականում քննարկման առարկա է, այդուամենայնիվ, դրա պատմական իմաստն ավելի ընդգրկուն է:

Քաղաքակրթական հասարակությունը մի ինստիտուտ է, որն, ըստ էության, հակամարտություն է առաջացնում ինչպես իր ներսում, այնպես էլ տարբեր քաղա-

քաղաքությունների միջև: Այս կառուցվածքի իմաստն ու նպատակը, դրա վրա հիմնված դասակարգումը, այդ նպատակով կիրառվող ճնշումն ու չարաշահումը, մշտական խաբեության ու քողարկման իրականությունը բացատրում են, թե ինչու այն անընդհատ կոնֆլիկտ առաջացնող բնույթ ունի: Իշխանությունն ու դասակարգը ինքնին հակամարտություն են: Այս հակամարտությունը ներքին է, թե արտաքին, դրա էությունը չի փոխվում: Իրատեսական չի թվում քաղաքակրթությունների էությունը բնութագրելու եղանակով դրանք փոխելը և որպես այլ էություն ունեցող արտացոլելը: Անկախ նրանից՝ նրանք ռազմիկներ են, թե խաղաղարար, միաստված, թե բազմաստված, արդյունավետ կամ անարդյունավետ, կուլտուրական կամ տգետ, նույն ցեղից կամ տարբեր ցեղերից, նրանց էությունը չի փոխվում: Նա իրեն պատասխանատու է համարում այնքան ժամանակ, քանի դեռ իր առաջնորդող ուժը չի նվաճել ամբողջ աշխարհը: Քաղաքակրթության համար համաշխարհային տերություն լինելը ներհատուկ հիվանդություն է, որը ծագում է իշխանությունից: Հենց դադարում է դրա ընդլայնումը, այն սկսում է հետընթաց ապրել, որովհետև որևէ իշխանական համակարգ նորմալ չէ: Ինչպես քաղցկեղը՝ այն կա՛մ ցանկանում է ոչնչացնել, կա՛մ կանգնած է ոչնչացվելու անհրաժեշտության առաջ: Բազմաթիվ անհատականություններ կան, որոնք պարզ ցեղապետեր են և իրենց աստվածացնում են՝ հեծնելով քաղաքակրթության ձին:

Աստվածության պահանջի տակ մարդկությանը ոչնչացնելու ուժն է թաքնված: Նա, ով պատերազմի միջոցով կործանում է մեծությունը, կարծում է, որ կարող է մեծություն ստեղծել: Եթե «ես»-ը չի կարող կառավարվել, այն տառապում է անսահմանափակ հոգեբանական ինքնաչափազանցման հիվանդությամբ: Քաղաքակրթական համակարգը ներկայացնում է այն հասարակությունը, որտեղ այս հիվանդությունը գտնում է իր միջավայրը: Ասում են՝ չկա սոցիալական արժեք կամ անհատականություն, որը իշխանությունը չկարողանա կոռումպացնել: Այս գնահատականը վերաբերում է իշխանության էությանը: Քանի որ քաղաքակրթություններն ուժի հասարակություններ են, դրանք այն համակարգերն են, որոնք կյանքի հետ ամենաուժեղ հակասության մեջ են: Չկա արժեք, որը չի կարելի զոհաբերել հանուն իշխանության՝ քույրերից ու եղբայրներից մինչև ամուսիններ և ընկերներ: Երբ քաղաքակրթությունների կառավարող լիազորությունները քննվեն, կերևա, որ գրեթե չկան սպանություններ, որոնք նրանք չեն կատարել, և չկան դավադրություններ, որոնք չեն մշակել: Քաղաքակրթական ուժերը ստի համակարգվածությունն անվանում են քաղաքականություն:

դ - Պետք է ուշադրություն հրավիրել մի հատկանիշի վրա, որը ինստիտուցիոնալացվել է քաղաքակրթական հասարակություններում: Այս իրողությունը կարելի է անվանել նաև հասարակության կողմից իշխանության նախատրամադրվածություն: Ինչպես կանայք վերստեղծվում են ամուսնու կողակիցը լինելու ավանդույթի վրա, այնպես էլ իշխանությունը չի կարող ինչ-որ կերպ վստահ լինել, որ երաշխավորում է իր գոյությունը՝ առանց հասարակությանը նման կերպ նախապատրաստելու: Կողակից կինը՝ որպես ստրկության ամենահին արտացոլում, ինստիտուցիոնալացվել է այն բանից հետո, երբ երկար ու հա-

մապարփակ պայքարից հետո մայր-կինն իր ողջ պաշտամունքի հետ պարտվեց ուժեղ տղամարդուն և նրա շրջապատին, և երբ սեքսիստական հասարակությունը դարձավ գերիշխող: Գերիշխանության այս ակտը, հավանաբար, իր տեղն է գտել հասարակության մեջ նախքան քաղաքակրթության լիարժեք զարգացումը: Սա այնքան կատաղի ու բուռն պայքար էր, որ իր հետևանքների հետ մեկտեղ ջնջվեց հիշողությունից: Կինը չի հիշում, թե ինչը որտեղ կամ ինչպես է կորցրել: Նա իր բնական վիճակն է համարում ենթարկվող կանացիությունը: Այդ իսկ պատճառով ոչ մի ստրկություն այնքան չի օրինականացվել, որքան կանանց ստրկությունը:

Այս կազմավորումը երկու տեսակի կործանարար ազդեցություն ունեցավ հասարակության վրա. նախ այն հասարակության դուռը բացեց ստրկության առջև: Երկրորդն այն է, որ ամբողջ ստրկությունն իրականացվում է կնոջ՝ ամուսնու կողակիցը լինելու հիման վրա: Իր ամուսնու կողակից կինը պարզապես սեռական օբյեկտ չի դառնում, ինչպես կարծում են: Այն կենսաբանական հատկանիշ չի առաջացնում: Ամուսնու կողակից լինելն, ըստ էության, սոցիալական հատկանիշ է: Կնոջ մասնագիտություն են համարվում բոլոր վերաբերմունքներն ու վարքագծերը, որոնք պետք է մերժի ազատության բարոյականությունը, ինչպիսիք են ստրկությունը, ենթարկվելը, կլանող վիրավորանքները, լաց լինելը, ստին վարժվելը, ոչ հավակնոտությունը, ինքնադրսևորումը և այլն: Այս առումով դա դեգրադացիայի սոցիալական հիմքն է, ստրկության էական հիմքը: Դա այն ինստիտուցիոնալ հիմքն է, որի վրա գործում են ամենահին

ստրկությունն ու անբարոյականությունը: Քաղաքակրթական հասարակությունը առնչվում է նաև այս հիմքի բոլոր սոցիալական կատեգորիաների արտացոլմանը: Համակարգի աշխատանքի համար անհրաժեշտ է ամբողջ հասարակության համեմատությունը: Իշխանությունը նույնական է առնականության հետ: Այդ դեպքում հասարակության բևեռացումն անխուսափելի է, որովհետև իշխանությունը չի ճանաչում ազատության և հավասարության սկզբունքը, քանի որ հակառակ դեպքում այն գոյություն ունենալ չի կարող: Իշխանության և սեքսիստական հասարակության նմանությունը էական է:

Հունական քաղաքակրթության մեջ, որը համարվում էր քաղաքակրթության մեծ փուլերից մեկը, երիտասարդները փորձառու մարդուն պաշտոնապես ներկայացվում էին որպես «տղա»: Երկար ժամանակ չէի կարողանում պարզել սրա պատճառը: Նույնիսկ Սոկրատեսի նման փիլիսոփան ասում է. «Կարևորն այն չէ, որ տղային անընդհատ օգտագործում են, այլ այն, որ նա խրատվում է իր տիրոջ կողմից»: Այստեղ տրամաբանությունը կայանում է նրանում, որ նպատակը երիտասարդներին ընտելացնելն է կին լինելու հատկանիշներին, այլ ոչ թե նրանց անընդհատ որպես տղա օգտագործելը: Ավելի կոնկրետ հունական քաղաքակրթությունը պահանջում էր նաև հնազանդվող հասարակություն: Այս հասարակությունը չի կարող ձևավորվել, քանի դեռ կան ազնիվ, վեհ երիտասարդներ: Որպեսզի այս հասարակությունը ձևավորվի, երիտասարդները պետք է որդեգրեն կանանց՝ այսինքն հնազանդվողի վարքագիծը: Նման միտումներ կան բոլոր

քաղաքակիրթ հասարակություններում: Սոդոմիան շատ տարածված է այս հասարակության մեջ: Սա վերածվել է այնպիսի մի ավանդույթի, որ յուրաքանչյուր վարպետ պետք է շահագործման համար «տղա» ունենա: Կարևոր է հասկանալ սոդոմիան որպես սոցիալական երևույթ, որն առաջանում է դասակարգային հասարակության և իշխող հասարակության կողմից, այլ ոչ թե անհատական սեռական այլասերվածության կամ հիվանդության պատճառով: Սեռականությունը և իշխանությունը քաղաքակիրթ հասարակության մեջ քաղցկեղի նման սոցիալական հիվանդություններ են: Քանի որ նրանք չեն կարող ապրել առանց միմյանց, ինչպես քաղցկեղի բջիջները, հետևաբար բազմապատկվում են միմյանցով: Ավելին՝ մենք կապիտալիստական արդիականության մեջ ավելի համապարփակ կմեկնաբանենք անհատական քաղցկեղի և սոցիալական քաղցկեղի հարաբերությունները:

Ուզում եմ գալ հետևյալին՝ քաղաքակիրթ հասարակություններում իշխանության հիմքը հազարավոր տարիներ խնամքով պատրաստվել է ամուսնությունից հետո կնոջ հնազանդության օրինակով: Քաղաքակրթական ավանդույթի դատողությունն այն է, որ կանայք «տղամարդկանց դաշտն են»: Նման ավանդույթը գործում է նաև հասարակության մեջ: Տղամարդը պետք է ինքն իրեն իշխանությանը ներկայացնի որպես կին. նրանց, ովքեր ապստամբում են և հրաժարվում են ենթարկվել, փորձում են պատրաստակամ դարձնել պատերազմների միջոցով:

Մեծ սխալ է իշխանության գործընթացը դիտել որպես անձի, կլանի, դասակարգի կամ ազգի հանկարծակի գործողություն: Միգուցե, կառավարությունները կարող են հանկարծակի ձևավորվել, բայց իշխանություններն և քաղաքական համակարգերը՝ որպես ինքնիշխանության մշակույթ (դաշտ, ավանդույթ), հիմնականում պատրաստվել են հարյուրավոր վայրի կայսրերի, կլիկաների և քաղաքակիրթ հասարակություններում բոլոր տեսակի գերիշխող ուժերի կողմից: Ինչպես կինը սպասում և ընդունում է իր ամուսնուն, կարծես դա իր ճակատագիրն է, հասարակությունները նույնպես կախվածություն ունեն իշխանությունից և ակնկալում են, որ սեփականատերը օգտագործելու է իրենց որպես՝ իր դաշտ, կամ էլ պարզապես արդեն դրան սովոր են: Իշխանությունը հասարակության մեջ գոյություն ունի՝ որպես գերակայության մշակույթ: Այս պահին իմաստալից է Բակունինի միտքը՝ «Ժողովրդավարը, ով ասում է, որ ինքը ամենան է, իշխանության քսանչորս ժամից հետո փչանում է»: Այն, ինչ ես չեմ կարող բացատրել, բայց երկար ժամանակ է փորձում եմ, հետևյալն է՝ հենց իշխանության հիմքն է այդ կոռուպցիայի, փչանալու պատճառը: Իշխանության աթոռը, որը բաղկացած է հազարամյա արյունահեղություններից ու չարաշահումներից (անսահմանափակ պատերազմներ և շահագործում), իհարկե, քսանչորս ժամվա ընթացքում հանկարծակի տապալում է իր վրա նստողին: Նա չի կարող փչացնել միայն մեկ պայմանով, եթե իրեն պաշտպանում է այնպես, կարծես երկրպագում է: Անսահմանափակ խարդախության, պատերազմի և շահագործման միջավայրում հաստատված իշխանությունը ավանդույթի, մշակույթի ու համակարգի առումով և՛ շատ արդյունավետ է, և՛ գրեթե կործանարար: Դրա ամենավառ օրինակը «իրական սոցիալիզմի» փորձն է:

Հասկանալի է, որ որևէ կասկած չի կարող լինել համակարգը ստեղծողների բարի մտադրությունների և նպատակների նկատմամբ հավատարմության վերաբերյալ: Այսպիսով, ինչպե՞ս իրական սոցիալիզմի հիմնադիրները կամովին հանձնվեցին կապիտալիզմին, որի դեմ այդքան պայքարում էին: Իմ կարծիքով, այս պատմական ողբերգության հիմնական պատճառն այն է, թե ինչպես են նրանք եկել իշխանության և դա օգտագործել: Սոցիալիզմի հիմնադիրները իշխանության եկան քաղաքակիրթ հասարակության մշակույթի վրա: Այսինքն՝ նրանք ոչ միայն չխուսափեցին արյունոտ և շահագործվող ժառանգության (պետական ավանդույթներով իշխանությանը սովոր հասարակություն) ավերակների վրա իշխանություն լինելուց, որին իրենք շատ էին պնդում, թե դեմ են, այլև ամբողջ սրտով գրկեցին դրան: Նրանք նույնիսկ չէին ուզում հասկանալ, որ իշխանություն կոչված զարմանահրաշ պոռնիկը չէր կարող տեր ունենալ, որին ինքը չկարողանա գայթակղել: Նրանք այս հարցի վերաբերյալ որոշ քննադատություններ (օրինակ՝ Կրոպոտկինի քննադատությունը Լենինին՝ արագորեն Սովետից պետական իշխանության անցնելու համար) պատեհապաշտություն էին համարում: Վալերշտայնը մոտեցավ ճշմարտությանը, երբ ասաց, որ Սովետը լուծարվել է կապիտալիստական աշխարհակարգի համակցված ազդեցության հետևանքով, և որ չուներ այս համակարգը հաղթահարելու կարողություն: Բայց դա հեռու է խնդրի էությունը շոշափելուց: Միշել Ֆուկոն, մյուս կողմից, ավելի մոտ է ճշմարտությանը, երբ մեկնաբանում է, որ խորհրդային համակարգը ինտեգրվել է կապիտալիստական համակարգին, քանի որ այն օգտագործում էր գիտելիք-ուժային տեխնիկան:

Նմանատիպ մեկնաբանությունները վավեր են նաև բազմաթիվ ազգային-ազատագրական, կոմունիստական և սոցիալ-դեմոկրատական նախաձեռնությունների համար՝ սկսած Փարիզի կոմունայից: Յուրաքանչյուր դաշտում արտադրվում են իրեն յուրահատուկ բույսեր: Ընդհանրապես ազատության, և հատկապես սոցիալիզմի բույսերը հազարավոր տարիների գիտելիքի և ուժի դաշտում չեն աճում: Սրա համար ազատության և սոցիալիզմի ակտիվիստները (և, իհարկե, տեսաբանները) պետք է նախ պատրաստեն իրենց դաշտերը, անընդհատ ախտորոշում և բուժում ունենան իշխանության դաշտի վարակիչ հիվանդությունների դեմ, և որ ամենակարևորն է՝ հեռու մնան իշխանության պես բույսերի տնկարանից (բոլոր տեսակի ինստիտուցիոնալացումներից, անհատականությունից), նրանք պետք է սեփական սածիլները (հրուստ ժողովրդավարական կազմավորումներ) տնկեն ու մշակեն: Հակառակ դեպքում, եթե անգամ քաղաքակրթության ողջ պատմության ընթացքում ասեն «Ես ազատություն եմ տնկել», չեն կարող չկրկնել հազարավոր օրինակներ, որոնք ապացուցում են, որ իրենք ոչնչով չեն տարբերվում նախկին իշխանական համակարգերից: Այստեղ, որպեսզի հիշեցնեմ դրա կապը կառուցվածքային սոցիոլոգիայի հետ, անհրաժեշտություն զգացի անդրադառնալու այն թեմային, որը համակողմանիորեն կմեկնաբանեմ իմ պաշտպանական ճառում՝ «Ազատության սոցիոլոգիա» վերնագրով:

է - Շատ կարևոր է նաև տեսանելի դարձնել քաղաքակրթության հասարակություններում ինստիտուցիոնալ գործունեության դերը, ինչպիսիք են կրոնը, գիտությունը, փիլիսոփայությունը, արվեստը և բարոյագիտությունը:

Պնդումներ կան, որոնց համաձայն սերտ կապ կա քաղաքակրթության և կրոնի, գիտության, փիլիսոփայության, արվեստի և բարոյականության զարգացման միջև: Սա ևս մեկնաբանությունների համար բաց դատողություն է: Կարծում եմ, որ մենք կոնկրետ դիտարկել ենք, թե ինչպես և ինչ նպատակով են կառուցվել կրոնը, գիտությունը, փիլիսոփայությունը և արվեստը, որոնք իրենց առաջին հոյակապ դրսևորումն ունեցան շումմերական քահանայական պետությունում: Մենք նաև նկատել ենք, որ այս տարածքներն իրենց բողբոջային ձևը ստացել են Տիգրիս-Եփրատ ավազանում ինստիտուցիոնալացված նեոլիթյան մշակույթից:

Սրբության հայեցակարգի հիմքում ընկած է մարդու սնուցման համար օգտագործվող մթերքներին արտասովոր արժեք տալը: Երբ մարդիկ առատ ու բազմազան սնունդ ունեին, այն գնահատում էին որպես աստվածային օրհնություն, որը նույնացնում էին իրենց սոցիալական ինքնության հետ և շնորհակալություն հայտնում: Այսօր, երբ փորձում ենք իմաստավորել կյանքը, որի իմաստը մինչ այժմ չենք կարողացել լիովին հասկանալ կախարդության և հրապուրանքի միջոցով, ամենահաճախ օգտագործվող հայեցակարգը աստվածությունն է՝ որպես որոշակի հիմնարար սկզբունք: Մենք չպետք է շփոթենք աստվածությունը Ալլահի հետ: Սեմական մշակութային միջավայրում կառուցված Ալլահ հասկացությունն այլ ու

առանձնահատուկ նշանակություն ունի: Աստվածային լինելը, որն արտահայտվում է ողջ մարդկային հասարակության համար կառուցողականության սկզբունքով, հասկացություն է, որը շատ բաց է մեկնաբանման համար: Այն դեռ պահպանում է այս հատկությունը: Պնդել, որ ընկալելու սահմանափակ կարողություններով մարդու նման էակը կարող է մեկնաբանել ողջ տիեզերքը, կնշանակի չափից դուրս մեծություն վերագրել մարդկանց: Այս առումով լավ մետաֆիզիկա է աստվածության հայեցակարգին վերագրել այն ամենը, ինչը հնարավոր չէ ընկալել շատ սահմանափակ տեղեկատվության և գիտելիքի կարողությամբ: Ես հավատում եմ, որ դրանում ոչ մի վնաս չկա: Հակառակ դեպքում, դա կլիներ մարդուն ընդունել որպես միակ աստված, և ես կարծում եմ, որ նման չափազանցությունը չի կարող լինել տիեզերքի իմաստը:

Շումմերական քահանաները իրենց ստեղծած աստծուն համարում էին բարոյական գործոն, որը պարզաբանում էր տալիս իրենց կառուցած հասարակություններին, այլ ոչ թե առաջադեմ մետաֆիզիկա: Քահանաները, հավանաբար, ցանկանում էին բարելավել հնազանդության զգացումը հասարակության մեջ «մեղքերը պատժող աստված» հասկացությամբ, որն առաջին անգամ օգտագործեցին: Աստված կամաց-կամաց «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՌՆՈՒՄ»: Բարեփոխումն այստեղ է: Բազմաթիվ ռելիեֆներում պարզ է դառնում, որ աստվածների և նրանց կերպարների բնակության վայրերը նպատակ ունեն ուժեղացնել պետական կառավարիչներին (հետևաբար՝ սոցիալական կառավարմանը): Երբ թագավորն ասում է, որ իր աստծո անունով գնում է պատերազմ, նա շատ լավ քո-

դարկում է սեփական շահերը: Բոլոր գծագրերում և գրավոր տեքստերում տիրակալը միշտ պատկերված է որպես իր աստծո սիրելի զավակ, իսկ նրա թշնամիները՝ որպես անիծյալ սատանաներ: Աստվածների մի խումբ կամաց-կամաց ձևավորվում է: Սա նոր վարչակազմի շատ հստակ արտացոլումն է:

Աստծո և տիրակալի ինքնությունը երբեք այնքան հստակ չի արտացոլվել ոչ մի հասարակության մեջ, որքան շումմերական հասարակությունում: Հարցը, թե ով ում դիմակն է, այլևս էական չէ: Որքան էլ աստված ազգայնացվի, նա կշարունակի իմաստավորվել որպես հասարակության բարձրագույն ստեղծագործ, ղեկավար և վերահսկիչ ուժ՝ ի դեմս իշխող դասակարգի: Որքան շատ դիմագծեր ձեռք բերի տիրակալը, այնքան նրա աստվածը իրենից ոչ պակաս հատկանիշներով կհագեցվի: Հասարակությունը որքան շատ առաքինությամբ կառավարվի, այնքան ավելի ապացուցված կհամարվի տիրակալի աստվածային կապը: Հասարակության կառավարվող հատվածի համար գնալով դժվար կլինի տարբերակել աստծուն և տիրակալին: Վատ մետաֆիզիկան կապված է այս զարգացումների հետ: Հաստատված աստվածությունը սկսում է վատ մետաֆիզիկա դառնալ: Այս փուլից հետո բոլոր քաղաքակիրթ հասարակությունները միշտ օգտագործելու են կրոնն ու աստծուն, որոնց մոգական ուժն իրենք են բացահայտել՝ լեգիտիմացնելու վարչակազմը: Թեև անցյալի սուրբ և բեղմնավոր արարիչ Աստվածը մնում է ճնշվածների և քշվածների մտքի ու զգացողության անկյուններում, պետություն դարձած աստվածն ու կրոնը բացահայտ դեր են խաղալու իրենց սիրելի կառավարվող

ծառաների միջոցով: Ուշագրավ կապ կա աստվածների թվի և հասարակության ձևի միջև: Բազմաստվածությունը աստծո ըմբռնումն է այն դարերում, երբ տիրում էր ցեղային հավասարությունը: Աստվածների թվաքանակի և չափերի կրճատումը սերտորեն կապված է վարչական արձանագրության հետ: Աստիճանաբար աճող գլխավոր աստվածը զարգացում է, որը համահունչ է տիրակալների շրջանում բարձր դիրքին: Հետաքրքիր կապեր կան անտեսանելի, անկերպար միաստվածական կրոնի և պետության ինստիտուցիոնալացման միջև, որոնք շատ իմաստալից են և բացահայտման համար պահանջում են հետազոտություն: Այս առումով աստվածաբանական ուսումնասիրությունը կարող է շատ արժեքավոր ներդրում ունենալ լուսավորվելու մեջ:

Մինչդեռ իշխանության մեջ աստծո տեղի նվազումը մի կողմից նշանակում է իշխողների դիմակազերծում, մյուս կողմից՝ կապված է նաև պարզաբանման հետ, թե ինչ է նշանակում պետությունը և ում շահերն է արտահայտում: Սա նշանակում է, որ կրոնն այլևս բավականաչափ ուժեղ օրինականացման գործիք չէ: Չնայած այս զարգացումներին՝ քաղաքակիրթ հասարակությունը, որը ցանկանում էր շարունակել իր գոյությունը, նույնքան օգտագործեց կրոնի օրինականացնող ազդեցությունը, որքան բռնակալությունը: Կրոնի ազգայնացումը և սեփականաշնորհումը ընթանում են քաղաքակիրթ հասարակության և հատկապես նրա վարչական զարգացմանը զուգահեռ: Այս իրավիճակը բացատրում է նաև կրոնների աղանդավորացումն ու հակամարտությունները: Հակամարտող քաղաքակրթությունները միևնույն ժամանակ

հակասական կրոններ և աղանդներ են: Հակամարտությունները մղվում են կրոնի և աղանդների անվան տակ՝ առաջին հերթին այդ հակամարտությունների մեջ ամբողջ հասարակությանը ներգրավելու համար: Քաղաքակրթական մեծ ու երկար պատերազմները միշտ էլ տարվել են մեծ կրոնների միջև բախման քողի տակ: Այն փաստը, որ մերձավորարևելյան քաղաքակրթության մեջ գերիշխող են իսլամի, քրիստոնեության և հուդայականության անվան տակ մղվող պատերազմները, բացահայտում է քաղաքակրթության կապը կրոնի հետ այնքանով, որ կարիք չկա այն ծածկելու: Այս բացությունը հասավ իր ամենաբարձր փուլին, երբ նշված կրոնները հռչակվեցին որպես պետական պաշտոնական գաղափարախոսություններ: Կրոնների կարևորությունը սկսեց նվազել այս փուլից հետո, ինչպես երևում է յուրաքանչյուր երևույթի մեջ, որն իր զարգացման գագաթնակետն է ապրել: Ընդդիմադիր աղանդավորությունը միշտ եղել է քաղաքակիրթ հասարակությունից դուրս մնացած մարգինալ հասարակությունների ըմբոստ վերաբերմունքի դրոշը: Այն նաև մասամբ արտացոլում է դասակարգային հակասությունները: Սակայն կապիտալիստական ազգ-պետության կառուցմամբ այդ աղանդները վերածվեցին ազգայնականության տեսակի, և այս անգամ այս հանդերձանքի տակ դարձյալ արյունալի պատերազմների դիմակ դարձան:

Թեև ավելի սահմանափակ է, քան կրոնը, փիլիսոփայությունը կարևոր տեղ ունի քաղաքակրթության պատմության մեջ: Իմաստաբանության զարգացումը և ճշմարտությունը հասկանալու կրոնական մեթոդի անբավարարությունը բացահայտեցին փիլիսոփայության անհրաժեշտությունը: Իմաստությունը, որն ունի կրոնի պես հին պատմություն, կարելի է համարել փիլիսոփայության սկիզբը: Դա իմաստուն աստվածաբանությունից տարբերվող է, որը ներկայացնում է մտածող մարդուն: Նրանց կարծիքների հետ խորհրդակցում են այնքան, որքան աստծո խոսնակները: Իմաստունները պետության ու քաղաքակրթության հետ հաշտ չեն համարվում: Նրանք ավելի շատ նվիրված են պաշտոնական հասարակությունից դուրս հասարակությանը: Նրանք նշանակալի դեր ունեն բարոյականության և գիտության զարգացման գործում: Թեև դա արտացոլված չէ գրավոր աղբյուրներում, բայց նեոլիթյան հասարակության մեջ մայր աստվածուհի կանայք և հիերարխիայի անկաշառ հատվածը մոտ են իմաստությանը: Դրա վառ հետքերը մենք գտնում ենք շումմերական հասարակությունում: Մարգարեական հայտնությունները լի են իմաստությամբ: Մերձավոր Արևելքի իմաստություն-փիլիսոփայության ավանդույթը պահանջում է հետազոտություն: Անկասկած է, որ փիլիսոփայությունը գոյություն է ունեցել հունական մշակույթից առաջ: Հույն փիլիսոփաների բախտավորությունն այն էր, որ նրանք ապրեցին քաղաքակրթության անցում դեպի հաջորդ մակարդակ՝ իրենց աշխարհագրական վայրերի հիասքանչ առանձնահատկություններով հանդերձ:

Ինչպես շումմերական քահանաները նոր պետության և հասարակության կառուցման հետ միասին իրականացրեցին կրոնի և աստծո կառուցումը, այնպես էլ հույն փիլիսոփաները դեր խաղացին նոր քաղաքակիրթ հասարակության կառուցման և ավելի բարձր մակարդակի վրա պահպանման գործում՝ միահյուսված կիսակրոնով և կի-

սափիլիսոփայությամբ: Աշխատանքը նույնն է՝ կոնցեպտուալ արվեստի կիրառում: Առաջինը նույն դերն է խաղում կրոնի կառուցման հետ, մյուսը՝ փիլիսոփայական հասկացությունների հետ: Դիմակավորված աստվածներին կսկսեն փոխարինել դիմակազերծ աստվածներն ու մերկ թագավորները: Սա կապ ունի փիլիսոփայության միջոցով մարդկային մտքի զարգացման հետ:

Փիլիսոփայական միտքը, որը սահմանափակ դեր է խաղացել հունական և հռոմեական հասարակության մեջ, մեծ հեղափոխություն է ապրելու եվրոպական կապիտալիստական հասարակության մեջ: Մենք կրոնների քառսի նման զարգացում կզգանք փիլիսոփայական ոլորտում: Քաղաքակրթության նոր փուլում ազգային ու դասակարգային շահերի համակարգված շեշտադրումն այս քառսի մեջ մեծ բաժին ունի: Երբ հակասությունները չէին լուծվում կրոնական պատերազմներով, փիլիսոփայությունն ավելի շատ անելիք ուներ: 1618-1649 թվականների պատերազմները վերջին կրոնական պատերազմներն էին: Նույն 17-րդ դարը նաև փիլիսոփայական հեղափոխության դար է: Փիլիսոփայությունը, որը պատասխանատու դեր էր խաղում հունական և հռոմեական հասարակության մեջ, դարձավ նոր քաղաքակրթական հասարակության գաղափարախոսության գերիշխող ձևը: Ստեղծվում են մեծ փիլիսոփայական դպրոցներ: Մի կողմից հայտարարվում է, որ «աստված մեռած է», մյուս կողմից՝ քողարկված թագավորները գլխատվում են: Կապիտալիստական պետությունների դարաշրջանը, որը ոչ այլ ինչ է, քան մերկ թագավորների դարաշրջան, սկսվում է նրանից, որ ազգ-պետությունն ինքն է դառնում աստված:

Նեոլիթյան հեղափոխությունը հանգեցնում է նաև արվեստի հեղափոխության: Պարզ քարանձավային գծանկարներից հետո ընկած ժամանակահատվածը լի է մայրաստվածուհու կերպարներով: Արվեստի առաջին առարկաները հենց այս կերպարներն էին: Այն համարվում է քանդակագործության սկիզբ: Քաղաքակիրթ հասարակության հետ մեկտեղ միահյուսվում են աստվածների և տիրակալների կերպարները: Աճող դասակարգային կազմավորումը և վարչական իշխանությունը հանգեցնում են արվեստի պետականացմանը նույնքան, որքան կրոնը: Հատկապես եգիպտական, չինական և հնդկական արվեստում ուժի ցուցադրության մեջ մրցում են աստվածները, թագավորներն ու քահանաները: Հոյակապ արձաններն ու ռելիեֆները նման են գործիքների, որոնք հնարավորություն են տալիս ներկայացնել այդ ուժերը: Ճարտարապետությունը նույն ճանապարհով է գնում: Տաճարները և տիրակալների տները ճարտարապետության կիրառական ոլորտներն են: Կառուցվում են հսկա չափերի տաճարներ ու պալատներ, մեծ դամբարաններ: Այս բոլորը սարսափելի ցուցիչներ են այն բանի, թե քաղաքակիրթ հասարակության մեջ մարդկային չարաշահումներն ու ճնշումներն ինչ չափերի են հասել: Հարյուր հազարավոր մարդկային կյանքեր կորսվեցին ընդամենը մեկ բուրգի, մեկ տաճարի համար: Առևտրի ուժեղացմամբ պայմանավորված՝ արվեստում արտացոլված կարևոր դեմքեր են վաճառականները: Արվեստի գործերում կարելի է տեսնել, որ վաճառականները թագավորների պես հզոր են դարձել:

Հունական և հռոմեական քաղաքակրթության փուլով հեղափոխություն տեղի ունեցավ քաղաքի ճարտարապետության մեջ: Քաղաքները, որոնք նախկինում բաղկացած էին ամրոցի ներքին և արտաքին միջավայրից, ենթարկվում են կառուցվածքային վերափոխումների, որոնք ապշեցուցիչ են նույնիսկ այսօր: Աշխատուժի հիմքում ընկած ծախսը հասարակության լայնածավալ ստրկացումն է: Ստրկական աշխատանքի մեծ մասը սպառվում է քաղաքային ճարտարապետության մեջ: Ստրկության ամենավառ ցուցիչներն են՝ մեծ դամբարանները, տաճարները, ամրոցներն ու քաղաքները: Այս ցուցիչները նաև բացահայտում են, թե ինչպես է քաղաքակիրթ հասարակությունը կառուցվել արյունով ու քրտինքով: Հունական և հռոմեական հասարակությունները քաղաքակրթության նոր փուլ են կազմում քանդակագործության մեջ: Ցանկություն կար մեծությունն ու գեղեցկությունը հավերժացնել քանդակագործության մեջ:

Հռոմեական և հունական արվեստն ու մշակույթը, որոնք վերածնվել են Վերածննդի ժամանակ, եվրոպական քաղաքակրթության ոգեշնչումն են: Ֆեոդալական Եվրոպան, որտեղ գերիշխում է կրոնը, նոր մտավոր պատուհան ձեռք կբերեր Վերածննդի այս մշակույթով, որը միայն մասամբ էր բաց ազատ մտքի համար: Արվեստը նոր քաղաքակիրթ դասակարգի՝ բուրժուազիայի հետ ձեռք կբերի միայն թվային արդյունավետություն և երբեք չի վերականգնի իր նախկին փառքը: Արվեստն իր ողջ քաղաքային ճարտարապետությամբ, երաժշտությամբ, գեղանկարչությամբ և քանդակով արագորեն կայլասերվի՝ ծառայեցվելով կապիտալիզմին, կկորցնի իր սրբությունը, անանուն արվեստի արդյունաբերության անվան տակ կդառնա սպառման ապրանք և ինչ-որ իմաստով կհայտարարի իր վերացման մասին: Գրականության և երաժշտության հիմնական աղբյուրը կարելի է գտնել նաև նեոլիթյան հեղափոխության ինստիտուցիոնալացման ժամանակաշրջանում: Վավերական երաժշտությունը, կարծես, արձագանքում է այս ժամանակաշրջանին: Հովիվների ծխամորճները, թմբուկներն ու զուռնան այսօր էլ վառ են պահում այս շրջանի տխրությունն ու ոգևորությունը: Այս գործիքները նման են երաժշտական գործիքների նախնիներին: Շումմերական հասարակության մեջ ձևն ու բովանդակությունը ավելի են զարգանում: Թագավորական պալատներում ու տաճարներում անփոխարինելի տեղ ունեին երաժիշտներն ու գործիքավորողները:

Բանավոր էպոսները մեծ պերճախոսությամբ են արտահայտում առաջին տոհմային ինքնության սրբությունը և ազատ կյանքի տենչը: Դրանք գրավոր էպոսների հիմնական աղբյուրներն են: Գիլգամեշի էպոսը պատմության մեջ առաջին գրավոր տեքստն է: Գուցե, դա գրականության և նույնիսկ սուրբ տեքստերի հիմնական աղբյուրն է: Շատ շումմերական գրական և կրոնական տեքստեր ոչ միայն ոգեշնչել են հունական գրականությանը և աստվածաբանական պատմություններին, այլև հունական էպոսները, հատկապես այս էպոսների բոլոր առասպելական գեղարվեստական գրականությունը, Անատոլիայում անցած շումմերական էպոսների փոխակերպված տարբերակներն են: Գրական-երաժշտական մշակույթը, որն այստեղ որոշակի վերափոխման միջով է անցել, կկորցնի իր սկզբնական սրբությունն ու գրավչությունը, ինչպես

մյուս արվեստները՝ որպես սպառողական պարզ ապրանք, կկանգնի սպառվելու առաջ՝ եվրոպական բուրժուական հասարակության մեջ ենթարկվելով վերջնական վերանայման, դառնալով փոփ և վերափոխվելով մշակութային արդյունաբերության:

Բարոյականության մեջ «լավի» և «վատի» տարբերությունը կապված է քաղաքակիրթ հասարակության հիմնարար սոցիալական բաժանման հետ: Դա բացատրում է շահագրգիռ խմբերի միջև հեռավորությունը: Ընդհանուր առմամբ, այն արտահայտում է «լավ և վատ հասարակության» տարբերությունը: Դրա էությունը սոցիալիզմն է: Հասարակությանը հավատարմությունը վկայում է բարի բարոյականության մասին, մինչդեռ հասարակությունից հեռավորությունը և նրա արժեքների հետ բախումը ցույց է տալիս չարիքը: Հասարակական կազմակերպությունն ի սկզբանե բարոյական բնույթ ունի: Այսինքն՝ հասարակությունը կարգավորող կանոնները համարվում են սուրբ և պահպանվում են կամավոր հիմունքներով: Հասարակության «առաջին սահմանադրությունը» բարոյական կանոններն են: Հասարակության հիմքում բարոյականությունն է: Իր բարոյական հիմքը կորցրած հասարակությունը չի կարող խուսափել կազմալուծումից: Սոցիալական կանոնները, ըստ էության, նախատեսում են հավատարիմ լինել հասարակության ինքնությանը, աստվածային ներկայությանը և լեզվին, հավատարմություն այլ անդամներին, կարծես նրանք մեկ հոգի լինեն և անհրաժեշտության դեպքում մահվան պատրաստ լինեն հանուն միմյանց: Առանց այն էլ հասարակությունից դուրս շպրտվելն արդեն հավասարազոր է մահվան: Իրավունքը քաղաքակիրթ հասարակության կարևոր գյուտերից է: Դա միանշանակ օրակարգում է սոցիալական պառակտման, դասակարգման և պետականության ձևավորման հետ միասին, հիմնված է բարոյականության վրա: Այնուամենայնիվ, ինչպես սրբությամբ բեռնված կրոնների ազգայնացումը հանգեցրեց նրանց պետական կրոն դառնալուն, բարոյականության ազգայնացումը նույնպես հանգեցրեց իրավունքի: Օրենքն աբստահայտում է նոր պետական հասարակության կազմակերպչական սկզբունքները և իշխող դասի շահերը, գույքը, ունեցվածքը և անվտանգությունը, ինչը նշանակում է նոր հասարակության «սահմանադրությունը»:

Իրավունքի առաջին օրինակին հանդիպում ենք շումմերական հասարակությանը պատկանող գրավոր տեքստերում՝ Համուրաբիի օրենսգրքից շատ առաջ: Ուստի իրավունքը ծնվել է ոչ թե Հռոմում և Աթենքում, այլ շումմերական քաղաքային պետությունում: Աթենքի և հռոմեական ժամանակաշրջաններում ընդգծվել է իրավունքի կապը հանրապետության և ժողովրդավարության հետ: Այն դառնում է ավելի ֆորմալ ու գրավոր կերպով կանոնակարգված: Հանրապետության և ժողովրդավարության ծնունդը արիստոկրատիայի (ստրկատիրական հասարակության տերեր, էլիտաներ) հավաքական կառավարման ձգտման արդյունքն է, որի նպատակն է վերջ դնել թագավորական և բռնապետական դիկտատուրաներին (անհատների կամայական կառավարում): Թեև շումմերական հասարակության մեջ մենք հանդիպում ենք այս կառավարման ոճի հետքերին, մենք դրա առաջին գրավոր պաշտոնական արտահայտությունը գտնում ենք քաղա-

քաղաքության Աթենքի և հռոմեական փուլերում: Հանրապետության և ժողովրդավարության ծնունդը կապված է կառավարման մեջ առկա դժվարությունների, իրարանցման ու քաոսի հաղթահարման և կարգավորման հետ: Եվրոպայում բուրժուական քաղաքակրթության մեջ սահմանադրականությունը, հանրապետականությունը և ժողովրդավարությունը լինելու են օրենսդրության ամենաքննարկվող հարցերից: Վերջին գյուտը կլինի «մարդու իրավունքների օրենքը». սա սոցիալական մակարդակում ներկայացվածության ընդլայնման և անհատականության զարգացման նշան է:

Գիտական զարգացումը պետք է դիտարկել որպես այս հիմնական կատեգորիաների մաս: Գիտությունը գիտակցության ձև է: Գիտության միակ արտոնությունն այն է, որ այն արտահայտում է գիտելիքի այն մասը, որը ստուգվում է փորձով: Այն պարունակում է ոչ թե ամբողջ տեղեկատվությունը, այլ տեղեկատվություն, որն ունի հատուկ նշանակություն և հաստատվում է փորձով: Լայն իմաստով չկա գիտելիք, որն էմպիրիկ չլինի: Քաղաքակիրթ հասարակության մեջ զարգանում են էմպիրիկ և ոչ էմպիրիկ, դրական և մետաֆիզիկական, տեսական և գործնական գիտելիքների տարբերությունները: Այս իրավիճակը կախված է գիտելիքի և ուժի փոխհարաբերությունից: Պատմությունը գիտական գիտելիքների առումով ճանաչում է երեք մեծ հեղափոխություն. Նեոլիթյան ինստիտուցիոնալացումը (Թել Հալաֆի ժամանակաշրջան մ.թ.ա. 6000-4000 թթ.), և շումմերական հասարակության հետ կապված ներդրումներն առաջին շրջանն են: Արևմտյան Անատոլիայի և Աթենքի հասարակությունը երկրորդ

շրջանն է (մ.թ.ա. 600-300 թթ.), արևմտաեվրոպական շրջանը (1600 թվական և դրանից հետո) երրորդ շրջանն է: Գիտական գիտելիքների կապը քաղաքակրթության փուլերի հետ պարզ է. յուրաքանչյուր պատմական փուլ զարգանում է իր գիտական հեղափոխությամբ: Այնուամենայնիվ, գիտությունը պետք է դիտվի կրոնի, փիլիսոփայության, գրականության, արվեստի և իրավունքի հետ սերտ կապերի մեջ: Դժվար է տարբերակել գիտությունը և փիլիսոփայությունը: Երկուսն էլ կարելի է դիտարկել որպես նույն իրադարձության տեսական և գործնական կողմեր:

Քաղաքակիրթ հասարակության և այս իմաստային կատեգորիաների միջև հաստատվելիք կապը կարող է արտահայտվել իմաստ-իշխանություն երկընտրանքի մեջ: Իմաստային այս մեծ կատեգորիաները և դրանց գործնական արտահայտությունները, որոնք բխում են մարդկային հասարակության պրակտիկայից և դրա առաջացման մտածելակերպից, յուրացվում և աղավաղվում են քաղաքակիրթ հասարակության պետականացված մասի կողմից: Դրանց կազմակերպումը սեփական սոցիալական պարադիգմայի և գործնական ուժի աղբյուրների մեջ առաջին խնդիրներից մեկն է, որը ձեռնարկվել է պետական սեփականություն հանդիսացող հատվածի կողմից: Յուրաքանչյուր փուլում քաղաքակրթությունը կազմակերպվում է նոր պարադիգմի հիման վրա (աշխարհի, նրա համակարգի մասին խորը արմատավորված հայացք): Թեև այս կանոնակարգերը չափազանց դրական են (տեսանելի փաստեր) նրանց համար, ովքեր կառավարում են, դրանք նշանակում են հսկայական խավարում և ՇՂԹԱՅԱԿԱՆԱՑՈՒՄ նրանց համար, ովքեր կառավար-

վում են: Բաց բռնակալ կառավարությունների համեմատ՝ նոր պարադիգմներով ապահովված լեգիտիմությունը միշտ էլ էական է եղել կառավարությունների համար: Իրենց ողջ կշիռն ու շահերը այնպես ներկայացնելը, կարծես դրանք ամբողջ հասարակության շահերն ու նույնիսկ ճակատագիրն են, կառավարությունների հիմնական զբաղմունքն է: Այնքանով, որքանով նրանք հաջողակ են դրանում, նրանք կարող են երկարացնել քաղաքակիրթ համարվող իրենց հասարակությունների կյանքը: Ցանկացած քաղաքակրթություն, որը կորցնում է իր հիմնարար լեգիտիմությունը, չի կարող խուսափել փլուզումից, նույնիսկ եթե այն ժամանակին եղել է համաշխարհային հսկա քաղաքակրթություն: Օրինակ, հռոմեական քաղաքակրթության փլուզման հիմնական պատճառն այն էր, որ այն ներսից հարված ստացավ քրիստոնեության, իսկ դրսից՝ գաղթած ցեղերի կողմից և կորցրեց իր հեղինակությունն ու գրավչությունը: Երբ մարդկային համայնքները միավորվեցին նոր կրոնական համայնքների հետ՝ վերածվելով ցեղային համայնքների, հռոմեական ահռելի իշխանությունը կորցրեց իր օրինականությունը և ցրվեց:

Այս սոցիալական ինստիտուտների ուսումնասիրությունը, որոնք մենք կարող ենք որոշակի իմաստով սահմանել որպես մետաֆիզիկական կատեգորիաներ, ինքնուրույն հանգեցնում է իմաստի աղավաղման: Անկասկած, մետաֆիզիկական իրողությունները, որոնք համարվում են չափազանց կոպիտ և խիստ քննադատության են ենթարկվել մատերիալիստների կողմից, ինքնուրույն չեն կարող տարբերակվել որպես լավ և վատ: Քանի որ մարդկային մենթալիտետը և հասարակությունը չեն կարող

առանց մետաֆիզիկայի, ավելի իմաստալից են մեթոդաբանական գնահատումները լավ և վատ մետաֆիզիկայի տեսքով, որոնք խիստ փոխկապակցված են միմյանց և հասարակության հետ:

Մեծ քաղաքակրթությունները հիմնականում կրոնական քաղաքակրթություններ են: Երբ կրոնը կորցնում է իր կարողությունն ապահովելու լեգիտիմությունը (դա տեղի է ունենում փիլիսոփայության, գիտության կամ նոր կրոնի միջոցով), այդ քաղաքակրթությունները կնքում են իրենց մահկանացուն: Այս բոլոր փաստերը ցույց են տալիս իմաստային հիմնական կատեգորիաների (կրոն, փիլիսոփայություն, արվեստ, իրավունք, գիտություն, բարոյականություն) կենսական նշանակությունը քաղաքակիրթ հասարակության համար (դասակարգերով, քաղաքներով և պետություններով հասարակություն): Մինչ կառուցվածքային սոցիոլոգիան պատասխանատու է քաղաքակիրթ հասարակության մեջ այս կատեգորիաների լուսաբանման համար, ազատության սոցիոլոգիան մեկնաբանում է, թե ինչպես կարող են այդ կատեգորիաները ինտեգրվել ազատ և ժողովրդավարական սոցիալական կյանքին՝ հիմնվելով նրա կողմից մշակվող քննադատության վրա: Այս հարցը համակողմանիորեն կգնահատվի համապատասխան բաժնում:

զ - Քաղաքակիրթ հասարակության մեջ տնտեսական մեկնաբանություններն ինչպես պատմությունը բարդացնելու, այնպես էլ խեղաթյուրելու ամենահարմար թեմաներից են: Կապիտալիստական քաղաքակրթության արժանիքներից մեկն այն է, որ տնտեսությունը տեսական և գործնական հետազոտության առարկա է: Այն ուսումնա-

սիրում է սոցիալական իրականության «նյութը»: Կապիտալիստական քաղաքակրթական համակարգը, որն իրեն պատմականացնում է որպես նյութական քաղաքակրթություն (Ֆերնան Բրոդելի ճիշտ և արդարացված մեկնաբանությունը), կարող ենք անվանել նաև որպես տնտեսական համակարգ: Ինչպես որ բոլոր նախկին քաղաքակրթական համակարգերը «մետաֆիզիկական համակարգեր» անվանելը վնասակար չէ, նույնպես կարող է հիմնավոր լինել կապիտալիզմը «մատերիալիստական համակարգ» անվանելը:

Թեև նեոլիթյան հասարակությունը (ներառյալ առաջին մարդկային տեսակների հասարակությունները) և բոլոր քաղաքակիրթ հասարակությունները (նախակապիտալիզմը) խստորեն մեծ արժեք են տալիս սրբությանը, իմաստին, գրավչությանը և մետաֆիզիկային որպես ամբողջություն և այլ կերպ չեն մեկնաբանում կյանքը, ուշագրավ զարգացում է, որ կապիտալիստական քաղաքակրթությունն իրեն ներկայացնում է որպես «անդիմակ աստվածների և մերկ թագավորների» ռեժիմ: Այս իրավիճակը պահանջում է իմաստային խորությամբ և համապարփակ մեկնաբանություններ: Խեղաթյուրելու, մոլորեցնելու և ձուլելու ուժն ամենաբարձր սոցիալական համակարգն է:

Իմ անձնական կարծիքով, կապիտալիզմի էությունը կայանում է նրանում, որ դա հասարակության այն ձևն է, որն ունի շորթման և զողության ամենաբարձր չափը՝ «էկոնոմիկա» անվան տակ կազմակերպված գործունեության մեջ: Տնտեսություն բառի հունարեն իմաստը «ընտանեկան օրենք» է: Դա վերաբերում է ընտանիքի ֆինանսական կանոններին, միջավայրին և այլ նյութերին:

Եթե հայեցակարգն ավելի ընդհանրացնենք, ապա այն կարելի է արտահայտել որպես քաղաքակիրթ հասարակության փոքր համայնքների «կեցության կանոններ»: Դա ամենաքիչ ազգայնացված և սեփականաշնորհված սոցիալական իրականությունն է, սոցիալական կոլեկտիվիզմի ամենահիմնական հյուսվածքն է, որի սեփականաշնորհումն ու ազգայնացումը անհնար է պատկերացնել: Տնտեսության սեփականաշնորհում կամ ազգայնացում նշանակում է ոչնչացնել հիմնական սոցիալական հյուսվածքը և հասարակությանը զրկել կյանքի ամենակարևոր կանոններից: Այդ իսկ պատճառով ոչ մի հասարակություն այնքան չի համարձակվել և չի մտածել սեփականաշնորհումն ու ազգայնացումը դարձնել հասարակության հիմնական հատկանիշ, որքան կապիտալիզմը: Անկասկած, քաղաքակրթական հասարակության մեջ, ինչպես պետականացվել են բոլոր սոցիալական ոլորտները, այնպես էլ տնտեսությունը, որը նրա ամենատարրական հյուսվածքն է, դարձել է թե՛ մասնավոր, թե՛ պետական սեփականության առարկա: Բայց ոչ մի հասարակություն այնքան պաշտոնապես և բացահայտ մասնավոր և պետական սեփականությունը որպես համակարգ չի հայտարարել, որքան կապիտալիզմը:

Այս կետը շատ կարևոր է. տնտեսության սեփականաշնորհումն ու ազգայնացումը շատ վաղ մեկնաբանվել է որպես յուրացում և զողություն: Կարլ Մարքսը, ով այս հարցը դնում է ավելի «գիտական» արտահայտությամբ, ասում է, որ աշխատանքային հավելյալ արժեքը զողացվում է որպես շահույթ: Թեման ավելի խորը մեկնաբանություն է պահանջում: Ըստ իս՝ տնտեսությունը մասնա-

վոր և պետական սեփականություն դարձնելը կարելի է համարել հավելյալ արժեքից և նախկինում հավելյալ արտադրանքից դուրս յուրացում և գողություն: Տնտեսության՝ որպես հասարակության հիմնական կառուցվածքի, ներառյալ՝ մասնավոր և պետական, յուրացման բոլոր ձևերը անբարոյական են: Այն վերաբերում է շորթմանը և գողությանը: Ինչպես մարդու սիրտը կամ որևէ այլ օրգան սեփականաշնորհելն ու պետականացնելն է անիմաստ կամ շատ վնասակար, նույնը տնտեսության դեպքում է: Հուսով եմ, որ այս հարցին ավելի խորությամբ կանդրադառնամ իմ պաշտպանական ճառի «Կապիտալիստական քաղաքակրթություն» բաժնում:

Նկատելի է, որ ապրանքայնացումը քաղաքակիրթ հասարակության մեջ զարգացել է՝ որպես շատ կարևոր երևույթ: Այլ կերպ ասած՝ շատ սերտ հարաբերություն կա ապրանքայնացման և քաղաքակիրթ հասարակության (մասնավոր սեփականություն ունեցող հասարակություն, դասակարգեր, քաղաքներ և պետություններ) միջև: Ապրանքը և ապրանքայնացումը հասարակության և քաղաքակրթության հիմնական կատեգորիաներն են: Այսպիսով, ապրանքի սահմանումը շատ կարևոր է: Կարելի է ասել, որ այն առարկան, որը պարզապես բավարարում է մարդու կարիքը, դառնում է ապրանք, եթե այն ձեռք է բերում ավելի փոխանակային արժեք (առևտրային և վաճառական արժեք), քան օգտագործումը (օգուտ, կարիքի ուղղակի բավարարում): Հասարակությանը չափազանց երկար ժամանակ օտար է եղել արժեքի փոխանակումը: Այն չի էլ մտածել դրա մասին և դա ամոթալի է համարել: Նա արժեքավոր առարկա է նվիրում այն համայնքին կամ անհատներին, որոնց արժեքավոր է համարում: Նվերը «փոխանակմամբ» փոխարինելը քաղաքակրթության ամբողջական հորինվածքը կամ խաբեբայությունն է: Նախաքաղաքակիրթ կամ ոչ քաղաքակիրթ հասարակության համար փոխանակումը ամոթալի է, և դրանից պետք է խուսափել, եթե դրա խիստ անհրաժեշտությունը չկա: Հասարակությունը խորը փորձով գիտի, որ, եթե օգտագործման օբյեկտը՝ որպես իր ամենահիմնական կառուցվածք, դուրս գա տնտեսական ինստիտուտից և դառնա փոխանակման առարկա, այն կարող է հանգեցնել բոլոր տեսակի անախորժությունների: Հետևաբար, այն շատ զգայուն է փոխանակումների նկատմամբ:

Ապրանքի փոխանակման արժեքի հետ առևտուրն ու առևտրականները դարձել են քաղաքակրթության շատ կարևոր կատեգորիա: Հակիրճ ասեմ, որ ես ապրանքը չեմ մեկնաբանում այնպես, ինչպես դա արեց Կարլ Մարքսը: Այլ կերպ ասած՝ ես համարում եմ, որ պնդումը, թե ապրանքի փոխանակային արժեքը կարող է չափվել բանվորի աշխատանքով, էական խնդիրներ ու թերություններ առաջացնող հայեցակարգային գործընթացի սկիզբ է: Համեմատության համար ասեմ, որ սպանդանոցում կտորկտոր անասուններին վաճառքի դնելը նշանակում է, որ ամբողջ մարդկային հասարակությունը տուժում է: Սոցիալական չարիքի հիմքը շահն է, շահի հիմքը՝ առևտուրը, իսկ առևտրի հիմքը՝ ապրանքը: Առևտուրը սերտ կապ ունի նաև էկոլոգիական ոչնչացման հետ: Այն, որ տնտեսությունը դադարում է լինել սոցիալական հյուսվածք, բնությունից արմատապես կտրվելու սկիզբն է: Որովհետև նյութական արժեքների և կենդանի արժեքների միաս-

նությունը ենթակա է արմատական տարբերակման: Որոշակի իմաստով վատ մետաֆիզիկայի սերմեր են ցանվում: Նյութն անհոգի և ոգին անբովանդակ դարձնելու եղանակով ստեղծվում է մտքի պատմության մեջ ամենասարսափելի երկընտրանքը: Կեղծ տարբերակումներն ու բանավեճերը մատերիալիզմի և սպիրիտուալիզմի տեսքով վերացնում են էկոլոգիական և ազատ կյանքը քաղաքակրթության ողջ պատմության ընթացքում: Անորոշ սպիրիտուալիզմը՝ մեռած նյութի և տիեզերքի իր ըմբռնմամբ, բառացիորեն ներխուժում և գաղութացնում է մարդու միտքը:

Կցանկանայի իմ կասկածը հայտնել ևս մեկ կետի վերաբերյալ. ես կասկածում եմ, որ սոցիալական արժեքները (այդ թվում՝ ապրանքները, ի դեպ) կարող են չափվել: Ոչ միայն կենդանի աշխատանքի, այլև անհաշվելի աշխատանքի արդյունք հանդիսացող իրը մեկ անձի աշխատանքային արժեք համարելն ինքնին սխալ է և արժեքների յուրացման ու գողության համար ճանապարհ հարթող մոտեցում է: Պատճառն ակնհայտ է: Ինչպե՞ս է չափվելու անթիվ ջանքերի վարձատրությունը: Ավելին, ինչպե՞ս է չափվելու այն մոր և ընտանիքի աշխատանքը, որը ծնում և մեծացնում է աշխատավորին, որի արժեքը երբեք չի չափվում: Ինչպե՞ս է չափվելու ողջ հասարակության աշխատանքը, որում իրականացվում է արժեք կոչվող օբյեկտը: Մենք կարող ենք դեռ երկար թվարկել այս հարցերը: Ուստի այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են փոխանակային արժեք, հավելյալ արժեք, աշխատանքային արժեք, տոկոս, շահույթ, ռենտա, համարժեք են գողությանը (պաշտոնական և պետական իշխանության միջոցով):

Փոփոխության համար այլ միջոցներ գտնելը կամ նվերների ոճի նոր ձևեր մշակելը կարող է իմաստ ունենալ: Հետագայում այս հարցերի շուրջ կցանկանայի ծավալվել արդիականության և ազատ կյանքի մասին բաժնում:

Նույնիսկ հունական մշակույթում առևտուրն ամենամերժված զբաղմունքն էր: Հույները տեղյակ էին առևտրի և գողության կապի մասին: Վաճառականը հռոմեական հասարակության մեջ այնքան էլ պատվավոր տեղ չուներ: Ապրանքափոխանակումը վավեր էր միայն շատ սահմանափակ իրերի համար: Հոգ էր տարվում հասարակության մեջ ապրանքայնացման մակարդակը մշտապես ցածր պահելու համար: Ես խոսում եմ նեոլիթյան սոցիալական բարոյականության մասին: Նույնիսկ քաղաքակիրթ հասարակությունները թույլ չէին տա, որ կապիտալիզմը ծաղկի և զարգանա, թեև այն որոշ կենտրոններում միջավայր էր գտել, մինչև գերիշխող համակարգ դառնալը: Նրանք դա միշտ մարգինալ մակարդակի վրա են պահել: Շատ յուրահատուկ պայմանների պատճառով էր, որ այն 16-րդ դարում իր գերիշխանությունը գտավ ներկայիս Նիդերլանդներում և Անգլիայում: Միգուցե, կապիտալիստական համակարգն անհրաժեշտ էր Հոլանդիա և Անգլիա դառնալու համար: Եվ այդպես էլ եղավ: Չորս հարյուր տարվա ընթացքում ամբողջ աշխարհը ենթարկվել է համակարգի ընդլայնման: Քաղաքակրթության այս շրջանը առանձին բաժիններով կմեկնաբանենք որպես արդիականություն:

Այս ներածությունը, որը քաղաքակրթության շատ կոպիտ և համառոտ նկարագրություն է, նպատակ ունի ամուր հիմքերի վրա դնել մեր պատմական և սոցիոլոգիա-

կան գիտելիքները: Արտասովոր տաղանդի գործ է մի հարվածով հասկանալի դարձնել այն հարցերը, որոնք ամենակարևոր փիլիսոփաներն ու պատմաբանները չեն կարողացել լուծել ողջ կյանքի ընթացքում: Մենք այդ պնդումը չունենք: Բայց՝ որպես ազատ կյանքի նկատմամբ մեր հարգանքի պահանջ, պատմական-սոցիոլոգիական իմաստաբանական և մեկնաբանական ուժ ունենալը պետք է առաջնահերթություն լինի յուրաքանչյուրի համար, ով իր առաջ սոցիալական լուրջ պարտականություններ է դնում:

Իմանալով, թե ինչպես 150 տարվա «իրական սոցիալիզմ»ը, որը կրեց ծանր ողբերգություններ, և տասնյակ ազգային-ազատագրական հեղափոխություններ և սոցիալ-դեմոկրատական շարժումներ հալվեցին համաշխարհային ֆինանսական կապիտալի սառցե հաշվարկների մեջ՝ քաղաքակրթությունը և մասնավորապես կապիտալիստական քաղաքակրթությունը մեկնաբանելու մեր ուժը պետք է ինտեգրենք ազատության սոցիոլոգիայի հետ, որի թեման ազատ կյանքն է, որպեսզի ազատության մեծ դատերի համար չխաբվենք և չխաբենք:

3 - ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այսօր աշխարհում գերիշխող քաղաքակրթության առանցքի, դրա առաջացման վայրի և ժամանակի մասին գիտական քննարկումները հակված են համաձայնության զալ Վերին և Ներքին Տիգրիս-Եփրատ ավազանների վերաբերյալ: Գրքի վերջին երկու գլուխները, որոնք հիմնականում լուսաբանում ենք, կիսում են այս գնահատակա-

նը: Մեր մեկնաբանությունները ցույց տվեցին, որ քաղաքակրթության հիմնական ձևավորման վայրը Վերին Տիգրիս-Եփրատ ավազանի ստորոտն էր: Քաղաքակիրթ հասարակության հիմքը դրվեց այն ժամանակ, երբ շումմերական քահանաները ձևավորեցին միջուկը և տնկեցին առաջին սածիլը: Չպետք է մոռանալ, որ այս բովանդակալից զարգացումը, որը մենք ամփոփել ենք մեկ նախադասության մեջ, հազարավոր տարիների փորձարկումների արդյունքում է արմատ տվել և մշտական դարձել գործնականում:

Պոզիտիվ սոցիոլոգիան (ոչ թե մեր սահմանած քննադատական դրական սոցիոլոգիան, այլ Է. Դյուրկհեյմի, Ա. Կոնտի, Կ. Մարքսի սոցիոլոգիան) իրեն լիովին ազատ է զգում ժամանակի և տարածության չափումից: Նրա նշած իրադարձություններն ու փաստերը տեղ ու ամսաթիվ չունեն: Այն պնդում է, որ զբաղվում է այսպես կոչված էմպիրիկ և փաստացի գիտությամբ: Որքան անժամանակ ու անտեղանք է այն վերլուծում, այնքան կարծում է, որ գիտական է գործում: Այն ամբողջ սրտով ընդունում է այս մեթոդը: Իրականում այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ արդիականությունը ներկայանում է որպես հավերժական և անսահման՝ ժամանակի և տարածության մեջ: Այդպիսի վերաբերմունք ու միտում ունի ողջ եվրոպակենտրոն գիտությունն ու փիլիսոփայությունը: Ճիշտ այնպես, ինչպես Աստված ազատ է ժամանակից և տարածությունից, այնպես էլ այս ժամանակակից քահանաները (քանի որ նրանք կառուցում են եվրոպական քաղաքակրթության գաղափարախոսությունը) վստահ և հանգիստ են իրենց գիտության անսահմանության և անժամկե-

տության վերաբերյալ: Որքան շատ են նրանք փախչում ժամանակի և տարածության ճնշումից, այնքան մտածում են, որ փրկում են գիտական պաշտոնը: Սա սխալ է, որի մեջ հաճախ են ընկնում բոլոր ժամանակաշրջանների պարադիգմիստները: Մենք շատ լավ գիտենք, որ չկա մի երևույթ, իրադարձություն, հաստատություն, գործողություն, անհատականություն կամ հասարակություն, որը չկրի ժամանակի և վայրի ազդեցությունը: Ժամանակի և տարածության չափման վրա հիմնված մեթոդի ընդունումը մեծացնում է մեկնաբանության իմաստային ուժը: Հասարակական գիտությունների ոլորտում պատմությունը «հիմա» է, իսկ «հիմա»-ն՝ պատմություն: Երկուսի միջև տարբերությունը պակաս առարկայական է և ավելի ձևական: Առանց Ֆերնան Բրոդել կարդալու էլ, ես հասկացել էի, որ չենք կարող իմաստալից սոցիոլոգիա հաստատել, հատկապես առանց «տևողություն» հասկացության: Նույնը վերաբերում է տարածությանը: Տարածությունը նույնպես համարում եմ մեթոդի անփոխարինելի տարր: Իմ պաշտպանական ճառերը, թեև սիրողական են, բայց ցույց են տալիս այս հասկացողության ուժեղ կիրառումը: Նույն մոտեցման հետքեր հնարավոր է տեսնել իմ բոլոր վերլուծություններում: Այդ դեպքում ինչո՞ւ են եվրոպացի գիտնականները, որոնք շատ զգայուն են մեթոդի նկատմամբ, այդքան անտեղյակ տարածության և ժամանակի չափերին կամ փախուստի տրամադրվածության մեջ. մինչդեռ նույնիսկ ինձ նման սիրողականն այդքան զգայուն է ժամանակի և տարածության նկատմամբ: Սրա իրական պատճառը ԵՎՐՈՑԵՆՏՐԻԶՄԻ և ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ ըմբռնումն է: Եվրոպայի ժամանակակից «գիտության քահանաների» այս հատկանիշները կա՛մ կոպիտ մետաֆիզիկայից ազատվելու նրանց անկարողությունն են, կա՛մ համոզմունքն ու առաքելությունը, որ նրանք կառուցել են այդպիսի մետաֆիզիկական հասարակություն:

Այնուամենայնիվ, պատմության և տարածության ընդգրկումը սոցիոլոգիայում մեզ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է հոսում և զարգանում գալիք կյանքը, և ինչ ենք մենք պատմության մեջ ու «ներկայում»: Եթե պատմությունն ու ներկան իրար շատ մոտ են, եթե տեղերը գալիս են մեկը մյուսի հետևից և սանդուղքի աստիճանների պես լրացնում են միմյանց, ապա մարդկությունը մի ամբողջություն է, և նա արդեն ունի իր միասնությունն ու ամբողջականությունը՝ առանց ցեղերի, կրոնների, պետությունների, ազգերի, դաշինքների, ՄԱԿ-երի և միջազգային կազմակերպությունների: Մենք ավելի լավ կմեկնաբանենք սա: Սա նշանակում է, որ այն ինստիտուտները, որոնք ձգտում են այսպես կոչված միասնության, հենց նրանք են հասնում ճիշտ հակառակին: Քաղաքակիրթ հասարակությունը տարօրինակ ձևավորում է. Նա ունի մի հատկանիշ, որ իր ասածի հակառակը ճիշտ է: Այնպես որ, չզարմանալու համար պետք է միշտ հետընթաց կարդալ քաղաքակիրթ հասարակությանը:

Այս ներածությունն արեցինք հիմնականում ուշադրություն հրավիրելու համար, թե ինչպես պետք է մեկնաբանվի քաղաքակրթության տարածական և ժամանակային տարածումը:

ա- Շումմերական և եգիպտական քաղաքակրթությունների ընդլայնման հիմնախնդիրները

Այն, ինչ մենք բացատրել ենք նեոլիթյան ինստիտուցիոնալացման մասին, լուսավորել է քաղաքակրթության միջուկի ձևավորումը: Որտե՞ղ եք պատվաստելու շումմերական պատվաստանյութը՝ առանց այս սերմի մասին մտածելու: Ուրիշ սերմ չկա, որ աճի, և, եթե նույնիսկ եղել է, այն հասանելի չէ: Ինչպես որ ԱՄՆ-ն այսօր անհնար է պատկերացնել առանց Եվրոպայի, գուցե, նույնիսկ ավելին, Ստորին Տիգրիս-Եփրատ տարածքն, անշուշտ, որպես եղեգնուտ չէր գոյատևի առանց Վերին Տիգրիս-Եփրատ տարածքում քաղաքակրթության միջուկացման: Քաղաքակրթություն ստեղծելն էլ մի կողմ, այն կարող էր փրկել միայն հին քարե դարերի նման կյանքը:

Ընդլայնման առումով կարևոր խնդիր է այն, թե ինչու Միջին Տիգրիս-Եփրատ ավազանում և նույնիսկ Անատոլիայում զարգացած բնակավայրերը չեն կարողացել ուրբանիզացվել: Եթե ենթադրենք, որ մենք տեղափոխվել ենք հինգ հազար տարի առաջ, ապա կտեսնենք, որ այս տարածքում կային քաղաքակրթության եզրին գտնվող բազմաթիվ շրջաններ, կային մեծ գյուղեր, որոնք գրեթե հասել էին քաղաքային փուլին, բայց մեզ ոչ այդքան հայտնի պատճառներով դրանք հետագայում փլուզվեցին՝ չհասած ավելի բարձր աստիճանի: Օրինակ՝ Չաթալհոյուքը, Իրանի և Թուրքմենստանի միջև ընկած տարածքներն այդպիսի տարածքներ են: Մենք գիտենք, որ քաղաքների ձևավորման համար շատ պայմաններ են անհրաժեշտ: Հայտնի է նաև, որ տարածաշրջանում բնակչության խիտ կու-

տակումը կախված է ավելցուկային արտադրանքի չափից: Այս ավելցուկային արտադրանքը հնարավոր կդարձնի գետերի գետաբերաններում գտնվող ալյուվիալ հողերի արհեստական ոռոգումը:

Նեղոսի և Տիգրիս-Եփրատի կողմից ծովի մոտ ձևավորված ալյուվիալ դաշտը հաստատում է այս տեսակետը: Սկզբի համար այս պայմանից է կախված քաղաքի ծնունդը, ինչպես նաև թվաքանակի աճն ու մշտական լինելը: Մյուս պայմանն այն է, որ մշակութային գործոնները, որոնք ծնունդ կտան քաղաքին, պատրաստ լինեն մոտակա շրջաններում: Ալյուվիալ որևէ տարածքում նեոլիթյան մշակույթ չի ստեղծվի: Որովհետև այս մշակույթը պայմաններ չունի: Նեոլիթյան մշակույթում չկային այնպիսի պայմաններ, որոնք կառաջացնեին մեծ, մշտական և բազմաթիվ քաղաքներ: Կոմպլեմենտարությունն անհրաժեշտ է դառնում այս պայմանների շնորհիվ:

Բոլոր ցուցումները ցույց են տալիս, որ Տիգրիս-Եփրատի կենտրոնական ավազանում եղել է միջին մեծության քաղաքների շղթա, թեև ոչ այնքան, որքան ներքևում: Մինչ սրան գալը մ.թ.ա. 3500-ական թվականներին Ուրուկ քաղաքային քաղաքակրթությունը, որն իրեն ապացուցեց, ստեղծեց մի համակարգ. Ուրուկը հաստատում է գաղութային կարգեր և կատարում է իր դերը՝ առաջարկելով քաղաքների համար թվաքանակը մեծացնելու մոդել: Այն պատմության մեջ առաջին քաղաքակրթությունը լինելու պատիվն ունի: Ինաննա աստվածուհու պաշտամունքը և Գիլգամեշի էպոսը վկայում են Ուրուկի անմահության մասին: Ուրուկը հավանաբար փլուզվեց մ.թ.ա. 3000-ականներին՝ իր հյուսիսում գտնվող ավելի արդյունավետ և

բազմաթիվ քաղաքների միջև համակցված մրցակցության պայմաններում:

Ուր դինաստիայի ժամանակաշրջանը սկսվում է մ.թ.ա. 3000-ական թվականներին: Երեք տոհմերի տեսքով, ծնունդի ու փլուզման նույն տրամաբանությամբ նրանք աստիճանաբար նահանջեցին դեպի հյուսիս և շարունակեցին գոյություն ունենալ մինչև մ.թ.ա. 2000թ.: Այս համատեքստում պետք է հաշվել նաև Աքքադական դինաստիայի Սարգոնյան շրջանը և Գուտիների Գուդեայի ժամանակաշրջանները: Առաջին գրավոր իրավական տեքստերը, գրական էպոսները, ակադեմիաները և դաժան քաղաքային կոիվները, որոնք նման են այսօրվան (վառ օրինակներ, ինչպիսիք են Նիպփուրի ողբը և Ագադե էպոսների պախարակումը), նրանք են, որոնք անմիջապես մտաբերվում են՝ այս ժամանակաշրջանի մասին խոսելիս: Ըստ երևույթին, Ուրն ուներ ընդարձակ գաղութային համակարգ: Արդեն ձևավորված առաջին գաղութները ձնահյուսի պես աճում են Տավրոս-Զագրոս համակարգի ներքին կոր շրջաններում: Այն նույնքան արագ ավարտվում է: Սրանից եզրակացությունն այն է, որ հասարակությունը, որտեղ նրանք գաղութացել են, մշակութային մեծ ուժ ուներ: Թեև եգիպտական, հարապյան և էլամսուսյան քաղաքակրթությունները, որոնք համարվում են անկախ քաղաքակրթություններ, ուղղակի կապեր չունեն շումերների հետ, դրանք կարելի է համեմատել շումմերական գաղութների հետ միայն օբյեկտիվ համատեքստում: Բաբելոնյան դարաշրջանը նույն տրամաբանությամբ սկսվեց ավելի հյուսիսում՝ մ.թ.ա. 2000-ականներին: Թեև այն համարվում է սեմական մշակույթի աքքադական էթնիկական պատկանելության մաս, Բաբելոնը, ըստ էությունի, շումմերական քաղաքակրթություն է: Այն համարվում է այս քաղաքակրթության գագաթնակետը գիտության և ինստիտուցիոնալացման առումով: Որպես քաղաք՝ Բաբելոնը խաղում է այնպիսի դեր, ինչպիսին Փարիզն էր խաղում Եվրոպայում: Այն գիտության և մշակույթի քաղաքն է: Առևտրականները շատացան, բոլոր մշակույթները հոսեցին այնտեղ, և առաջին անգամ տեղի ունեցավ կոսմոպոլիտիզմ: Այն ուժեղ ազդեցություն ունի իր շրջակա միջավայրի վրա և սկիզբ է դնում պատմության մեջ Նիմրոդի (առաջին հզոր թագավորների) դարաշրջանին: Դա մի քաղաք է, որը լույսի պես գրավում է իր շրջապատը: Այն ունի երեք կարևոր փուլ. ծագման փառահեղ դարաշրջանը (մ.թ.ա. 2000-1600 թթ.), որը հայտնի է Համմուրաբիով[9]: Այն իր անկախությունը կորցրեց Հուրիական ցեղերի ազդեցության ժամանակաշրջանում (Ք.ա. 1600-1300 թթ.): Երրորդ շրջանը (Ք.ա. 1300-550 թթ.) այն ժամանակաշրջանն էր, երբ այն անցավ ասորեստանցիների ազդեցության տակ և գրավվեց մեդա-պարսիկների կողմից: Բաբելոնյան դարաշրջանը, որն ունի 1500 տարվա պատմություն, ուժեղ հետք է թողնում մարդկության հիշողության վրա, թեև ոչ հստակ: Հանրահայտ Էննումա-Էլիշ էպոսը, որն արտացոլում է Մարդուկ Աստծո և Տիամաթ Աստվածուհու կոիվը, մայր-կնոջ ցավալի պարտության

[9]Համմուրաբին Բաբելոնի արքան էր մ.թ.ա. 1792-1750 թթ.: Համմուրաբի արքայի օրոք Բաբելոնն ապրում է ռազմաքաղաքական վերելք: Նա նվաճում է մի շարք ամորեական ցեղապետություններ, Հարավային Միջագետքի քաղաքները, գրավում է Աշուրը և հաղթական արշավանքներ կատարում դեպի Էլամ: Համմուրաբին իր տիրապետությունը հաստատում է ողջ Միջագետքի վրա:

պատմությունն է: Աստղագիտության մեջ նրա կատարած զարգացումները, նրա մարգարեությունները, իրենց հայրենիքից արմատախիլ արված իսրայելացիների գերությունը, գրավոր գրական բազմաթիվ տեքստեր և Ասորեստանի դեմ դիմադրությունը քաղդեական մշակույթի այս կենտրոնի անմոռանալի հիշողություններն են, որի ավերակները մենք դեռ տեսնում ենք: Եթե հիշենք, որ Բաբելոնն այն քաղաքն էր, որտեղ շատ հույն փիլիսոփաներ, հատկապես Սոլոնը, վերցրեցին իրենց առաջին դասերը, ապա կարելի է ավելի լավ հասկանալ շղթայական էֆեկտի արժեքը:

Ասորեստանի շրջանը կարելի է բաժանել երեքի: Առաջին շրջանը (Ք.ա. 2000-1600 թթ.) վաճառական արքաների ժամանակաշրջանն է: Առևտրականները, որոնք մեծացել են հիմնականում առևտրի մեջ և կենտրոնացած են Նինվե քաղաքում՝ ներկայիս Մոսուլի մոտ (Ասորեստանը այս քաղաքի հովանավոր աստվածն է), առաջին անգամ կառուցեցին պատմության մեջ ամենամեծ առևտրային գաղութները: Առևտրային գաղութային քաղաքները կառուցվել են Արևելյան Միջերկրական ծովից մինչև Փենջաբի ափեր, Սև ծովից մինչև Կարմիր ծով շատ տարածքներում: Կարելի է ասել, որ առաջընթաց է գրանցվել ճարտարապետության և առևտրի ոլորտում: Այս ժամանակաշրջանից են Կայսերիի մոտակայքում գտնվող Կյուլթեփե (ասորական ժամանակաշրջանում Քանիշ) և այսօրվա Կարճեմիշ (Քարումից, այսինքն՝ առևտրային գործակալությունից) քաղաքները, որոնք հիմնադրվել են Եփրատ գետի Սիրիայի սահմանը հատող վայրում: Մ.թ. ա. 1600-1300 թվականները հուրիական ծագում ունեցող Միտանի պետության կառավարման շրջանն է: Թեև այն կորցրել է իր նախկին նշանակությունը, ասորական ավանդույթը դեռ շարունակում է գոյություն ունենալ: Ասորեստանի ամենափառահեղ ժամանակաշրջանը եղել է մ.թ.ա. 1300-612 թթ.: Նրանք ստեղծեցին պատմության մեջ առաջին հզոր և ամենամեծ կայսրությունը: Նրանք հայտնի էին պատերազմում իրենց դաժանությամբ (ասում են, որ գանգերից ամրոցներ ու պարիսպներ են կառուցել): Առաջին էթնիկ ցեղասպանությունը և տարածքի մասսայական տարհանումը այս շրջանի հիշողություններն են, որոնք իրենց հետքն են թողել պատմության մեջ: Դա նաև այն ժամանակաշրջանն է, երբ մարդկանց մոտ ամենաշատը զարգացավ դիմադրության գիտակցումը: Ամենամեծ դիմադրությունը ցուցաբերել են պրոտո քրդեր հանդիսացող հուրիները՝ ուրարտական արքաների գլխավորությամբ (ուրարտացիների էթնիկ կառուցվածքը հակասական է: Սա վերաբերում է բոլոր իշխող դինաստիաներին: Բոլոր դինաստիաները հիմնված են այդ ժամանակաշրջանի գերիշխող մշակույթի լեզվի վրա: Փաստորեն Ուրարտուում, իսկ ավելի ուշ պարսկական պալատներում ասորերենն ու արամեերենը պետության պաշտոնական լեզուներն էին): Այս դիմադրությունը մեծ դեր ունի ներկայիս աշխարհագրության մեջ քրդերի գոյատևման գործում: Փաստորեն, հուրիական ծագում ունեցող մարերի և բաբելոնացիների դաշինքի արդյունքում այս հսկա կայսրությունը դադարեցվեց է պատմությունից մ.թ.ա. 612 թվականին: Որպես շումմերական ծագման վերջին քաղաքակրթություն՝ այն ունի պատմության մեջ քաղաքակրթության զարգացման և տարածման (հատկապես առևտրային և ճարտա-

բապետական ոլորտներում) ամենամեծ ներդրումը կատարելու արտոնություն:

Առաջին անգամ ականատես ենք լինում Ստորին Միջագետքից դուրս այլ քաղաքակրթական կենտրոնների առաջացմանը: Փոփոխություններ ու զարգացումներ են նկատվում և՛ ձևով, և՛ բովանդակությամբ: Սխալ չի լինի Կենտրոնական Միջագետքը համարել որպես շումմերական քաղաքակրթության թե՛ ձևավորման, թե՛ տարածման առաջին օջակ: Հատկապես տարածաշրջանում կատարված հնագիտական պեղումների, ստուգաբանական և էթնոլոգիական հետազոտությունների շնորհիվ մենք ավելի ու ավելի շատ տեղեկություններ ենք ստանում հուրիական ծագում ունեցող այս քաղաքակրթական սերնդի մասին: Հուրիները, որ պատկանում են արիական լեզվին և մշակույթին, առաջին ժողովուրդն է կամ էթնիկ խումբը, որի ինքնությունը տեղ է գտել գրավոր աղբյուրներում: Դա վավերական խումբ է, որը հաստատվել է Տավրոս-Զագրոս համակարգում՝ վերջին սառցե դարաշրջանից սկսած: Նրանք առաջատար դեր են խաղացել գյուղատնտեսության և անասնապահության զարգացման գործում: Ավելի ճիշտ՝ սա այն խմբերից է, որոնք տարածքում զարգացրել են նեոլիթյան գյուղական և գյուղատնտեսական հեղափոխությունը: Նրանց էթնիկ ինքնությունը առանձնանում և կարդացվում է մ.թ.ա. 6000 թվականից սկսած: Հուրիների համար ամենաիմաստալից սահմանումը նրանց պրոտոքուրդ համարելն է: Լեզվական կառուցվածքը, նրանց լեզվի բազմաթիվ բառերի ստուգաբանական վերլուծությունը և ազգագրական տվյալները շատ լավ բացատրում են հուրիների կապը քրդերի հետ: Հարթավայրերում բնակեցումը և լեռնային ու սարահարթային շրջաններում քոչվորությունը փոխկապակցված են: Մեծ է հավանականությունը, որ շումերները նույնպես առաջին հուրիական խմբերից են եղել: Փաստորեն, այս փաստը կապացուցեն գուտիների հետագա օկուպացիոն շրջանը (մ.թ.ա. 2150-2050), կասիտների (մ.թ.ա. 1600-ական թթ., բաբելոնյան առաջին արշավանքը խեթերի հետ մ.թ.ա. 1596թ.) և ավելի ուշ մեդական և պարսկական հակատարածումները: Հենց նեոլիթյան սերունդն է ամենաինտենսիվ հարաբերությունների մեջ եղել շումերների հետ: Մյուսները սեմական ծագում ունեցող արամիներ են:

Չհաշված նեոլիթյան ինստիտուցիոնալացման շրջանը՝ մ.թ.ա. 6000-4000-ականները, մ.թ.ա. 3000-ականների սկզբից տեսնում ենք հուրիական քաղաքակրթության առաջին հետքերը: Փաստորեն, մենք կանգնած ենք անխափան զարգացմանը դեմ դիմաց: Մինչ Շումերում հաստատված սերունդները շատ շուտ անցում կատարեցին դեպի քաղաքակրթություն, նրանք, ովքեր մնացին, թեև դանդաղ (ոռոգման և կլիմայական պայմանների պատճառով), բայց ցույց տվեցին բնակավայրերը քաղաքների վերածելու իրենց ունակությունը: Տիգրիս-Եփրատ ավազանի կենտրոնական հատվածներում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ քաղաքների օրինակներ: Ուրֆայում, Կազազում, Թուլթրիշում, Գրևրեում, Զեյթինլիկում և, վերջին շրջանում, Գյոբեկլիթեփեի պեղումների ժամանակ հայտնաբերված պարիսպներով շրջապատված ամրոցի ներսում և դրսում գտնվող բնակավայրերը, պաշտամունքային կառույցները, գեղարվեստական արժեք ունեցող ֆիգուրները

և առևտրային ապրանքների օրինակները հաստատում են այդ փաստը և կամ ապացուցում քաղաքների գոյությունը: Այս քաղաքների մեծ մասի հիմնադրման թվականը թվագրվում է մ.թ.ա. 3000-2750 թթ.: Իրատեսական է փաստել, որ դրանք շումերներից անկախ առաջին քաղաքային խմբերն էին: Հատկանշական է նաև, որ մոտակայքում կան տարբեր բնույթի և շումմերական ծագման գաղութներ: Հասկանալի է, որ այդ գաղութները ժամանակ առ ժամանակ զավթվել են Ուրուկի, Ուրի և Ասորեստանի կողմից: Նոր հնագիտական պեղումների, ստուգաբանական և էթնոլոգիական ուսումնասիրությունների միջոցով կարելի է պարզել, որ Միջին Տիգրիս-Եփրատ ավազանի քաղաքային կենտրոնները քաղաքակրթության հիմնական կենտրոններն էին: Այս ուղղությամբ են մատնանշում նաև վերջին գիտական հետազոտությունները: Հատկապես Գյոբեքլիթեփեի գտածոների վերլուծությունն ունակ է վերաշարադրելու պատմությունը:

Երկրորդ սերնդի հուրիական քաղաքակրթական ալիքը ավելի է ընդլայնվում, և անցում է կատարվում կայսրության նման քաղաքական կառավարությունների: Դրա ամենավառ օրինակը, հատկապես Կենտրոնական Միջագետքից, Միտաննին է: Հասկանալի է, որ նրանք կայսրություն էին, որը իշխում էր մ. թ. ա. 1600-ական թվականներից մինչև 1250-ական թվականները, որը նաև Ասորեստանի կայսրության վերելքի շրջանն է: Նրա մայրաքաղաքներն են այսօրվա Սերեկանին և Ամուղը, որոնք գտնվում են սիրիական Մարդինի սահմանին: Նրա անվանումն այն ժամանակ եղել է *Xweşkani* (թուրքերեն նշանակում է հաճելի, գեղեցիկ զարուն): Հետազոտություններից հասկացվում է, որ այն այլ լեզվական կառուցվածք և հուրիական ծագում ունի: Նրանց հաջողվեց մոտավորապես այսօրվա Քիրքուքից (Քիրքուք անվանումը դեռ այդ ժամանակաշրջանից է մնացել) տարածվել Անթաքիայի մոտ գտնվող Թել-Ալալ: Նրանք ասորիներին պահում էին իրենց մշտական հսկողության տակ, և հանգամանքը, որ նույն արիական լեզվով էին խոսում, ապացուցում է, որ կա՛մ բարեկամական կապ ունեին, կա՛մ էլ նույն ծագումը նույն ժամանակաշրջանի Կենտրոնական Անատոլիայում կենտրոնացած առաջին պետական կազմավորման՝ Խեթական պետության հետ (Հալեպն ու Կարչեմիշը նվաճած Շուպիլուլիումայի նամակը Միտաննիի իշխան Մատիազավային, որին նա տվել է իր դստերը, այս առումով ապացուցող օրինակ է): Եգիպտական պալատների հիերոգլիֆներից (հուշեր եգիպտական հայտնի թագուհիների մասին, ինչպիսին Նեֆերտիտին էր, ով պալատ էր եկել որպես արքայադուստր) կարելի է հասկանալ, թե նրանք որքան հզոր էին: Նրանց հզորությունն ապացուցելու համար բավական է միայն մտաբերել Ասորեստանը չորս հարյուր տարի ճնշած պահելու փաստը: Նույնը վերաբերում է բաբելոնացիների հետ նրանց հարաբերություններին: Հասկանալի է, որ նրանք օգտագործել են հիերոգլիֆներ և սեպագիր: Միտաննիի եզակի ճարտարապետական ձևերից մի քանիսը և «Կիկուլի» կոչվող ձիերի հարդարանքը պատմության մեջ նրանց հետքերից են: Դա հուրիական ծագման երկրորդ կարևոր քաղաքակրթությունն է, որը պետք է ի հայտ բերվի:

Խեթերին այս սերնդի մեջ ներառելը չափազանց իրատեսական է: Ինչպես ասվում է, խեթերը նեղուցներից,

Կովկասից և արևելքից Իրանի տարածքով եկած խմբեր չեն: Քանի որ նրանց լեզվի և մշակույթի տարրերը կրում են խոր հուրիական հետքեր, կարող ենք եզրակացնել, որ նրանք իրենց կողքին գտնվող հուրի ազնվականներից իշխող խումբ էին: Նրանց աստվածները, գրականությունը, դիվանագիտական հարաբերությունները և Եգիպտոսում պալատների ավերակները ցույց են տալիս, որ խեթերը նման էին Կենտրոնական Անատոլիայում բնակվող միտաննիներին: Ինչպես միտաննիները վերահսկողության տակ առան ասորական կենտրոնները, այնպես էլ խեթերը վերջ դրեցին ասորական գաղութատիրության ժամանակաշրջանին և հիմնեցին ու շարունակեցին Խեթական կայսրությունը մոտավորապես նույն ժամանակաշրջանում (մ.թ.ա. 1600-1250): Նրանք ինչ-որ առումով հիշեցնում են հուրիական վարչական կենտրոնի երկու մեծ շրջաններ, որոնց մանրամասները մենք դեռ չգիտենք: Նրանց միջև ճնշող նմանություն կա ոչ միայն լեզվի և ազգակցական կապերի առումով, այլև կյանքի բոլոր ոլորտներում: Բացակայող օղակը նույն ժամանակաշրջանի երկու տերությունների՝ Միտաննիի և Խեթական պետության շրջանների միջև է: Ես այն համոզմանն եմ, որ դա պարզ կդառնա, քանի որ հետազոտությունները զարգանում են: Կարևոր կենտրոնները, հատկապես Հաթթուսան, որոնք թվագրվում են խեթերից, ցույց են տալիս, որ նրանք քաղաքակրթության մեջ որոշակի զարգացումներ են կատարել: Ջիկկուրատներին գերազանցող սուրբ բնակավայր կա: Տաճարները, ադմինիստրատորների պալատները, աշխատողների թաղամասերը և պահեստները բավականին առանձնացված են: Այն ունի պարիսպներ, որոնք

տարածվում են ավելի մեծ տարածքների վրա: Նմանատիպ քաղաքային կազմակերպությունները շատ են: Ըստ իր ժամանակաշրջանի՝ այն ռազմական առումով ամենազարգացած պետությունն էր:

Ահիևանները (Ahiyevalılar. ավելի ճիշտ կլինի այս խումբը համարել արիական խմբերից մեկը, որը ենթարկվել է Անատոլիայի ազդեցությանը կամ գաղթել է մ.թ.ա. 1800-ական թվականներին: Հյուսիսից եվրոպական ծագումը հակառակ է քաղաքակրթության էքսպանսիայի երթևեկությանը: Նույն սխալն է արվում խեթերի համար)՝ արևմուտքում հայտնի Տրոյա քաղաքից (կա՛մ խեթական կազմակերպություն, կա՛մ նրա մերձավոր դաշնակիցը, եզակի քաղաքակրթական քաղաք նույն մշակութային խմբից), աշկավանները՝ (Aşkavalar) Անթալիայի հյուսիսում, կաշկաները (Kaşkalar. սևծովյան մարդիկ)՝ հյուսիսում, կիլիկյանները՝ Չուկուրովայում (Տավրոսի լեռների ժողովուրդը լուվիներն են, որոնց բնակեցումը շատ երկար տևեց նույն ժամանակահատվածում), հարևաններ են և հարաբերություններ ունեն հարավում իրենց հայտնի մրցակիցների՝ Եգիպտոսի փարավոնական պետության հետ: Կենտրոնական տարածքի բնակիչները հաթթիներն են՝ յուրահատուկ համայնք: Այն փաստը, որ նրանք իրենց ներկայացնում են որպես «Հազար աստվածների երկիր», ցույց է տալիս, որ նրանք ավելի շատ կարևորում են բարեկամությունը, քան աստվածների մրցակցությունը (արտացոլում է Իշխանությունների դաշինքը): Կադեշի պայմանագիրը (պայմանագիր, որը կնքվել է Օրոնտես գետի և Համա քաղաքի մոտ՝ Կադեշի ճակատամարտից հետո), որը պատմության մեջ առաջին գրավոր պայմանագիրն է

և կնքվել է Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ի և խեթական թագավոր Հատթուսիլի III-ի միջև, պատմության ամենահայտնի դրվագներից մեկն է: Հասկանալի է, որ կար արիստոկրատների մի խորհուրդ, որը կոչվում էր Պանկուշ (Pankuş): Իրատեսական է այն մեկնաբանությունը, որ ֆեդերացիան և դրա կազմում գտնվող Հաթուզան առաջինն են եղել:

Մենք մի քանի անգամ անդրադարձել ենք Նեղոսի ափին գտնվող եգիպտական քաղաքակրթությանը: Չնայած այն ներկայացվում է որպես ինքնուրույն կազմավորում՝ ավելի իրատեսական է ասել, որ այս քաղաքակրթությունը կրում է նույն արիական մշակութային արժեքների հետքերը (շումերների ավելի հեռավոր նմանություն մասին է խոսքը): Որովհետև Նեղոսի և նրա մերձավոր հարևանների ներքին դինամիկան որևէ բան ցույց չի տալիս, որը կարող է նման քաղաքակրթություն առաջացնել: նում է արիական մշակույթը, որը կարող է արտացոլվել փոխադարձ գաղթերի արդյունքում, որոնք այն ժամանակ շատ ինտենսիվ էին: Եգիպտական քաղաքակրթության մեծությունն անքննարկելի է: Բայց փաստ է նաև, որ այն չէր կարող տարածվել Նեղոսի ափերից այն կողմ: Դա մի իրավիճակ է, որը պետք է հարցականի տակ դնել, թե ինչո՞ւ այն ընդլայնվելու հատկություն չի ցուցաբերում: Ոչ մի կոնկրետ մշակույթ, որի վրա այն հիմնված է, չի նկատվել Նեղոսի ափերին: Կարծես հրաշք լինի, որ ընկել է երկնքից: Եթե ոչ, ապա նորից ու նորից պետք է փաստենք, որ դրա ծնունդը Տավրոս-Զագրոս համակարգում նեոլիթյան հեղափոխությունն է՝ հաշվի առնելով հիքսոսների և եբրայական ցեղի փաստը:

Հիերոգլիֆային գիրն ավելի պարզունակ է, քան սեպագիրը և այնքան էլ հարմար չէ զարգացման համար: Դրա ֆունկցիոնալությունը սահմանափակ է: Բուրգերը կարող են ճարտարապետական հրաշքներ լինել, բայց դրանք հիմարություններ են, որոնք սարսափելիորեն կլանել են ստրկական աշխատանքը: Եգիպտական քաղաքակրթությունը կարելի է բաժանել տարբեր ժամանակաշրջանների՝ Հին թագավորության ժամանակաշրջանը ընդգրկում է մ.թ.ա. 3000-2500-ական թվականները.: Այս ժամանակաշրջանը ականատես է եղել բազմաթիվ դինաստիաների: Զարգացել է այլուվիալ հողին մոտ՝ ներկայիս Կահիրեի մոտ: Հայտնի է իր բրգաձև դամբարաններով: Մ. թ. ա. 2050-ից մինչև 1850 թվականները Միջին թագավորության ժամանակաշրջանն է, երբ տաճարները հայտնվեցին առաջին պլանում, և, հետևաբար, նկատվեց քահանաների գերակշռում վարչակազմում: Մ. թ. ա. 1800-ական թվականներին հիքսոսների ներխուժումը Եգիպտոս մտածելու տեղիք է տալիս: Այն փաստը, որ հիքսոսները տապալեցին փարավոնի ռեժիմը, որը ոչ մի այլ ցեղ չէր կարող տապալել, ցույց է տալիս նրանց հետևում գտնվող մշակույթի և կազմակերպության հզորությունը: Նրանք Եգիպտոսը կառավարեցին մոտավորապես 150 տարի: Մ.թ.ա. 1600-ական թվականներին Նոր թագավորության շրջանը սկսվեց Սեթի I-ով: Դա համընկնում է մի ժամանակաշրջանի հետ, երբ առևտուրը զարգացավ, ինչպես ասորիների մոտ: Կրկին, ինչպես ասորիները հայտնվեցին ամենահյուսիսային Ստորին Միջագետքում, Նոր թագավորության շրջանը զարգացավ ամենահարավային Նեղոսում՝ Կարնակում: Մեկ

այլ գերեզմանատան շրջան է սկսվել: Քահանաները, թեև դեռ հզոր են, բայց հետին պլան են մղվել:

Այս շրջանում եբրայական ցեղը եկավ Եգիպտոս: Հիքսոսներից հետո 1600-ականները համապատասխան ամսաթիվ է: Ենթադրվում է, որ 300 տարի մնալուց հետո Եգիպտոսը թողեց մ.թ.ա. 1300-ականների վերջին: Ախենատեն թագավորը (հավանաբար մ.թ.ա. մոտ 1400 թ.) հայտնի է առաջին անգամ միաստվածական կրոն հռչակելով: Խեթերից և միտաննիներից շատ արքայադուստրեր եկան պալատ՝ որպես հարս: Գերեզմաններից մնացած օրինակները ցույց են տալիս, որ ճարտարապետության մեջ հասել են շատ բարձր մակարդակի: Ճարտարապետության բնագավառում նրանք ավելի շատ են ազդել հունահռոմեական քաղաքակրթության վրա, քան շումերները: Նրանց բարդ կրոնական կառույցները շումերների բարդ կրկնօրինակն են: Իսիս-Օսիրիսի ավանդույթը Ինաննա-Էնկի ավանդույթի ածանցյալն է: Ամոն-Ռա ավանդույթը մոտ է շումմերական քահանաների ավանդույթին, որոնք հաստատել են զիկկուրատ համակարգը:

Միշտ հարց է տրվելու՝ ինչպե՞ս են Շումերն ու Եգիպտոսը ազդել մեկը մյուսի վրա: Եգիպտոսը յուրօրինակ դրսևորումներ է ունեցել նավաշինության, քարե սյուների, պատի նկարների, օրացույցի զարգացման, բժշկության և աստղագիտության և մումիֆիկացիայի մեջ: Պարզ է, որ նրանք ազդել են Կրետեի քաղաքակրթության վրա, իսկ Կրետեի միջոցով՝ հունական մշակույթի վրա: Եգիպտացիները առաջադեմ կապեր են հաստատել նաև փյունիկեցիների հետ: Նրանք կռվել են միտաննիների և խեթերի հետ Սիրիայի և այսօրվա Պաղեստինի համար: Մ.թ.ա.

1000-ական թվականներից հետո սուդանա-աբիշական ցեղերի հարձակումները հարավից ուժեղացան, մ.թ.ա. 670-ական թվականներին ասորիների հարձակումներով նրանք առաջին անգամ ենթարկվեցին արտաքին ուժերի ինքնիշխանությանը: Համապատասխանաբար մ.թ.ա. 525թ. պարսիկների, մ.թ.ա. 333 թվականին Իսկենդերի իշխանության տակ են անցել: Մեր թվարկությունից առաջ չորս հազարամյա քաղաքակրթության առաջին փուլն ավարտվեց դեպի մեր թվականներ՝ հելլենական ծագում ունեցող Կլեոպատրայի՝ Հռոմից կրած պարտությամբ:

Այս քաղաքակրթությունը, որը պատմության մեջ նույնքան հետք է թողել, որքան շումերները, զգացել է դասական ստրկատիրական համակարգը իր մաքուր ձևով: Ստրուկ-տիրոջ միասնությունը երբեք այնքան զարգացած չի եղել ոչ մի քաղաքակրթության մեջ, որքան Եգիպտոսում: Կրոնները, որոնք մշակվել էին ստրուկների համար, որոնք խաղաղություն չէին տեսնում այս աշխարհում և քարոզում էին փրկություն հետագա կյանքում, ստրկատիրական համակարգի պահպանման գործում օրինականության հզոր գործիք էին: Սա այն հզոր քաղաքակրթական տարածքն է, որտեղ հորինվել է դրախտ-դժոխքի և հանդերձյալ կյանքի պարադիգմը: Փարավոնների ամուսնությունն իրենց եղբայրների և քույրերի հետ տոհմային ավանդույթի մի մասն էր և կարող էր առաջանալ դինաստիայի պահպանման անհրաժեշտությունից: Շատ հավանական է, որ նրանք ազդել են աբրահամական կրոնների վրա առնվազն նույնքան, որքան շումերա-բաբելոնական կրոնական հավատալիքները: Այն, որ Մովսես Մարգարեն գալիս է եգիպտական մշակույթից, և նրա նախահոր՝ Աբ-

բահամի փախուստը՝ բաբելոնյան Նիմրոդներից, առաջացնում է այս երկու մշակույթների ուժեղ ազդեցությունն ու սինթեզը: Թվում է, թե հնարավոր չէ նախագծել աբրահամական կրոնները այս երկու մշակույթների ազդեցություններից դուրս: Իր սկզբնական տեսքով Եգիպտոսի փարավոնական ռեժիմը «պետական կոմունիզմին» ամենամոտ համակարգն է:

Ուրարտական քաղաքակրթությունը նույնպես առաջին սերնդի քաղաքակրթություններից է: Մ.թ.ա. 870 թվականին ուրարտացիները նաիրիների հետ («գետերի ժողովուրդ». «հոսանքների մարդիկ», որոնք մշտական հակամարտության մեջ էին ասորիների հետ: Այն պետք է ներկայացնի իսկական քրդերին Տիգրիսի և նրա վտակների տարածաշրջանում) ստեղծեցին մի համադաշնություն, որը երկար տարիներ գոյատևեց, իսկ ավելի ուշ՝ ենթադրվում է, որ այն մտել է առաջին կենտրոնացված թագավորական համակարգի մեջ: Ասորեստանյան արձանագրության համաձայն՝ «Սարդուրի արքան ստացել է մեծ Աստծո՝ Խալդիի մեծ աջակցությունը (Գուդան, Գուդեան և Գոթերը պետք է ծագեն նույն աստծո անունից: Գուդեան արիական մշակույթում այն է, ինչ աստված է սեմականների մեջ, նշանակում է «ինքնակազմակերպված»: Այն դեռ քրդերենում և պարսկերենում օգտագործվում է Ալլահի փոխարեն) և հաղթում է բոլոր նրանց, ովքեր կանգնած են նրա ճանապարհին՝ ազդարարելով իր հոյակապ երթը դեպի կենտրոնական թագավորություն»: Կենտրոն է ընտրվել այսօրվա Վանը: Վան անունը, հավանաբար, ժառանգել է Վանիլիլի ցեղից: Վանի մեկ այլ անվանում՝ Տուշպա, առաջացել է մեծ աստվածներից արևի աստված Թեշուփից: Կենտրոնում հիմնել են բազմաթիվ ամրոցներ: Արևելքում իրանական Զագրոսի ստորոտից, արևմուտքում Եփրատի ափերից, հյուսիսում Արաքսի հովիտներից մինչև հարավում ասորական շրջաններ՝ այսօրվա Սիրիայի հյուսիսում, նրանք հաստատեցին ուժեղ կենտրոնական գերիշխանություն: Ենթադրվում է, որ նրանք առաջին իշխանությունն էին, որ հաստատեցին պետական համակարգը: Այս իրողությունը պատմության մեջ առաջինն է կենտրոնացման առումով: Նրանց հավատամքները գտնվում են շումերների և ասորիների ուժեղ ազդեցության տակ, օգտագործում էին սեպագրությունը: Ի հավելումն ասորերենի, որը նրանք ստացել են ասորի տիրակալներից, հնարավոր է, որ նրանք օգտագործել են մի լեզու, որը դեռ ամբողջությամբ վերծանված չէ, բայց եղել է հուրիական մնացորդային համայնքների և Կովկասից ներգաղթյալ ցեղերի լեզուների խառնուրդ: Ի դեպ, բնական է, որ առաջին անգամ հայերենին էլ նման խառը լեզվական համակարգ ունեն: «Բաբելոնում խոսում էին յոթանասուներկու լեզուներով» ասույթը ուսանելի է:

Բայց այս կետը պետք է զգուշությամբ նշել. պալատական լեզուները միշտ տարբերվում են առարկայական համայնքների լեզուներից: Նախորդ դարերում եվրոպական շատ պալատներում խոսում էին պալատական լեզուներով, որոնք կապ չունեին բնիկ ժողովրդի հետ: Օրինակ՝ գերմաներենը և շատ ավելի վաղ լատիներենը: Մերձավոր Արևելքում արաբերենը երկար ժամանակ հարգվել է՝ որպես բոլոր պալատների պաշտոնական լեզու: Օսմանյան թուրքերենը գրեթե նույնքան հեռու է բուն թուրքերենից, որքան օտար լեզուն: Այսօրվա անգլերենը տասնյակ

երկրների պաշտոնական պետական լեզուն է, որոնք ոչ մի էթնիկ, ցեղային կամ ազգային կապ չունեն բրիտանացիների հետ: Նմանատիպ կանոններ պետք է կիրառվեին Ուրարտուի թագավորության կենտրոնում: Այն փաստը, որ նախկինում ասորերեն խոսվել է, բացահայտում է այս փաստը: Ուրարտացիները համարվում են երկաթե դարի ամենահզոր քաղաքակրթությունը: Մինչ օրս պահպանվել են բազմաթիվ արհեստանոցներ, կաթսաներ, ափսեներ և զենքեր՝ պատրաստված երկաթ-պղնձի խառնուրդից: Այն առաջին քաղաքակրթությունն է, որն ամենաշատն է մշակել երկաթը: Որոշվեցին մայրաքաղաքն ու նահանգային կենտրոնները, զարգացավ քաղաքի ըմբռնումը: Նրանց մշակած ճանապարհային ցանցը Արքայական ճանապարհի ավետաբերն էր: Այս ճանապարհի երթուղիները դեռ ընտրվում էին: Ժայռերի մեջ փորագրված թագավորական դամբարանները հոյակապ են: Նրանք հավաքում էին ստրուկների հարևան ժողովուրդներից և նրանց օգտագործում ամրոցների և քաղաքների կառուցման մեջ: Նրանք առաջադեմ են ջրային համակարգերի մշակման և լճակներ պատրաստելու գործում: Միակ ուժն են, որը մնացել են ասորիների դեմ: Նրանց միջև ընթացող հակամարտությունները, որոնք տևեցին մոտ երեք հարյուր տարի, հանգեցրին նույն ուժերի կողմից երկուսի միաժամանակ վախճանին (մ.թ.ա. 615 թ.): Պատմությունը երբեք նույն աշխարհագրության մեջ նման քաղաքական ձևավորման ականատես չի եղել: Առաջին սերնդի վերջին փառավոր վերելքը եղել է Մարա-Պարսկական կայսրությունը: Վերելքը պատրաստողը մարերն են: Մեդ անունը հիմնականում պահպանվել է հունական մշակույթից:

Պատմաբանները համաձայն են, որ նրանք կազմում էին արիների առաջադեմ և հզոր ճյուղը: Տեղին է խոսել մեդերի և մարերի իսկական մշակույթի մասին, քանի որ ոչ մի էթնիկ համայնք չի կարողացել բնակություն հաստատել այնտեղ: Մեդ (Med) և մեդյա (Medya) տերմինները դեռ օգտագործվում են նույն ոլորտի և այս տեղանքի մարդկանց համար: Նկատվում է, որ մարերը կուտակվել են Զագրոսի լեռնաշղթայում: Նրանց կարելի է հետևել մինչև գուտացիներ և կասիտներ: Տարածված տեսակետ է, որ դրանք ևս ներառված են հուրիների ընդհանուր անվանման մեջ: Կարելի է նաև ասել, որ դրանք այն ցեղային խմբերն են, որոնք ամենաշատը մաքառեցին ասորիների դեմ ու տառապեցին: Նրանց պետականացումը սերտորեն կապված է այս դիմադրության հետ: Նրանք հաջողության թալիսմանը տեսան ցեղային համադաշնությունում:

Մ.թ.ա. 715 թվականին ցեղային խմբերն առաջին անգամ միավորվեցին և կազմեցին ազատ միություն: Հասկանալի է, որ ասորեստանցիների և ուրարտացիների ճնշումները հանգեցրել են նրանց դաշինքին Կովկասի հայտնի սկյութական խմբերի հետ (պետք է պատմական ավանդույթ լինի), և որ նրանք երբեմն հակասություններ են ունեցել սկյութների հետ: Ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ ձեռքից ձեռք է անցել: Մոտ 300 տարի տևած դիմադրությունից հետո մարերը վերջ դրեցին Միջագետքի վերջին երկու հզոր քաղաքակրթություններին՝ ավերելով նախ ուրարտական պալատները (մոտ 615 թ. մ.թ.ա.), ապա՝ Ասորեստանի մայրաքաղաքը: Ասում են, որ մարերը հիմնել են Էքբաթան անունով հայտնի մայրաքաղաքը (ներկայիս Իրանի Համադանի մոտ) և այն շրջա-

պատել յոթ գույն ունեցող յոթ պարիսպներով: Արևմուտքում նրանք ընդարձակեցին իրենց սահմանները մինչև Քըզըլըրմակ (հայերեն Ալիս գետ) և հարևան դարձան փռյուգիացիների հետ: Նրանց հարաբերությունները պարսկական ցեղերի հետ, որոնց հետ սերտորեն կապված էին, պատճառ դարձան, որ նրանց գերիշխանության շրջանը կարճատև լինի: Նրանք պալատական խաղի պատճառով և պարսկական Աքեմենյան դինաստիայի ձեռքով զրկվեցին քաղաքական կազմավորումից, որը կառուցել էին մեծ ջանքերով և պահպանել մոտ 300 տարի: Կյուրոս անունով մի պարսիկ, որը ծնվել էր Մարաստանի թագավոր Աստիյագի դուստրերից մեկից, պայմանավորվել է պալատի զորահրամանատար Հարպագոսի հետ և պալատական ողբերգական հեղաշրջման միջոցով գահընկեց արել վերջին ծեր թագավոր Աստիյագին: Հերոդոտոսի պատմությունից տեղեկանում ենք, որ Աստիյագ արքան այս ստորության դիմաց Հարպագոսին ասել է՝ «Այ ստոր, եթե ինձ տապալեցիր, ինչո՞ւ իշխանությունը պարսիկ բճին տվեցիր: Գոնե ինքդ լինեիր իշխանության: Ինչո՞ւ ինքնիշխանությունը հանձնեցիք պարսիկներին: Գոնե այն մարերի ձեռքը մնար»: Եթե Հերոդոտոսը չի հորինել (որին մենք պետք է վստահենք, քանի որ նա առաջին պատմաբանն է, ով ճանապարհորդել է և ամենաշատը գիտի), սա ցույց է տալիս, որ հազարավոր տարիներ առաջ ձևավորվել է քրդական կոլաբորացիոնիզմի ստոր և նողկալի հատկանիշը:

Կարծում եմ, որ պատմության մեջ առաջին հայտնի քուրդ համագործակիցը Էնկիդուն էր, որին Ուրուկի թագավոր Գիլգամեշը բերել էր անտառից (այն ժամանակ

տարածքներում, որտեղ նախաքրդերը՝ պրոտո քրդերը, բնակություն էին հաստատել, անտառները խիտ էին) և օգտագործել նրան՝ որպես գործակալ-համագործակից: Այսինքն՝ քրդերի մեջ համագործակցությունն այնքան հին պատմություն ունի, որ եղել է առաջին էպոսների թեման: Իհարկե, ինչպես միշտ, կնոջ միջոցով: Էնկիդուն լեռնային ազատ օղը և իր ընկերներին զոհաբերեց տաճարի քրմուհու խաբուսիկ քաղցրությանն ու ցանկությանը: Որքա՜ն նման է մեր օրերին (հարյուրավոր Հարպագոսներ, որ դուրս են եկել Քրդական Ազատության Շարժումից և ՔԲԿ-ից): Պետք է լավ իմանալ, որ այսօրվա համագործակցող քուրդ անհատականությունը ձևավորվել է պատմականորեն, և որ չկա որևէ արժեք, որը նա չվաճառի անարժեք ընտանիքի և կնոջ համար, այդ իսկ պատճառով նա հեռու է իրական ազնվականությունից, քաղաքականությունից և իմաստությունից, իմաստալից և հաճելի կյանք (ազատ կյանք) ապրելուց և հետևաբար ապրում է շատ զզվելի կերպով: Հերոդոտոսը, կարծես թե, տեսել է ճշմարտությունը, երբ ասում է, որ նրանք, ովքեր իրենց մշակութային հետքն են թողել այդ տարածքում, մարերի ժառանգներ են: Պարսիկներն այն ժամանակ անանուն ու մշակութային առումով թույլ խումբ էին, որ նոր էին հայտնվել պատմության բեմում: Հուրիական մշակույթի շքեղությունն արտացոլվում էր Էգեյան ծովի ափերից մինչև Էլամ, Կովկասի սահմաններից մինչև եգիպտական պալատներ: Հերոդոտոսը իր պատմության մեջ ճիշտ է բացատրում այս փաստը:

Մենք նշել ենք, որ շումմերական քաղաքակրթությունում (ընդհանրապես բոլոր քաղաքակրթություններ-

ռում հիմնադրման փուլում) առաջին քահանաները որոշիչ դեր են խաղացել նոր մտածելակերպի ձևավորման և աստվածների ստեղծման գործում: Այս դերը գործում է նաև ուրարտական և մարա-պարսկական քաղաքակրթությունների համար, որոնք ավելի վաղ հաստատվել են նույն տարածքում: Կարելի է ասել, որ մոգ տիտղոսը կրող քահանաները, որը, ամենայն հավանականությամբ, խորհրդանշական կերպար է, հիմնականում արտահայտում էին զրադաշտական ղեկավարությունը, նրանց կենտրոնական սուրբ քաղաքը Մուշասիրն էր, որը գտնվում է ներկայիս Բրադոստի շրջանում, և այնտեղ հիմնվեց աստվածների առաջին պանթեոնը, որը հետագայում տեղափոխվել է Տուշպա, Էքբատան և Պերսեպոլիս: Որովհետև դժվար է կառուցել լուրջ քաղաքակրթություն առանց քահանաների ավանդույթի, որը երկար ժամանակ է տարածվում: Փիլիսոփաներն ու նրանց փիլիսոփայությունները նույն դերն ունեն հունական մշակույթում, իսկ լուսավորության շրջանի մտավորականները՝ եվրոպական քաղաքակրթության մեջ: Ուսուցողական է տեսնել շեյխեր սեմականների մեջ և մարգարեներ եբրայեցիների մեջ՝ նույն կատեգորիայի մեջ: Այս գործընթացում պետք է լավ իմանալ մոգերի և զրադաշտի դիրքերը, որոնք շատ կարևոր դեր են ունեցել մարերի առաջացման գործում: Կարծում եմ, որ մեդ քահանաները, ովքեր սուրբ էին համարում կրակը, գյուղատնտեսությունը և կենդանիները, և այս առումով արտացոլում էին նեոլիթյան հասարակության արժեքները, և զրադաշտական հավատքն ու բարոյականությունը, որը հիմնադիր տարրն

էր, հայտնի էին նրանով, որ քաղաքակրթության կեղտով աղտոտված չէին: Զրադաշտականությունը տարբերվում է շումմերական քահանաների կողմից հորինված աստվածների դիցաբանական համակարգից և նույնիսկ դրա ճիշտ հակառակն է: Այն ունի դիալեկտիկական ըմբռնում, տիեզերքի ըմբռնում, որը լցված է բարի-չար, լույս-մութ հակադրություններով: Ազատ բարոյականությունը հիմնական սկզբունքն է զրադաշտական քահանայության մեջ, որը սնվում է լեռնային ազատ օդով (հունական մշակույթում՝ Դիոնիսոս Աստծո մշակույթը), որը ամբողջովին թաթախված չէ քաղաքակրթության մեջ: Նա ավելի շատ խոսում է գյուղատնտեսության և անասունների սրբության և մարդու ազատ բնավորության մասին, քան աստծո ստեղծման մասին:

Այս բարոյականությունը որոշիչ տեղ ունի Ասորեստանի պարտության և Մարա-Պարսկաստանի վերելքի գործում: Եթե չլիներ ազատ կյանքի հանդեպ նրանց կիրքը, մարերը մյուս ժողովուրդների նման հեշտությամբ կհայտնվեին քաղաքակրթության գերության մեջ: Այլ ժողովուրդներ ասելով՝ ես խոսում եմ նրանց մասին, ովքեր երկար ժամանակ եղել են քաղաքակիրթ հասարակության ազդեցության տակ: Կյուրոսի մահից հետո (մ.թ.ա. 559-529 թթ.), երբ քահանաների հեղաշրջմամբ մ.թ.ա. 528 թվականին ինքնիշխանությունը վերականգնած մեդիական ծագում ունեցող խումբը հեշտությամբ լուծարվեց, սկսվեց պարսից հայտնի թագավոր Դարեհի ժամանակաշրջանը (մ.թ.ա. 586-521 թթ.)[10]: Կարճ ժամանակում

[10] Ժամանակաշրջաններն ըստ Թորայի են. Թորայում կա Եսթերի բաժին, որտեղ բացատրվում է նշված իրադարձությունը:

պարսիկները ջախջախեցին Բաբելոնին, Եգիպտոսին և նվաճեցին Էգեյան ծովի ափին գտնվող Հոնիական քաղաքները: Հետո նրանք ստեղծեցին պատմության մեջ ամենամեծ կայսրությունը՝ ձգվելով Էգեյան ծովի ափից մինչև արևելյան Փենջաբի ափ: Համարվում է, որ նրանք գրավել են ողջ քաղաքակիրթ աշխարհը, բացի Չինաստանից: Պարսիկները, անկասկած, շատ բան են վերցրել շումմերա-ասորական-բաբելոնա-ուրարտական մշակույթից (քաղաքակրթական մշակույթ): Ավելին՝ նրանք նաև սնվել են արիական մշակույթի ազատ երակից: Ազդեցությունն ու հարաբերությունները հունական մշակույթի հետ սկսվեցին հյուսիսից եկող նշանավոր սկյութներից և ավելի արևելքից՝ պրոտո թուրքերից: Այսքան մեծ թվով մշակույթներ սինթեզելով՝ նրանք պատմությանը եզակի օրինակ են ներկայացրել: Մարա-Պարսկական կայսրությունը ընդլայնվող առաջին սերնդի քաղաքակրթության (իսկապես, մարերը կայսրությունում երկրորդ տեղում էին և միշտ բանակի գլխավոր ուժերից էին: Դրանում արդյունավետ էր նրանց միջև ազգակցական շատ սերտ կապի առկայությունը) վերջին ներկայացուցիչն է: Այն հասել է առավելագույն սահմաններին և քաղաքակրթական փուլին, որին կարելի է հասնել առաջին սերնդի քաղաքակրթական մշակույթով: Հաշվի առնելով կենտրոնի շքեղությունը (Պերսեպոլիսի ավերակները դեռ շատ հոյակապ են) և գավառական կենտրոնների հզորությունը, այն կարելի է համեմատել նախահռոմեական կայսրության հետ: Դա ամենահզոր գործոնն է, որը պատրաստել է հունահռոմեական աշխարհը: Այն հայտնի է ինչպես իր քաղաքական համակարգով (ուրարտացիներից հետո պատմության մեջ առաջին անգամ կիրառված նահանգային համակարգով), այնպես էլ իր հսկայական փոստային համակարգով և տրանսպորտային ուղիներով (պատմության մեջ հայտնի առաջին ամենաերկար ճանապարհը՝ Արքայի ճանապարհը, որը սկսվում է Էգեյան ծովի ափից՝ Սարդում, և ավարտվում Պերսեպոլիսում): Բավականին հայտնի է հատուկ պահակային ստորաբաժանումը՝ Անմահների զունդը, որը հասել է հարյուր հազարանոց բանակի հզորությանը: Այն առաջընթաց գրանցեց ճարտարապետության մեջ: Դա կրոնական համոզմունքների և ծեսերի տարբերություն է ստեղծել: Տարբերություն է առաջացել ազնվականների կրոնի և ժողովրդի կրոնի միջև (միտրաիզմ): Ցեղային ավանդույթներից առաջացել է շատ զարգացած արիստոկրատիա: Նրանք ավելի շատ զարգացրեցին իրենց քաղաքակրթական տարածքները, քան իրենցից առաջ եղածները միասին: Առաջին անգամ ցուցադրեցին անթիվ ցեղեր, տոհմեր, կրոններ, աղանդներ, լեզուներ և մշակույթներ մեկ կաթսայում միավորելու ունակությունը: Դա Արևելքի վերջին շքեղ ու շլացուցիչ հնագույն քաղաքակրթությունն է: Այն ամեն առումով անհամեմատելի առավելություն ունի՝ համեմատած նոր զարգացող դասական հունական քաղաքակրթության հետ: Ալեքսանդրը՝ Արիստոտելի աշակերտը, իրականում շրջակա երկրի դեռահաս բարբարոս զավթիչն է, ով բարդույթավորվում է արևելյան մշակույթի խորության դեմ և փորձում է տիրապետել այս վայրի շքեղությանը: Ինչ որ Հռոմեական կայսրությունն էր զոթերի համար, Պարսկական կայսրությունը նույնն էր մակեդոնացիների և հույների գործազուրկների, ցեղապետերի և մանր թագավորնե-

րի համար: Չափերով, հարստությամբ ու շքեղությամբ Մարա-Պարսկական կայսրությունն, անշուշտ, Հռոմից պակաս չէր: Եթե այս տեսանկյունից նայենք Ալեքսանդրի արշավանքին, ապա կարող ենք ավելի ճշգրիտ և իմաստալից մեկնաբանել պատմությունը:

Քաղաքակիրթ հասարակության առաջին շրջանի ընդլայնման և առաջընթացի հիմնախնդիրների մեր գնահատականը եզրափակենք մի քանի լրացումներով: Այդ խնդիրներից մեկը վերաբերում է այն տեղին, որտեղ պետք է տեղավորվի եբրայական ցեղը՝ քաղաքակիրթ հասարակության զարգացման մեջ: Առաջինն այն է, որ եբրայեցիները, սկսած մ.թ.ա. 1700-ականներից մինչև այսօր, ունեն մի առանձնահատկություն, որը տատանվում է արիական լեզվի և մշակույթի, սեմական լեզվի և մշակույթի, ինչպես նաև շումմերական և եգիպտական քաղաքակրթության միջև: Սուրբ գրքերում հիշատակվում են Սերուչ, Ուրֆա և Հարրան անունները: Այս վայրերը համարվում են Աբրահամի նախնիների վայրերը: Եբրայեցիները, ամենայն հավանականությամբ, այստեղից Եգիպտոս են գնացել իրենց հոտերով: Նրանք նաև առևտրով զբաղվող ցեղի են նման: Նրանց կրոնական համոզմունքները տատանվում են Յահվեի և ԷԼ-ԱԼԼԱՀԻ միջև: Քաղաքակիրթ հասարակության մեջ չկորելու համար նրանք դիմադրում են: Նրանց յուրահատուկ հավատն առ Աստված կապված է այս դիմադրության հետ: Նրանք արտոնություն ունեն լինելու այն ցեղը, որն ամենաշատը զարգացրել է ցեղային թեիզմը: Նրանց հակամարտությունները Պաղեստինում բազմաթիվ ցեղերի և նրանց աստվածների հետ կշարունակվեն ողջ կյանքի ընթացքում՝ սկսած

Աբրահամի կողմից նեմրոդին (Բաբելոնի թագավորներ) հակառակվելուց, մինչև Մովսեսի՝ փարավոնին (եգիպտական թագավորների) հակադրվելը: Սուրբ գրքում հետաքրքիր պատմություններ կան նրանց մասին: Նրանք երկար ժամանակ պահպանում են իրենց ինքնատիպությունը Մովսեսի ընտանիքի քահանաների առաջնորդությամբ՝ սկսած նրա եղբայր Հարունից (եթե նմանեցնենք շումերներին, ապա առաջին քրմական թագավորներ):

Առաջին քահանաների ժամանակաշրջանից հետո՝ սկսած Մովսեսից (մ.թ.ա. 1300 թ. վերջ) և վերջացրած տիրահոչակ Սամուել քահանայով, մեկնարկեց թագավորության շրջանը՝ ուժեղ քաղաքական-ռազմական ասպեկտներով (Սավուղի, Դավթի, Սողոմոնի և այլոց թագավորության շրջանը մ.թ.ա. 1020 թ.): Ի սկզբանե ուժեղ թագավորներին հետագայում փոխարինում են թույլերը: Փոքր թագավորություն են հիմնում: Թագավորի և քահանաների միջև միշտ հակասություններ կան: Նրանք ապրում են երկու-երեք հոգանոց կուսակցություններում՝ մշտապես կախված արտաքին ուժերից: Չնայած դիմադրող և համագործակցող խմբերը միասին դիմադրեցին Ասորեստանին, մ.թ.ա. 720-ական թթ պարտվեցին: Մ.թ.ա.. 540 թվականին նրանք աքսորվում են Բաբելոն և փրկվում, երբ պարսիկները վերջ են դնում Բաբելոնի տիրապետությանը: Այս զարգացումը մի փոքր նման է Խորհրդային բանակի մուտքին Բեռլին և ցեղասպանությունից մազապուրծ հրեաներին փրկելուն: Նրանք ունեն բազմաթիվ նմանատիպ պատմություններ: Պարսիկների և հույների միջև հակամարտությունում կրկին առաջանում են երկու համագործակցող կողմեր՝ փարիսեցիները և սադուկեցի-

ները: Հետո զարգացավ դիմադրությունը Հռոմի դեմ, առաջին և երկրորդ աքսորը (մ.թ.ա. և մ.թ 70-ականներ): Դրանք սկզբում տարածվել են Եգիպտոսում և Անատոլիայում, իսկ հետո՝ համապատասխանաբար բոլոր քաղաքակրթական տարածքներում: Հաջորդը պարսկական և հունական դաշտերն են և Հռոմը:

Բեմ է բարձրանում դիմադրող Հիսուսը: Նա խաչված է: Այս ի հայտ գալը, որը հռոմեական պրոլետարների համար լեգենդի սկիզբն էր, նաև աբրահամական ծագում ունեցող երկրորդ կրոնի սկիզբն էր: Փոքրիկ եբրայական ցեղի փորձանքներով լի արկածները կշարունակվեն հունահռոմեական և եվրոպական քաղաքակրթության ոլորտում: Նրանք իրենց ղեկավարների մի զգալի մասին անվանում են ռաբբի և ների, ինչը նշանակում է տեր, Աստծո առաքյալ: Այսպիսով, ձևավորվում է մարգարեների երկար շարք: Հիսուսը և Մուհամեդը դառնում են վերջին մարգարեները: Բայց հրեաները նրանց չեն ճանաչում որպես մարգարեներ: Քաղաքական բախումների վերածվող կրոնական հակասությունները շարունակվում են: Գրողների շրջանը սկսվում է հիմնականում հռոմեական տիրապետությունից հետո: Այս ավանդույթը շարունակվում է մինչ օրս՝ գրող-մտավորականների սերնդով առնվազն նույնքան ուժեղ, որքան մարգարեների սերունդը:

Եբրայեցիները, որոնք նախկինում մի փոքր քայլ էին կատարել առևտրի մեջ, ավելի ու ավելի գերիշխող դեր են խաղում կապիտալիզմի և այսօրվա ֆինանսա-կապիտալի գերակայության մեջ: Նրանց թիվը փոքր է, բայց համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ նրանք նույնքան ազդեցություն ունեն, որքան կայսրությունը: Եբ-

բրայական ցեղը մի թեմա է, որը պետք է ուսումնասիրվի առնվազն նույնքան ուշադիր, որքան ցանկացած այլ քաղաքակրթություն: Այն նման է գիտության, իրավունքի և փողի կայսերը: Նույն դերը շարունակվում է այսօր՝ իր բոլոր հետաքրքիր կողմերով, ինչպես եղել է պատմության մեջ: Իմ անձնական պատմությունը նույնպես նման էր այս ցեղի հետ կատարվածի փոքրիկ արտացոլմանը: Ես նույնպես հեռացա Ուրֆայի Սերուչից, ինչպես Աբրահամը: Հիսուսին գերեվարեցին և խաչեցին հրեական թագավորի և քահանայապետի օգնությամբ, որոնք համակարգի գործակիցներն էին: Կրկին Իսրայելի օգնությամբ (Մոսադի և ԿՀՎ-ի համագործակցությամբ) ինձ գերեվարեցին, խաչեցին և փակեցին Իմրալիի բանտում: Իմ դիմադրությունը շարունակվում է խաչի վրա, որը նման է այն խաչին, որի վրա գամված էր Հիսուսը:

Այլ խնդիր են հյուսիսից սկյութների արշավանքները: Այս արշավանքները հիմնված են կովկասյան ծագում ունեցող ցեղերի վրա, որոնք իրենց ինքնությունը գտել են մ.թ.ա. 800-ական թվականներին: Այս ցեղերը, որոնք տարածվել են ամենուր՝ Եվրոպայից մինչև Ասիա, հարավային ռուսական տափաստաններից մինչև Միջագետք, առանձնապես հետք չեն թողնում, քանի որ նրանք ապավինում են ոչ թե մշակույթին, այլ իրենց ֆիզիկական ուժերին: Այնուամենայնիվ, նրանք խաղացին այնպիսի դեր, ինչպիսին էր եբրայական ցեղի դերը բազմաթիվ կայսրությունների հիմնադրման և անկման գործում: Հասկանալի է, որ նրանք մեծ ծառայություն են մատուցել՝ որպես շարասյան զինվորներ և պալատին կին են տվել: Վերջապես, նրանք շարունակում են այս դերը խաղալ Թուրքիա-

յի Հանրապետությունում, ինչպես խաղում էին Օսմանյան կայսրությունում: Կարծես թե, նրանք չեն կարողացել պահպանել սեփական ինքնությունը այնքան, որքան եբրայեցիները: Որպես տոհմային զույն՝ նրանք համեմունք են ավելացնում մշակույթներին: Նրանց կանանց գեղեցկությունը կարող է հարցականի տակ լինել: Կարելի է նշել նաև նրանց համարձակ դիրքորոշումը: Առաջին սերնդի քաղաքակրթական հասարակության մեջ սկյութների և նրանց սերնդակիցների դերը լավ ուսումնասիրության կարիք ունեցող թեմա է: Կենտրոն-ծայրամաս ֆենոմենը պատմական համակարգի կազմավորումներում կարող է օգտագործվել նաև որպես ենթադրություն հետազոտության մեջ: Երբ խոսքը վերաբերում է քաղաքակրթական կենտրոններին, «ի՞նչ է կատարվում շրջակա միջավայրում» հարցը կարևոր է: Երբ պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեցին Շումերի, Եգիպտոսի և Չինաստանի քաղաքակրթական կենտրոնները, շումերների և եգիպտացիների համար ծայրամասային ուժերը սեմական Արամիտներն ու Ապիռու ցեղերն էին, չինացիների համար նրանք նախաթուրքական հոներն էին, հռոմեացիների համար՝ գոթերն էին: Երբ հիմնականում վերին բարբարոսական փուլում գտնվող այս ցեղերի ցեղապետերը սովորում են օգտագործել և ձեռք բերել քաղաքակրթական զենքեր, նրանք ապրում են մշտական հարձակման և պաշտպանության դիրքերում, կարծես, մի տեսակ պարտիզանական պատերազմ են վարում: Նրանց ճակատագիրը կա՛մ հալվելն է գերիշխող քաղաքակրթական կենտրոնի մեջ, կա՛մ հարակից տարածքում նույն կառուցվածքով համանման քաղաքակրթական կենտրոններ հիմնելն

է: Օրինակ՝ ամորացի աքքադները հարձակվեցին և ի վերջո դարձան պետություն՝ որպես առանձին տոհմ: Եբրայեցիները նաև գործի դրեցին Եգիպտոսում սովորածը և հիմնեցին իրենց անկախ թագավորությունը: Հունները, որոնք իրենց հետքն են թողել պատմության ամենաուժեղ բնապահպանական շարժման վրա, չէին կարող խուսափել ձուլվելուց թե՛ Չինաստանում, թե՛ Եվրոպայում, թե՛ նույնիսկ Իրանում: Մինչ ցեղերի պարագլուխները հիմնականում ձուլվեցին քաղաքակրթության կենտրոնական մշակույթների մեջ և դարձան իշխող պարագլուխներ, աղքատ ցեղային խմբերը երկար ժամանակ մարգինալ մնացին կամ փորձեցին նմանատիպ դիմադրություններ և հարձակումներ նոր ղեկավարների հետ: Գոթերը, որոնք անընդհատ հարձակվում էին Հռոմի վրա, դրեցին գերմանական իշխանությունների հիմքերը: Երբեմն նրանք կրում էին հռոմեական թագը: Պատմությունը տալիս է բովանդակալից օրինակ, որը ցույց է տալիս, որ մոնղոլ և օղուզ ցեղապետերը, որոնք օսմանցիների առաջին դինաստիայի հիմնադիրներից էին, բյուզանդական քաղաքակրթության ամբողջական ծայրամասային ուժ էին, և որ հարյուրավոր տարիներ կենտրոն-ծայրամասային պայքարից հետո նրանք գրավեցին կենտրոնը և ավելի շատ դարձան կենտրոն, քան ծայրամաս:

Հյուսիսից եկող ծայրամասային ուժ էին նաև սկյութները, հատկապես առաջին սերնդի քաղաքակրթական կենտրոնների համար, որոնցում գերիշխող դեր էին խաղում հյուսիսն ընդհանրապես և Կովկասը՝ մասնավորապես: Երբ նրանք ճանաչեցին քաղաքակրթությունները և զինվեցին իրենց զենքերով, նրանք դարձան ահռելի հար-

ձակվողական ուժ: Ենթադրվում է, որ նրանք շատ ակտիվ են եղել մ. թ. ա. 800-500-ականների միջակայքում: Թեև նրանք բազմաթիվ դերեր էին խաղում՝ որպես վարձկաններ և պալատական ծառայողներ, չկարողացան իրենց համար ստեղծել քաղաքակրթական կարևոր կենտրոններ և չկարողացան խուսափել իրենց մեծամասնությամբ քաղաքակրթության մեջ ձուլվելուց:

բ- Չինական, հնդկական և բնիկ ամերիկյան մշակույթների զարգացումները

Ուսուցողական կլինի համառոտ դիտարկել չինական և հնդկական մշակույթների զարգացումները և բնիկ ամերիկյան մշակույթը, որոնք քաղաքակրթական համակարգեր են իրենց հատուկ կողմերով:

Ինչպես նախկինում նշել ենք, Չինաստանի վերջին սառցադաշտային շրջանի ավարտը, մ.թ.ա. 10000 թվականից սկսած, ամենակարևոր շրջանն է, որը բնակեցված է խմբերով, որոնք տարածվել են Հարավարևելյան Սիբիրից ավելի հարավ: Պարարտ հողերը, բույսերի և կենդանիների նախանշանները ծովի ափերին և մեծ գետերը շատ հարմար հատկանիշներ են ինչպես նեոլիթյան մշակույթի, այնպես էլ քաղաքային քաղաքակրթությունների համար: Նկատելի է, որ մ. թ. ա. 4000-ական թվականներին չինական նեոլիթյան հեղափոխությունը զարգացել է: Այստեղ կարևոր խնդիրն այն է, թե որքանով է ինքնատիպ նեոլիթյան այս գյուղատնտեսական հեղափոխությունը և որքանով է ազդվել տարածվող արիական մշակույթից: Հավանական չէ, որ արիական նեոլիթյան մշակույթը, որը կառուցվել է առնվազն վեց հազար տարի առաջ, չի արտա-

ցոլվել Չինաստանում: Ավելի կարևոր է, թե որքանով է որոշիչ արիական մշակույթը: Պատմությունը ցույց է տալիս, որ մշակութային մեծ հեղափոխությունները հեշտ չեն լինում, և որ դրա համար ամենաերկարատև և եզակի պայմաններն են պահանջվում: Ենթադրում եմ, որ ինչպես այսօրվա չինական սոցիալիզմը և կապիտալիզմը տեղական և ինքնատիպ են, այնպես էլ չինական նեոլիթն ու քաղաքակրթությունն ունեն նույն բնօրինակ և տեղական դրոշմը: Ինձ սխալ չհասկանաք, ես չեմ կասկածում, որ նույնիսկ ամենա այսպես կոչված ազգային կապիտալիզմը դրսից է ներմուծվել: Սա վերաբերում է նաև Չինաստանին: Չինական նեոլիթը հետագայում տարածվեց Վիետնամում և Հնդկաչին թերակղզում, Ճապոնիայում և Ինդոնեզիայի կղզիներում, Կորեական թերակղզում: Կարելի է մեկնաբանել, որ այս բոլոր զարգացումների պատմությունը չէր կարող սկսվել մ.թ.ա. 4000-ից առաջ:

Չինական ստրկատիրական քաղաքակրթության ծննդյան հաշվարկային ժամկետները մոտավորապես մ.թ.ա. 1500-ականներն են: Կարող եմ նշել, որ այս ընթացքում է հիմնադրվել առաջին մեծ կենտրոնական կայսրությունը, այն կրում է բազմաթիվ սրբություններ, և դա Չինաստանի Ուրուկն է: Մենք նկատում ենք, որ ինչպես շումերներն ու եգիպտացիները մ.թ.ա 1000-ականներին, Չինաստանում էլ հիմնադրման շրջանից հետո տեղի ունեցավ քաղաքային տարածում և ընդլայնում: Այս երկրորդ շրջանում ստեղծվեցին բազմաթիվ քաղաքային պետություններ և տեղի ունեցան բուռն քաղաքային մրցակցային պատերազմներ, որոնք նման էին շումերների Ուր շրջանին: Երրորդ շրջանում (մ.թ.ա. 250 - մ.թ. 250) կենտ-

րոնական դինաստիաները կրկին հզորացան: Ֆեոդալական փուլում գերակշռում էին կենտրոնական դինաստիաները: Հնարավոր է, որ դրանք ներքին կամ արտասահմանյան ծագում ունեն: Այս կենտրոնական դինաստիաները հաստատուն կերպով շարունակվեցին մինչև քսաներորդ դարի սկիզբը: Այս ժամանակաշրջանի չինական քաղաքակրթությունը մ.թ.ա. 500-ական թվականներին տարածվել է միջինասիական մոնղոլների, Հնդկաչինի և Ճապոնական կղզիների պրոտոթուրքերի շրջանում:

Հետաքրքիր է, որ չինական մշակույթում ավելի շատ գոյություն ունեն տիեզերքի վերաբերյալ իմաստունների մեկնաբանություններ, քան շումմերական քահանաների նման աստվածների գյուտեր: Տիեզերքի և բնության նրանց ըմբռնումն ու մեկնաբանությունն ավելի գիտական են: Նրանք նախագծում են տիեզերքը կենդանի իմաստով: Էներգիայի մասին նրանց նկարագրությունները ուսուցանող են: Չինական սպիրիտուալիզմը ընդհանուր առմամբ կարելի է անվանել «տաոսիզմ»: Այն կարելի է անվանել նաև իմաստաբանություն: Ք.ա. 500-ականներին ապրած Կոնֆուցիոսը հիմնականում փորձել է տեսականացնել քաղաքակիրթ քաղաքի ու պետական կարգի սկզբունքներն ու բարքերը: Հավատարիմ է և զարգացնում է այն դոկտրինը, որ պետական հասարակության կառավարումը պետք է հիմնված լինի առողջ բարոյական սկզբունքների վրա, այլ ոչ թե պաշտոնական օրենքների: Նա ապրել է Զրադաշտի և Սոկրատեսի դարաշրջանում և ազդել է քաղաքակիրթ հասարակության վրա, որտեղ նա ապրել է այնքան, որքան նրանք: Այս երեք մեծ իմաստունները հիմնականում ընդգծում են բարոյականության և էական

առաքինության կարևորությունը: Նրանք բարոյականության մեծ ջատագովներ են և իմաստուններ:

Չինացիները զգալի առաջընթաց են գրանցում նյութական քաղաքակրթության մեջ: Նրանք արդյունաբերական զարգացման մեջ առաջադիմել են Արևմուտքից շատ առաջ: Նրանք թղթի, վառոդի և տպագրական մեքենայի հայտնագործողներն են: Նրանք գտնվում են առևտրի ամենաարևելյան ծայրում, որտեղից սկսվեց պատմական Մետաքսի ճանապարհը: Մեր թվարկությունից առաջ և հետո առաջին դարերում ինտենսիվ կապ են ունեցել մերձավորարևելյան քաղաքակրթությունների հետ: Չինաստանի մուտքը դեպի կապիտալիզմ եղավ 19-րդ դարի կեսերին: Այսօր այն աճում է հսկայի պես, և թե ինչ է անելու՝ որպես նոր Լևիաթան, և ինչպես կտարածվի, հետաքրքրությամբ ենք հետևում:

Մենք չենք կարող նկատել տեղական մակարդակում նեոլիթյան երկար զարգացում նաև Հնդկաստանում: Ենթադրվում է, որ այստեղի համայնքներն ապրել են պարզունակ կլանային շրջանը նախքան արիների հետ առաջին շփումը: Արիներն առաջին անգամ Հնդկաստան են մտել մ.թ.ա. 2000-1500 թթ.: Այս մուտքերի հետ է կապված նեոլիթյան հեղափոխությունը: Այս հեղափոխությունը և առանց մեծ ընդհատումների մ.թ.ա. 1000-ականներին սկսված քաղաքակրթական հեղափոխությունը ղեկավարած ուժերը քահանաներ էին, ինչպես շումերների դեպքում: Այս դասի հիմնական սուրբ գիրքը, որը կոչվում է Բրահմաններ, բաղկացած է «Վեդաներից», որոնք առաջացել են մ.թ.ա 1500-ական թվականներին: Վեդաները երբայական Սուրբ գրքի հնդկական տարբերակն են: Բայց

Վեդաները շատ ավելի երկար և բարդ են պատմում այն մասին, թե ինչպես է քահանայական դասը կառուցվել հոյակապ աստվածության հիման վրա: Նրանք չեն անտեսում այս զարգացումը էպոս դարձնելը: Նրանք դարձել են կաստային ռեժիմի հիմքը:

Մ. թ. ա. 1000-ականներին ի հայտ եկան «ռաջաները»՝ քաղաքական-ռազմական իշխանությունը: Նրանք դաժան հակամարտության մեջ են մտնում Բրահմանների հետ: Արդյունքում նրանք դառնում են պետության նոր տերերը, ինչպես երևում է՝ յուրաքանչյուր քաղաքակրթության մեջ: Նրանք կազմում են երկրորդ կաստիկական իշխանությունը: Ինչպես Չինաստանում, Հնդկաստանում էլ բերրի գետերն ու ծովափերը հարմար են գյուղատնտեսության համար: Ավելին՝ մ.թ.ա. 1000-ականներին թվաքանակով ավելացած քաղաքներն աչքի են ընկնում իրենց մեծ պալատներով ու տաճարներով: Գյուղատնտեսությունը շատ ավելի զարգացած է, և ֆերմերներն ու արհեստավորները կազմում են երրորդ կաստային դասը: Ներքևում կանգնած են պարիհները, որոնց հետ վարվում են ավելի վատ, քան կենդանիների: Նույնիսկ նրանց հետ շփումը մեղք է համարվում:

Հնդիկները ձևավորում են շատ գունեղ աստվածաբանություն: Հնարավոր է, որ նրանք կառուցել են անթիվ աստվածային էակներ, ինչպես նաև մեծ աստվածներ: Իրականում նրանց դիցաբանության մեջ շումերների խորը ազդեցությունը երևում է: Նրանց աստվածաբանությունների խառնաշփոթը բխում է նրանց արտաքին ծագումից և սինթեզի ունակության բացակայությունից:

Ինչպես մ.թ.ա 500-ական թվականների բոլոր կարևոր քաղաքակրթություններում (Կոնֆուցիոսը՝ Չինաստանում, Սոկրատեսը՝ հույների մոտ, Զրադաշտը՝ մեդա-պարսիկների մոտ), Հնդկաստանում մեծ կրոնական բարեփոխիչ Բուդդան հայտնվում է ասպարեզում: Բուդդան հայտնի է նրանով, որ մշակել է բարեփոխում, որը հիմնված է բարոյականության և ոչ թե աստվածների վրա: Տեսնելով բնության և հասարակության մեծ տառապանքը՝ նա ցանկանում է մշակել փոխհատուցող մետաֆիզիկական ուսմունք: Բուդդիզմը վարդապետություն է, որն արձագանքում է քաղաքակրթությանը և ունի ուժեղ էկոլոգիական բնույթ: Զարգանում է Չինաստանում, Հնդկաչինում և Ճապոնիայում: Դա վարդապետություն է, որը պետք է ընդգծվի բարոյական մետաֆիզիկայի տեսանկյունից: Ուղղիչ ռեժիմ է, որն իրականացնում է ուժեղ ինքնատիրապետում: Կա նաև աստվածային ռեֆորմիզմ, որը կոչվում է «կրիշնա»: Այն գրեթե նման է Դիոնիսոսի պաշտամունքին (որը խորհրդանշում է թագավորական զարգացումները սկզբնական փուլերում)՝ ի տարբերություն Զևսի պաշտամունքի: Դա կրոն է, որը կրում է նեոլիթյան մշակույթի ուժեղ ազդեցությունները՝ բեռնված սիրային պատմություններով, միահյուսված լեռնային կյանքի, թափառական, ազատ կանանց խմբերի հետ: Ավելի ճիշտ՝ բարոյական ըմբռնում է, որը բարձր արժեք է տալիս ազատ կյանքի ցանկությանը: Այն փաստը, որ հնդկական թեիզմը բեռնված է մի տեսակ մատերիալիստական միտումով, որը հակադրվում է ծայրահեղ մետաֆիզիկային, ցույց է տա-

լիս սոցիալական բարդության և ապրած կյանքի տարբերությունների խորությունն ու մեծությունը:

Պարսկական և Ալեքսանդրի արշավանքներից հետո հնդկական քաղաքակրթությունը ձեռք է բերել կենտրոնացված կառուցվածք: Կայսր Աշոկան, ով մ. թ. ա 300-ականներին վերահսկողության տակ դրեց անկախ ռաջաներին, իրականացրեց առաջին արմատական կենտրոնացումը: Ճիշտ այնպես, ինչպես Մարա-պարսկական կենտրոնական կայսրության հարաբերություններում Զրադաշտի կրոնական բարեփոխումները, Աշոկան, ով վճռականորեն ընդունեց Բուդդայի կրոնական բարեփոխումը, հաջողակ էր այս ջանքերում: Հետագայում նա չի կարողանում պահպանել իր հաջողությունը այնքան, որքան Չինաստանը: Հնդկական ռաջաների անկարգությունն ու քաոսային կյանքը շարունակում են գոյություն ունենալ: Մահմեդական պետությունները Հնդկաստան են ներխուժել 1000-ական թվականներին: Այն կրկին կենտրոնացվել է 1500-ականների սկզբին մոնղոլական ծագում ունեցող մահմեդական կայսրերի իշխանության ներքո: Ձեռք է բերվում որոշակի քաղաքակրթական զարգացում: Քաղաքակրթության տարածումը շարունակվում է: Այն թևակոխեց նոր փուլ՝ 1500-ականներին սկսված կապիտալիզմի վրա հիմնված ներթափանցմամբ և 19-րդ դարի կեսերին բրիտանական կապիտալիստական գաղութատիրությամբ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հնդկաստանը դարձավ անկախ պետություն: Չնայած այն կորցրել է իր երկու ծայրերը՝ Պակիստանը և Բանգլադեշը հյուսիս-արևելքում և հյուսիս-արևմուտքում, այս երկիրը իր լայնածավալ ափերով և գետերով, որոնք

ծածկում են ամբողջ թերակղզին Հիմալայների ստորոտից, այսօր էլ պետք է պահպանի բարդություններ ունեցող իր մշակութային հարստությունը՝ այն խմորելով կապիտալիստական քաղաքակրթությամբ: Քաոսային և հակասական կառույցներով լի միջավայրում Հնդկաստանը ծանոթացել է նաև ժողովրդավարությանը տարբեր կրոնների, լեզուների և քաղաքական կառույցների հետ միասին՝ սկսած գունավոր կրոնական կառույցներից մինչև արվեստ և բարոյականություն: Առնվազն Չինաստանի դեպքում եղածի չափ հետաքրքրություն է առաջացնում, թե ինչպես այն կազդի աշխարհի վրա, եթե բազմաբնույթ հրեշից վերածվի հզոր Լևիաթանի:

Քաղաքակրթական զարգացումները երկրի վրա հիմնված տարածքներում, որոնք ծագում են չինական հիմնական մշակույթից, ինչպիսիք են Ճապոնիան, Ինդոնեզիան, Վիետնամը, Կորեան և այլ նմանատիպ մշակույթներ, նման բնույթ ունեն: Նրանք ունեն հիմնական քաղաքակրթության զարգացմանը հետևելու և տարածելու դիրքորոշում: Մեր թեմայի առումով այն առանձին ուսումնասիրուն չի պահանջում:

Ամերիկյան մայրցամաքում քաղաքակրթության տարածումն ուներ երկու փուլ: Ենթադրվում է, որ առաջին փուլում բնիկ ամերիկացիների խմբերը, որ անցել են Բերինգի նեղուցով և մ.թ.ա. 7000-ական թվականներին տարածվել նախ Հյուսիսային, ապա՝ Հարավային Ամերիկայում (չնայած այս թեմայի վերաբերյալ տարբեր պատմական մեկնաբանություններ կան, ամենահավանականը սառցադաշտային շրջանից հետո տարածումն է: Այն նաև համընկնում է այս տարեթվի հետ): Ենթադրվում է, որ

նրանք հանդիպեցին նեոլիթյան հեղափոխությանը մ.թ.ա. 3000 թվականին, իսկ քաղաքակրթության ուղղությամբ քայլեր են կատարել 500-ական թթ.: Արևելքում (Հարավային Ամերիկա)՝ Մեքսիկայից մինչև Չիլի, նրանք ստեղծեցին առաջին քաղաքակրթությունները, որոնք կոչվում էին ացտեկներ, մայաներ և ինկեր: Այս քաղաքակրթությունները, որոնք նման էին վաղ շումերների Ուրուկ քաղաքակրթությանը, մարեցին, նախքան կհասցնեին ավելի մեծ քաղաքներ հիմնել և ավելացնել դրանց թիվը: Ենթադրվում է, որ դրանում առավելապես դեր են խաղացել կլիմայական և աշխարհագրական պայմանները: Երբ եվրոպացիները եկան, նրանք թեկուզ թույլ էին, բայց շարունակեցին գոյություն ունենալ,: Տպավորիչ են նրանց քաղաքային հզոր կառույցների ու տաճարների ավերակները: Եթե նրանք հնարավորություն ունենային ընդլայնվելու դեպի մայրցամաք, կարող էին անցնել ավելի բարձր փուլեր և հասնել բազմաթիվ կենտրոնների և կենտրոնացման: Քաղաքակրթական այս փորձություններում նկատվում է նաև քահանաների նախնական գերակայությունը: Կարելի է ասել նաև, որ դրանք հիմնականում քահանայական քաղաքակրթություններ էին: Երիտասարդ մարդկային զոհաբերությունները (աստվածներին մարդկային զոհաբերություններ կան շատ քաղաքակրթություններում) սարսափեցնում են: Չնայած կան գրությանը նման նշաններ, սակայն դրանք զարգացած չեն: Նրանք օրացույցում առաջընթաց են գրանցել: Ընդհանուր քաղաքակրթությանը նվիրել են որոշ բույսերի և կենդանիների տեսակներ: Հյուսիսային Ամերիկան այս ժամանակահատվածում որևէ քաղաքակրթության չի հանդիպել:

Քաղաքակրթության իրական վերելքը Ամերիկա մայրցամաքում տեղի ունեցավ 16-րդ դարում սկսված օկուպացիայի, արշավանքի և գաղութատիրության միջոցով: Նոր կապիտալիստական քաղաքակրթությունը 19-րդ դարում ի հայտ բերեց անկախ թվացող երկրների՝ կապիտալիզմի ազգ-պետություն բաժանման տեսքով: ԱՄՆ-ի հիմնադրմամբ Հյուսիսային Ամերիկան (այն շատ արագ ապրեց կապիտալիստական արմատական զարգացում, քանի որ սկզբում ոչ մի քաղաքակրթություն չէր ճանաչում) միացավ և ինտեգրվեց համաշխարհային քաղաքակրթական համակարգին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այն շարունակեց իր վերելքը համակարգի հեգեմոն ուժի՝ ԱՄՆ-ի հետ: Հարավային Ամերիկայի նոր քաղաքակրթական մոդելի որոնումները եվրոպական և ամերիկյան ծագում ունեցող կապիտալիստական քաղաքակրթության (Կուբա, Վենեսուելա, Բոլիվիա և այլն) դեմ այսօր էլ հուզմունքով շարունակվում են:

Այսօրվա հսկա Լևիաթանը պետք է ինստիտուցիոնալացնի առաջին Եվրոպայի սեփական նեոլիթյան մշակույթը: Հռոմեական կայսրության ընդարձակման ժամանակաթը: Հռոմեական կայսրության հետք անգամ չկար, բացի մի քանի հռոմեական կայազորներից: Ի լրումն տարբեր անուններով ցեղերի գաղթի, ինչպիսիք են սկյութները, հոները, գոթերը, կելտերը, սկանդինավյանները, ու նաև ի լրումն հակամարտությունների՝ գյուղատնտեսական զարգացումներին զուգահեռ հանքային ռեսուրսների փոքր առևտուր կար:

Մենք հունական մշակույթն ու Հռոմն անջատ ենք պահում այս գործընթացից: Մերձավորարևելյան քաղա-

քակրթության արևմտյան ծայրամասը կազմող այս երկու ոլորտները կգնահատենք առանձին վերնագրի ներքո:

Այն շրջանները, որտեղ արմատային մշակույթը ձևավորվել է Աֆրիկա մայրցամաքում, որտեղ մարդն առաջին անգամ սկսել է քայլել, ձեռքի տակ եղած գործիքներն օգտագործել ուտելիք փնտրելու համար և նշաններից հետո ձայնային լեզուն ձեռք բերել, դեռևս պահպանում են իրենց հավատարմությունը առաջին խոր արմատավորված մշակույթին, որը ձևավորվել է երկար ժամանակում: Մինչդեռ Աֆրիկյան մայրցամաքում եգիպտական քաղաքակրթությունը Սուդանից այն կողմ ոչինչ չգիտեր, քրիստոնեական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներում պահպանվում էր միայն Հաբիսինիայի մի ծայրում: Իսլամական քաղաքակրթությամբ վերելք գրանցած սեմական արաբների մեծ ներխուժումներով անցած մայրցամաքը հյուսիսում իսլամացվեց, իսկ 19-րդ դարում բոլոր կողմերից եվրոպական կապիտալիստական քաղաքակրթությամբ շրջապատվեց:

գ- Հունահռոմեական քաղաքակրթության և ընդլայնման հիմնախնդիրները

Տարօրինակ չպետք է թվա, որ շումմերական և եգիպտական քաղաքակրթությունների տարածումը միասին ենք ուսումնասիրում: Նրանք երկուսն էլ համարվում են արմատական քաղաքակրթություններ: Մարդկության պատմության մեջ առաջին անգամ դրանք զարգացել են նույն ժամանակահատվածում՝ ազդելով միմյանց վրա: Դրանց տարածումները սերտորեն ազդել են միմյանց վրա: Այս միասնության մեկ այլ պատճառն էլ այն է, որ

դրանք մերձավորարևելյան ծագում ունեն: Դեռ ի հայտ գալու պահից ի վեր դրանց միահյուսումը տարածաշրջանին բնորոշ հատկանիշ է: Մենք տեսել ենք, որ երկու քաղաքակրթություններն էլ շատ «առաջինների» կերտողներն են եղել: Չի կարելի հերքել, որ հետագա ընդլայնումները հիմնված էին այս երկու քաղաքակրթությունների էության և ձևերի վրա: Թեև դրանք բոլորովին նույնը չեն, նրանց ծագումնային կապն անհերքելի է: Առանց Եգիպտոսն ու Շումերը հաշվի առնելու ցանկացած քաղաքակրթության համարժեք վերլուծության հնարավորությունը մնում է շատ փոքր: Ինչպես կապիտալիստական քաղաքակրթության մեջ, այնպես էլ առաջին ստրկատիրական քաղաքակրթության մոդելը տարածվում է՝ հիմնականում Շումերում, իսկ հետո գրեթե շատ քիչ փոփոխությամբ՝ Եգիպտոսում: Չգիտես ինչու, պատմաբաններն ու սոցիոլոգները շարունակում են կրկնել կլիշե մեկնաբանությունները՝ առանց այս կրիտիկական նմանությունների կապը ստեղծելու: Այս կետերը համառորեն շեշտելու պատճառը կլիշե ըմբռնումները ոչնչացնելն է: Մենք խոսեցինք այն դժվարությունների մասին, որոնց հանդիպեցինք առաջին մոդելի ընդլայնման ժամանակ: Առաջինը Շումերի և Եգիպտոսի միջև ազդեցության մակարդակն է: Սա պարզաբանման կարիք ունեցող հարց է: Երկրորդ հարցն է, թե արդյոք պե՞տք է առանձին քաղաքակրթական սկզբնաղբյուր համարել մարա-պարսկական քաղաքակրթությունը, որը սկզբում ձևավորվել էր Միջագետքից դուրս գտնվող կենտրոններում: Հայտնի է, որ այս քաղաքակրթությունն իր հիմնական կատեգորիաներից շատերը վերցրել է շումերներից և նրանց հաջորդներից՝ բաբելոնացիներից,

ասորիներից և ուրարտացիներից: Բայց նաև պատմականորեն ապացուցված է, որ նա լուրջ բարեփոխումներ է կատարել դրանցում: Զրադաշտական բարոյական հեղափոխությունը (ազատության բարոյականությանը մոտ է), կենտրոն-պետություն համակարգը և բանակի կարգադրությունները նորարարության առաջին ոլորտներն են, որոնք պետք է նշվեն: Այդ իսկ պատճառով մենք ստիպված էինք մեկնաբանել մարա-պարսկական քաղաքակրթությունը՝ որպես կարևոր և տարբերվող անցումային կապ հունահռոմեական և շումերա-եգիպտական քաղաքակրթությունների միջև: Պատմության ճիշտ ըմբռնման դեպքում այդ կարևորությունն ու տարբերությունները առանցքային դեր են խաղում քաղաքակրթական փուլերի խնդրի լուծման գործում: Հակառակ դեպքում մենք չենք կարող ճիշտ հասկանալ հունահռոմեական քաղաքակրթությունը, կամ էլ ավելի շատ շփոթություն կստեղծենք ոչ գիտական մեկնաբանություններով՝ դրան վերագրելով հրաշագործ հատկանիշներ:

Երրորդ խնդիրը չինական և հնդկական քաղաքակրթությունների ծագման հարցն էր: Մենք ընդգծեցինք, որ այս քաղաքակրթությունների յուրահատկություններին պետք է որոշակի զգուշավորությամբ մոտենալ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ մեկնաբանել քաղաքակրթությունների նմանություններն ու տարբերությունները:

Նույնիսկ, եթե հարավամերիկյան քաղաքակրթությունները, ինչպես նաև Հարապպանի և Մոհենջոդարոյի քաղաքակրթությունները օրիգինալ էին, ինչպես պնդում են, ավելի իրատեսական մեկնաբանությունն այն է, որ

այս քաղաքակրթությունները մարեցին, նախքան կկարողանային հաղթահարել առաջին քաղաքի հիմնադրման փուլը (Ուրուկի ոճով): Պետք է նշել, որ Աֆրիկայում, Եվրոպայում (ոչ հունահռոմեական) և նույնիսկ Ավստրալիայում քաղաքակրթությունը զարգացել է շատ ավելի ուշ ընդլայնմամբ. այդ տարածքները, այդ թվում՝ Ամերիկան, քաղաքակրթվել են հիմնականում կապիտալիզմի հիման վրա, իսկ իսլամական քաղաքակրթությունը դեր է խաղացել այս շրջանների քաղաքակրթության մեջ մինչ այդ և այդ փուլում: Այս հակիրճ ներածությամբ մենք կարող ենք ավելի ճշգրիտ մեկնաբանել հունահռոմեական քաղաքակրթության սահմանումն ու տարածումը:

Անվիճելի փաստ է, որ հունահռոմեական քաղաքակրթությունը մարա-պարսկական քաղաքակրթությունից շատ ավելի բարձր ինքնատիպություն է ունեցել: Բայց պատմական մեծ կուրություն և խեղաթյուրում կլինի պնդել, որ այս ինքնատիպությունը բառացիորեն ծագել է թերակղզու պայմաններից՝ առանց հաշվի առնելու եգիպտական, շումերական և նրանց հաջորդների՝ բաբելոնական, ասորական, միտաննիի, խեթական, ուրարտական և մարա-պարսկական քաղաքակրթությունների լայն տարածումը և բնորոշ գծերը: Բոլոր գոյություն ունեցող գյուտերը, մտածելակերպի կատեգորիաները, կրոնական, բարոյական, փիլիսոփայական, գեղարվեստական, քաղաքական, տնտեսական և գիտական զարգացումները տեղի են ունեցել նշված քաղաքակրթությունների ծննդյան, զարգացման, հակասությունների և կոնֆլիկտային գործընթացների ընթացքում: Նրանք նեոլիթյան հասարակության ինստիտուցիոնալացման գործընթացնե-

րից զգալի ժառանգություն են ստացել: Մենք փորձեցինք ներկայացնել դրա պատմությունը՝ հատկապես առանց անտեսելու իշխող դասի յուրացնելու, գողանալու, քողարկելու և լեգիտիմություն հորինելու ջանքերը:

Երկար ժամանակ եվրոպական լուսավորությունն ու գիտությունը անտեղյակ էին այս իրողությունից: Հունական և հռոմեական մշակույթներում Վերածննդի դարաշրջանում արմատացած՝ նա պնդում էր, որ գիտության մեջ ձեռք բերված առաջընթացը մեծամասամբ իր սեփական հայտնագործություններն ու գյուտերն են: Այսպիսով, նա մնաց պատասխանատու հունահռոմեական քաղաքակրթության ոչ ճիշտ սահմանման համար:

Եթե նույնիսկ ընթերցվի միայն Հերոդոտոսի պատմությունը, դժվար չի լինի մեծ չափով բացահայտել հունական մշակույթի աղբյուրը: Բոլոր առկա պատմական փաստաթղթերը ցույց են տալիս, որ հնդեվրոպական (արիական) լեզուն և մշակույթը թվագրվում է մ.թ.ա. 5000 թվականից, որ ներթափանցել է հունական թերակղզի, և որ կղզին ապրել է իր նեոլիթյան հեղափոխությունը դրա հիման վրա: Կարևոր է չանտեսել այս փուլի աղբյուրը՝ զարգացումների պատմությունը ճիշտ կարդալու համար: Կարելի է ենթադրել, որ այն թերակղզի է տեղափոխվել մ.թ.ա. 1800-ական թվականներից՝ քաղաքակրթական գյուտերի և գաղթի նոր ալիքով: Մ.թ.ա 1400-ական թվականներին ստեղծվել է Ուրուկին նման առաջին քաղաքը: Այս գործընթացը ստանում է աջակցություն և մոդելավորում երեք ուղղություններից. հիմնականում կա խեթերի ազդեցությունը: Խեթերը այս շրջանները ներկայացնում են Ահիևա անունով: Ավելին՝ սկսած մ.թ.ա. 3000-ական

թվականներից՝ Տրոյայի միջոցով սկսվեց փոխադարձ առևտուրը տարածաշրջանի հետ: Տրոյան այս ժամանակաշրջանում (մ.թ.ա. 3000-1200 թթ.) կենսական քաղաք էր թերակղզու համար: Ուստի, այն գրավվելիք գլխավոր թիրախներից մեկն էր: Խեթերը առատ ներկայացումներ են անում թե՛ զաղափարախոսության (աստվածներ, գրականություն, գիտություն), և թե՛ նյութերի (հատկապես մետաղական իրեր, առաջադեմ խեցեղեն, առնտրի ենթակա տեքստիլ ապրանքներ) առումներով: Նրանք կարևոր դեր են խաղում հույներին քաղաքակրթություն բերելու գործում: Փյունիկեցիները հատկապես սովորեցնում էին նավարկության արվեստը և փյունիկյան այբուբենը: Մերձավորարևելյան մոդելով առևտրային քաղաքներ են հիմնում: Հաստատ է, որ նրանք են եղել թերակղզում քաղաքակրթության զարգացման առաջամարտիկը: Եգիպտացիները գտնվում էին ինտենսիվ ազդեցության դիրքում՝ ինչպես ուղղակիորեն, այնպես էլ Կրետեի քաղաքակրթության միջոցով (միակ բնօրինակ քաղաքակրթությունը, որը կրել է Եգիպտոսի ազդեցությունը), որը զարգացել է նրանց գաղութների հիման վրա: Մերձավորարևելյան քաղաքակրթության բոլոր տեսակի գյուտերը մշտապես սնվում են այս չորս ուղիներով (մինչև մ.թ.ա. 2000-600 թթ.): Ի վերջո, Սոլոնը, Պյութագորասը և Թալեսը մ.թ.ա. 7-6-րդ դարերում այցելում են եգիպտական, բաբելոնական և մարա-պարսկական պալատներ և դպրոցներ, դասեր քաղում, սովորում կանոնների համակարգը և այդ ամենը տեղափոխում թերակղզի:

Տրոյայի անկումից հետո (մ.թ.ա. 1200 թ.) Արևմտյան Էգեյան ծովի ափ ներխուժեցին թերակղզուց եկող հոնիա-

կան, էոլական և դորիական ցեղերը: Այս միգրացիաները, ըստ հաշվարկների, կարող ենք սկսել թվագրել մ.թ.ա. 1000-ականներին: Ցեղերի այս առաջին հարձակումները, որոնց եգիպտացիները կոչում են «ծովային ցեղեր», կապված են Տրոյայի անկման հետ և տարածվում են մինչև Արևելյան Միջերկրական ծով և Եգիպտոս: Այս խմբերը, որոնք հավաքվել են դեպի Արևմտյան Անատոլիա և Էգեյան ծովի կղզիներ, Տրոյայի և խեթական քաղաքակրթությունների տեսանկյունից գտնվում են «բարբարոսական» դիրքում: Քաղաքակրթության տարածքներն են խեթական երկիրը և Տրոյայի փոքր թագավորությունը: Բարբարոսները կարող են քաղաքակիրթ դառնալ միայն կայացած քաղաքակիրթ մշակույթի մեջ երկար մնալով: Ըստ էության, այդպես էլ եղավ, և երկար ժամանակ անց և՛ թերակղզում, և՛ Էգեյան ծովի կղզիներում ու ափերում մ.թ.ա. 700-ական թվականներին ուրբանիզացիան սկսվում է: Հոմերոսը էպոսացնում է պատերազմի հերոսությունը այս երկրատն բնակության շրջանում, հատկապես Տրոյայի շուրջ տեղի ունեցած իրադարձությունները: Նրա Ոդիսականը բաղկացած է կղզու բնակավայրի մասին պատմություններից: Փաստ է, որ Էգեյան ծովի ափին ուրբանիզացիաները որոշակի ինքնատիպություն ունեն: Նրանց հարուստ և բազմազան մշակութային ժառանգությունը և տարածքի հողի արտասովոր համապատասխանությունը բուսական և կենդանական տեսակներին նրանց ուժ և հնարավորություն է տալիս արտացոլելու այս յուրահատուկ սինթեզը նոր քաղաքների ինքնության մեջ: Նրանք մեծ ստեղծագործականություն են ցուցաբերում մերձավորարևելյան մշակույթի և՛ գաղափարական, և՛ նյութական տարրերն ամբողջությամբ վերափոխելու հարցում՝ դրանք մասնակիորեն սինթեզելով նոր էություններով և ձևի էական փոփոխությամբ: Կարելի է ասել, որ նեոլիթյան շրջանը մ.թ.ա. 6000-4000 թվականների իր գյուտերով և հայտնագործություններով իր պատմական ներդրումն է ունենում այս հարցում, ինչպես նաև նրանք օգուտ են քաղում շումմերական, եգիպտական, խեթական, ուրարտական և մարա-պարսկական ժամանակաշրջանների գյուտերից և հայտնագործություններից: Նրանք կատարում են իրենց երկրորդ կամ երրորդ հիմնական մշակութային մղումը:

Այստեղ կարևոր խնդիրն է որոշել, թե որտեղ է գտնվում պատմության ամենամեծ լուսավորչական շարժումներից մեկի կենտրոնը: Հաշվի առնելով, որ առաջին քաղաքի հիմնադրումը (մ.թ.ա. 1400-ական թթ.) մշտական չէր՝ հետագա ընթացքը մնաց մթության մեջ, և կային միայն փյունիկեցիների որոշ առևտրային գաղութներ: Կարելի է նկատել, որ հունական թերակղզին մինչև 700-ական թվականները ոչ մի քաղաքակրթություն չի պարունակել: Ցեղերի միջև հակամարտություններ կան: Աքայացիների նման հայտնի ցեղերը մշտապես հարձակվում են Անատոլիայի քաղաքակրթական շրջանների վրա, հատկապես Էգեյան ծովով: Միանշանակ է, որ նրանք բարբարոսական փուլում են: Նրանց առաջնորդներն ավելի շուտ ցեղապետերն են, քան թագավորները (թագավորը պահանջում է քաղաքի գոյությունը): Թեև մ.թ.ա. 600-ականներին մենք տեսնում ենք Աթենայի (Աթենք) վերելքը, սակայն այն հեռու է քաղաքակրթության կենտրոն լինելուց: Բոլոր հնարավորությունները ցույց են տալիս, որ ավելի կենտրոնական դեր են խաղացել Էգեյան ծովի ափին գտնվող

ցեղերի կողմից կազմված քաղաքները: Լուսավորչական շարժման բոլոր հայտնի անունները, այդ թվում՝ Հոմերոսը, Յոթ իմաստունները, Թալեսը, Հերակլիտոսը, Պարմենիդը, Դեմոկրիտը, Պյութագորասը Արևմտյան Էգեյան ծովափնյա քաղաքներից են: Այստեղ շղթայական քաղաքներ են կառուցվում:

Կարևոր է, որ հայտնի աստվածների, հատկապես Ապոլոնի ծննդյան պատմությունների մեծ մասը ծագում է այս տարածաշրջանից և նրա շրջակայքից: Այս տարածաշրջանում նյութական քաղաքակրթությունը թերակղզու համեմատ շատ ավելի զարգացած է: Տաճարներից և մարգարեությունների կենտրոններից ամենահայտնիները գտնվում են նաև Արևմտյան Էգեյան ծովում: Ավելի առատ ապացույցները ցույց են տալիս, որ Հոնիական քաղաքները դարձել են Էգեյան քաղաքակրթության նոր կենտրոններ խեթերից, փոյուգիացիներից և լիդիացիներից հետո կամ միևնույն ժամանակ: Թերակղզում գտնվողները սրանց շարունակությունն են: Կրիտիկական կետն այն է, որ մ.թ.ա. 545 թվականին Մարա--Պարսկական կայսրության գրավմամբ քաղաքակրթության կենտրոնը տեղափոխվեց Աթենք: Ուստի մ.թ.ա. 500-400-ականները կարելի է մեկնաբանել որպես Աթենայի փառավոր դարաշրջան: Ինչպես հայտնի է, Էգեյան ծովի ափամերձ քաղաքներում քաղաքակրթության բոլոր գաղափարական և նյութական ստեղծագործությունները տեղափոխվում են Աթենք: Մտավորականների մեծ մասն ապաստանում է այնտեղ և Հարավային Իտալիայում ու որոշ կղզիներում: Տարածաշրջանը պարսկական ազդեցության տակ կամաց-կամաց կորցնում է իր նախկին նշանակությունը:

Պարսկական քաղաքակրթությունը, անկասկած, նույն ժամանակաշրջանի ամենաշքեղ քաղաքակրթությունն է: Այս քաղաքակրթությունը ոչ միայն բխում է հունական տարածաշրջանից, այլև մեծ ներդրում ունի դրանում: Բայց Էգեյան տարածաշրջանը, կորցնելով իր անկախությունը, թերևս, կորցնում է առաջին և վերջին անգամ մեծ քաղաքակրթություն հիմնելու իր հնարավորությունը: Հեշտությամբ կարող եմ ասել, որ եթե այդպես չլիներ, Էգեյան ժողովուրդը կարող էր այնտեղից տարածվել ողջ Անատոլիայում և ստեղծել մի քաղաքակրթություն, որը կգերազանցեր շումմերական, եգիպտական, հնդկական, չինական, խեթական և պարսկական քաղաքակրթություններին: Այս դեպքում հունական և իտալական թերակղզիները, հավանաբար, կմնային որպես կախյալ նահանգներ: Նրանք կորցնում են կայսրություն ստեղծելու հնարավորությունը, որը թե՛ բովանդակությամբ, թե՛ լայնությամբ բազմաթիվ անգամ կգերազանցեր Բյուզանդիային: Պարսիկների ներկայությունը Էգեյան ծովում հանգեցրեց նրանց վախճանին և թույլ չտվեց, որ Էգեյան ծովը ստեղծի մի մեծ քաղաքակրթական համակարգ, որի հիրավունքը նրանք ունեին: Որքան էլ մեղադրանքի ու ցավի զգացում լինի, տեղին է: Այս շանսն առաջինը փորձեցին մակեդոնացիները՝ Ալեքսանդրի գլխավորությամբ: Այն, ինչ ի հայտ եկավ, բազմաբնույթ, ապակենտրոնացված, բազմակենտրոն մշակույթն էր՝ Արևելք-Արևմուտք սինթեզով: Թեև սա կոչվում է «հելլենական» մշակութային աշխարհ, այն չի անցել էկլեկտիկական սինթեզ լինելու

սահմանը: Այն հեռու է իսկական օրիգինալ ստեղծագործությունից: Կայսրությունը, որը Հռոմի հետագա հայտնագործությունն էր, Բերգամայում կենտրոնացած նահանգ լինելուց բացի, Էգեյան ծովին ոչ մի այլ հնարավորություն չտվեց: Այն, ինչ արեցին պարսիկները արևելքում, հռոմեացիները կրկնեցին արևմուտքում:

Հայեցակարգային առումով ճիշտ է աթենակենտրոն քաղաքակրթությունը մեկնաբանել որպես իրական քաղաքակրթություն թե՛ քաղաքների աճի, թե՛ թվաքանակի աճի տեսանկյունից: Այն նշանավորում է մի դարաշրջան գաղափարական և նյութական քաղաքակրթության ոլորտում: Աթենան պետք է կարդանք որպես նոր համաձուլվածքի ստեղծում, որը խառնարանում հալեցրել է մեր թվարկած բոլոր քաղաքակրթությունները: Այն իրագործում է քաղաքակրթական մեծ հեղափոխությունը՝ համադրելով նեոլիթյան մշակութային պատմության, քաղաքակրթության պատմության և նոր ժամանակի, ինչպես նաև տեղական ազդեցությունների բոլոր ձեռքբերումները, գաղափարական և նյութական գյուտերը:

Աթենայի քաղաքակրթության առաջին հիմնական առանձնահատկությունն այն է, որ նա գաղափարապես ընդունեց փիլիսոփայությունը որպես մտքի և հավատքի ձև՝ ի տարբերություն հեթանոսական կրոնների: Փիլիսոփայությունը հանգեցնում է իմաստի վերելքի: Այս ժամանակաշրջանում ցանվեցին փիլիսոփայական բոլոր միտումների սերմերը. ծնվելու և քննարկվելու հնարավորություն ունեցան իդեալիզմը, մատերիալիզմը, մետաֆիզիկան և դիալեկտիկական բովանդակությամբ մտածողության բոլոր ձևերը: Մինչ Սոկրատեսից առաջ «բնական

փիլիսոփայությունը» առաջնահերթություն էր, «սոցիալական փիլիսոփայությունը» կարևորություն ձեռք բերեց Սոկրատեսի օրոք և դրանից հետո: Այս զարգացման մեջ իր դերն ունի «սոցիալական խնդրի» (ճնշում և շահագործում) աճը: Եվս մեկ անգամ նշենք, որ «սոցիալական խնդիր» նշանակում է քաղաք-առևտուր-պետություն-կառավարիչ շղթայի հիմնում: Բացի այդ, քաղաքը՝ որպես նյութական քաղաքակրթություն, ազդեցիկ է փիլիսոփայական միտքը անհրաժեշտ դարձնելու համար: Քաղաքն ինքնին նշանակում է անջատում օրգանական հասարակությունից: Ուստի, քաղաքային միջավայրում հեշտությամբ ձևավորվում է բնությունից կտրված մտածելակերպ: Բոլոր տեսակի վերացական, կոպիտ մետաֆիզիկական և մատերիալիստական մտքերի արգանդը շրջակա միջավայրի դավաճանության հիման վրա ստեղծված քաղաքային քաղաքակրթությունն է:

Այսպիսով, եթե փիլիսոփայությունը մի կողմից մտքի շարժում է, ապա մյուս կողմից՝ շրջակա միջավայրից օտարվելու մտքի այլ ձև: Փիլիսոփայական գիտելիքներ տարածող սոփեստները, ինչ-որ առումով, այդ ժամանակաշրջանի (18-րդ դար Եվրոպայում) մտավորականներն են: Նրանք փողի դիմաց դասեր են տալիս հարուստ ընտանիքների երեխաներին. ինչպես քահանաներն են հոր-պես էլ փիլիսոփաները ստեղծում են իրենց դպրոցները: Նրանք որոշակի իմաստով հիմնում են իրենց եկեղեցիները (խորհուրդները): Ձևավորվում են բազմաթիվ փիլիսոփայական դպրոցներ, ինչպես են բազմաստվածային կրոնները: Յուրաքանչյուր դպրոց կարելի է մեկնաբանել

այնպես, կարծես դա կրոն կամ աղանդ լինի: Քանի որ կրոնները, ի վերջո, մտածողության ձև են, դրանք կարելի է համարել ավանդական, ինստիտուցիոնալացված և հավատքի ձև ունեցող փիլիսոփայություններ: Նրանց միջև եղած տարբերությունը չպետք է ընկալել որպես միմյանց լիովին հակադիր: Կրոնը մեծ մասամբ կառավարվող մարդկանց գաղափարական սնունդն է, իսկ փիլիսոփայությունը զարգացած խավի երիտասարդների ու մտավորականների գաղափարական սնունդն է: Ինչ-որ կերպ Պլատոնն ու Արիստոտելը ցանկանում են փիլիսոփայական ոսպնյակների միջոցով կատարել քահանաների պարտականությունները՝ քաղաքը հիմնել, պաշտպանել և փրկել: Փիլիսոփաների հիմնական մտահոգությունն այն է, թե ինչպե՞ս ավելի լավ կառավարել ու պաշտպանել քաղաքային պետությունն ու հասարակությունը, և առաջին հերթին՝ ի՞նչ հիմքերի վրա կարելի է դրանք հիմնել:

Աթենայի քաղաքակրթության երկրորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ այն տեսականորեն և գործնականում շեշտը դրեց ժողովրդավարության (հանրապետության) վրա: Ժողովրդավարությունը քաղաքակրթության ընդհանուր պատմության կարևոր փուլ է: Բայց սա ժողովրդավարություն է միայն արիստոկրատիայի համար: Հաշվի առնելով քաղաք-պետության խիստ սահմանափակ ճանաչումը՝ թերևս, այն չի ներառում նույնիսկ հասարակության մեկ տասներորդը: Բայց դա դեռ շատ կարևոր նորամուծություն է: Այն մեծ դեր է խաղում փիլիսոփայության և քաղաքական արվեստի ձևավորման գործում: Ժողովրդավարությունը՝ որպես հասկացություն, ժողովրդի անձնական ներգրավվածությունն է քաղաքականությանը, այսինքն՝ սեփական իշխանության գործերին: Բոլոր կենսական սոցիալական խնդիրների շուրջ մտածելը, քննարկելը և որոշում կայացնելը ժողովրդավարական քաղաքականության հիմքն է: Հետևաբար, ժողովրդավարական քաղաքականության առանձնահատկությունը, որը նաև նշանակում է բաց հասարակություն, Աթենքի քաղաքակրթության մեջ կարևոր ներդրում է:

Պանթեոնը բացահայտվում է բոլորովին նոր ճարտարապետությամբ: Այն հոյակապ է իր ուղղանկյուն ձևով, որը շրջապատված է մեծ սյուներով, իսկ ծայրից՝ պարսպով: Ապոլոնի, Արտեմիսի և Աթենասի տաճարները, կարծես, մրցակցում են միմյանց հետ բոլոր խոշոր քաղաքներում: Աթենքի հասարակության մեջ ավելի լայնորեն հասկացվում էր, որ աստվածները հորինված են: Ավանդական կրոնական համոզմունքն աստիճանաբար կորցնում է իր արժեքը: Շումերական քաղաքի հիմնադիր աստվածների համար Աթենան և հռոմեական քաղաքակրթությունը, կարծես, իրենց վերջին շունչն է: Լինելով հիմնադիր քաղաքը՝ Աթենքն իր անունը ստացել է իր հիմնադիր և պաշտպան աստվածուհի Աթենասից: Աթենասը մեզ հիշեցնում է Ուրուկի աստվածուհի Ինաննային: Նույնիսկ այս օրինակը ցույց է տալիս, թե ինչ ապշեցուցիչ ավանդույթ է քաղաքակրթությունների և նրանց՝ միմյանց հետևելու նմանությունները: Քաղաքների մյուս մասերն են՝ Ագորան (շուկա), եկեղեցին (հավաքատեղի), թատրոնը, գոմը (ստվերված զբոսավայրի փողոցներ), մարզադահլիճը (մարզադաշտ) և այլն: Այն ձեռք է բերել բազմաթիվ ինստիտուցիոնալ առանձնահատկություններ և ունի

ավելի առաջադեմ կառույցներ, ներառյալ՝ բազմաթիվ պալատներ և նույնիսկ առանց պարիսպների: Նրանք ունեն խեթականին նման, բայց դրանց գերազանցող կառուցվածք: Նրանց բնակչությունն էլ ավելի է աճել:

Զարգացել է գրավոր գրականությունը: Թերևս, մենք կանգնած ենք պատմության մեջ գրավոր փաստաթղթերում գրանցված ամենամեծ գրական մշակույթին դեմ դիմաց: Թատրոնն ապրել է իր ամենահեղափոխական շրջանը: Էպոսներում ողբերգությունները շատ են քննարկվում: Գրվում են պատմական երկեր: Հոմերոսյան էպոսը կարդացվում է դասագրքի պես: Դրամատիզացված են ցնցող իրադարձությունները: Այն նման է կինոյի ավետաբերին: Զարգացան ծովային արվեստն ու առևտուրը: Սա փյունիկեցիներից հետո ամենազարգացած ծովային քաղաքակրթությունն է: Թեև առևտուրը հանրաճանաչ մասնագիտություն չէր և մարգինալ մակարդակում էր, այդուամենայնիվ, առաջին կապիտալիստական միջուկները գոյություն ունեին աթենական հասարակության մեջ: Եթե մի քիչ ավելի շատ շարժվեին, կարծես թե, կանցնեին կապիտալիստական համակարգի: Այստեղ զարգացել է ճարտարապետությունը: Քաղաքի կառուցվածքն արդեն ունի բավականաչափ հատկանիշներ դա ապացուցելու համար: Քանդակագործությունը հասել է իդեալին մոտ ձևի: Առասպելաբանական իրադարձությունները պատկերող ռելիեֆային տեսարանները բավականին ցայտուն են: Անմիջապես պետք է մատնանշենք, որ նրանք ունեն շատ հզոր դիցաբանական գրականություն՝ բաղկացած բոլոր հնագույն քաղաքակրթական դիցաբանությունների (ոչ թե կրոնական համոզմունքներ, այլ մտածելակերպ) սինթեզից: Առասպելաբանությունը այն իրադարձությունները պատմելու արվեստն է, որոնք հասարակությունները չեն կարող լուծել իդեալականացված պատմություններով. այն տարածված է եղել հին ժամանակներում:

Երաժշտությունը զարգացել է ինչպես նվագարանների քանակով, այնպես էլ բազմազանությամբ (շարական, սիրային երգեր, էպոս): Ակնառու գործիքը քնարն է: Բանաստեղծական արտահայտությունը շարունակում է գոյություն ունենալ, թեև ոչ այնքան, որքան հերոսական շրջանը (քաղաքային հասարակությունից անմիջապես առաջ, վերին բարբարոսության փուլը):

Աթենքից հետո գալիս է Սպարտան: Սպարտայի առանձնահատկությունն այն է, որ այն խստորեն շարունակում է հին թագավորության ավանդույթը: Աթենքի և նրա միջև անընդհատ բախումներ և պատերազմներ էին ընթանում: Աթենքի և Սպարտայի մոդելն իր հետքն է թողել ամբողջ թերակղզում: Քաղաքային ընդլայնումը արագ է ընթացել. առաջին հերթին կղզին ու հակառակ ծովի ափերը համալրված են նույն մոդելային քաղաքներով: Կարելի է տեսնել, որ քաղաքների հիմնադրումը սկսվել է նաև Սև ծովի և Մարմարայի ափերին: Ավելորդ բնակչությունը և առևտուրը սկիզբ դրեցին շատ զարգացած գաղութացման նոր դարաշրջանին: Միջերկրական ծովի գրեթե բոլոր ափերում և կղզիներում ստեղծվել են գաղութային քաղաքներ: Հունական գաղութային քաղաք կամ թաղամաս կարելի է գտնել նույնիսկ Եգիպտոսում: Որոշ առևտրային տներ ստեղծվել են Ֆրանսիայի հարավում գտնվող Մարսելում և Իսպանիայի միջերկրածովյան ափին: Դրանք հետագայում վերածվում են քաղաքների: Զգալի

չափով գաղութացվել է նաև Իտալիայի հարավը: Նրանք, կարծես, ստանձնել են փյունիկեցիների դերը: Չնայած այս մեծ զարգացումներին և թերակղզում քաղաքային միությունների ստեղծմանը՝ պարսկական կամ հռոմեական տիպի կայսերական իշխանություն ստեղծել չհաջողվեց: Նրանք, ովքեր չկարողացան կայսրություններ դառնալ ժամանակաշրջանի ոգու պատճառով, ընկան այլ կայսրությունների տիրապետության տակ: Մ.թ.ա. 340-ական թվականներին Աթենայի գլխավորած թերակղզու քաղաքակրթությունը բախվեց մակեդոնացիների սպառնալիքին, որոնք՝ որպես նոր թագավորություն, առաջացան հյուսիսում: Հունական քաղաքակրթությունը, որը չկարողացավ իր հսկայական զաղափարական և նյութական ուժը բերել կենտրոնացված քաղաքական համակարգի, որը գերազանցում էր քաղաքներին, մի քանի դիմադրության պատերազմներից հետո՝ մ.թ.ա.330 թվականից ի վեր, կորցնում է իր անկախությունը՝ այլևս չվերականգնվելով: Բայց, ինչպես Բաբելոնը, այն էլ ավելի երկար կշարունակի իր գոյությունը՝ որպես նոր մշակութային կենտրոն:

Աթենայի ժողովրդավարությանը (որին նախկինում ծանր հարված էր հասցվել Սպարտայի թագավորության հետ երեսնամյա պատերազմում) վերջին հարվածը հասցրեց Մակեդոնիայի միությունը՝ նոր ծագող թագավորությունը: Ֆիլիպը և նրա որդի Ալեքսանդրը, ովքեր ցանկանում էին այլ լեզու օգտագործող և տարբեր տոհմեր կազմող հունական մշակույթի ցեղապետերին պահել սերտ միասնության մեջ, մ.թ.ա. 359 թվականին երաշխավորեցին, որ նրանց ինքնիշխանությունը կճանաչվի ողջ թերակղզու վրա: Հետաքրքիր կյանք ունեցող Ալեքսանդրը

երկար ժամանակ եղել է Արիստոտելի աշակերտը: Արիստոտելը նույնպես ծնվել է Մակեդոնիայի շրջանին մոտ գտնվող քաղաքում: Ըստ երևույթին, նրանց միջև մտերմություն կար ուսուցիչ-աշակերտ հարաբերություններից դուրս: Ալեքսանդրի մահից անմիջապես հետո Արիստոտելի փախուստն Աթենքից ցույց է տալիս դա: Արիստոտելը Ալեքսանդրին կրթություն է տվել Էգեյան ծովի ափին գտնվող քաղաքում: Պարսկական տիրապետության վերջին շրջանում նա իր ուղեղը համալրել է հունական մշակութային բոլոր արժեքներով և դիցաբանական աստվածներով: Չկար մի հույն քաղաքական գործիչ, ով չիմանար, թե որքան ախորժելի էր Պարսկական կայսրության հարստությունը: Պարսիկներին որքան հնարավոր է շուտ հաղթելը նրանց բոլորի կիրքն էր դարձել: Սա այնպիսի զգացում էր, ինչպես օրինակ Իսլամը ցանկանում էր հաղթել Բյուզանդիային: Բոլոր այն զինվորները, ովքեր մասնակցում էին հարձակմանը, ունեին այս գիտակցությունը. Ալեքսանդրի բանակն ավանդական ստրուկների բանակ չէր:

Սա պետք է լավ հասկանալ. Ալեքսանդրը իր հաղթանակն ապացուցած մշակույթի և Արևելքի հարստության վրա աչք ունենալով՝ գործում էր կամավորական զորքերի հետ՝ ցեղերի ղեկավարների ղեկավարությամբ, որոնք փորձում էին դուրս գալ բարբարոսությունից: Նա գործում էր նաև Ֆալանգի՝ բանակային նոր կազմակերպության հետ: Անատոլիայում Գրանիկոսի, Չուկուրովայի, Արևելյան Միջերկրական ծովում Իսոսի և Հյուսիսային Իրաքում Արբելլայի պատերազմներով նա գրավեց տարածքներ մինչև Հնդկաստանի Ինդոսի ափերը: Երբ վերադարձավ

անհանգիստ Հարավային Իրան և 33 տարեկանում անհայտ ձևով մահացավ, Բաբելոնում՝ ժամանակաշրջանի համաշխարհային կենտրոնում, իր հետևում թողեց մի նվաճված աշխարհագրություն, որն ավելի մեծ էր, քան Պարսկական կայսրությունը:

Այս աշխարհագրությունը, որն ամբողջությամբ բացված էր հունական մշակույթի համար, նախկինում քաղաքակիրթ էր: Բայց դրա գաղափարական և նյութական տարրերը հիմնված էին առաջին սերնդի ստրկության վրա: Հունական մշակույթն արդեն գերազանցել էր այս քաղաքակրթական մշակույթին: Այն ավելի երիտասարդ էր և ապագա խոստացավ: Հետևաբար, այն ուներ վարակելու հատկություն: Ինչպես շումմերական քրմերը կառուցեցին առաջին կարգի, քաղաքային և պետական մշակույթը՝ ներդնելով նեոլիթյան մշակույթ, հունական մշակույթը նույնպես երիտասարդական ներդրում էր հին քաղաքակրթական տարածքներում, թեև այն նույն խորությունը չուներ: Նաև «հելլենիզմ» կոչվող ժամանակաշրջանում ստեղծվել են բազմաթիվ թագավորություններ, որոնք, ըստ հաշվարկների, գոյատևել են մոտավորապես մ.թ.ա. 330-մ.թ.ա. 250 թվականների միջև ընկած ժամանակահատվածում: Պտղոմեոսը Եգիպտոսում, Բերգամոսը Անատոլիայում, Սելևկյանները Սիրիայում և Միջագետքում նոր թագավորությունների ֆավորիտներն էին: Աքեմենյան դինաստիայի պարտությունից հետո ստեղծված նոր դինաստիան՝ պարթևները, փորձեցին վերականգնել Իրանական կայսրությունը: Նույն ժամանակահատվածում՝ մ.թ.ա. 250 թվականից մինչև մ.թ.ա. 220 թվականը կառավարած պարթևները նորամուծություն չէին

ներկայացնում: Մոտավորապես այս 500 «հելլենիստական» տարիները ներկայացրեցին շատ կարևոր սինթեզ՝ հատկապես նոր քաղաքների կառուցմամբ, պանթեոններով, որոնք ներկայացնում էին բազմաթիվ խառը մշակույթներ, հատկապես հունական և իրանական աստվածներին և հունական լեզուն և մշակույթը՝ դառնալով գերիշխող պաշտոնական լեզուն և մշակույթը բոլոր մեծ տարածքներում:

Ալեքսանդրի կյանքը Արևելքի և Արևմուտքի սինթեզ էր: Իհարկե, դա այդ ժամանակաշրջանի գերիշխող մշակույթների սինթեզ էր, բայց, այնուամենայնիվ, կարևոր էր: Պատմությունը երբեք մշակույթների այսպիսի մեծ սինթեզ չի տեսել: Սա ներառում է նաև մեր օրերը: Դրա ամենավառ ապացույցը Կոմմագենեի Անտիոքոս թագավորի՝ Նեմրութ լեռան վրա գտնվող ավերված գերեզմանոցն է, որը հիմնված էր ժամանակաշրջանի հզոր թագավորության Ադյաման քաղաքում (այդ ժամանակ մայրաքաղաքը Սամոսատ քաղաքն էր, որը գտնվում է Եփրատի ջրերի տակ): Աշխարհի սակավաթիվ հրաշալիքներից մեկը՝ այս գերեզմանոցը, Արևելք-Արևմուտք սինթեզի խորհրդանիշն է, քանի որ արտահայտում է այս ճշմարտությունը:

Մեր թեմայի համար կարևորն այն չէ, որ այս ժամանակաշրջանում ստրկատիրական քաղաքակրթության տարածումը քաղաքակրթեց դատարկ տարածքները կամ նեոլիթյան բարբարոսական մշակույթները, այլ այն, որ նոր ստրկատիրական՝ հունա-հելլենական քաղաքակրթությունը, որը հասել է ավելի բարձր փուլի, տարածվել է Հնդկաստանից Հռոմ, Սև ծովի հյուսիսային ափերից մինչև Կարմիր ծով և Պարսից ծոց. դա նոր մշակույթի գե-

րիշխանության տակ գտնվող բոլոր տարածքները վերաքաղաքակրթելու փորձ էր: Հռոմում վերելք ապրող նոր մշակույթի ավելի երիտասարդ և ագրեսիվ ներկայացուցիչը հետագայում կզարգացնի նույն գիծը և կկառուցի իր ժամանակի պատմության մեջ ամենամեծ ստրկատիրական կայսրությունը:

Հռոմեական մշակույթի սահմանումը առնվազն նույնքան կարևոր է, որքան աթենական մշակույթի սահմանումը: Առաջին պատճառը, թե ինչու է դա կարևոր, այն է, որ դա Էվերեստ լեռն է՝ ստրկատիրական քաղաքակրթության գագաթը: Դրանից հետո ստրկատիրական քաղաքակրթությունը սկսեց սրընթաց անկում ապրել: Վերջինս ամենից շատ ներկայացնում է կայսերական մշակույթի խորությունն ու լայնությունը: Պատմության մեջ ոչ մի կայսրություն այնքան մեծ չի եղել, որքան Հռոմը: Երրորդ՝ հռոմեական կայսրերը դիմակավորված աստված-արքաների վերջին և ամենահզոր ներկայացուցիչներն են:

Հռոմեական կայսրերի նման իրենք իրենց և՛ մարդ, և՛ աստված համարող, իրենց ուժը գործելու հրամանից և կամքից քաղող, որևէ մեկին, որևէ նյութական կամ հոգևոր ուժի պատասխան տալու կարիք չզգացող, բայց աշխարհում բոլորին և ամեն ինչին պատասխանատվության կանչող ու հպատակեցնող, նման ուժ ու կամք ունեցող այլ մարդիկ չեն գտնվել: Չորրորդ, դա պետությունն է, որը մարդկանց ամենամեծ խմբին ներկայացնում է իրավունք և քաղաքացիություն: Հինգերորդ, այն կայսրությունն է, որն առաջին անգամ առաջացրել է համաշխարհային քաղաքացիություն, կոսմոպոլիտիզմ և, որպես ընդլայնում, համաշխարհային կրոն (կաթոլիկ, էկումենիկ): Վեցերորդը եվրոպական մեծ քաղաքակրթության արշալույսն է՝ կամուրջը: Յոթերորդն այն է, որ երկար ժամանակ այն ապրել է որպես հանրապետություն:

Հռոմ քաղաքը, անկասկած, հրաշքներով չհասավ այս մեծ զարգացումներին: Այն ձեռք է բերել այս մեծ ներուժն ու գործառնական ուժը իրենից առաջ չորս մեծ մշակույթների վերջին և ստեղծագործ ներկայացուցիչը լինելու շնորհիվ: Առաջին մշակույթը նեոլիթյան հեղափոխական մշակույթն է, որն ամենահին մշակույթն է: Մ.թ.ա. մոտ 4000 թվականին այս մշակույթի վերջին ներկայացուցիչները, որոնք ազդել են իտալական թերակղզու, ինչպես նաև ամբողջ Եվրոպայի վրա, իտալական լատինո ցեղերն են: Ճշմարտությանը մոտ ենթադրություն է, որ քննարկվող ցեղերը մ.թ.ա. մոտ 1000 թվականին սկսել են ինքնություն տալ այսօրվա Իտալիային և որոշել նրա էթնիկ ինքնությունը: Կարելի է փաստել, որ այս ինքնությամբ հանդիպել են նեոլիթյան ողջ ինստիտուտներին և նեոլիթական մտածելակերպին: Ըստ երևույթին, եվրոպական ծագում ունեն: Մշակութային ինքնության երկրորդ կրողները մեծ հավանականությամբ միջագետքյան ծագում ունեն. դրանք Անատոլիայի միջոցով մ.թ.ա. 1000-ական թվականներին արիական լեզուն և մշակույթը կրող Էտրուսկներ կոչվող կիսանեոլիթյան, կիսաստրկական քաղաքակրթություն ապրող խմբերն են: Հնարավոր է, որ այս խումբը տարածվել է Իտալիայի հյուսիսում մ.թ.ա 800 թվականին: Նրանք հայտնի են որպես մարդկանց խումբ, որոնք քաղաքակրթության առաջին հետքերը բերեցին Իտալիա և Հռոմ քաղաք: Երրորդ, հենց ձևավորվեց Աթենակենտրոն հունական մշակույթը, որն իր փառահեղ դա-

բաշրջանում էր, այն իր ճյուղերից մեկը բնակեցրեց Հարավային Իտալիայում՝ առաջին գաղութի տեսքով (Պյութագորասը և նրա խումբը մ.թ.ա. 500-ականների վերջին): Չորրորդ՝ մ.թ.ա. 800-ականներին փյունիկեցիների կողմից հիմնադրված Կարթագենը և փյունիկյան այլ գաղութները իտալական թերակղզի բերեցին եգիպտական և սեմական ծագման արևելյան միջերկրածովյան մշակույթը:

Կարելի է ասել, որ այս չորս մշակույթների հոսքը դեպի իտալական թերակղզի՝ որպես բոլոր մշակույթների ֆիլտրացված մեղր՝ բացի Չինաստանից, հռոմեական պատմության գլխավոր հիմնավորումն է, նրա արգանդի հատուկ հյութը: Ճշմարտությանն ամենամոտ եզրակացությունն է, որ Աթենքի և Արևմտյան Էգեյան ծովի մշակութային սինթեզից դուրս սինթեզ է առաջանում այս չորս մշակույթների ներուժի և գործողության արդյունքում: Առասպելն այն մասին, որ Հռոմը կառուցել են Ռոմուլուս և Ռեմուս եղբայրները՝ սնված գայլի կողմից, լայնորեն օգտագործվող ժողովրդական դիսկուրս է բոլոր նմանատիպ կառույցների համար: Հետաքրքիր դիսկուրս՝ արտահայտելու, որ արտաքին աղբյուրը վայրենի է, և այն լողում է տարբեր վայրեր՝ մշակույթների միաձուլում ստեղծելու համար:

Դիցաբանական պատմությունն այն մասին, որ հռոմեական քաղաքակրթությունը Տրոյայի անկումից հետո հիմնադրվել է Պարիսի մարտական ընկերներից մեկը՝ Էնեասի կողմից, չափազանց ուսանելի է Անատոլիայի կերպարն արտացոլելու առումով: Դա մեր մոտեցման էպիկական արտահայտությունն է: Քահանայական թագավորների կողմից մ.թ.ա. 700 թվականին դրա կառուցման

պատմությունը համահունչ է բոլոր նմանատիպ խոշոր քաղաքակրթական քաղաքային հաստատությունների միտումին: Շրջապատող ցեղային խմբերի առատ կոնֆլիկտային պատմությունները հասկանալի են քաղաքային կազմակերպությունների դասակարգ-պետականացում հարաբերությունները լուսաբանելու առումով: Էտրուսկների և լատինների միջև կոնֆլիկտներն ու հակամարտությունները ծագում են բնիկ նեոլիթյան մշակույթի և քաղաքակրթական մշակույթների միջև նման հակասությունից, որոնք պետք է համարվեն օտար, ինչը նույնպես երևում է բազմաթիվ նմուշային հաստատություններում:

Հռոմի հիմադրումից հետո նրա հաջողությունն ու վերելքը պայմանավորված էր թերակղզու դիրքով. դրան նպաստեց այն, որ Հռոմը գտնվում էր քաղաքակրթությունների ամենաարևմտյան ծայրամասում բացակայում էր եվրոպական մայրցամաքից ծագող ավելի ուժեղ քաղաքակրթությունը: Վտանգը կարող է գալ երկու ուղղություններից. արևմուտքից՝ Հունաստանի թերակղզու Աթենքի կենտրոնացված քաղաքակրթությունից և հարավից՝ Կարթագենից, որը Հյուսիսային Աֆրիկայում Փյունիկիայի ամենահզոր գաղութն էր՝ վերածված անկախ քաղաքակրթության: Այն հանգամանքը, որ հունական քաղաքակրթությունը չկարողացավ հաղթահարել գաղութատիրության զարգացման դարաշրջանը, որ անընդհատ ճնշում էր զգում արևելյան պարսիկների կողմից, որ չկարողացավ կայսրություն կամ կենտրոնական թագավորություն դառնալ քաղաքների միջև բուռն մրցակցության պատճառով, և որ կարճ ժամանակում անցավ Մակեդոնիայի թագավորության տիրապետության տակ, ցույց է

տալիս, որ այն չէր կարող լուրջ սպառնալիք դառնալ Հռոմի համար: Կարթագենը ավելի լուրջ հակառակորդ կլիներ: Նրանց՝ իրար շատ մոտ լինելը, նույն տարածքներում ընդլայնվելու միտումը և քաղաքակրթությունների բնույթով պայմանավորված ինքնիշխանության մշտական ձգտումը վաղ թե ուշ նրանց կբերի բախման: Ավելի քան մեկ դար տևած հակամարտությունից հետո վերացավ Հռոմի հաղթանակի համար ամենալուրջ խոչընդոտը: Ալեքսանդրը, ով իր մահից անմիջապես առաջ ճանաչեց Հռոմը որպես իր հաջորդ թիրախ (Հունական թերակղզին արդեն ճանաչում էր նրա իշխանությունը՝ աստված-արքա տիտղոսով), կարող էր լինել ամենալուրջ սպառնալիքը Հռոմի համար: Ալեքսանդրի վաղաժամ մահը Հռոմի մյուս մեծ հնարավորությունն է: Ալեքսանդրի կայսրությունը, որը ստեղծվելու էր Հռոմեական կայսրության փոխարեն, հեշտությամբ կարող էր լինել աշխարհի երբևէ ճանաչված ամենամեծ տերությունը: Ալեքսանդրն ուներ այս տաղանդը: Այնուհետև (մոտավորապես վերջին Կարթագենյան պատերազմից հետո՝ մ.թ.ա. 150թ.) հնագույն քաղաքակրթության և նեղիթյան մշակույթի ողջ աշխարհը բաց էր Հռոմի ախորժակով նվաճվելու համար՝ բացառությամբ ամենաարևելքում Պարսկական կայսրության պարթևական, իսկ ավելի ուշ՝ Սասանյան դինաստիաներով:

Հռոմի Հանրապետությունը, որին նա անցավ մ.թ.ա. 508 թվականին, աթենական ժողովրդավարության ինստիտուցիոնալ շարունակությունն է: Դրանում կարևոր դեր է խաղացել արիստոկրատիայի ուժը, ինչպես նաև մշակութային նոր հիմքը: Բացի այդ, թագավորության նա-

խորդ փորձը կարող էր հաղթահարվել բազմաթիվ զարգացնողների բացակայության պատճառով: Սա փոքր ինչ նման է Սպարտա-Աթենք հակադրությանը: Թագավորություններն ընդհանուր առմամբ պահպանողական են և մեծ հնարավորություն չեն տալիս ազնվականության ծաղկմանը:

Հանրապետությունը՝ որպես քաղաք, հռոմեական ժողովրդին դարձրեց չափազանց գիտակից և վճռական իր շահերի նկատմամբ: Երկպալատ կառուցվածքը (արիստոկրատների և հասարակ քաղաքացիների ժողովներ), հյուպատոսությունը, դատական համակարգի զարգացումը՝ որպես առանձին ինստիտուտ և քաղաքային պահակային ուժերի համանման ինստիտուցիոնալացումը ցույց են տալիս, որ Հռոմեական Հանրապետությունը պրոֆեսիոնալիզացված և կայացած էր՝ աթենական սիրողական ժողովրդավարության համեմատ: Հանրապետական վարչակազմն այն հիմնական աղբյուրներից մեկն է, որտեղ զարգանում է քաղաքականությունը: Այս իրավիճակը ցույց է տալիս նաև քաղաքականության և իրավունքի կապը և պատմական օրիգինալ օրինակ է, որը ցույց է տալիս, որ օրենքը ինստիտուցիոնալացված և, հետևաբար, համաձայնեցված քաղաքականություն է: Հայտնի է, որ Հանրապետության օրոք Հռոմը մեծ արտաքին նվաճումներ է ունեցել, ինչպես նաև ներսում՝ մշակութային հոյակապ զարգացում: Համարվում է, որ հանրապետության մոդելով հռոմեական քաղաքակրթությունը հասել է իր բնական սահմաններին: Հանրապետությունից կայսրություն անցման պատմությունն իրականում աճող հակամարտությունների ու սպառնալիքների խոստովանություն է՝

ինչպես ներքին, այնպես էլ արտաքին: Հեշտությամբ կարելի է ասել, որ Հուլիոս Կեսարի և նրա մրցակիցների միջև հակամարտությունն արտացոլում էր հռոմեական կենտրոնի և նրա ծայրամասի, արիստոկրատիայի ու պլեբեյների միջև առկա հակասությունները: Բրուտոսի արդարացումը իր իսկ դավաճանության համար այն հիմնավորմամբ, թե Հռոմի մեծ պատիվը զոհաբերվել է հանուն զավառների, այն փաստը, որ պլեբեյներն ավելի կեսարամետ են եղել, և որ դավադրությանը մասնակցել են քաղաքային արիստոկրատիայի նշանավոր ներկայացուցիչներ, իսկ Հուլիոս Կեսարն ավելի ազդեցիկ էր զավառներում, հաստատում է այս դատողությունը:

Մինչ ապստամբությունները շարունակվում էին արտասահմանում, իրանցիները հույսը դնում էին Եփրատի վրա: Կեսարի արշավանքները Գալիայում, Բրիտանիայում և Գերմանիայում, ապստամբությունները Անատոլիայում, Իրանի հետ հակամարտությունում Կրասիուսի զոհվելը, հրեաների ապստամբությունը Արևելյան Միջերկրական ծովում, հունական թերակղզու և Բալկանների անվերջ կռիվները, գոթերի, սկյութների և հոների մոտալուտ հարձակումները, որոնք ծագում էին հյուսիս-արևելքից, արաբական ցեղերի անդադար կողոպուտները հարավում և Եգիպտոսում ուժեղ թագավորությունների՝ դեռևս գոյություն ունեցող մնացորդները ցույց են տալիս սպառնալիքի չափը: Ակնհայտ է, որ հանրապետության անվերջ սենատորական բանավեճերը, հյուպատոսների թեկնածուների շուրջ հակառակորդ խմբակցությունների մրցակցությունը և օտար ավարին սովոր մարդկանց քաղաքականացված վիճակը մարտահրավեր էին հանրապետական վարչակարգին արտաքին սպառնալիքների դեմ պայքարում և պատմական որոշումներ կայացնելու իրավիճակներում, որոնք պահանջում էին ակնթարթային որոշումներ:

Հանրապետությունից կայսրություն անցման փուլում, որը համընկնում է մեր թվարկության սկզբի հետ, խորհրդանշական անուն կրող Օգոստոս կայսեր քաղաքականության հիմքում մեր նշած պայմաններն են ընկած: Այս պայմանները պահանջում էին ներքին կայունություն և արտաքին անվտանգության քաղաքականություն: Մոտավորապես մինչև մ.թ. 250 թվականները նման քաղաքականության շնորհիվ է, որ Հռոմը խաղաղության (Pax Romana) հիասքանչ դարաշրջան ապրեց: Հայտնի է, որ դրա հիման վրա մշակվել են կանոնակարգեր: Սենատն ամբողջությամբ թուլացավ և վերածվեց խորհրդատվական խորհրդի, ինստիտուտները վերազինվեցին և ղեկավարվեցին նշանակումներով՝ ընտրությունների փոխարեն, մարդկանց զբաղեցրին զվարճանքներով, դրսում անվտանգության ուժեղ կայազորներ ստեղծվեցին, պրիսպային ամրացումներ և պաշտպանական պատերազմներ եղան: Թեև մեր նշած բոլոր ուղղություններով իրականացվել են հարձակողական արշավներ, սակայն այս բոլոր արշավները եղել են պաշտպանական հարձակումներ: Սրանից հետո մենք ունենք կայսրերի շատ հայտնի ցուցակ. վերջին կիսաստվածների, կիսամարդկանց ցուցակները: Հետաքրքիրն այն է, որ հռոմեական կայսրերն ավելի ու ավելի են գիտակցում դասական պանթեոնի աստվածների անիմաստությունը: Նրանք տե-

սան, որ չեն կարող լեգիտիմություն ձեռք բերել աստվածների այս դիմակով:

Մ.թ. 250-ականներից հետո տեղի ունեցած մեծ իրարանցումը և կայսերական վարչակազմի բազմագլուխ լինելը պառակտման և փլուզման նշաններ էին: Նույնիսկ հայտնի Պալմիրայի թագուհի Զենուբեն իր հերթին հետապնդում էր կայսրության գաղափարը, որը հիմնված էր Եգիպտոսի, Սիրիայի, Անատոլիայի և Իրաքի վրա (այս տերմիններն իրենց ներկայիս տեսքով այն ժամանակ գոյություն չունեին, դյուրին լինելու համար ուզում ենք սահմանել աշխարհագրությունը): Զենուբեի տխուր պատմությունը հռոմեական դասական պատմություն է: Արևելքում Սասանյան նոր դինաստիայի հիմնադիր Արտաշիր I-ը և Օգոստոսի պես մեծ կայսր Շահպուր I-ը մեկը մյուսի հետևից ջախջախում էին հռոմեական զորքերը: Հայտնի է, որ Սասանյանները հասել են մինչև Արևելյան Միջերկրական և Տավրոսի լեռները: Մինչդեռ Եֆրատ-Բիրեքիքի մոտ գտնվող հայտնի կայազորային քաղաքը՝ Զեուգման, վերջնականապես հողին է հավասարվել 256 թվականին: Հատկապես Վերին Միջագետքը դարձավ Հռոմեական կայսրության և պարթևների ու Սասանյան կայսրությունների միջև հակամարտությունների և «փոխհրաձգության» տարածք: Նեոլիթյան հեղափոխության այս սուրբ հողերը և առաջին քաղաքային քաղաքակրթությունները դարձան դիալեկտիկական տրամաբանության հակառակ բևեռի՝ վերածվելով դաշտի, որտեղ պայքարում էին քաղաքակրթությունները և չմնացին սկզբնաղբյուր, որտեղից նրանք ծագել էին: Պատմության ամենաողբերգական զարգացումներից է այն, որ այս հողերը, որոնք չկարողացան ստեղծել իրենց սեփական կենտրոնը ուրարտացիներից հետո, մինչ օրս ենթարկվել են այլ քաղաքակրթական տերությունների մշտական ներխուժման, օկուպացման, անեքսիայի և գաղութային ռեժիմի: Ճիշտ այնպես, ինչպես գլխավոր կինը ամենամեծ մշակութային հեղափոխությունը ստեղծելուց հետո ամենատնահարված էակն է:

Հռոմեական զորքերը դեռ հակազրոհներով առաջ էին շարժվում դեպի Տիգրիսի ափերը: Հայտնի Հուլիանոս կայսրը, ասես Ալեքսանդրին ընդօրինակելով, մ.թ. 365 թվականին Տիգրիսի ափին տեղի ունեցած վերջին մեծ պատերազմում իր ողբերգական մահով ավարտին հասցրեց Հռոմի մեծ կայսրերի դարաշրջանը: Հատկապես արևելյան և եվրոպական մայրցամաքի պատերազմներն արդեն ցույց տվեցին, որ կայսրությունը չի կարող կառավարվել Հռոմից: Երբ հայտնի կայսր Դիոկղետիանոսը 306 թվականին մահացավ, կայսրության գլխին միաժամանակ վեց կայսր կար: Նրանցից ազատված Կոստանդինոս Ա-ն 312 թվականին փոխեց կայսրության կրոնը, իսկ 330 թվականի մայիսի 11-ին՝ մայրաքաղաքը: Պաշտոնական կազմալուծումը տեղի է ունեցել 395 թվականին՝ Կոստանդինների դինաստիայի վերջին կայսր Հուլիանոսից հետո: Արևմտյան հռոմեական կայսրերն այժմ հարձակվող գոթերի ղեկավարների խամաճիկներն էին: Նույնիսկ հոների զորավար Աթթիլան, եթե ցանկանար, 451 թվականին ի վիճակի կլիներ վերցնել Հռոմը: Մինչդեռ, առաջին Հռոմեական կայսրությունը Գոթի թագավոր Օդոակերի հետ թաղվեց պատմության մեջ 476 թվականին: Նրա մշակույթը երկար ժամանակ մնաց գետնի տակ, բայց չմեռավ:

Երկրորդ Հռոմը, այսինքն՝ Բյուզանդիան, երկար ժամանակ շարունակեց իր գոյությունը անորոշ և նմանակող կառուցվածքով (անարդյունավետ կայսրություն, որը կրկնօրինակում էր և՛ Արևելքին, և՛ Արևմուտքին՝ չստեղծելով ոչ մի սինթեզ): Թեև Հուստինիանոսի (մ.թ. 527-565 թթ.) մեծ ջանքերը նախկին կայսերական տարածքները պահպանելու համար արդյունավետ էին, զավառները կամաց-կամաց նրա ձեռքի տակից դուրս էին գալիս:

Բյուզանդիան իրեն բնորոշում է որպես երկրորդ Հռոմ: Կոստանդնուպոլսի՝ երկրորդ Հռոմ լինելու պնդումը չափազանցված կլինի: Չի կարելի ասել, որ դա հին հռոմեական տարածքներում ստերիլ կրկնությունից բացի որևէ այլ նշանակություն ունի: Քրիստոնեական հատկանիշն այլ հարց է: Այն պահանջում է առանձին քննություն: Հետո օսմանցիները և նույնիսկ ռուս սլավոնները (հիմնավորված Մոսկվայում) սիրում են ցարական Ռուսաստանն անվանել երրորդ հռոմեական շրջան: Երրորդ Հռոմ լինելու այս պնդումները, որոնք կապված են քրիստոնեության և իսլամի՝ որպես գաղափարական մշակույթների հետ, ոչ միայն չափազանցություն են, այլև մեծ շփոթություն են առաջացնում՝ խառնելով տարբեր ժամանակաշրջաններ և մշակույթներ: Հաջորդ բաժնում ես կփորձեմ մեկնաբանել «քրիստոնեական, իսլամական և հրեական քաղաքակրթությունների» խնդրահարույց հասկացությունները:

Հռոմից հետո առաջացան բազմաթիվ նոր կայսրություններ՝ Անգլիայից մինչև Սև ծով: Այն բանից հետո, երբ հեթանոսությունը փլուզվեց Հռոմի հետ, հսկայական բաց ստեղծվեց նոր կրոնական հեղափոխության համար: Եվրոպական հեթանոսությունն ու դիցաբանությունը փոքրացվեցին Հռոմի կողմից: Ավելին, պարզ էր, որ հեթանոսությունը, որը որպես պաշտոնական կրոն փլուզվեց Հռոմում, չէր կարող լինել նոր Եվրոպայի գաղափարական սնուցումը: Ժամանակին պետք էր հոգևոր և կրոնական հեղափոխություն, ինչպես նաև նյութական, քաղաքական և տնտեսական հեղափոխություն բոլոր առումներով:

Նախքան քրիստոնեական, ապա՝ իսլամական հեղափոխությունների առաջացմանն ու իմաստին անցնելը, փորձենք շատ լայն ուրվագծերով տալ Հռոմի մշակութային և նյութական հաշվեկշիռը:

Գյուղատնտեսական արտադրությունը, հանքարդյունաբերությունը, արհեստները և առևտուրը աշխարհի խոշորագույն քաղաքակրթական տարածքներում աճեցին կայսրության հովանու ներքո: «Բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ» ասացվածքը նույնպես որոշում է այս տնտեսական ռեսուրսների հոսքի ուղղությունը: Աշխարհը «կերակրեց» Հռոմին: Այս մեծ շահույթով կառուցվեցին հոյակապ քաղաքներ, հատկապես Հռոմը: Հելլենիստական շրջանի քաղաքները պահպանվել են այնպես, ինչպիսին եղել են և հետագայում զարգացել: Հռոմից հետո Արևելքի աստղերի նման էին Անթաքիան, Ալեքսանդրիան, Պերգամոնը, Պալմիրան, Սամոսատը, Եդեսան, Ամիդը, Էրզենի Ռումը, Նեոկայսարիան և Կայսարիան, Տարսոնը, Տրապեզը և շատ այլ հելլենիստական քաղաքներ: Եվրոպայում, և հատկապես Փարիզում, ականատեսն ենք քաղաքային նոր աշխարհի՝ ուրուկների առաջին հիմքերի ծնունդին: Նրանց ճարտարապետությունը նույնն էր, ինչ հունական քաղաքային ճարտարապետությունը, բայց ավելի մեծ ու շքեղ: Դարձյալ շատ զարգացած

էին հոյակապ ջրատարները, անիվներն ու ջրանցքները: Ճանապարհային ցանցն աննախադեպ մակարդակի վրա էր, անվտանգությունն ապահովված էր: Իրոք կար *Pax Romana*: Ընդլայնված էին հանքարդյունաբերական ձեռնարկություններն ու ճարտարապետական գործիքները: Իրենց քարհանքերով և փորագրություններով նրանք կարող էին համեմատվել միայն հին Եգիպտոսի հետ: Մետաղական զրահապատումը և զենքերը բնականաբար ամենաառաջադեմ արհեստներն էին: Առևտուրը լիովին ինստիտուցիոնալացված էր և ձեռք բերեց հեղինակություն ու ժողովրդականություն՝ համեմատած հունական մշակույթում առևտրի դերի հետ: Ի հայտ եկան հայտնի վաճառականներ: Եղավ առևտրային ընդլայնման ուժեղ շրջան:

Թերևս, պատմության մեջ առաջին անգամ իրավունքն այդքան զարգացավ և ինստիտուցիոնալացվեց: Նրանց իրավական օրենսգրքերը օրինակելի են նաև այսօր: Օրենքի բնական հետևանքը քաղաքացիության ամուր ինստիտուտն էր: Հռոմեական քաղաքացիությունը մեծ արտոնություն էր: Աշխարհի բոլոր արիստոկրատական և առևտրական շրջանակները հռոմեացիների նման ապրելն արտոնություն էին համարում: Հռոմեական ոճի կյանքը դարձել էր հիվանդություն, ինչպես այսօրվա կապիտալիստական արդիական կյանքը: Թերևս, այս ավանդույթից է ծագում իտալական նորաձևության համաշխարհային ազդեցությունը:

Մարզական իրադարձությունները դաժան էին: Սարսափելի էին գլադիատորների կռիվները, առյուծների հետ կռիվները, արենաներում ողջ գերիներին քաղցած առյուծներին հրամցնելը: Այս զվարճանքներին ընտելանալով՝

ժողովուրդը բարոյապես նվաստացվում էր: Աստվածների անունով կառուցված պանթեոններն ու տաճարները վերջին ժամանակներում մեծապես կորցրել էին իրենց նշանակությունը: Հռոմեական աստվածաբանությունը ընդունեց հունական աստվածաբանությունը՝ միայն աստվածների անունները փոխելով: Վերգիլիոսը գրել է հռոմեական հիմնադիր էպոսը՝ Էնեասը (որը պատմում է տրոյացի հերոս Էնեասի արկածները՝ Հռոմին պատկանելու զգացում տալու համար)՝ որպես օրինակ վերցնելով Հոմերոսի Տրոյական էպոսը: Մշակութային բոլոր տարրերը, այդ թվում՝ հունական գրականությունը, ընդունվել են միայն լատինականացնելու եղանակով: Սա ներառում էր թատրոնի, պատմության և փիլիսոփայության մասին գրելը: Այնուամենայնիվ, նրանք ստեղծեցին կարևոր գործեր: Հռետորությունը հզոր արվեստ էր: Ռոման նույնպես խոսքի ոճ էր: Թեև հագուստը կրում էր Արևելքի խորը ազդեցությունը, այն նաև շատ օրիգինալ էր: Լատիներենին աստիճանաբար փոխարինեց հունարենը և դարձավ դիվանագիտության ստանդարտ լեզուն, ինչպես նաև միջազգային պաշտոնական լեզուն: Լատինական թարգմանությունները կարևոր դեր են խաղացել հունական դասականների աշխատությունների պահպանման գործում: Քաղաքականությունը դարձել էր արվեստ:

Երբ համեմատում ենք Հռոմի և Աթենքի մշակույթները, հեշտությամբ կարող ենք փաստել, որ աթենական մշակույթում գաղափարական կողմն է գերակշռում, մինչդեռ հռոմեական մշակույթում նյութա-քաղաքական կողմը: Բայց շատ կարևոր է տեսնել, որ երկու մշակույթները կազմում են մեկ ամբողջություն: Կարծես, Ալեքսանդրը և

նրա տերությանը հաջորդած թագավորությունները, իսկ ավելի ուշ՝ հռոմեացիները, քաղեցին Աթենքի կողմից դրված մշակութային հիմքերի օգուտները: Թվում է, թե անհնար է նախագծել Հռոմը առանց հաշվի առնելու աթենական մշակույթը, ինչպես նաև դժվար է առանց դա հաշվի առնելու պատկերացնել այն, որ Հռոմը վերածվել է համաշխարհային կայսրության:

Բայց շատ ավելի կարևորն այն է, որ այս երկու մշակույթները կազմում են արևելյան մշակույթի զարգացման վերջին փուլերը: Հակառակ տարածված կարծիքի, Աթենքից և Հռոմից ծագող մշակույթ և կայսրություն չի ստեղծվել: Երկուսն էլ արևելյան մշակութային աղբյուրներ են, որոնք սնվում են տեղական պայմաններով, ինչը հանգեցնում է ավելի բարձր մակարդակի սինթեզի: Նույնիսկ Եվրոպան հասավ իր մշակութային մեծ հեղափոխությանը՝ այս մշակութային աղբյուրները ևս մեկ անգամ միաձուլելով Հռոմի և Աթենքի սինթեզի հետ: Հնարավոր չէ պատկերացնել եվրոպական մշակույթ առանց Միջագետքի և Եգիպտոսի՝ արևելյան մշակույթի բնօրրանների:

Պատմական զարգացումները նույնպես մի ամբողջություն են նյութական պլանում: Ուրուկից սկսած զոյացած ու մեծացած քաղաքները շղթայի օղակների պես փոխկապակցված են: Մենք տեսանք, որ գրեթե յուրաքանչյուր քաղաքակրթություն ունի «Ուրուկ»: Սա պատահական բան չէ, քաղաքային դիալեկտիկա է: Նույն դիալեկտիկական զարգացումը տեղի է ունենում նեոլիթյան մշակույթի ծննդյան և տարածման ժամանակ: Քաղաքակրթության տարածման այս կարճ ժողովածուում և գնահատման մեջ մենք նկատում ենք, որ չենք կարող

իմաստավորել սոցիալական զարգացումները՝ դրանք առանձնացնելով պատմական և տարածական հիմքերից:

Քաղաքակրթական համակարգերի կողմից մեր աշխարհի նվաճումն ավարտվեց հիմնականում հռոմեական քաղաքակրթությամբ: Փաստորեն, արդեն մուտք էր գործվել հին տարածքների վերանվաճման արատավոր շրջան: Քաղաքակրթությունների միջև վերանվաճման պատերազմներն, ըստ էության, յուրացման և թալանի բնույթ են կրում: Որովհետև քաղաքակրթությունների կերպարները նման են: Նրանք բոլորը ձգտում են թալանել կուտակված վարձը (այս հայեցակարգով նկատի ունեմ զույքային եկամուտները: Անկախ նրանից՝ դա դառնում է մասնավոր, թե պետական սեփականություն, այն բոլոր արժեքները, որոնք բռնագրավվում են յուրացված հողերի վրա աշխատող մարդկանց սնվելուց հետո, հիմնված են սեփականության հիմքի վրա և համարվում են վարձավճար) և այն վերածել սեփականության: Հետևաբար, միջքաղաքակրթական հակամարտությունների ու հանձնումների վրա հիմնված էքսպանսիաներն ուղեկցվում են արժեքների ոչնչացմամբ, ոչ թե նոր արժեքների ստեղծմամբ:

Երբ հետ ենք նայում, տեսնում ենք, որ ասորիների հետ տեղի ունեցած գործընթացը տարբերվել է նախորդներից՝ յուրացնելով նախկին քաղաքակրթության արժեքները: Ասորեստանի կայսրերը, ովքեր պարծենում էին, որ սարսափով գրավել են խեթական, հուրիական, փյունիկյան և եգիպտական քաղաքակրթությունները և մարդկանց զանգերից ամրոցներ ու պարիսպներ կառուցել, իրականում բացահայտ խոստովանեցին մի ճշմարտություն՝ քաղաքակրթական պատերազմները վայրագու-

թյուն էին: Հեգելը նույնը գնահատում էր որպես «պատմության սպանդանոցներ»: Քանի որ պատճառը գույքի ու վարձավճարի տիրոջ փոխվելն է, այլ կերպ հնարավոր էլ չէ: Մի կողմից՝ հասարակություն, որի կյանքն ամբողջությամբ կախված է քաղաքակրթական մշակույթից, իսկ մյուս կողմից՝ մեկ այլ քաղաքակիրթ հասարակություն, որը ցանկանում է յուրացնել այն: Քանի որ նրանցից մեկն իր նպատակին կհասնի միայն մյուսին նյութական և հոգևոր բոլոր արժեքներից զրկելու միջոցով, մյուսին այլևս այլընտրանք չի մնում, քան ոչնչացումը: Եթե նույնիսկ նա հանձնվի (կանոն է, որ, երեխաներին ու կանանց վերցնելով, սպանում են չափահաս տղամարդկանց), այլ արդյունք չի ակնկալվում, քան բնակչության ամենակարող հատվածի ոչնչացումը: Սա է ողբերգականը:

Հույն մտավորականները լավ վերլուծեցին այս հարցը և գրեցին դասական դարաշրջանի ամենաողբերգական պատմությունները: Շումմերական էպոսները նույն տեսակի ողբերգական պատմություններ են: «Ողբ Նիփուրի համար» և «Ազադեի նզովք» պատմվածքները, կարծես, կանխագուշակում են Բաղդադի վիճակն այսօր: Նման համբավ ունի Պարսկական կայսրությունը: Մասնավորապես, այն փաստը, որ այն թույլ չտվեց Էգեյան ծովի ափին ինքնուրույն զարգացումը, սա պատճառ դարձավ պատմության ամենաողբերգական կորուստներից մեկին: Հետո Ալեքսանդրը օգտագործեց նույն քաղաքակրթական տրամաբանությունը. կարծես, գլանակն անցավ մրջյունների վրայով: Աստված-արքայությունը միշտ տիտղոս է, որը ձեռք է բերվում մարդկանց մրջյունների պես տրորելով: Նման զարգացումները կարող են տեղավորվել որոշ

մարդկանց էգոյի մեջ: Այն, ինչ արել է Հռոմը, թերևս, այս տրամաբանությունը իր ամենագեղարվեստական որակին հասցնելն է: Ի՞նչ է նույն արատավոր շրջանը, դաժանությամբ ձեռք փոխելը, նախկին տերերին իրենց հպատակների հետ ոչնչացնելը կամ օգտակար ստրուկների վերածելը, եթե ոչ մարդկության խիղճը չորացնելու արարք:

Երբ ուսումնասիրվում են միաստվածական կրոնները, երևում է, որ նոր մտածելակերպով և գործելակերպով այս կրոնների հակադրությունը քաղաքակրթական վարչակարգերին, որոնք նույնացվում են բազմաստվածության և հեթանոսության հետ, պատմության ամենաիմաստալից զարգացումներից է: Թեև այս կրոնների հիման վրա շարունակվեց որոշակի քաղաքակրթական էքսպանսիա, պարզ է, որ մենք կանգնած ենք մեկ այլ զարգացման դիմաց: Եկեք առանձին վերնագրի ներքո մեկնաբանենք այս ուղղորդված ելքերը:

4- Քաղաքակիրթ հասարակության փուլերը և դիմադրության խնդիրները

Չորրորդ դարի վերջին Հռոմի փլուզման հետևանքով փլուզվում են ոչ միայն քաղաքը և քաղաքակրթությունը, որը կրում էր նույն քաղաքի անունը, այլ նաև ավարտվում է բոլոր հին և դասական քաղաքակրթությունների երկար ժամանակաշրջանը: Հետագա դարերը, որոնք կոչվում են «մութ շրջան», ընդունված է անվանել միջնադար: Այս տեսակի սահմանումը զալիս է պատմական գիտության կառուցման ձևից: Այն կատարյալ իմաստային արժեք չունի, իրականում ավելի շատ իմաստի ավերիչ կողմեր ունի:

Միջնադարը ֆեոդալական ժամանակաշրջան անվանելու պատճառը պայմանավորված է հասարակության ձևավորման պատմության մեթոդի մարքսիստական ըմբռնմամբ: Սոցիալական տեսանկյունից ֆեոդալիզմի սահմանումը մի փոքր հեռու է թվում և իմաստի խորություն չի տալիս: Թերևս, ինչպես նշեցինք, դա ավելի շատ ծառայում է իմաստը շփոթելուն:

Հռոմի փլուզումը մեկնաբանելը՝ որպես հին և դասական դարերի ողջ ստրկատիրական համակարգի լուծարում, կարող է իմաստի խորություն տալ: Փաստորեն, Աստվածաշնչի սկզբնաղբյուրը, որը համարվում է քրիստոնեության մանիֆեստը, և որն ունեցել է ամենամեծ բաժինը դրա լուծարման մեջ՝ շումմերական և եգիպտական ժամանակաշրջաններով, այս դարաշրջանի ամբողջականության արտահայտությունն է հակառակ կողմից: Նույն կետերը վերաբերում են նաև Իսլամի և Բյուզանդիայի երկընտրանքին:

Կարծում եմ՝ Հռոմից հետո ընկած ժամանակահատվածն այլ մեկնաբանություն է պահանջում: Նույնիսկ որպես ներածություն՝ նոր դարաշրջանը թե՛ «մութ միջնադար» և թե՛ «լուսավոր քրիստոնեական և մուսուլմանական դարեր» անվանելը հեռու է տեղի ունեցողի ամբողջական իմաստը տալուց և նույնիսկ աղավաղում է այն:

Քաղաքակրթության մեր գնահատման ընթացքում մենք միշտ խոսել ենք քահանաների կառուցողական հատկանիշների կարևորության մասին: Ավելի ճիշտ՝ մենք նկատեցինք քահանաների այս հատկանիշները: Այնուհետև տեսանք, որ քաղաքական և ռազմական իշխանություն ունեցողները, որոնք ավարտեցին քահանաների

ժամանակաշրջանը և սկսեցին թագավորների ժամանակաշրջանը, ճնշող մեծամասնությամբ իրենց հետքը թողեցին քաղաքակրթական գործընթացների վրա: Որպես մեր ամենաուժեղ մեկնաբանություն՝ մենք նշեցինք, որ քաղաքակրթության մշակույթը որպես ամբողջություն փորձում էր վերացնել այն՝ հակադրվելով նեոլիթյան մշակույթին, անընդհատ նեղացնելով այս մշակույթի շրջանակը և գաղութացնելով ու ձուլելով իրեն: Մենք հայտարարեցինք, որ ավելի կարևոր է նեղ դասակարգային պայքարից դուրս եկող մշակույթների հակամարտությունը և կարևորեցինք դասակարգային պայքարը որպես դրա մաս դիտարկելը: Նաև քաղաքակրթությունների միջև հակամարտությունները գնահատեցինք որպես «սպանդանոց»:

Ինձ ավելի ուսուցանող է թվում այս բոլոր արտահայտությունները վերաիմաստավորելը երկու հասկացությունների ներքո՝ որպես գաղափարական և նյութական մշակույթ: Կարևոր եմ համարում, որ Ֆերնան Բրոդելը կապիտալիստական մշակույթն անվանում է «նյութական մշակույթ»: Այս հայեցակարգի օգտագործումն ու հանրահռչակումը ոչ միայն կապիտալիստական քաղաքակրթության, այլ նաև բոլոր դասակարգային, քաղաքային և պետական քաղաքակրթությունների համար կմեծացնի մեր վերլուծության հնարավորությունները: Նյութական և հոգևոր մշակույթի տարանջատումը միմյանցից անխափան շարունակվեց քաղաքակրթական գործընթացների հիմնադիր փուլերից մինչև կապիտալիզմ: Կապիտալիզմը նյութական մշակույթի հարթությունում ներկայացնում է այս գործընթացի միայն վերջին փուլն ու գագաթը: Գաղափարախոսական (այն կարելի է անվանել նաև հոգևոր)

մշակույթը նույնպես ի սկզբանե գոյություն ունի և պետք է գագաթնակետին հասնի կապիտալիզմին համապատասխան ազատության սոցիոլոգիայի փուլում: Երբ մենք զարգացնում ենք մեր հետազոտությունն այս առումով, մենք և՛ մեծացնում ենք մեր իմաստային ուժը նյութական ու գաղափարական մշակույթի հարաբերություններում, քաղաքակրթության պատմության հակազդեցության հակամարտություններում, և՛ կապ ենք հաստատում ազատության սոցիոլոգիայի ու «միջնադարյան ու կապիտալիստական արդիականության» միջև: Սա կօգնի նաև հասկանալ ազատ կյանքի իմաստը գաղափարական մշակույթի հարթության մեջ: Այսպիսով՝ մենք շատ լավ պատրաստված կլինենք մեր գնահատման համար:

Մեկնաբանությունները, որոնք ես կանեմ, ավելի շուտ փորձնական են լինելու ազատության սոցիոլոգիայի կառուցման վերաբերյալ, որը հիմնված է մինչ այժմ մեր դիտարկած նեոլիթական մշակույթի և քաղաքակրթական մշակույթի գնահատման վրա: Ազատության փաստացի սոցիոլոգիայի կառուցման վերաբերյալ մեր աշխատանքը կփորձենք ներկայացնել կապիտալիստական քաղաքակրթության վերաբերյալ մեր դիտարկումներն ավելի ընդգրկուն կերպով կատարելուց հետո:

ա- Պետք է փաստեմ, որ նեոլիթյան մշակույթի և գաղափարախոսական ու նյութական մշակույթի տարբերման հարցում լուրջ խնդիրներ չեն կարող լինել, այն ավելի շատ բախվում է բուռն խնդիրների, երբ մտնում է արգելափակման փուլ և չի կարողանում պաշտպանվել քաղաքակրթական հասարակության զարգացումից: Առաջին հերթին կարիք եմ զգում ընդլայնելու «խնդիրներ» հասկացությունը, որը միշտ օգտագործում եմ որպես վերնագրի թեմա: Իմ օգտագործած իմաստով այս հասկացությունը վերաբերում է անհատի և հասարակության համար անկայուն դարձած գաղափարական և նյութական մշակույթի քառսային վիճակին: Խնդրահարույց իրավիճակից ելքը վերաբերում է նոր հասարակության կազմակերպված վիճակին այն բանից հետո, երբ նա ունի բովանդակալից կառուցվածք: Ինչպես բազմիցս փորձել եմ մեկնաբանել, դա բացատրում է, թե ինչ գործառույթ ունեն գաղափարական մշակութային կառույցները, ինստիտուտներն ու հյուսվածքները, դրանց իմաստներն ու հոգեվիճակները: Նյութական մշակույթը, որը ես պետք է բացատրեմ այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են ֆենոմենը, երևույթը, ինստիտուտը, կառուցվածքը և հյուսվածքը, վերաբերում է գործառույթի և իմաստի տեսանելի և շոշափելի մասին: Եթե ցանկանում ենք այն ինտեգրել համընդհանրության հետ, ապա այն փորձում է սոցիալական իրականության մեջ որոնել և մեկնաբանել էներգիա-մատերիա դիալեկտիկական երկընտրանքը:

Եթե դիտարկենք այս հայեցակարգերի լույսի ներքո, կարելի է հասկանալ, որ այն խնդիրները, որոնք կսպառնային կյանքին և կհանգեցնեին նեոլիթյան հասարակության գաղափարական և նյութական մշակութային տարրերի միջև բախման, հիմնականում չեն առաջացել, հատկապես կայացման և ինստիտուցիոնալացման փուլում: Սոցիալական բարոյականությունը դա թույլ չի տվել: Սոցիալական ճեղքվածք առաջացնող հիմնական գործոնը հանդիսացող մասնավոր սեփականությունը զարգանալու հնարավորություն չունի: Հարակից մեկ այլ խնդիր՝ աշ-

խատանքի բաժանումը սեռերի միջև, դեռևս չի ճանաչում սեփականության և ուժի հարաբերությունը: Բացի այդ, չկա մասնավոր սեփականություն սննդի ձեռքբերման հարցում, որը համատեղ աշխատանքի արդյունք է: Այս բոլոր հարցերում չափերով և քանակով չաճած համայնքները միմյանց հետ սերտ կապերով ունեն ընդհանուր գաղափարական և նյութական մշակույթներ: Մասնավոր սեփականությունն ու ուժը դիտվում են որպես կենսական վտանգ, քանի որ դրանք կկործանեն այս կառույցը, իսկ կիսելն ու համերաշխությունը հասարակությանը կենդանի պահող հիմնական սկզբունքներն են՝ որպես նրանց բարոյականության հիմնական կանոն: Նեոլիթյան հասարակության ներքին կառուցվածքը, ըստ երևույթին, չափազանց ամուր է այս իմաստային սկզբունքով: Հասարակության այս ոճի հազարավոր տարիներ գոյատևելու պատճառը բխում է այս իրականությունից: Հասարակություն-բնություն հարաբերություններում, քաղաքակրթական հասարակության հետ համեմատած, բացը ոչ միայն մեծանում է, այլև երկու մշակույթներում էլ պահպանվում է էկոլոգիական սկզբունքի համապատասխանությունը: Հասարակության մտածելակերպում բնությունը բեռնված է սրբությամբ և աստվածայնությամբ: Բնությունը համարվում է կենդանի, ինչպես մարդիկ: Քանի որ այն մարդկանց առաջարկում է օդ, ջուր, կրակ և բոլոր տեսակի բուսական ու կենդանական սննդանյութեր, այն համարվում է Աստծուն հավասար, ավելի ճիշտ՝ աստվածության ամենահզոր տարրն է: Ինտենսիվորեն նկատվում է, որ Աստծո և աստվածության հայեցակարգի ամենաուժեղ պատճառներից մեկը հենց այս իրականության մեջ է:

Երբ տեղը գա, մենք կմեկնաբանենք այն իմաստը, որը քաղաքակիրթ հասարակությունը տալիս է Աստծո հայեցակարգին: Կարևորն այն է, որ նեոլիթյան հասարակության մտածելակերպը մեծապես զբաղեցրած աստվածությունները ոչ մի կապ չունեն կեղեքման, շահագործման ու բռնակալության, ոչ էլ այդ երևույթների կոծկման հետ: Հասարակությունը մեծ նշանակություն է տալիս այս աստվածությունների հետ ներդաշնակ ապրելուն, որոնց նա մոտենում է զգացմունքներով, ինչպիսիք են ողորմությունը, երախտագիտությունը, առատությունը, սերն ու ոգևորությունը, իսկ երբ ամեն ինչ վատ է ընթանում, կապվում է վախի և լույսի հասկացությունների հետ (այսինքն՝ գիտական իմաստով բնապահպանական մոտեցում ունենալ, բնության հետ ներդաշնակ ապրել): Անհրաժեշտության դեպքում նա որպես զոհ մատուցում է իր ամենաթանկ ունեցվածքը՝ իր երեխաներին, երիտասարդներին ու դուստրերին, որոնք նրա մի մասն են: Աստծո սոցիալական ասպեկտն արտահայտվում է «տոտեմ», «տաբու» և «մանա» հասկացություններով, որոնք նույնպես համարվում էին պաշտամունք հին կլանային հասարակության մեջ և ընդունվում որպես բուն համայնքի նախնիների գոյություն: Կարելի է ասել, «նախնյացությունը», «մայրաստվածուհին» իմաստ են գտնում՝ որպես կրոն: Թեև սրբություն արտահայտող տոտեմ, տաբու և իմաստ հասկացությունները լիարժեք աստվածություն չեն համարվում, դրանք միշտ կախված են նրանց գլխին՝ որպես իրենց մտածելակերպի ծանր ամպ: Ըստ էության, սրբությունը այն վերաբերմունքն է, որը նրանք ցուցաբերում են այն ամենի նկատմամբ, ինչն ազդում է նրանց կյանքի վրա

(երբեմն ակնածանքով և ոգևորությամբ, երբեմն վախով և անհանգստությամբ, երբեմն սիրով և հարգանքով, երբեմն ցավով և լացով)։ Դա այն արժեքն է, որը նրանք տալիս են իրենց կյանքի վրա առարկաների և իմաստների ազդեցությանը։ Սա կարող ենք մեկնաբանել նաև որպես բարոյականություն։ Իրականում բարոյականության հիմքն այս աստվածություններն ու սրբություններն են, որոնք, նրանց կարծիքով, կենդանի են պահում իրենց համայնքները և հիմնարար դեր են խաղում։ Համայնքները շատ լուրջ են վերաբերվում դրան։ Նրանք կարծում են, որ նույնիսկ կանոնների ամենաչնչին խախտումը, անհարգալից վերաբերմունքը կամ զոհաբերություն չմատուցելը կհանգեցնի աղետի։ Այսինքն, լիովին բարոյական հասարակություններ են։ Թեև բույսերը և կենդանիները, որոնց նրանք ընտելացրել են և դարձրել են իրենց մշակույթը, սոցիալապես պատկանում են համայնքներին, այդուամենայնիվ, դա չի կարելի սեփականություն անվանել։ Սեփականատիրությունը պահանջում է օբյեկտիվություն։ Սակայն դեռ չկա մի մտածելակերպ, որը կբերի օբյեկտիվ-սուբյեկտիվ տարբերակման։ Նրանք առարկաները համարում են իրենցը։ Ինչքան որ իրենք միմյանց համար սեփականություն են, այնքան էլ բույսերն ու կենդանիները, որոնց նրանք ներգրավում են իրենց մշակույթի և կենցաղի մեջ, նրանց սեփականությունն են։ Հետևաբար, էկոլոգիական լուրջ խախտում չի կարող լինել։ Անկասկած, սկիզբ է դրվել մի բանի, որը տանելու է սեփականության։ Բայց դրա վերածումը անշարժ գույքի կիրականացվի երկար ժամանակ անց՝ տարբեր պայմաններում։ Մեր ասածը չպետք է մեկնաբանվի այնպես, որ մենք նեոլիթյան հասարակությունը տեսնում ենք որպես «դրախտ»։ Հասարակությունն ինքը դեռ երիտասարդ է, և նրա ապագան անորոշ է. այն վտանգի տակ է՝ հաճախակի փոփոխվող բնական պայմանների, ոչնչացման հնարավորության պատճառով։ Հասարակությունն այս մասին տեղյակ է։ Սա այն է, ինչը իր հետքն է թողնում նրա մտածելակերպի վրա։ Որպես սրա լուծում, թեև դա կարող է շատ միամիտ թվալ, անխուսափելի է թվում դիցաբանական և կրոնական չափումներով մետաֆիզիկա մշակելը։

Այս մեկնությունների հիման վրա մենք կարող ենք ավելի լավ հասկանալ մայր-կնոջը շրջապատող հավաքական կյանքի իմաստը և դրա վրա հիմնված սրբության ու աստվածության մետաֆիզիկան։ Մայր-կինը, ինչպես բնությունը, թե՛ նյութական, թե՛ հոգևոր մշակույթի գերիշխող տարրն է՝ իր պտղաբերությամբ, դաստիարակությամբ, կարեկցությամբ և կյանքում մեծ տեղով։ Բացի ամուսին լինելուց, տղամարդը դեռևս չունի և չի էլ կարող «ստվեր» ունենալ հասարակական կոլեկտիվի վրա։ Հասարակության կենսակերպը դա թույլ չի տալիս։ Հետևաբար, տղամարդկանց այնպիսի որակները, ինչպիսիք են գերիշխող սեռը, ամուսին, գույքի սեփականատեր, պետության տեր լինելը լիովին սոցիալական բնույթ ունեն և հետագայում կզարգանան։ Հասարակություն նշանակում է մայր-կին, նրա երեխաները և քույր-եղբայրները։ Եթե ամուսնու հավանական թեկնածուն տղամարդ է, նա կարող է ընդունվել միայն այն դեպքում, եթե նա ցույց տա այլ հմտություն, քան ամուսին լինելը, օրինակ՝ եթե ապացուցի իր օգտակարությունը լավ որսորդ լինելու և բույսեր ու կենդանիներ աճեցնելու հարցում։ «Ես կնոջս տղամարդն

եմ և երեխաներիս հայրը» իրավունքն ու զգացումը դեռևս չի ձևավորվել՝ որպես սոցիալական երևույթ: Չմոռանանք՝ թեև չի ասվում, որ դրանք հոգեբանական չափումներ չունեն, բայց հայրությունը և նույնիսկ մայրությունն, ըստ էության, սոցիոլոգիական հասկացություններ, փաստեր և ընկալումներ են:

Ե՞րբ է նեոլիթյան հասարակությունը մտել փակուղի կամ փորձ է արվել հաղթահարել այն: Այս հարցի շուրջ հնարավոր է մեկնաբանություններ մշակել՝ ելնելով ներքին ու արտաքին պատճառներից: Այն փաստը, որ մարդը հաղթահարեց իր թուլությունը և դարձավ հաջողակ որսորդ և հասավ ամուր դիրքի իր շրջապատի հետ, կարող է սպառնալ մայրապետական կարգին: Բույսերի և կենդանիների լավ բուծումը նույնպես, կարող է, հանգեցրել է այս ուժին: Մեր հիմնական դիտարկումները ցույց են տալիս, որ նեոլիթյան հասարակությունը կազմալուծվել է արտաքին գործոնների պատճառով: Այս գործոնն, անկասկած, քահանայի սուրբ պետական հասարակությունն է: Ստորին Միջագետքի և Նեղոսի առաջին քաղաքակիրթ հասարակությունների պատմությունները մեծապես հաստատում են այս մոտեցումը: Ինչպես փաստերով բացատրեցինք, զարգացած նեոլիթյան սոցիալական մշակույթը և ալյուվիալ հողերում արհեստական ոռոգման տեխնիկան հանգեցրին այս հասարակության համար անհրաժեշտ ավելցուկային արտադրանքի: Նոր հասարակությունը, որը ուրբանիզացվել է ավելցուկային արտադրանքի շուրջ, կազմակերպվել է պետության տեսքով և իր գերակշռող արական ուժով հասել է միանգամայն այլ դիրքի: Ուրբանիզացիայի աճը նշանակում է ապրանքայնացում: Այն իր

հետ բերում է նաև առևտուր: Մյուս կողմից, առևտուրը գաղութների տեսքով ներթափանցեց նեոլիթյան հասարակության երակներ՝ գնալով մեծացնելով ապրանքայնացումը և փոխանակման արժեքը (նեոլիթյան հասարակության մեջ առարկաների օգտագործման արժեքը վավեր է: Փոխանակության փոխարեն այն որպես նվեր առաջարկելն էական է), տարածելով սեփականատիրությունը, ինչն արագացրեց այս հասարակության քայքայումը: Ուրուկի, Ուրի և Ասորեստանի գաղութները հստակորեն ապացուցում են այս փաստը:

Այդ հիմքով քաղաքակրթությանը միացել են Միջին և Վերին Տիգրիս-Եփրատ ավազանները, որոնք նեոլիթյան հիմնական շրջանն էին: Բոլոր կլանային համայնքներն՝ անկախ նրանից, հասե՞լ են նեոլիթյան մակարդակին, թե՞ ոչ, ճնշող մեծամասնությամբ բախվել են քաղաքակիրթ հասարակության արտաքին հարձակումներին և պետական հասարակության օկուպացման, ներխուժման, գաղութատիրության, ձուլման և ոչնչացման մեթոդներին: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ նման զարգացումներ տեղի են ունենում բոլոր շրջաններում, որտեղ կան մարդկային համայնքներ: Նեոլիթյան հասարակությունը, որին կարող ենք անվանել հասարակության ցողունային բջիջ, և որը քայքայման գործընթաց է մտել քաղաքակրթական հասարակության հարձակումների հետևանքով ու հետագայում հասել է վերին աստիճանի բոլոր բնագավառներում, որպես նախկին ժամանակաշրջանների համայնքների մնացորդ՝ շարունակել է իր գոյությունը մինչև մեր օրեր:

Իմ անձնական կարծիքով՝ նախաքաղաքակիրթ հասարակությունը երբեք չի կարող ավարտվել և ոչնչացվել: Այս հասարակություններն այսպիսին են ոչ թե այն պատճառով, որ շատ ուժեղ են, այլ որովհետև սոցիալական գոյությունն առանց նրանց հնարավոր չէ, ինչպես տեսնում ենք ցողունային բջիջների դեպքում: Քաղաքակիրթ հասարակությունը կարող է գոյություն ունենալ միայն իրեն նախորդած հասարակության հետ միասին: Սա իրականություն է, ինչպես կապիտալիզմը հնարավոր չէ առանց աշխատողների: Քաղաքակիրթ հասարակությունը նույնպես կարող է իր գոյությունը դիալեկտիկորեն հնարավոր դարձնել միայն ոչ քաղաքակիրթ կամ կիսաքաղաքակիրթ հասարակություններին ապավինելու եղանակով: Ավերածություններ ու ոչնչացումներ կարող են մասամբ լինել, բայց դրա՝ ամբողջությամբ տեղի ունենալը հակասում է սոցիալականության բնույթին: Այնուամենայնիվ, մենք չպետք է թերագնահատենք նեոլիթյան հասարակության գաղափարական մշակույթը, որը գոյատևել է պատմության ընթացքում: Մայրության օրենք, սոցիալական համերաշխություն, եղբայրություն, անշահախնդիր և զուտ սոցիալական սեր, հարգանքի և բարության գաղափար, այսինքն՝ բարոյականություն, անվերապահ օգնություն, հարգանք նրանց հանդեպ, ովքեր իրական արժեք են ստեղծում և կենդանի են պահում հասարակությանը, հավատարմություն չաղավաղված էությանը, սրբություն և աստվածություն, հարևանների նկատմամբ հարգանք, անմահ արժեքներ՝ ինչպիսին կարոտն է հավասարության և ազատ ապրելու հանդեպ. սրանք հասարակության գոյության հիմնական պատճառներն են: Սրանք նաև արժեքներ են, որոնք երբեք չեն կորցնի իրենց գոյությունը, քանի դեռ սոցիալական կյանքը շարունակվում է: Հասարակության մեջ ժամանակավոր է քաղաքակրթական արժեքների առկայությունը, որոնք բեռնված են բազմաթիվ անհարկի նյութական և հոգևոր մշակութային տարրերով, ինչպիսիք են ճնշումը, շահագործումը, յուրացումը, թալանը, բռնաբարությունը, ջարդը, անխղճությունը (անբարոյականությունը), ոչնչացումը և լուծարումը: Սրանք ավելի շուտ հիվանդ ու խնդրահարույց հասարակության հատկանիշներն են:

«Ազատության սոցիոլոգիա» վերնագրով պաշտպանական ճառում, որը պատրաստում եմ, կմեկնաբանեմ, թե ինչպես կարելի է հաղթահարել քաղաքակիրթ հասարակության հիվանդ ու խեղաթյուրված արժեքները և մնացյալ մշտական սոցիալական արժեքները ինտեգրել ազատ, հավասար և դեմոկրատական հասարակությանը:

Բ- Քաղաքակիրթ հասարակությունը երեք փուլով մեկնաբանելը կարող է ուսանելի լինել՝ որպես նախնական, միջին և վերջնական փուլեր: Այնուամենայնիվ, պետք է լավ իմանալ, որ քաղաքակիրթ հասարակությունը մի ամբողջություն է, որ նման տարբերակումները կարող են հեշտացնել վերլուծությունը, և որ, կոնկրետ ասած, այն «երկար ժամանակ» կպահպանի իր բարդությունն ու ամբողջականությունը:

Քաղաքակիրթ հասարակությանը վերագրվող քաղաքավարություն, տակտ, ջենթլմենություն, կանոնների հարգանք, չափավորություն, պլանավորվածություն, խելամտություն, իրավունքին կապվածություն, խաղաղասիրություն և նմանատիպ ածականները ամբողջովին վե-

րագրումներ են և միայն քարոզչական արժեք ունեն: Քաղաքակիրթ հասարակության իրական դեմքը բռնությունն է, սուտը, խաբեությունը, կոպտությունը, խարդավանքը, պատերազմը, ստրկությունը, ավերումը, անհավատարմությունը, յուրացումը, թալանը, անբարեխիղճ լինելը, օրենքի բացակայությունը, իշխանության սկզբունքի պաշտամունքը՝ այլասերվելով և օգտագործելով սրբության և աստվածայնության սկզբունքը մի բուռ շահախնդիր փոքրամասնությունների համար: Այն լի է սոցիալական հիվանդություններով և խեղաթյուրումներով, որոնք հակասում են կյանքի բնույթին, ինչպիսիք են բռնաբարությունը, սեքսիստական սոցիալիզմը, մահը սովից և թշվառությունից. մինչ մի կողմը ծանրաբեռնված է ապրանքներով և ունեցվածքով, մյուս կողմում ստրուկների մեծ զանգվածներ, պարապ գյուղացիներ և գործազուրկ բանվորներ են: Այն անընդհատ կազմակերպված ջանքեր է գործադրում քարոզչության ուժի և կեղծ, չար մետաֆիզիկական մոտեցման միջոցով իր իրական դեմքը թաքցնելու համար:

Ավելի գիտական սահմանման մեջ, որը մենք հաճախ ենք օգտագործում, քաղաքակիրթ հասարակությունը հասարակություն է, որը զարգանում է քաղաքի հետ միասին, իրականացվում է դասակարգման միջոցով և ղեկավարվում է պետություն կոչվող կազմակերպության կողմից: Ազգակցական կապը և համերաշխությունը էթնիկ-ցեղային պատկանելության մեջ հանգեցնում են սոցիալական տարբերակման՝ մինչև հիերարխիայի: Դասակարգային բաժանումը և պետության հասնելը չեն համապատասխանում ցեղի բնույթին: Ցեղային մշակույթը դասակարգային ու պետական մշակույթի մեջ չի տեղավորվում: Դասակարգման հիմնական էությունը արտադրության միջոցներն են, հատկապես հողի յուրացումն ու մասնավոր սեփականությունն է՝ աճող ավելցուկային արտադրանքի վրա խնայողությունների տեսքով: Ինչպես միշտ ասվում է, գույքը, որը գողություն է, հասարակությունից գողացված արժեք է: Պետական կազմակերպությունը, ըստ էության, կոլեկտիվ միջոց է այս գույքը պաշտպանելու և ավելցուկային արտադրանքի գումարը դրա սեփականատերերին բաշխելու համար: Կազմակերպված սեփականությունը հավելյալ արտադրանքի և հավելյալ արժեքի սեփականությունն է: Իհարկե, դրա համար պատմության ընթացքում պահանջվել են հսկայական բանակներ, բյուրոկրատիաներ, զենքեր և օրինականացման միջոցներ: Ստեղծվել են պետության հետ կապված գիտությունը, ուսումնասիրությունը, փիլիսոփայությունը, արվեստը, իրավունքը, բարոյականությունը և կրոնը: Անիմաստ մետաֆիզիկան աղավաղել է այս բոլոր կատեգորիաների սոցիալական դերերը և նրանց կապն ազատ կյանքի հետ: Թեև քաղաքակիրթ հասարակության կապը գաղափարական և նյութական մշակույթի հետ մեծ շփոթություն և աղավաղում է պարունակում, սակայն գլխավորը դրա կառուցվածքայնությունն է: Սա նյութական մշակույթի աճող ներկայությունն է: Խոսքը գաղափարական մշակույթի բացակայության մասին չէ: Այս մշակույթի գոյության երկու հիմնական հատկանիշ կա՝ երկրորդ պլանում լինելը և աղավաղումը:

Այս խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է լրացուցիչ բացատրություն: Ինչպես հայտնի է, կառուցվածքայնությունը և ֆունկցիոնալությունը «իմաստաբանության» ընդունված հասկացություններ են: Յուրաքանչ-

յուր կառույց ունի իր գործառույթը, յուրաքանչյուր գործառույթ ունի կառուցվածք: Քառսի մեջ կառուցվածքը և գործառույթը ճգնաժամ են ապրում: Նրանց սպառնում է կազմալուծում և տարրալուծում: Մինչ այդ որոշ ժամանակավոր խառը կառույցներ և հակասական գործառույթներ նույնպես գործի են անցնում: Նշածս այս հարցը համամարդկային բնույթ ունի: Օրինակ՝ ջրի կառուցվածքային կառուցվածքը H2O է: Անկախ նրանից, թե տիեզերքի որ անկյունում ենք գտնվում, եթե ձևավորվի H2O, ապա կառուցվածքայնությունը հաստատված է: Ֆունկցիոնալությունը չափազանց մաքուր, հեղուկ որակ է, որը մենք անվանում ենք «ջուր»: Սառեցումը կամ գոլորշիացումը նշանակում է իր սկզբնական կառուցվածքի վատթարացում և, հետևաբար, ֆունկցիոնալության կորուստ կամ ֆունկցիոնալության սահմանափակում: Փայտից կամ մետաղից սեղան պատրաստելը կառուցվածքային աշխատանք է: Սեղանի օգտակարությունը նրա ֆունկցիոնալությունն է: Եթե նույն փայտի և մետաղի կտորները դադարում են լինել սեղաններ, դրանք կորցնում են իրենց ֆունկցիոնալությունը: Եթե նույնիսկ դրանք չեն անհետանում, նրանց գործառույթները վերանում են: Հնարավոր են նաև ծուռ սեղաններ: Այս դեպքում անխուսափելի են ինչպես կառուցվածքային, այնպես էլ ֆունկցիոնալ խանգարումները:

Տիեզերքի յուրաքանչյուր ձևավորում ունի և՛ կառուցվածքային, և՛ ֆունկցիոնալ լինելու հատկանիշ: Եթե նյութը մեկնաբանենք որպես կառուցվածք ամենաընդհանուր իմաստով, մենք անմիջապես մտածում ենք էներգիայի մասին՝ այս կառուցվածքը կենդանի պահելու համար: Էներգիան ֆունկցիոնալություն է նյութի համար: Գիտության կողմից ապացուցված է, որ էներգիան էական նշանակություն ունի էներգիա-մատերիա միասնության մեջ: Նյութական կառույցները գոյություն չունեն առանց էներգիայի, բայց էներգիան կարող է գոյություն ունենալ առանց նյութական կառուցվածքի: Ավելի հասկանալի է, որ նյութը կարող է ոչնչացվել (կառուցվածքի առումով), բայց էներգիան չի կարող ոչնչացվել: Անշուշտ, էներգիայի ֆունկցիոնալությունը բարելավելու համար անհրաժեշտ են նաև նյութական կառուցվածքներ, որքան գիտենք: Նույնիսկ կյանքը կապված է միայն որոշակի բարձր զարգացած նյութական կառույցների և միջավայրերի հետ: Հնարավոր չէ մտածել կենդանի էակի մասին, որը չունի նյութական համարժեք, ավելի ճիշտ՝ կյանք, որը չունի նյութական կառուցվածք: Եթե նույնիսկ կա, մենք դա չգիտենք: Ընդհանրացնելու համար՝ առավել առաջադեմ նյութական կառույցները կարող են համապատասխանել առավել առաջադեմ ֆունկցիոնալությանը:

Հասարակության մեջ նյութական կառուցվածքի և ֆունկցիոնալության համարժեքը նյութական և զաղափարական մշակույթն է: Սոցիալականությունը մեկնաբանելիս՝ մենք տեսանք, որ, չնայած քաղաքակիրթ հասարակության նյութական կառուցվածքի ծայրահեղ զարգացմանը, այն կորցրել է իր ֆունկցիոնալությունն այն ամբողջությամբ զարգացնելու հնարավորությունից դուրս, և այս ամենի դիմաց կառուցվածքները քայքայվել են: Սրա հիմնական պատճառն այն է, որ այն չի կառչում սոցիալականությունը հնարավոր դարձնող հիմնական կառուցվածքային և զաղափարական մշակույթներից և չափից դուրս մղում նրանց: Հետևյալ համեմատությունը կարող ենք

անել. երբ բենզինը խառնենք ջրին, այն կփչանա և կկորցի իր ֆունկցիոնալությունը: Բենզինն էլ ջրի պես հեղուկ է, բայց նրա գործառույթը բոլորովին այլ է: Եթե նյութական մշակույթի զարգացումը համընկնում է գաղափարական մշակույթի զարգացման հետ և համատեղելի է դրա հետ, մենք չենք կարող արտահայտել դրա թերությունները կամ բացասական ազդեցությունները հասարակության վրա: Կարելի է ասել, որ դա նորմալ է: Սակայն նյութական մշակույթի զարգացումը և դրա կուտակումը շատ նեղ սոցիալական խմբի ձեռքում միանշանակ նշանակում է ինչպես հասարակության կառուցվածքային և ֆունկցիոնալ դեգրադացիա ընդհանրապես, այնպես էլ աճող նյութական և գաղափարական մշակույթի լուծարում նեղ իմաստով:

Օրինակով կարող ենք ավելի լավ բացատրել մեր միտքը: Եգիպտական բուրգերը հսկա նյութական կառույցներ են: Բայց դրա համար միլիոնավոր մարդիկ կորցրել են իրենց ֆունկցիոնալությունը, իմաստալից կյանքն ու ազատությունը, այսինքն՝ իրենց գաղափարական մշակույթը: Ահա թե ինչպիսին է քաղաքակրթությունը: Նա կարող է կառուցել հսկա կառույցներ: Տաճարներով, քաղաքներով, պարիսպներով, կամուրջներով, դաշտերով, պահեստներով և նույնիսկ ապրանքներով կարող է իր մեծությունը տեսանելի դարձնել: Քաղաքակրթություններում հնարավոր են նման հասարակություններ: Սակայն, երբ նույն հասարակության մեջ որոնվում է ֆունկցիոնալությունը, այսինքն՝ գաղափարական մշակութային արժեքը, բախվում ենք կամ այդ արժեքի կորստին, կամ դրա խեղաթյուրված ձևին: Փոքրամասնությունն ընդհանուր

հասարակությունից պոկված է, նրան ենթարկել են դաժան ճնշումների և չարաշահումների. կամ կտրել են իր գաղափարական մշակույթից, կամ այն ներկայացրել աղավաղված՝ զրկելով հասարակությանը իր սկզբնական գաղափարական մշակութային արժեքներից:

Թե՛ նյութական, թե՛ գաղափարական մշակույթը, որով սնվում է փոքրամասնությունը, տանում է դեպի երկկողմանի հիվանդ հասարակություն: Այն խեղդված է նյութի մեջ և ամբողջովին անջատված է բնապահպանական և ազատ գաղափարախոսությունից: Իրավիճակները, որոնք ես անվանում եմ «սոցիալական խնդիրներ», այս դիալեկտիկական զարգացման արդյունքն են: Քաղաքակիրթ հասարակությունը կտրվում է միջավայրից հենց այս պատճառով: Այս ընդմիջումը ոչ թե որակական է, ինչպես կարծում են, այլ գոյաբանական: Այսինքն՝ քաղաքակիրթ հասարակության գոյությունը պարտադիր կերպով պահանջում է տարանջատում միջավայրից: Անկախ նրանից, թե այն դիտարկվում է բնություն-հասարակություն ամբողջականության մեջ իր հին ձևով, թե ընկալվում է որպես բնություն-հասարակություն ինտեգրում՝ ամենագիտական արտահայտությամբ, շրջակա միջավայրի և էկոլոգիայի պահանջվող հասարակությունը պահանջում է գերազանցել քաղաքակրթությունը կազմող հիմնական չափանիշները՝ դասակարգը, քաղաքը և պետությունը. այն ենթադրում է, որ նոր հասարակության նյութական և գաղափարական մշակույթը հավասարակշռված է և ներդաշնակ: Այստեղ ես չեմ խոսում ուղղակի կոպիտ ավերածությունների մասին: Մինչ հասարակության ներքին հավասարակշռված և ներդաշնակ նյութական և գաղափա-

րական մշակույթը գիտակցում է բնության հետ ինտեգրումը որպես ազատագրված բնություն (Մյուրեյ Բուկչինի խոսքերով՝ «երրորդ բնություն»), այն նաև հանգեցնում է քաղաքակիրթ հասարակության անհավասարակշիռ բնություն-հասարակություն հակասության հաղթահարմանը:

Երբ մենք մեկնաբանում ենք քաղաքակիրթ հասարակության առաջին կառուցման շրջանն այս ընդհանուր հայեցակարգային տեսանկյունից, տեսնում ենք, որ գրեթե ամբողջը նյութական մշակույթի հսկա ֆենոմեն է: Եգիպտոսի հսկա բուրգերը, շումերների զիկկուրատները, Չինաստանի ստորգետնյա քաղաքը, հնդկացիների տաճարները և Լատինական Ամերիկայում նմանատիպ քաղաքներն ու տաճարները հստակ ցույց են տալիս նյութական մշակույթի գոյությունը: Դրա իմաստը, այսինքն՝ գաղափարական մշակույթը, մումիֆիկացված դիակներն են, աստվածների արձանները և թագավորի երթը իր բանակի հետ հանդերձյալ կյանքում: Իմաստը սառեցված է կամ ահավոր աղավաղված: Հնարավոր է նաև իմաստավորել այս իրավիճակները՝ ընդգծելով «ես» հասկացությունը մարդու հոգեբանության մեջ: Բայց պարզ է, որ իրական իմաստը հասարակության վերափոխման մեջ է: Հասկանալի է, որ նման կառույցներն անգամ հնարավոր չէ պատկերացնել առանց հասարակության կամ վերափոխման: Թագավորի աստվածացումը նույնպես հոգեվիճակ է: Բայց սա խեղված մտածելակերպ է, որը ոչնչացնում է հասարակություն կերտող հիմնական գաղափարական մտածելակերպը: Դա մի մտածողություն է, որը ձևավորվել է իրական սոցիալական մտածելակերպի և գաղափարական մշակույթի կործանման հաշվին, և որին միաստվածական կրոնները մեծ զայրույթով դատապարտում և հակադրում են իրենց գոյության պատճառի հիման վրա: Քաղաքում հիմնված և որպես դասակարգային պետություն կազմակերպվող այս հասարակության մեծ կուտակումը գնահատում ենք որպես նյութական մշակույթ, նրա խեղաթյուրված մտածելակերպը մեկնաբանում ենք որպես վատ մետաֆիզիկա, իսկ բնության բացառումը՝ վեր բարձրանալով բնությունից և ներկայանալով որպես բնությունից լիովին դուրս տեղծագործություն՝ որպես գաղափարական մշակույթ, որը երկրորդ պլան է մղվում և աղավաղվում:

Չի կարելի ասել, որ այս փուլն անցել է առանց արձագանքի, խանդավառության ու ցավի և համարվել հրաշք: Դիցաբանական շարադրանքը իրականության խիստ թաքնված արտահայտություն է: Ե՛վ դիցաբանությունը, և՛ սուրբ կրոնական փաստաթղթերը դիմադրության միատեսակ պատմություններ են: Նախնական դիմադրությունը որպես գաղափարական մշակույթի ապստամբություն մեկնաբանելը իմաստալից դիտարկում է: Դիմադրությունը բազմաչափ է: Նախ, Ինաննայի կերպարում ակնհայտ է կանանց մեծ դիմադրությունը տնային կալանքի և տղամարդկանցից կախվածության դեմ: Քաղաքները ստեղծվելուն պես շրջապատող պարիսպները ազգային պատկանելության ամբողջական գաղափարական և մշակութային ապստամբության խորհրդանիշն են: Երբ խորը վերլուծվի արարիչ Աստծո և մարդկային ծառայի ըմբռնումը, կերևա, որ դասակարգային մեծ պայքար է ընթանում: Արարիչ աստծո հորինվածքը փոխարինել է բնություն-աստծո

ըմբռնմանը, որը դատարկվել է իր իսկական էությունից: Փաստորեն, իշխող դասը, որը առնչություն չունի ստեղծագործության հետ և կտրվել է դրանից, իրեն հռչակում է որպես արարիչ դիմակավորված աստված՝ լիակատար գաղափարական աղավաղմամբ, իսկ մյուս կողմից՝ հասարակության այն անդամներին, ովքեր իրական են, ստեղծողներն ու իմաստալից սրբությունների ու աստվածությունների տերերը, բնութագրում է որպես արտաթորանքից ստեղծվածներ՝ միաժամանակ դիցաբանական լեզվով նկարագրելով դասակարգային մեծ պայքարը:

Այս նարատիվների մեջ է թաքնված գաղափարական մշակույթի մեծ անկումը: Քաղաքակրթության առաջին կառուցման, հատկապես մեծ վարպետությամբ աստվածների կառուցման վերաբերյալ առասպելական պատմությունները կարելի է կարդալ որպես դասակարգային պայքարի գաղափարական ձև: Այդ ժամանակաշրջանում արտահայտման այլ լեզու, այնուամենայնիվ, չկար: Քաղաքների միջև մրցակցությունը և քաղաքների այրումն ու ավերումը վկայում են սոցիալական կատաղի պայքարի մասին: Էպիկական պատմությունները, պանթեոնային դասավորությունները, քաղաքային ճարտարապետությունները և դամբարանների կառույցները հստակորեն արտացոլում են դասակարգերի միջև եղած բացը և գյուղական հասարակության միջև եղած հեռավորությունը: Փարավոնի և Նեբրոդի պատմությունները հասարակության խորը պառակտման փաստաթղթեր են: Ցեղային մեղեդիները կրում են նաև քաղաքակրթության հարձակումներին դիմակայած դժվարությունների ու անօգնականության հետքերը:

Մարգարեների ավանդույթը ամենակազմակերպված դիմադրություններից է, որը պահպանվել է քաղաքակիրթ հասարակության կառուցման շրջանից մինչև մեր օրերը: Պատմվածքի բոլոր հատկանիշները, որոնց պատմությունները սկսվել են Ադամից և Եվայից, այսինքն՝ առաջին երկու մարդուց, կրում են գաղափարական մշակույթի դրոշմը: Երբ ճիշտ ենք գնահատում այն, որպեսզի հասկանանք աստվածացված քաղաքակրթության մտածելակերպը նեոլիթյան հասարակության դեմ, տեսնում ենք, որ Ադամի և Եվայի պատմությունն առաջարկում է տեր-ստրուկ հակամարտության առաջին թելերը: Ճիշտ այնպես, ինչպես կարելի է տեսնել Ադամի երկխոսությունները Աստծո հետ՝ որպես տեր-ստրուկ տարբերակում, կարող ենք նաև փաստել, որ Ադամի և Եվայի հարաբերությունները խորհրդանշում են մոր և կնոջ անկումը երկրորդ պլանում: Նոյի ջրհեղեղից դուրս գալը մեզ հիշեցնում է նեոլիթյան հասարակությունը նավով բեռնավորելու մասին՝ ի դեմս բռնակալ տիրոջ և այն անհասանելի լեռնային տարածքում քաղաքակրթության վերակառուցելու: Պատմությունն արդեն պատմում է շումմերական հասարակության և նեոլիթյան հասարակության մասին, որը դիմադրել է գոյատևելու համար: Այս երկու մարգարեական ավանդույթները, որոնց սկիզբը հասնում է մինչև քաղաքակիրթ հասարակության կառուցում, ցույց են տալիս, որ դիմադրությունը եղել է ի սկզբանե, և որ այն ունի շարունակականություն առնվազն այնքան, որքան քաղաքակրթության շարունակականությունը: Ինչպես տոհմական պատմությունները վերին խավերի պատմություններն են, այնպես էլ մարգարեական պատմությունները

մշակույթներին, ցեղերին ու հերոսներին դիմակայելու պատմությունն են: Բոլոր մարգարեների ընդհանուր տարրն այն է, որ նրանք դեմ են կռապաշտությանը:

Պետք է տարբերակել քաղաքակիրթ հասարակության կռապաշտությունը տոտեմների և նմանատիպ խորհրդանիշների վրա հիմնված ցեղերի հավատամքների միջև: Քաղաքակիրթ հասարակության պանթեոնում համախմբված աստվածները նման են ժամանակաշրջանի իշխող գործիչների կրկնօրինակներին: Նրանք բոլորն ամեն դեպքում մարդկային կերպարանքով են: Ընդ որում, կառավարիչներն իրենք մարդիկ են: Մարգարեների հարձակումներն այս գործիչների վրա և նրանց հարձակումները կառավարիչների վրա, ըստ էության, նույնն են: Հակահեթանոսությունը հակապետականություն է: Դա ինստիտուցիոնալացված հասարակությունը խորհրդանշող բոլոր հասկացություններին ու խորհրդանիշներին հակադրում և դիմադրություն է: Քահանաների և քաղաքական թագավորությունների հակամարտությունն այլ բնույթ է կրում: Քահանաները իրենց կերտած հասարակությունից բաժին են պահանջում: Նրանց պայքարը տեղի է ունենում վերին խավի մեջ: Ներպետական պայքար է: Քանի որ նրանք գաղափարական մշակույթի ստեղծողներն են, քահանաները՝ թեկուզ անուղղակիորեն, բայց ազդում են մարգարեների վրա: Քահանան, ըստ էության, պետության հոգևորականն է: Քաղաքացիական հասարակությունը նրան քիչ է հետաքրքրում: Մարգարեությունը նկարագրում է հակառակ հարաբերությունները: Մարգարեն պետությունից դուրս հասարակության խոսնակն է:

Ավանդույթի եզակի կողմը, որը նախատեսվում էր սկսել Աբրահամ մարգարեի հետ և ինստիտուցիոնալացվել Մովսեսի հետ, այն է, որ դա ցույց տվեց եգիպտական և շումմերական հասարակությունից ամբողջովին կտրվելու խիզախությունը և սեփական հասարակությունը ստեղծելու կամքը: Մենք բախվում ենք ամբողջական գաղափարական մշակութային հեղափոխության: Նեբրոդը և Փարավոնը երկու հասարակությունների կամ պետությունների խորհրդանշական տիրակալ մականուններն են: Այն ունի ինստիտուցիոնալ առանձնահատկություններ: Նրանք արտահայտում են բացարձակ տիրապետություն: Աբրահամն ու Մովսեսն իրենց գաղափարական մշակույթով, այսինքն՝ իրենց մենթալ դիմադրությամբ, հայտարարում են, որ չեն ճանաչում այս գերիշխանությունը: Այս դիմադրությունը բարձրարժեք ապստամբություն է տվյալ ժամանակաշրջանի համար:

Ինչպես այսօր կարևոր է «Ուրիշ աշխարհ հնարավոր է» կարգախոսը, այն ժամանակ նրանք նույնպես հայտարարեցին, որ գոյություն ունի այլ աշխարհ, քան փարավոնների և նիմրոդների պաշտոնական գերիշխող աշխարհը: Այդ պատճառով նրանք ինտենսիվորեն աշխատում են իրենց համայնքների հետ: Մարգարեությունը նախնառաջ հույսի ակտ է: Այս ավանդույթի մասնաբաժինը այսօրվա Իսրայելի հզորության հիմքում, գոնե նրա գաղափարական մշակութային սնուցման մեջ, չի կարելի թերագնահատել: Աբրահամյան ավանդույթի բոլոր պատմություններն ու ուտոպիաներն արտահայտում են քաղաքակրթության կողմից արգելափակված ցեղերի կյանքն ու ձգտումները: Նրանք կրել են երկու քաղաքակրթություն-

ների ազդեցությունը: Բայց այն, ինչ նրանք, ըստ էության, մերժում են, պետք է ուշադիր մեկնաբանել: Նրանց նպատակը իրենց նման քաղաքակրթություն կառուցելը չէ: Այս իրողությունը կարևոր տեղ է զբաղեցնում Իսրայելի թագավորների՝ իրենց քահանաների հետ մշտական բախումների մեջ: Իսրայելական պետության և հասարակության մեջ այս ուղղությամբ հակամարտությունն իր ողջ ինտենսիվությամբ ղեռ շարունակվում է: Նրանք խեթերի, միտանիների, ասորիների, պարսիկների և վերջապես հունահռոմեացիների պատմական վկաներն են: Այդ քաղաքակրթությունների մնացորդները կուտակվել են նրանց հիշողություններում:

Պատմագիտությունը մ.թ.ա. 1600-1200 թվականների ժամանակաշրջանը սահմանում է որպես նյութական մշակույթի փայլուն շրջան: Խեթերի, Եգիպտոսի և Միտանիների հարաբերությունները միջազգային դիվանագիտության առաջին վառ օրինակներն են: Եբրայեցիներն են այս գործընթացի ամենամոտ վկան և այն մարդիկ, ովքեր գիտեն, թե ինչպես նայել և հասկանալ: Աբրահամի և Մովսեսի մասին այս ժամանակաշրջանի երթուղուց առանձին մտածելը նրանց լիարժեք ըմբռնումը թերի է թողնում: Պատասխանը, որ տալիս են, գաղափարական մշակույթի պատասխանն է:

Հիսուսը և Մուհամեդը այս ավանդույթի երկու մեծ բարեփոխիչներն են: Երկուսի տեղը գաղափարական մշակույթի վերելքի մեջ բացահայտելը թողնենք հետագային:

Բաբելոնիան և Ասորեստանը նյութական մշակույթի վերելքի երկու կարևոր օղակներ են: Աճող քաղաքը և առևտուրը մեծ առաջընթաց գրանցեցին այս երկու թագավորությունների օրոք: Բաբելոնն իր ժամանակի Փարիզն է: Ասորեստանցիները դարձան վաճառական թագավորների, ապա կայսրությունների կառուցման ամենաղաժան ներկայացուցիչները: Նրանք ներկայացնում էին կառավարման ավանդույթը, որը լավագույնս ներկայացնում է նյութական հասարակությունը Մերձավոր Արևելքում: Նրանք դեր խաղացին թե՛ գաղափարական մշակույթը երկրորդ պլանում պահելու, թե՛ այն աղավաղելու գործում: Զրադաշտական մշակույթը, որի վրա հիմնված է մարա-պարսկական ավանդույթը, մեծ պայքար էր մղում գաղափարական մշակույթի վերստին գերիշխող դառնալու համար: Զրադաշտ, Բուդդա և Սոկրատես եռյակը բարոյական մեծ փիլիսոփաներ են, ովքեր ապրել են շատ մոտ ժամանակներում և մեծ իմաստուն անհատականություններ են, որոնք ներկայացնում են գաղափարական մշակույթի գերազանցությունը նյութական մշակույթի նկատմամբ: Նրանք մարդկային խղճի մեծ արթնացնողներն ու բարձրաձայնողներն են, որ քաղաքակրթությունը թուլացել է: Իրենց ապրած ժամանակաշրջանում իր հասունացման շրջանը թևակոխած նյութական մշակույթի աշխարհի ճնշող գերազանցության դիմաց նրանք արտահայտեցին, որ հնարավոր են այլ աշխարհներ և իրենց կյանքով շքեղորեն ցույց տվեցին, որ իրենք այդ աշխարհների որոնողներն են:

Շրջապատող մշակույթների, հատկապես սկյութների շարունակական դիմադրությունն ու հարձակումները շարունակական ապացույցն են այն բանի, որ գաղափարական մշակույթը հնարավոր չէ հեշտությամբ սպառել: Այն, որ ամորացիները՝ սեմական մշակույթից, հուրիները՝

արիական մշակույթից, սկյութները՝ հյուսիսկովկասյան մշակույթից, ներկայացնում են գաղափարական մշակույթ ընդդեմ քաղաքակրթության, ցույց է տալիս, որ դիմադրության օղակները առնվազն նույնքան անխափան և ամուր են, որքան քաղաքակրթության օղակները: Այն, ինչ գոթերն էին հռոմեական քաղաքակրթության համար, ամորացի-արաբները, հուրիական-մեդացիները և սկյութները մերձավորարևելյան կայսրությունների համար էին: Շատ կրոնական ծագումներ, ինչպիսին է քրիստոնեությունը, միշտ առկա են եղել Մերձավոր Արևելքի սոցիալական դիմադրություններում:

գ- Հունահռոմեական քաղաքակրթական հասարակությունը ներկայացնում է քաղաքակրթության պատմության միջին կամ հասուն շրջանը: Այն կարելի է անվանել նաև դասական դարաշրջանի քաղաքակրթություն, որը կարողացել է զարգացնել իր ներուժի ամենավառ ակտիվները: Այն ստեղծեց իր ժամանակի համար նյութական մշակույթի ամենաշքեղ դարաշրջանը: Հունահռոմեական քաղաքակրթությունը, որը հասել է բոլոր նախորդ նյութական մշակույթների ամենահաջող սինթեզին, իր փուլի վերջին խոսքն է: Դժվար է ասել, որ շքեղությամբ Հռոմի հետ համեմատելի նյութական այլ մշակույթ ձեռք է բերվել: Կապիտալիստական ինդուստրիալիզմը, որը ներկայացվում է որպես հեղափոխություն, քաղաքակրթություն չէ, այլ քաղաքակրթության հիվանդ վիճակ:

Աթենքի շրջանը նշանավորում է նաև հնագույն ժամանակների գաղափարական մշակույթի ավարտը: Ինչ-որ առումով փիլիսոփայությունն այս փաստի արդյունքն է: Պանթեոնը նման է կենսունակությանը, այսինքն՝ գաղա-

փարական մշակութային արժեքները կորցրած աստվածների գերեզմանոցի: Հասկանալի է, որ նրանք բախվում են այս իրավիճակին, երբ գտնվում են վերևում, ինչպես մնացած ամեն ինչում: Ամեն գագաթնակետի վերջը անկում է: Հաստատ է, որ ստրկությունը նյութական մշակույթի ամբողջական համակարգ էր: Մարդկության դեգրադացիան այս համակարգի էական հատկանիշն է: Նման խորը անկում չի նկատվում ոչ մի կենդանի աշխարհում: Խղճի փլուզման այս զգայունությունը սերտորեն կապված է նյութական մշակույթի շքեղության և գրավչության հետ: Դեռևս անհնար է չսարսափել ու մյուս կողմից չհիանալ այս մշակույթի հսկա հուշարձաններով ու կառույցներով: Մարդու աստվածացումն այդքան հեռու կարող է գնալ: Բայց մարդկային աստվածացումը վերածվում է աղետի, երբ թիրախավորում է մարդկանց: Աստվածների համար մնացածը ծառաներ են: Սոցիալական պառակտման, հետևաբար և պայքարի մեջ որևէ հակասություն կամ հակամարտություն երբևէ այդքան բացահայտ չի եղել: Անկումն ավելի լավ հասկանալու համար դասական հունական մշակույթում սոդոմիա երևույթը ճիշտ վերլուծելը չափազանց ուսանելի կլինի: Դրա կապը կանանց ստրկության հետ կապված չէ միայն սեռականության ներկայացման ձևի հետ: Նրանց միջև կապն ապշեցուցիչ է, քանի որ նրանք կիսում են նույն սոցիալական երևույթը:

Երբ մենք ուշադիր նայում ենք կանանց ստրկությանը, ուշադրություն է գրավում այս ստրկության շատ ճնշող և ապամարդկայնացնող կողմը: Տանը սահմանափակվելը պարզապես տարածական գերություն չէ կամ նույնիսկ բանտում կալանք. դա վերաբերում է խորապես բոնաբա-

ության ենթարկվելու վիճակին: Ինչքան էլ ցանկանաք քողարկել խորը ճշմարտությունը նշանակության և հարսանյաց զգեստների արարողություններով, նույնիսկ մեկ օրվա պրակտիկան ինքն իրեն ճանաչող մարդու համար մարդկային պատվի վերջն է: Կանայք իրենց հազարամյա արտադրողական, կրթական, վարչական և ազատական արժեքներով հանդերձ՝ ծեծի են ենթարկվում բռնության այնպիսի համակարգված ու բազմազան մեթոդներով և նվաստացնելու ավելի գաղափարական միջոցներով (ներառյալ սիրային դիսկուրսները), որոնց արդյունքն ավելի քան լիակատար հանձնումն է: Այս անկումը կնոջ ինքնության ամբողջական կորուստն է և նրա վերածվելը բոլորովին այլ իրականության՝ «կնոջ» (ամուսին իմաստով): Նույնիսկ ամենասովորական տղամարդու՝ լեռան վրա գտնվող հովվի աչքերում կինը կարող է լինել միայն նրա «կինը» (ամուսին իմաստով): «Կին» (ամուսին իմաստով) ունենալը նշանակում է նրա նկատմամբ անսահմանափակ վերահսկողության իրավունք ունենալ (այդ թվում՝ սպանել, երբ ցանկանա): Դա պարզապես սեփականություն չէ, դա շատ յուրահատուկ սեփականություն է: Այն սեփականատիրոջը հնարավորություն է տալիս փոքրիկ կայսր դառնալ, քանի դեռ նա գիտի, թե ինչպես օգտագործել այն:

Այս իրողությունը քաղաքակրթությունը նախապատրաստող հիմնարար հենասյուներից մեկն էր: Սրա հետ էր կապված նաև այն, որ նյութական մշակույթի անսահմանափակությունը նրա հիմնական գործոններից մեկն էր: Կանանց դեպքում գրանցած հաջող փորձը ցանկանում էին փոխանցել ողջ հասարակությանը: Սա երկրորդ ծանր

ազդեցությունն էր: Վարպետների համար հասարակությունը պետք է կնոջ պես ֆունկցիոնալ լիներ: Պետք է նշել, որ հասարակության հնազանդեցումն իր ավարտին հասավ կապիտալիստական համակարգում: Բայց այս գործողության հիմքը դրվել է քաղաքակրթության առաջին փուլում, և այն նախատեսվում էր ներկայացնել որպես հունահռոմեական մշակույթի հաջողակ հասարակության օրինակ: Միայն տղամարդկանց հնազանդեցնելով կարելի էր խոսել հասարակությանը հլու հնազանդի վերածելու մասին: Հունահռոմեական քաղաքակրթությունն այն քաղաքակրթությունն էր, որը լիովին զգաց դա և ձեռնարկեց նախազգուշական միջոցներ: Լայնորեն հայտնի է, որ ստրուկների վիճակն ավելի վատ է, քան կանանցը: Խնդիրը ստրուկ չլինող տղամարդկանց հնազանդեցնելն էր: Ես չեմ խոսում ինցեստի կամ սեռական այլասերվածության կամ անդրոգենիայի մասին: Որոշ երևույթներ, որոնք ունեն հոգեբանական չափումներ և նույնիսկ կենսաբանական պատճառներ, պետք է գնահատվեն այն իրադարձությունից զատ, որի մասին խոսում եմ: Դասական հունական հասարակության նորաձևությունն այն էր, որ յուրաքանչյուր ազատ երիտասարդ պետք է ունենա տեր, տղամարդ գործընկեր: Գործընկերը պետք է լիներ նրա սիրեկանը, մինչև երիտասարդը փորձ ձեռք բերեր: Ինչպես նախկինում նշեցի, նույնիսկ Սոկրատեսն է ասում, որ այս դեպքում կարևորն այն չէ, որ երիտասարդ տղային շատ են օգտագործում, այլ այն, որ նա ապրում է այդ ոգով: Մտածողությունը պարզ է. քանի որ ստրկատիրական հասարակությունը անհամատեղելի կլինի ազատության և արժանապատվության սկզբունքի հետ, այդ հատկանիշ-

ները պետք է վերանան հասարակությունից, որովհետև դրանք սպառնում էին հասարակությանը: Եվ դա ճիշտ էր: Ստրկությունը չի կարող գոյություն ունենալ այնտեղ, որտեղ կա մարդու ազատություն և արժանապատվություն: Համակարգը հասկացավ դա և պետք է աներ այն, ինչ անհրաժեշտ էր:

Անկասկած, հունահռոմեական մշակույթը չէր կարող ավարտին հասցնել այս առաքելությունը: Ներքուստ ազատ փիլիսոփայական դպրոցներով զարգացած քրիստոնեությունը, իսկ արտաքինից էթնիկ պատկանելության շարունակական հարձակումներն ու ապստամբությունները հասարակությանը կթողնեն տարբեր իրավիճակների դեմ առ դեմ: Կային նաև բազմաթիվ նշաններ, որ նյութական մշակույթն ամեն ինչ չէ և չի կարող անել ամեն ինչ: Միայն կապիտալիզմում կարելի էր հասարակությանը հնազանդեցնել առանց սոդոմիայի անհրաժեշտության:

Ցեղային ուժերի և քրիստոնյաների խիզախ դիմադրությունը անվերջ տառապանքների գնով, ըստ էության, պետք է վերջ դներ հասարակությանը, որը մարդկության համար նշանակում էր ոչնչացում: Նրանց հետագա հաշտեցումը պետական քաղաքակրթության հետ չի կարող անտեսել դիմադրության գաղափարական մշակութային արժեքն ու նպատակը: Ամենադիպուկ մեկնաբանությունն այն է, որ այս շարժումների հաջորդ մեծ քայլերը, որոնք նյութական մշակույթի առումով մեծություն չունեն, որպես գաղափարական մշակույթի վերելք տեսնելն է: Նման օրինակ կարող է լինել Սասանյան-իսլամական և Թուրանյան տերությունների հարաբերություններում և հակամարտություններում: Մենք չենք կարող բացատրել հասարակությունների խորը անկումն ու վերելքը ճնշումների և շահագործման պարզ տերմինաբանությամբ: Տեղի ունեցածն ավելի ընդգրկուն է: Թե ինչու կապիտալիզմը չի կարող լուծվել և չի լուծվել, սերտորեն կապված է պահանջվող շրջանակի խորությանը չհասնելու հետ (քաղաքակիրթ հասարակության լուծումը): Կապիտալիզմի վերլուծությունները նման են ջրի վերևում գտնվող այսբերգի գագաթին: Իրական զանգվածը քաղաքակիրթ հասարակությունն է: Այն նույնպես կանգնած է ջրի տակ:

դ- Վիճելի է՝ քրիստոնեությունն ու իսլամը քաղաքակրթությո՞ւն են, թե՞ արժեքներ (բարոյականություն): Այնքան էլ հեշտ չէ, որքան թվում է, լույս սփռել այս խնդրի վրա, որը դեռևս պահպանում է իր մեծ կարևորությունը: Նրանք, ովքեր անձամբ զգում են շփոթությունը, քրիստոնյա և իսլամական աստվածաբաններ և հավատացյալներ են: Հիմնական հարցերը, որոնք հնարավոր չէ պարզաբանել, այն է, թե որտե՞ղ և մինչև ե՞րբ են երկու միաստվածական կրոններն էլ հավատքի և բարոյականության համակարգ, ինչպիսի՞ն են նրանց հարաբերությունները քաղաքակիրթ հասարակության և բացառված հասարակության հետ և ի՞նչ իմաստով են քաղաքակրթություն և դրան հակադրված:

Իմ անձնական մեկնաբանությամբ՝ Սասանյան և հունահռոմեական կայսրությունների պայմաններում ձևավորված այս երկու կարևոր հավատալիքներն ու բարոյական համակարգերը նշանակում են գաղափարական մշակութային մեծ քայլ՝ ընդդեմ զանգվածային նյութական մշակույթի և ստրկատիրական համակարգի շատ կոռումպացված գաղափարական արժեքների: Եթե դրանք նշա-

նակեին նոր քաղաքակիրթ հասարակության կառուցում, ապա հիմնված կլինեին քաղաքային և դասակարգային կազմավորումների վրա, ինչպես նկատվում է բոլոր դասական կառույցներում: Կային քաղաքային և դասային թիրախներ: Բայց նրանք նպատակ ունեին հասնել սեփական համոզմունքներին ու բարոյական արժեքներին, ոչ թե ինքնին քաղաքակիրթ հասարակություն դառնալ: Նրանց հիմնական նպատակը ոչ թե իշխանության ձգտելն էր, այսինքն՝ նյութական մշակույթի գրավումը, այլ ընդհակառակը՝ ապահովել նոր գաղափարական մշակույթի հեգեմոնիան, որը կպաշտպաներ մարդկությանը հսկա չափերի նյութական մշակութային արժեքներից, որոնք մեծ անհավասարակշռության մեջ էին և կորցրել էին իրենց իմաստը: Ուստի քրիստոնեական և իսլամական դարաշրջանները որպես քաղաքակրթական համակարգեր բնութագրելը թերի է և իր հետ բերում է թյուրիմացություններ:

Պետք է ընդգծել, որ Հռոմի փլուզումը սովորական իրադարձություն կամ որևէ քաղաքակրթության փլուզում չէր: Ի դեմս Հռոմի՝ առնվազն չորս հազար տարվա քաղաքակիրթ հասարակության ավանդույթը փլուզվել է, ավելի ճիշտ՝ փլուզել են: Քանի որ մեր թեման փլուզման ներքին ու արտաքին պատճառները մանրամասն բացատրելը չէ, դրանք շատ համառոտ կնշենք: Այն, ինչին մենք հետևում ենք, քաղաքակիրթ հասարակության արժեքների կապն է համընդհանուր փլուզման հետ և դրանց տեղը փլուզման մեջ: Հեշտությամբ կարելի է ասել, որ Հռոմը ներկայացնում է բոլոր առաջին և դասական քաղաքակրթությունները, բացի Չինաստանից (որին հասել է մ.թ.ա. մոտ 100 թվականից), ոչ միայն ստրկության ինստիտուտով, այլև իր

նյութական և հոգևոր մշակույթով: Պետք է շեշտեմ, որ հասարակությունների ամենօրյա ճնշումն ու շահագործումը միայն իրադարձությունների վրա հիմնվելու միջոցով վերլուծելն է ճշմարտությանը համակողմանիորեն չանդրադառնալու հիմնական պատճառը: Պոզիտիվիզմի ամենամեծ խեղաթյուրումն այս հարցում է: Եվրոպական մտքի, թերևս, ամենաառարկելի կողմերը կապված են այս պոզիտիվիստական մոտեցման հետ: Քանի դեռ հասարակությունները չեն ուսումնասիրվել իրենց նյութական և գաղափարական մշակույթի խորքում՝ իրենց բոլոր հակասություններով, հավասարակշռություններով և անհամատեղելիություններով, ոչ մի իմաստալից մեկնաբանություն չի կարող տրվել, և, հետևաբար, հարացույցներ չեն կարող կառուցվել ավելի ազատ կյանքի համար:

Այս համատեքստում դիտարկելիս կերևա, որ բացի հսկա չափերի հասած նյութական մշակույթից, որը գերիշխում էր Հռոմում, փլուզվեցին նաև բոլոր գաղափարական մշակույթները, որոնք այլևս կապ չունեին իմաստալից կյանքի հետ: Իրականում Հռոմի կառուցումը՝ որպես քաղաք, իրեն նախորդած չորս հազար տարվա ճարտարապետական ավանդույթի գլուխգործոցն է հատկապես Եգիպտոսում: Նմանապես, հռոմեական պանթեոնը չորս հազար տարի առաջվա շումմերական քահանաների զիկկուրատի վերջին հարկի և դրա բովանդակության ամենահիասքանչ տարբերակն է: Այս առումով փլուզված նյութական և գաղափարական մշակույթները առնվազն չորս հազար տարվա վաղեմություն ունեն: Ինձ համար դժվար չէ բացահայտել այս խնդիրները:

Մենք կարող ենք նմանատիպ վերլուծություն մշակել, երբ դիտարկենք այս մշակույթների փլուզումը և դրանք ոչնչացնողների ինքնությունը: Հարձակումները մի ամբողջություն են՝ սկսած ամորհացիների և հուրիացիների առաջին հարձակումներից, մինչև գոթերի վերջին հարձակումները: Նրանց դիմադրության և հարձակման պատմությունը առնվազն չորս հազար տարվա պատմություն ունի: Նոյ մարգարեից և Մուհամեդից սկսած դիմադրությունը շղթայի օղակների նման երկար պատմություն ունի: Այն մեծ նշանակություն ունի ոչ միայն տևողության, այլև գտնվելու վայրի առումով: Հիմնված լինելով արաբական անապատների և Տավրոս-Զագրոսի նախալեռների վրա՝ միջինասիական անապատներն ու եվրոպական անտառային խորքերը խոր հետքեր են թողնում գաղթական ցեղերի նյութական և հոգևոր մշակութային կազմավորումներում: Յուրաքանչյուր մարգարեի պատմությունը ցույց է տալիս, թե որքան դժվար է ձևավորվել նրա շուրջը գտնվող համայնքը: Եվրոպակենտրոն սոցիոլոգիան նույնիսկ չի ցանկանում այդ հարցերը ներառել իր օրակարգում: Ուստի սխալ չի լինի այն անվանել եվրոպակենտրոն գիտելիքի կառույցներ: Առանց Հռոմի իրական պատմությունը բացահայտելու և առանց քաղաքակրթության պատմության իմաստալից մեկնաբանության, չենք կարող սահմանել Եվրոպայի նյութական և զաղափարական մշակութային ռեսուրսները:

Պատմությունը Հռոմի փլուզմանը նախորդած երկու դարերը գնահատում է որպես խավարի և քաոսի դարեր: Հետևաբար, փլուզումներն ամենամյա իրադարձություններով լի ժամանակների գործ չեն:

Նույն մեկնաբանությունները կարելի է անել Սասանյան կայսրության՝ Հռոմի արևելյան երկվորյակի կամ նմանակի վերաբերյալ: Այս կայսրությունն արևելյան շումմերական քրմական պետության պատմությունն է: Նրա ներսում միայն զրադաշտական տարրն էր, որ թեկուզ սահմանափակ, բայց ուժեղացրել էր բարոյական բնավորությունը: Այնուամենայնիվ, ինչպես Բուդդան չկարողացավ խանգարել ռաջաներին կառուցել քաղաքակիրթ հասարակություն՝ հիմնված նյութական մշակույթի վրա, որը զուրկ էր իմաստից, և ինչպես Սոկրատեսը չկարողացավ վերացնել աթենական մշակույթի բարոյական արատը, այնպես էլ զրադաշտը չկարողացավ կանխել պարսից և Սասանյան նյութական մշակույթները, որոնք հասել են հսկա չափերի: Պատմությունը ցույց է տալիս, որ Իրանի Սասանյան կայսրության վերջին շրջանները ոչնչով չեն տարբերվել Հռոմի ժամանակներից: Թուրանական հարձակումները հյուսիս-արևելքից և ներքին կրոնական ու աղանդավորական միաձուլումը պատրաստվում էին Սասանյան կայսրության վերջը բերել: Երբ լիկվիդացվեց մանիքեական շարժումը (մ.թ. 250 թ.), որը զաղափարական մշակութային հզոր ելք էր, այն զրկվեց անհրաժեշտ թարմ ներշնչանքից: Եթե իսլամը մի քանի պատերազմ չվարեր, նեստորական քահանաները կլինեին Արևմուտքի կաթոլիկ քահանաների նման (ինչպես ժամանակի նյութական մշակույթի կայսրերը, նրանք այժմ դարձել են կայսրեր՝ հանուն հոգևոր մշակույթի): Իսլամական նվաճումը կանխեց այս զարգացումը: Երկու մեծ ստրկական քաղաքակրթությունների փլուզման իմաստը սահմանելուց հետո խոսենք երկու հայտնի շարժումների առաջաց-

ման պայմանների և սահմանումների մասին, որոնք իրենց սահմանում են որպես գաղափարական այլընտրանքներ՝ իսլամ և քրիստոնեություն:

Մինչ Հռոմը կառուցում էր իր սեփական պաշտոնական հասարակությունը, նա նաև ստեղծեց շատ մեծ մարգինալացված խմբեր: Սրանք ավանդական ցեղային միգրացիոն խմբեր չէին: Դրանք ոչ մի էթնիկական հատկանիշ չեն պարունակում: Ապադասակարգայնացած, ավազակ նոր խմբեր էին, որոնք կոչվում էին «պրոլետարներ», ինչպես նրանց անվանում էին հռոմեացիները: Նրանք գաղափարական խումբ չէին համարվում: Նրանք լողում էին կատարյալ դատարկության մեջ: Ինչ-որ իմաստով ստրկության գործազուրկներն էին: Ցանկացած գաղափարախոսություն կարող էր աջակցություն գտնել, եթե փորձեր հասնել նրանց: Հռոմեական կայսերական ժամանակաշրջանում միջավայրը լցված էր նրանցով: Նրանք պատմության մեջ առաջին անգամ ստեղծեցին սոցիալական նոր շերտ: Աստիճանաբար դրանց հիման վրա ստեղծվեցին աղանդներ, ինչպես էսենցիները՝ հենց Քրիստոսից առաջ:

Հարցը, թե արդյոք Հիսուսը իրական անձնավորություն էր, թե՞ շրջապատի կողմից պարտադրված կերպար, դեռ քննարկվում է: Սա այնքան էլ կարևոր չէ մեր թեմայի համար: Հիսուսի ծննդյան տարիներին Հռոմը հասավ իր գագաթնակետին՝ ի դեմս իր առաջին կայսր Օգոստոսի: Փոքր Հրեական Թագավորությունը նույնպես նվաճվեց՝ չնայած նախկին մեծ դիմադրությանը, որը նման էր Արևելյան Միջերկրական ծովի նվաճմանը: Այն կառավարվում էր գլխավոր նահանգապետարանի կողմից: Համագործակցությունը բարձր խավերի կողմից յուրացված միտում էր: Քանի որ հրեա համագործակիցներն արդեն փորձ ունեին Նեբրոդի և փարավոնների ժամանակներից, նրանք դժվարություն չէին ունենա համագործակցելու Հռոմի հետ: Մյուս կողմից, Աբրահամից ու Մովսեսից ի վեր միշտ եղել է ազատության ուժեղ միտում: Հիսուսն այս ավանդության շարունակությունն էր: Երուսաղեմը միշտ պատկերված է որպես թագադրման պատրաստ երիտասարդ աղջիկ: Նրա հայտարարություններից հասկանում ենք, որ Հիսուսը գաղափարական իմաստով էլ էր ուզում այս «աղջկան»: Կարելի է փաստել, որ նրա վերջին արարքը և այն, որ այս արարքը հանգեցրել է նրա խաչելությանը, բխում է հենց այդպիսի նպատակից: Սկզբում չկար ո՛չ կոկիկ կազմակերպչական շարժում, ո՛չ էլ գաղափարական մանիֆեստ: Այն ունի մի փոքր խումբ, որը գտնվում է նմանատիպ դիրքում, որը կապված է իր հետ չափազանց ազատ կապերով: Սրանք առաջին ռահվիրաներն են, որոնք կոչվում են Առաքյալներ: Չի կարելի ասել, որ նրանք պաշտոնական տեղ են զբաղեցնում էթնիկ հիերարխիկ մակարդակում: Խաչելությունը պատժի համակարգ է, որը հաճախ կիրառվում է տարածաշրջանում: Դա Հռոմի սարսափելի գյուտն է, ինչպես առյուծների կողմից պատառոտված լինելը: Հայտնի է, որ խմբի անդամները, վախենալով դրանից, նախ փախել են Սիրիայի ներքին տարածքներ ու ափեր: Ընդհակառակը, Նեմրութի հանդեպ ունեցած վախի պատճառով Աբրահամը տեղափոխվեց այն տարածքը, որտեղ հետագայում պետք է կառուցվեր Երուսաղեմը: Բնական է, որ այս ժամանակաշրջաններում շատ նման վերելքներ և վայրէջքներ լինեն:

Սակայն մեկ դար անց ստեղծվեցին Աստվածաշնչի առաջին նախագծերը: Օրինակ՝ Մարկիոնի ավետարանը, որն այսօր հասանելի չէ, առաջին նախագծերից մեկն է:

Կախված Հռոմի կայսերական հետքից՝ առաջին «սրբերը» հայտնվում են 2-րդ և 3-րդ դարերում: 4-րդ դարը քրիստոնեության դար է: Երբ Կոնստանտին կայսրը հռչակեց քրիստոնեությունը որպես պաշտոնական կրոն, պայթյուն տեղի ունեցավ թե՛ «սրբերի», թե՛ հավատացյալ խմբերի առկայության պայմաններում: Այս շրջանում առաջին պլան են մղվում աղանդավորական առաջին պառակտումները և պաշտոնական քրիստոնեությունը (պետական քրիստոնեություն): Ինչպես հայտնի է, քրիստոնեության մեջ գերիշխող է «եռամիասնության հավատքը»: Հայրը, մայրը և որդին կարելի է մեկնաբանել որպես աստվածային կերպարներ: Չնայած մեր թեման աստվածաբանական բանավեճ չէ, սակայն հայտնի է, որ այս հավատքի հիմքերը գալիս են հին ժամանակներից: Շումերներն առաջին հասարակությունն էին, որ այս համոզմունքը հասցրեցին զիկկուրատներին: Մայր աստվածուհի «Ինաննա»-ն, Հայր Աստված «Էն»-ը և Որդի Աստված «Էնկի»-ն առաջին հիշատակվող պանթեոնային եռյակն է: Ուստի, չի կարելի անտեսել հաճախակի հնչեցվող այն ասույթը, թե քրիստոնեությունը հեթանոսության մեծ ազդեցության տակ է: Բայց առավել հետաքրքիրն այն է, որ Հիսուսն ինքը ծագել է աբրահամական ավանդույթից կամ համարվում էր այդպիսին: Աբրահամյան ավանդույթը խիստ հակասում է հեթանոսությանը: Կրոնական շարժման մեջ, որը դիմադրում է Հիսուսի անունով, կարծես երկու ավանդույթներ համաձայնության են եկել: Կարծում եմ՝ սա ճիշտ մեկնաբանություն է:

Այս շփոթեցնող հարցը հետագայում հանգեցրեց խոշոր աղանդավորական բանավեճերի, մասնատման և հակամարտությունների: Հակամարտության էությունն այն է, թե արդյոք Հիսուսին պե՞տք է համարել աստվածային, թե՞ մարդկային էություն: Երբ այս տարբերակումը մեկնաբանվի, կերևա, որ նրանք, ովքեր ասում են, որ դա աստվածային էություն է, ավելի հավանական է, որ ընդունեն պաշտոնական քրիստոնեությունը: Ինքը՝ Կոնստանտինը, մեկն է նրանցից, ովքեր ընդունում են այս մեկնաբանությունը, այսինքն՝ Հիսուսի աստվածությունը: Ինչպես հայտնի է, պետական աստվածությունը պաշտոնական աստվածություն է: Եվ դրա հիմքը դրեցին շումերական քահանաները: Կրոնների առաջին տարանջատումն ըստ երկու սոցիալական հիմքերի սկսվել է շումերներից: Մարդկային աստվածությունը, մյուս կողմից, մնացուկ է նեոլիթյան սոցիալական մշակույթից կամ պարունակում է այդ մշակույթի կարևոր մնացորդներ: Հեթանոսությունը նույնպես նման կողմեր ունի: Մյուս կողմը, այսինքն՝ նրանք, ովքեր պնդում են, որ Հիսուսը մարդկային էություն է ունեցել, ներկայացնում են ոչ պետական խմբերի մեկնաբանությունը կամ կրոնական միտումը՝ ճիշտ այնպես, ինչպես իսլամում պաշտոնական սուննիական աղանդի (պետական կրոն) և ալևիական աղանդի (ոչ պետական համայնքի կրոն) տարբերակումը:

Քրիստոնեության մեջ չորրորդ դարում տեղի են ունեցել երկու խոշոր վերափոխումներ: Առաջինը քրիստոնեությունը պետական կրոնի վերածումն է: Սա նաև այն

ձևն է, որը դարձել է քաղաքակրթության կրոն: Դրանով նախատեսվում էր հաղթահարել հռոմեական նյութական մշակույթի կրած բարոյական մեծ ճգնաժամը, այսինքն՝ օրինականության ճգնաժամը: Մյուսը մասսայականացումն է: Քրիստոնեությունը դադարեց սրբերի նեղ խմբերի հավատք լինելուց, ինչպես դա երևում էր առաջին դարերում և դարձավ մարդկանց մեծ խմբերի պաշտոնական կամ ոչ պաշտոնական կրոնը: Հայերը, ասորիները, հելլենները և լատիններն առաջին մարդիկ են, ովքեր մտքիս են գալիս քրիստոնեություն ընդունելու հարցում:

Այսպես ենք մտնում հայտնի ժամանակաշրջան, որը կոչվում է միջնադար: Այսինքն՝ մի կողմից Կոնստանտինյան Հռոմը, որը հիմնված էր քրիստոնեական սահմանադրականության վրա՝ փլուզված բուն Հռոմի փոխարեն, իսկ մյուս կողմից՝ քրիստոնեությունը, որը ձնահյուսի պես աճեց՝ որպես գաղափարական մշակութային մեծ քայլ: Մութ դարեր կոչվող ժամանակաշրջանի այս երկու դերակատարները ցույց են տալիս քրիստոնեության մեջ պարունակվող «երրորդության» հավատքի անհրաժեշտությունը՝ աստվածների պաշտոնական կրոն և ոչ պաշտոնական աստվածների կրոն: Պատմական բաժանումը փոխակերպված ձևով շարունակվում է միջնադարում: Նրանց միջև հակամարտությունը նույնպես շատ արյունալի էր: Ավելի վաղ հակամարտությունը հեթանոսների հետ տեղափոխվեց աստվածային Հիսուսի և մարդկային Հիսուսի միջև: Այն, ինչ տեղի է ունենում, ի վերջո, այն է, որ քաղաքակրթական ուժերի և դասակարգային ու էթնիկ ուժերի միջև պայքարի հին ավանդույթը նոր պայմաններում շարունակվում է նոր դիմակների ներքո:

Այս բաժանման ավելի պարզ մեկնաբանությունն այն է, որ գաղափարամշակութային նոր քայլը կատարողների մի մասը՝ խոր պատմական հիմքերով, քաղաքակիրթ դարձավ, հաշտվեց նյութական մշակույթի հետ և այդպիսով կոռումպացված էր, իսկ մյուս մասը խուսափեց փոխզիջումներից և շարունակեց հետամուտ լինել գաղափարամշակութային հեգեմոնիային:

Պատմական իրականությանն ավելի ազդեցիկ արձագանք տվող և ճիշտ մեկնաբանություն կլինի, ասել, որ Հռոմի անկումից հետո մոտավորապես հազար տարվա ժամանակաշրջանը, այսինքն՝ 500-1500 թվականներն ընկած ժամանակահատվածը, որպես մեծ կոնֆլիկտի, բախման և փոխզիջման ժամանակաշրջան է այն միտումների միջև, որոնք ցանկանում էին պահպանել նյութական մշակույթի գերակայությունը, որը չցանկացավ հրաժարվել գաղափարական մշակույթի գերակայությունից: «Մութ միջնադար» կամ «ֆեոդալական դար» մեկնաբանությունները կարող են լինել իրականության մասնակի պատասխաններ:

Այս հազարամյակի գլխավոր հերոսը որոշվում է Հռոմի նյութական մշակույթի փլուզմամբ: Հարցի պատասխանները, թե արդյոք քրիստոնեությունը կամ այլ գաղափարական մշակույթ և նյութական մշակույթի տարրեր լրացրել են բացը, կարող են ավելի գրագետ գնահատման հնարավորություն տալ:

Որպես նյութական մշակութային տարրեր՝ կան քաղաքներ, որոնք կառուցվել են որպես նոր քայլ, Արևելքում՝ Բյուզանդիայի հիման վրա և Արևմուտքում (ավելի ճիշտ՝ ողջ Եվրոպայում): Իսկապես, մենք կարող ենք Եվրոպայի

նյութական մշակութային պատմությունը կապել ուրբանիզացիոն այս շարժման հետ: Եթե Փարիզը, որի ակունքները թվագրվում են 4-րդ դարով, դիտարկենք որպես հռոմեական բնակավայր, ապա չենք կարող խոսել 1500-ականներին նյութական մշակույթի գերակայության մասին: Առաջացած քաղաքները չեն կարող համեմատվել Հռոմի հետ, ոչ էլ գերազանցում են մ.թ.ա. 3000-2000-ականներին Միջագետքում առաջացած քաղաքներին կամ մ.թ.ա 600-300-ականներին Էգեյան ծովի երկու կողմի քաղաքային կառույցներին: Կառուցված դղյակները հեռու են մ.թ.ա. 2000-1500-ական թվականների Տավրոս-Զագրոս համակարգի ամրոցներից ու դղյակներից: Մի խոսքով՝ կարելի է փաստել, որ 500-1500-ական թվականներին Եվրոպայի ուրբանիզացիան ի վիճակի չէր գերազանցելու «մութ դարաշրջանի» քաղաքներին, և որ ավելի գերիշխող էին նոր հոգևոր մշակույթը և քրիստոնեության գաղափարական մշակութային հեգեմոնիան: Քրիստոնեության գերակայությունը, անկասկած, շատ կարևոր է եվրոպական պատմության համար: Պատմաբանների համար ավելի ճիշտ է այս ժամանակաշրջանը մեկնաբանել որպես Եվրոպայի նվաճում հոգևոր մշակույթով, այսինքն՝ Եվրոպայի նվաճում քրիստոնեության հավատքով և բարոյական արժեքներով, ոչ թե նյութական մշակույթով:

Ամենակարևոր հարցն այն է, թե ինչու Հռոմը մնաց ընդամենը երկու հազար տարի առաջվա նյութական մշակույթի մակարդակում: Ավելի կարևոր է, որ հավատքի և բարոյական արժեքների այնպիսի համակարգը, ինչպիսին քրիստոնեությունն էր, որն ի վիճակի չէր բավարարելու ներկայիս գաղափարական մշակութային կարիքը

կամ քաղցը, կարողացավ նվաճել Եվրոպան: Դրա կարևոր պատճառը Եվրոպայի նեոլիթյան կուսությունն է: Դուք կարող եք հնձել այն, ինչ ցանել եք: Արդեն հազար տարվա պատմությունն ապացուցել է այս փաստը: Երկրորդ պատճառը կարող է արտաքին ծագում ունենալ՝ թուրքերի հարձակման սպառնալիքները՝ թե՛ իսլամական, թե՛ հեթանոսական, և արաբների հարձակման սպառնալիքները հարավից՝ Սիցիլիայով և Իսպանիայով: Երբ այս երկու գործոնները համադրվեն, հնարավոր է ավելի լավ հասկանալ եվրոպական միջնադարը և այս դարաշրջանի «խավարի» երկարատևությունը: Այս պայմաններում քրիստոնեության կարիքը կար, որովհետև հեթանոսությունը փլուզվեց Հռոմի հետ: Քրիստոնեությունն արդեն բացահայտել էր իր նախորդի՝ եվրոպական հեթանոսության անբավարարությունը հավատքի և բարոյականության առումով: Այսպիսով, դրական պայմաններ ստեղծվեցին քրիստոնեության՝ որպես գաղափարամշակութային տարրի հեգեմոնիայի համար: Քրիստոնեության նյութական մշակույթը Հռոմի հետ համեմատած միշտ գունատ է եղել: Այն չէր կարող մրցել Արևելքի նյութական մշակույթի հետ: Հոյակապ փարիզները չէին կարող ստեղծվել նեոլիթից առաջացած համայնքներով: Ըստ իս, այս երկու անբավարարություններն այն են, որ քրիստոնեությունը հեռու է մշակույթի գաղափարական քաղցը բավարարող համակարգ լինելուց, և այն, որ քաղաքային կառուցվածքը մնաց մի քանի հազար տարի առաջվա մակարդակին, Եվրոպայի

16-րդ դարի ֆինանսական մեծ քայլի համար ճանապարհ հարթելու պատճառ դարձավ:

Սերտ կապ կա նյութական մշակույթի մեծ բեկման և, որպես գաղափարական մշակույթ՝ քրիստոնեական հեգեմոնիզմի միջև: Ավելին, կրոնական և աղանդավորական խոշոր հակամարտություններն այս իրողության հաստատումն են: Եվրոպական կապիտալիզմը՝ որպես նյութական մշակույթի հոյակապ քայլ, լավ օգտագործեց քրիստոնեության թույլ կողմերը, որոնք զուրկ էին ուժեղ գաղափարական տարրերից, թաքնվեց, օգտվելով հասարակությունների ճեղքերից, պահպանվեց և ներմուծեց ապրանքայնացումը՝ ձեռք բերելով փոխանակման արժեք: Նրան հաջողվեց կառուցել նոր դարաշրջան՝ առևտրային-շահութաբեր «աղանդը» դարձնելով քաղաքակրթական պաշտոնական ուժ. մի բան, որ նախկինում ոչ մի քաղաքակրթություն չէր համարձակվել անել: Այս առումով Հռոմը կարողացավ նյութական մշակույթի միջին փուլից անցնել վերջին փուլին: Հաջորդ բաժնում մենք համակողմանիորեն կգնահատենք՝ արդյոք կապիտալիստական արդիականություն կոչվող դարաշրջանը կմեկնաբանենք որպես ճգնաժամի կամ քաղաքակրթության քաղցկեղի ձև՞, թե՞ որպես ծերության վերջին փուլ:

Իսլամի պատմությունն ավելի բարդ խնդիր է: Թե՛ նրա արագընթաց քաղաքակրթություն դառնալը, թե՛ նրա հակամարտությունը հուդայականության և քրիստոնեության հետ առաջին իսկ օրերից, և թե՛ նրա խորը ներգրավվածությունը աղանդավորական հակամարտությունների մեջ բավական են ցույց տալու համար նրա առջև ծառացած խնդիրների բարդությունը:

Ինչպես նախկինում նշել ենք, Մուհամմեդին նախորդած երկու դարը կարելի է մեկնաբանել նաև որպես

ստրկատիրական քաղաքակրթության վերջին փուլի ճգնաժամ: Քրիստոնեությունն այս ճգնաժամից դուրս եկավ ավելի ուժեղ և կարողացավ դառնալ աղքատ սոցիալական խոշոր հատվածների կազմակերպությունը: Փաստորեն, նա այս դարերում հիմնել էր բազմաթիվ վանքեր, արժանացել նույնիսկ աղքատ մարդկանց ուշադրությանը և կարողացել դառնալ այլընտրանքային ուժ: Թեև այն ունի բազմաթիվ խնդիրներ, ես պետք է ավարտեմ այս բաժինը՝ մեկնաբանելով այլ հնարավոր այլընտրանքները և իսլամի առաջացումը, գնահատելով այդ խնդիրները իսլամի ունեցած խնդիրների հետ մեկտեղ, քանի որ դրանք ունեն նույն ծագումը:

Իսլամի առաջացումը մեկնաբանելը պահանջում է բազմաթիվ գործոնների հղում: Նախ, իսլամն աբրահամական ավանդույթի վերջին կրոնն է: Այն այդպես է կառուցում իրեն: Այսպիսով, այն գտնում է իր հիմքերն առնվազն երկու հազար տարի առաջ աբրահամյան ձևով առաջացման մեջ: Այստեղից հետևում է, որ արաբա-հրեական հակամարտությունը ինչ-որ իմաստով հակամարտություն է նույն կրոնի երկու աղանդների միջև: Երկրորդ՝ Մեքքայում այն մտածելակերպը, որից նա առաջացել է, գնահատվում է որպես տգիտություն: Դա մի տեսակ քննադատություն է մեքքայական հեթանոսության հասցեին: Երրորդ՝ հենց Մուհամմեդին կարելի է կապել քրիստոնեության հետ՝ հաշվի առնելով նրա երկխոսությունները նեստորական քահանաների հետ: Չորրորդ՝ այն փաստը, որ վաճառական Հաթիջեն և՛ նրա աշխատողն էր, և՛ հետագայում նաև կինը, բացատրում է նրա կապը առևտրի հետ: Հինգերորդ՝ այն

ենթարկվել է ցեղային միջավայրի ուժեղ ազդեցությանը, որը միշտ եղել է արաբների օրակարգում և հազարավոր տարիներ առաջվա իր հիմքերն ունի: Վեցերորդ՝ դա Բյուզանդական և Սասանյան կայսրությունների վերջին փառահեղ դարաշրջանն էր:

Կարելի է հատորներ կազմել իսլամի առաջացման վրա այս հիմնական և բազմաթիվ երկրորդական տարրերի ազդեցության մասին: Սրանով մենք նկատի ունենք, որ իսլամը «անապատում հրաշքի» զարգացում չէր, այլ ամուր նյութական և պատմական պայմանների արդյունք: Նրա թուլությունը, ինչպես նաև նրա ուժը կապված են այս պայմանների հետ: Այն ոչ քաղաքակրթության սինթեզ է, ինչպես առաջին Շումերը, ոչ էլ վերջին Հռոմը, բայց նրա գերակայությունն այն է, որ այն կրոնական և բարոյական շարժում է: Մուհամմեդն Աբրահամի, Մովսեսի և Հիսուսի նման անհասկանալի կերպար չէ, առանձնահատկություններից շատերը հայտնի են. նրա ուղերձը՝ Ղուրանը, չի վերաբերում որևէ կոնկրետ ազգի, ցեղի կամ դասի, այլ ուղղված է ողջ մարդկությանը: «Ալլահ» հասկացությունը, որն ամենաակնառու հասկացությունն է Ղուրանում, իրականում պետք է լինի աստվածաբանական ուսումնասիրությունների հիմնական առարկան: Մուհամմեդը խորապես ազդված է այս հայեցակարգից: Նա Ալլահին համարում է բոլոր աշխարհների «Տեր»-ը: Բառը բազմիցս հանդիպում է Աստվածաշնչում: Ալլահ բառը, որն ունի նման հայեցակարգային մեծություն, կարողություն ունի սոցիոլոգիականորեն համատեղելու բնության աստվածությունն ու սոցիալական աստվածությունը: Նրա պարունակած 99 ածականներն արտահայտում են բնության

և սոցիալական ուժերի համակցված ազդեցությունը: Խնդիրները, որոնք նրա անդամները ցանկանում են հասկանալ որպես «հավերժական հրաման և օրենք», չափազանց մշուշոտ են: Ինչպես սոցիալական ծագման առանձնահատկությունները ժամանակավոր են, այնպես էլ բնության ամեն մի տեսք չի կարող իրավական արժեք ունենալ: Ավելին, լեգալիզմն ինքնին հետևանք է հրեական ցեղակրոնության ծայրահեղ օրինականության: Կարելի է խոսել հասարակության մեջ միշտ տիրող «տենդենցների» մասին: Հետագայում լեգալիզմի այս ըմբռնումը կհանգեցներ մեծ պահպանողականության իսլամական հասարակության մեջ: Խիստ լեգալիզմը, թերևս, օգտակար էր ցեղային անարխիզմի հաղթահարման և սոցիալական զարգացման հասնելու համար: Սակայն, երբ հաշվի է առնվում սոցիալական զարգացման արագ բնույթը, ումմայի այս ըմբռնման վտանգն ակնհայտ է դառնում:

Մուհամմեդի ուժեղ հավատն առ Աստված որոշում է նրա մետաֆիզիկական ուժը: Գոնե ինքն իրեն իշխանություն շնորհելով՝ նա չի տառապում աստված լինելու հիվանդությամբ, ինչին մենք ականատես եղանք Շումերից մինչև Հռոմի քաղաքակրթություններում: Երբ այն համեմատում ենք Հիսուսի աստվածության շուրջ ծավալված մեծ կռվի հետ, Մուհամմեդի մոտեցումն ավելի առաջադեմ է: Բայց բացասական կողմն այն է, որ նա չի կարողանում հաղթահարել հրեական կոշտությունը: Դրա ծանր գինը վճարվում է արաբա-իսրայելական հակամարտությունում: Արժե քննարկել՝ արդյոք այն հասարակությունը, որը ցանկանում էր կառուցել Մուհամմեդը, նյութական մշակութայի՞ն էր, թե՞ գաղափարական: Մինչ քրիստոն-

նեության մեջ բարոյական տարրն առաջին պլան է մղվում, իմ կարծիքով՝ իսլամում հաստատվել է ամուր հավասարակշռություն: Որքան էլ դրա բովանդակությունը անբավարար և վիճելի լինի, նյութական և գաղափարական մշակույթի համարժեքությունը կարող է լինել իսլամի ուժը: Փաստորեն, Մուհամմեդի հաղիսը՝ «Պատրաստվի՛ր անդրշիրիմյան կյանքին այնպես, ասես վաղը կմեռնես, աշխատիր այս աշխարհի համար այնպես, կարծես երբեք չես մեռնի», հիմնովին բացատրում է այս կառուցվածքայնությունը: Հայտնի է, որ նա չէր ուզում դասական հռոմեական, բյուզանդական, սասանյան և նույնիսկ հին փարավոնների ու նեմրոդական կարգերը, և որ խիստ քննադատում էր դրանք: Այս առումով նա քաղաքակրթության խիստ քննադատ է: Այնուամենայնիվ, ոչ նրա տարիքի նյութական պայմանները, ոչ էլ նրա գաղափարական կարողությունները բավարար չեն «քաղաքի» մասին նրա ըմբռնումը բացատրելու համար: Դա նման է մեր ժամանակներում սոցիալիստների՝ այլընտրանքներ մշակելու ձախողմանը: Բայց բարոյականության հանդեպ նրա մեծ կոչը ցույց է տալիս, որ նա լիովին գիտակցում է քաղաքակիրթ հասարակության արատները: Այս առումով նա ուժեղ բարեփոխիչ է, նույնիսկ՝ հեղափոխական: Նա չի ճանաչում մի հասարակություն, որտեղ բարոյականությունը գերիշխող չէ: Կանոնները, որոնք նա պարտադրում է կապիտալի տոկոսների վրա, նույնպես կանխում է կապիտալիստական հասարակության հիվանդ զարգացումը: Ելնելով Մուհամմեդի կառուցվածքից՝ նախ կարող ենք մտածել, որ նա այս հարցերում առաջ է անցել քրիստոնեությունից և հուդայականությունից: Հայտնի է նրա

հակաստրկատիրական միտումը. Նա չափազանց կարեկից է ստրուկների նկատմամբ և ազատագրման կողմնակից է: Թեև կնոջ նկատմամբ նրա մոտեցումը հեռու է ազատատենչ և հավասարազոր լինելուց, նա նաև ատում է կանանց խորը ստրկությունը: Եզրակացությունը, որ կարող ենք անել նրա բազմաթիվ կանանց և հարճերի առկայությունից, այն է, որ նա ունի այս երկու հակումները: Նա ճանաչում է սեփականության և դասակարգային տարբերությունները հասարակության մեջ, բայց, ինչպես իսկական սոցիալ-դեմոկրատը, նա փորձում է կանխել մենաշնորհը և սոցիալական գերիշխանությունը չափազանցված հարկերի միջոցով:

Այս շատ հակիրճ ամփոփման մեջ հեշտությամբ կարելի է փաստել, որ Մուհամմեդը և իսլամը ո՛չ անհավասարակշիռ նյութական մշակույթի կողմնակից էին, ո՛չ էլ ցանկանում էին սահմանափակվել զուտ գաղափարական մշակույթով: Այս ասպեկտը լավ բացատրում է, թե ինչու է այն ուժեղացել թե՛ քաղաքակրթական ուժերի, թե՛ այլ գաղափարամշակութային կազմավորումների դեմ: Թերևս, ոչ մի հասարակական շարժում, բացի շումմերական և եգիպտական քահանաներից, չի հասել նյութական և գաղափարական մշակութային միասնության պահպանման այնպիսի վարպետության, որքան իսլամը: Եթե մենք այսօր դեռ խոսում ենք արմատական իսլամի կամ քաղաքական իսլամի ամրապնդման մասին, ապա պետք է այս կառուցվածքային առանձնահատկությունը լավ հասկանանք:

Օգտակար է վերահիմաստավորել Հռոմի և Սասանյանների փլուզումից հետո նյութական և գաղափարական մշակույթի զարգացումներն ու փոխակերպումները:

Հռոմի փլուզումից արդեն իսկ երևում է, որ չորս հազարամյա ստրկական համակարգը խոր վնաս է հասցրել մարդկության խղճին, այսինքն՝ բարոյականությանը և ստեղծել հսկայական բացեր, ու որ նրա կողմից վերջնականապես հաստատված իրավական կարգավորումները չեն կարող լրացնել այդ բացը: Ակնհայտ է, որ հավատքի աշխարհում հսկայական բաց է առաջացել: Դարձյալ բացահայտվեց, որ չորս հազար տարի շարունակ հավատացյալ աստվածներն ամենևին էլ այն չէին, ինչ մտածում էին: Կռապաշտությունը կորցրել էր իր նախկին սրբությունը: Պնդում են, որ եկել է մի ժամանակ, երբ Յուպիտերի նույնիսկ լավագույն արձաններն անգամ ոչ մի զրոշ չարժեն: Հսկա նյութական կառույցները թողել են ավերված մարդկություն: Շարունակական պատերազմները խաղաղությունը վերածել էին ուտոպիայի:

Կարելի է ասել, որ ժամանակաշրջանը լիակատար ճգնաժամային ու քաոսային էր: Մինչ հին կանոններն ու ապրելակերպը կորցնում էին իրենց արժեքը, նորերը չէին երևում: Բոլորը սպասում էին փրկության ուղերձի: Միջավայրը զգացնել էր տալիս դրախտ և դժոխք հասկացությունները: Սաստկացել էին կենտրոնում գործազուրկ դարձած ու գործազուրկ թողնված ստրուկների զանգվածների, շրջակա տարածքի քոչվոր ցեղերի տեղաշարժերը: Ձեռք էր բերվել իդեալական միջավայր, որտեղ պատմական ազատագրական ուղերձը լավ արձագանք կունենար: Այն, ինչ հրատապ անհրաժեշտ էր այս պայմաններում, այսօրվա ոճով նոր ուտոպիաներն ու ծրագրերն էին: Մեծ շարժումները կարող են լինել մեծ ուտոպիաների և ծրագրերի արդյունք: Քաղաքակրթության ողջ նախորդ պատմության ընթացքում ազատագրական ուտոպիաների և ծրագրերի կարիք կար: Իրականում այն շարժումները, որոնք նրանք ապրեցին ներսում և դրսում, միշտ ունեցել են ուտոպիա և գործնական փրկության բաղադրատոմսեր: Բայց այս անգամ ստրկության՝ որպես համակարգի կառուցվածքային ու ֆունկցիոնալ ճգնաժամը շատ խորն էր: Իրավիճակն ու պայմանները, որոնք պետք է իրականացվեին ստրկական նոր համակարգերով, այլևս անհնարին էին:

Նման պայմաններում մարդկությունը մեծ ծարավ է զգում թե՛ խղճի, թե՛ մտածելակերպի առումով: Երբ համակարգը պահպանող վերջին նյութական կառույցները դառնում են անկայուն, ավարտվում են համաշխարհային կրոնների պայմանները (փրկության ուղերձներ, որոնք դիմում են ողջ մարդկության խղճին և մտքին): Եթե այն դարաշրջանը, որը մենք պատրաստվում ենք մտնել, չլինի նոր ստրկության շրջան, ապա այն հարցը, թե ինչպիսին կլինի այն, բավականին ինտրիգային է:

Ֆեոդալական հասարակության վերաբերյալ շատ է խոսվել: Ասում են, որ այն եկել է հին ստրկատիրական համակարգից հետո: Բայց այն մելիքությունները, որոնց վրա այն հիմնված է և որոնց հետ նույն տիպի է, հասնում են մինչև մ.թ.ա. 4000-ականներ: Իսկ ինչ վերաբերում է մելիքությունների ամրոցներին, հիշեցնենք, որ ամենաամուրներին հեշտությամբ կարելի է թվագրել մ.թ.ա. 2000-ականները: Նրանց մեծ մասի շուրջ գյուղացիության և ծառայողների խմբերը նախկինում ձևավորվել էին ամենուր: Կայսրությունների քայքայման դեպքում կարող էին ի հայտ գալ բազմաթիվ մելիքություններ, կամ էթնիկ համայնքի հիերարխիաներից մեկը հեշտությամբ կարող էր

հաստատել իր իշխանությունը: Հռոմից և Սասանյաններից հետո ստեղծված փոքր պետությունները շատ չէին տարբերվում հին ժամանակների պետություններից: Կայսրությունները ոչ այլ ինչ էին, քան դրանցից քիչ թե շատի միություններ, ֆեդերացիաներ կամ համադաշնություններ: Գյուղերը և դրանց մտածելակերպը շատ չեն տարբերվում առնվազն մ.թ.ա. 6000-ականներին ինստիտուցիոնալացված նեոլիթի ժամանակաշրջանում եղածից: Տղամարդկանց և կանանց հարաբերություններում ոչինչ չէր փոխվել: Ճորտերի և տերերի հարաբերությունները վաղ ժամանակներից ոչնչով չէին տարբերվում տերերի և նրանց վասալների հարաբերություններից: Գույքը նույն սեփականությունն էր: Արտադրության միջոցներում հեղափոխական ոչինչ չկար: Մենք շատ ենք խոսել կառավարությունների կառուցվածքի և աստվածների մասին: Այսպիսով, 5-6-րդ դարերից հետո առաջացած նյութական համակարգերը դժվար է նոր քաղաքակրթություն համարել: Փաստորեն, Եվրոպայում քաղաքային կառույցները բավարար չէին նոր քաղաքակրթության համար: Ստեղծված կայսրությունները այն չէին, ինչի համար նրանց գովում էին, և հռոմեական ավերակներ լինելուց ավելին չէին նշանակում:

Նույնը կարելի է ասել արևելքում գտնվողների համար: Ինձ համար ավելի խելամիտ է դրանք անվանել կապիտալիզմից առաջ համակարգի մնացորդներ: Մնացորդները տների կամ թաղամասերի նման մի բան են, որոնք մնացել են ավերակ դարձած հին շենքերից: Լավագույն դեպքում այն չի անցնում հնի վերանայումից այն կողմ: Այնուամենայնիվ, մենք չպետք է ժխտենք այն նյութական կառույցները, որոնք կային մինչև կապիտալիզմը: Դեպի կապիտալիզմ անցումային կառույցները կարող են տարբեր լինել: Եվրոպայի՝ հատկապես 10-րդ դարից հետո տեղի ունեցած ուրբանիզացումը կապիտալիզմի ավետաբերն էր: Այդ դեպքում ավելի ուսանելի կարող է լինել շատ չկախվելը թե՛ «ֆեոդալիզմ», և թե՛ «մութ միջնադար» հասկացություններից: Ավելի ճշգրիտ մեկնաբանությունն այն է, որ դիմակավորված աստվածների և ստրկացված հասարակության 4000-ամյա համակարգը լուծարվել է «երկար ժամանակահատվածում»: Նեոլիթյան համակարգի քայքայումը դեռ շարունակվում է: Նկատի ունեմ՝ երկարաժամկետ համակարգերի փլուզումը կարող է դարեր պահանջել: Դրանք կարող են նաև հաճախակի վերանայվել: Եթե շատ համառ լինենք, ապա 5-6-րդ դարերից հետո ընկած ժամանակահատվածը կարելի է անվանել ուշ համակարգեր:

Իսլամի և քրիստոնեության տեսանկյունից ի՞նչ են նշանակում բոլոր այս հարցերը: Երկու կրոնների ուտոպիաներում էլ դրախտի անվերջ խոստումներ կան: Նշվում են նաև երջանկության հազարամյա օրինաչափությունները: Սա մի հատված է, որը նշվում է յուրաքանչյուր ուտոպիայում: «Դրախտի խոստումն» ինձ միշտ հիշեցնում է զայրացած անապատում գտնվող մարդկանց կարոտը «օազիսի» նկատմամբ: Սրա հակառակն արդեն ամայի կյանքն է: Մարգարեները կարող են նաև հույսով լի օրեր և ապագա խոստանալ այն համայնքների համար, որոնց դիմում են: Երկնային ապագայի ուտոպիան ոչ այլ ինչ է, քան նոր աշխարհի որոնում: Մյուս կողմից, այն կարող է հարկադրաբար կառուցված ապաստարան լինել

մահապատժի դատապարտվածի համար, ում աշխարհը խավարում է բոլոր կողմերից, կամ նրանց համար, ովքեր փրկության հույս չունեն: Սադդամի հարաբերությունները Ղուրանի օրինակի հետ, որ նա իր ձեռքում պահել էր մահապատժից առաջ, բավականին ուսանելի է: Ղուրանը մահվան դատապարտվածների կյանքի ծայրահեղ մտավոր կառուցողական ուժն է: Դա հույսի կառուցումն է այն բանից հետո, երբ լուծում չի մնացել: Առանց ստրկության պայմանների լիարժեք իմացության, Սուրբ գրքերի պատգամները չեն կարող ճիշտ մեկնաբանվել: Եթե չանտեսենք մարդու մետաֆիզիկական բնավորությունը, ապա պետք է կառուցվեն էլի շատ ուտոպիաներ, այդ թվում՝ դրախտ խոստացող և դժոխքին սպառնացող ուտոպիաներ: Մարդկային իրականությունը սա է պահանջում: Հակառակ դեպքում կյանքն ապրելը հեշտ չի լինի, ավելի լավ ու գեղեցիկ կյանքի ճանապարհ չի հարթվի:

Պետք է հավելեմ նաև՝ մահվան վախն ինքնին սոցիալական է, այն նույնպես կառուցված կամ ստեղծված է: Թերևս, կյանքի ամենալավ և ամենագեղեցիկ տարբերակը կարելի է հենց մահից քաղել: Բնության մեջ մահերը երբեք նման չեն մարդկային հասարակության մեջ սոցիալական մահերին: Սոցիալական մահերի խոր ցավն ու տխրությունն այն է, որ դրանք հակասում են բնական մահվան իրականությանը: Հակառակ դեպքում, եթե մահը չլիներ, կյանք կոչվածը չէր լինի: Ուստի, ամենաարժեքավոր կյանքն այն կյանքն է, որում մահը գիտակցված է կամ անմահություն:

Իսլամի և քրիստոնեության ուտոպիաները հետաքրքիր էին նրանց համար, ովքեր ցանկանում էին փախչել

ստրկությունից: Սակայն պարզ չէր, թե ինչպիսի արդյունք դա կունենար: Թվում էր, թե դա մերժվել է՝ որպես դրախտային կյանք: Որպես նոր ստեղծվելիք հասարակության օրինակ՝ վանքերի և մեդրեսեների համայնքներին մատնացույց անելը մի փոքր ավելի հասկանալի է դարձնում այս հարցը: Մեդրեսները, վանքերն ու աղանդները նոր հասարակություն կառուցելու ծրագրեր ու ջանքեր են: Երկու կրոններն էլ շատ են փորձել և դեռ փորձում են: Զարմանալի չէ, որ այս որոնումները շարունակվում են երկու հազար հինգ հարյուր տարի: Մյուս կողմից, քրիստոնեական եկեղեցիների ղեկավարները և իսլամի նվաճողների հրամանատարները հեշտությամբ ստեղծեցին վերանայված ուշ ստրկության համակարգ: Եթե նկատում եք, այս ուշ ստրկական համակարգերը նվաճման հարմարանքներ են, դրանք ողջ հասարակության համար մշտական կենսահամակարգեր չեն: Սրանց իսլամական և քրիստոնեական քաղաքակրթություններ անվանելը փոքր ինչ դժվար կլինի: Ուտոպիաների նպատակը քաղաքակրթություն ստեղծելը չէ, այլ կյանքեր փրկելն ու դրանք գեղեցիկ դարձնելը: Սա նշանակում է, որ երկու ուսմունքի հավատքի և բարոյական համակարգերի քաղաքակրթության հարցը չունի հետևողական պատասխան: Նրանք վճռորոշ դեր են ունեցել չորս հազարամյա համակարգերի հաղթահարման գործում: Նրանց անունով ստեղծվեցին ինչպես իշխանություններ այնպես էլ քաղաքներ, ինչպես նաև կայսրությունների ոճով վերանայված ստրկական վարչակարգեր: Բայց դրանք չեն համարվում իսլամական և քրիստոնեական քաղաքակրթություններ: Լավագույն դեպքում կարելի է ասել, որ դրանք իսլա-

մի ու քրիստոնեության գաղափարական այլասերումներ են: Ո՛չ քահանան կարող է լքել եկեղեցին և նստել կայսերական պալատում, ո՛չ էլ իմամը կարող է լքել մզկիթը և դառնալ պետության ղեկավար: Իրականում երկու կրոններն էլ իրենց պետականացված տարրերը միշտ անվանել են շեղված և այլասերված: Նրանք կոչ են արել պետությունների ղեկավարներին և զգուշացրել նրանց կատարել կրոնի պահանջները: Դրա համար նրանք դեռ կան, բայց շատ անարդյունավետ ու անհույս կերպով:

Մաքս Վեբերը կապիտալիստական քաղաքակրթությունն անվանում է «հմայքը կորցրած քաղաքակրթություն»: Իհարկե, նյութական մշակույթի ամենազարգացած համակարգում կախարդական կյանք լինել չի կարող: Հետաքրքրաշարժ կյանքը հնարավոր է գաղափարական մշակույթի աշխարհում: Իսլամը, քրիստոնեությունը և նմանատիպ մշակույթները կապիտալիստական կյանքի աշխարհը գրավելու ունակություն չունեն: Դրան կարելի է հասնել միայն ազատության սոցիոլոգիայի կարողությամբ և ուժով, որն իր հետևից կտանի գաղափարական մշակույթի ողջ ժառանգությունը: Մենք կփորձենք կենտրոնանալ այս թեմայի վրա համապատասխան բաժնում: Կապացուցենք, որ կյանքն ինքնին ամենամեծ հետաքրքրաշարժ արժեքն է: Նոր կարգախոսը պետք է լինի ոչ թե «Կա՛մ կապիտալիզմ, կա՛մ սոցիալիզմ», այլ՝ «Կա՛մ կապիտալիզմ, կա՛մ ազատ կյանք»:

Այդ դեպքում ինչո՞ւ կապիտալիզմի քաղաքակրթություն հարցին կարելի է մի փոքր ավելի հեշտ պատասխանել: Քրիստոնեությունն ու իսլամը, գուցե, գիտակցաբար կամ անգիտակցաբար ճանապարհ են հարթել կապիտալիզմի համար՝ վերջ դնելով կապիտալիզմին խոչընդոտող հսկայական կայսրություններին և նպատակի ու կառուցվածքի առումով իրենք իրենց չքաղաքակրթելով: Վալերշտայնը հզոր դիտարկում է անում, երբ ասում է, որ կայսրությունները հակասում են կապիտալիզմին: Իր «Բողոքականության և կապիտալիզմի ոգին» աշխատության մեջ Մաքս Վեբերն ավելի հասկանալի է դարձնում, թե ինչպես է առաջնորդվել կապիտալիզմը:

Այսպիսով, առանց քաղաքակրթության լուծում կարո՞ղ է լինել: Այս հարցի պատասխանը նման կլինի նեոլիթիկա վերադառնալուն: Քանի որ քաղաքները չհաջողվեց վերացնել, առևտուրը հնարավոր չէր կանխել: Տղամարդկանց գերակշռող հասարակությունը չէր կարող լքվել: Որքան էլ դա քննադատվեր, այդ պայմաններում պետությունը չէր կարող վերացվել: Այս հուսահատության արդյունք են նաև վանքը, մեդրեսեն, աղանդն ու սուֆիական կյանքը: Տեսան այս կատեգորիաների խանգարող և կոռուպցիոն ազդեցությունները և ցանկացան ազատվել դրանցից: Նրանց գտած լուծումները ոչ այլ ինչ էին, քան մարգինալ: Այս պատճառներով նրանք բաց թողեցին նոր քաղաքակրթության գոյության կամ զարգացման միջավայրը:

Միևնույն ժամանակ, շատ ուսանելի կլինի մեկ անգամ ևս նայել եբրայական ցեղի պատմությանը: Հրեաները առևտրի և փողի մասնագետ էին: Ավելին, նրանց հեղինակային ուժը որոշակի էր: Հռոմեական եւ պարսկա-սասանյան ժամանակաշրջաններում այդ օրվա պայմաններում տարածվել են աշխարհով մեկ: Փողի և առևտրի ներթափանցող ուժը ահռելի էր: Նրանք նման էին նյութական

քաղաքակրթության հոգուն, ավելի ճիշտ՝ նրա զտված ուժին: Անցյալի ու ապագայի մասին ամենալավ լուրը տվող մարգարեների տեղը գրողները գրավեցին: Դրանք նոր քաղաքակրթական համակարգի կամ կապիտալիզմի նախադրյալներից մեկն էին: Ամեն դեպքում, ուտոպիաներում նրանց հետքերը չէին պակասի: Կրոնն ու աստվածը նույնպես նրանց փորձաքննության ոլորտներն էին:

Քրիստոնեությունը նվաճել էր ողջ Եվրոպան իր գաղափարական մշակութային դարաշրջանում: Այն սահմանափակ մուտք ուներ Ասիա: Աֆրիկայի քաղաքակրթության հետքերում նույնպես չէր պակասում: Իսլամը արագորեն շարունակեց իր նվաճումը ողջ Արաբիայից մինչև Հյուսիսային Աֆրիկա և Կենտրոնական Ասիա: Ինչպես հին քաղաքակրթական համակարգերի բոլոր ոլորտները նվաճվեցին, այնպես էլ նոր վայրերը ներառվեցին գաղափարական մշակութային կայսրությունների մեջ: Բայց այն, ինչ տեղի է ունենում, քաղաքակրթության ընդլայնում չէ: Այս հոգևոր աշխարհը կարող ենք անվանել նաև զարգացում: Ահա թե ինչ նկատի ուներ քրիստոնեությունը, երբ ասում էր «Աստծո հազարամյա պետությունը»:

Թե՛ քրիստոնեական, թե՛ իսլամական ուտոպիաների գիտական հիմքերը շատ թույլ են: Նրանց բարոյական կողմերն են զարգացած: Նրանք կրել են հունական դասական փիլիսոփայության ազդեցությունը և դեր են խաղացել դրա վերածննդում: Նրանց աստվածաբանությունը ինչ-որ տեղ ծագում է Արիստոտելից և Պլատոնից: Նրանցից մի քանիսը վերցվել են եգիպտական և շումմերական աստվածաբանություններից: Նրանք նույնպես հետամնաց վիճակում են ազատության իրենց ուտոպիայի համար: Կրկին արձանագրենք, որ կրոնների հիմքը բարոյականությունն է: Աստվածաբանությունը այնքան էլ գերիշխող չէ, որքան կարելի է կարծել: Քանի որ բարոյականությունը չի կորցնում իր կարևորությունը, քրիստոնեության և իսլամի նման ուսմունքները կպահպանեն իրենց կարևորությունը: «**Ազատության սոցիոլոգիա**» վերնագրով պաշտպանական ճառում կանդրադառնամ նրանց տեղի հարցին:

Ուտոպիաները միշտ չէ, որ կատարյալ են: Նրանք հաճախ ծառայում են հակառակ իրենց նպատակին: Իսլամի և քրիստոնեության ուտոպիաները ծառայեցին կապիտալիզմի զարգացմանը՝ որոշակիորեն հակառակ իրենց նպատակին: Բայց փաստ է նաև, որ նրանք հակասության մեջ են կապիտալիզմի հետ: Ես այս հարցին ևս մեկ անգամ կանդրադառնամ իմ պաշտպանության «Կապիտալիստական քաղաքակրթություն» բաժնում:

Իսլամի մասին հավելյալ կարելի է ասել, որ այն հանգեցրել է բարբարոս և գերիշխող ցեղային արիստոկրատիաների կողմից տարածության և մշակույթի անսահմանափակ և անարդար յուրացման: Հաճախ ասում են, որ դա հետ է մղել քրիստոնյաներին: Սրանք հարցեր են, որոնք վավերական են յուրաքանչյուր կրոնի համար: Ավելին, ազգայնացված իսլամի և քրիստոնեության հակամարտությունը որպես իսլամի և քրիստոնեության հակամարտություն ներկայացնելը լիովին չի արտացոլում ճշմարտությունը: Մենք լավ գիտենք, որ այդ քաղաքակրթական բախումների ժամանակ կրոններն օգտագործվել են որպես ծածկոց:

Արդյունքում՝ գաղափարական մշակույթը և նյութական մշակույթն ընդհանրապես խնդրահարույց հարցեր

են, բայց իրականություն են: Անհրաժեշտ է քննել: Պատմության շարժման մեջ ստրուկ-տեր, ճորտ-սենյոր հակամարտությունների դերերը սահմանափակ են և անուղղակի: Պատմության անիվներն այլ կերպ են պտտվում: Մենք ուսումնասիրում ենք սա: Այն, ինչ անում ենք, սիրողական հետազոտություն է: Բայց դրանք անհրաժեշտ ուսումնասիրություններ են թե՛ պատմությունը հասկանալու, թե՛ այսօրվա խնդիրների պատասխանները գտնելու համար:

Խնդիրը չի կարող համապարփակ դիտարկվել առանց դիմադրության մյուս թևերի՝ ցեղերի գաղթի շատ համառոտ գնահատման: Վերջին ժամանակներում Եվրոպայի հյուսիսից գոթերն ու հոները և Արաբիայի արաբները աստիճանաբար քայլեր էին անում ստրկատիրական քաղաքակրթության դեմ՝ ինչպես դիմադրողական, այնպես էլ հարձակման մարտավարությամբ: Այս ցեղերի գաղթերը, հարձակումները և դիմադրությունը նախաքաղաքակրթական նահապետական հասարակության մեջ, որը մենք անվանում ենք բարբարոս հասարակություն, որտեղ զարգացել է ցեղային հիերարխիան, մի տեսակ գաղափարական մշակութային շարժում են: Նրանք ավելի խանդավառ ու ագրեսիվ են և թարմ արյուն են կրում: Թեև նրանց ուտոպիաները մասամբ հավասարազոր են և պարունակում են նեղիության դարաշրջանի տարրեր, դրանք ավելի քաղաքակրթական են: Նրանք չեն կարողացել զարգացնել մետաֆիզիկա այնքան, որքան կրոնները: Նրանք հաճախ կայսրությունների համար թարմ արյուն կրողներ էին և դառնում էին վարձկաններ, բայց դեռևս պատմության ամենաշարժիչ ուժերից մեկն են:

Եթե չլինեին գերմանացիների, թուրքերի, մոնղոլների և արաբների, իսկ ավելի վաղ՝ հուրիների, ամորհացիների և սկյութների արշավանքները, պատմության ընթացքը հավանաբար այլ կլիներ: Մինչ գերմանացիներն ու արաբները փլուզեցին երկու Հռոմեական կայսրությունները, թուրքերն ու մոնղոլները մասնակցություն ունեցան Իրանի և Բյուզանդիայի փլուզմանը: Բայց ցեղապետերի արածը կա՛մ նոր կայսրության թագը կրելն էր, կա՛մ մասնակցել նրա բանակին ու բյուրոկրատական իշխանությանը: Նրանք, ովքեր մնացին, կա՛մ նորից ցեղեր կկազմեն, կա՛մ հասարակության ստորին հատվածում կապրեն մարգինալ՝ որպես ցածր դասակարգի տարրեր: Այս երկու ներքին ու արտաքին ուժերի դերը ստրկատիրական համակարգի փլուզման գործում անվիճելի է: Բայց նրանք չեն կարող նույն դերը խաղալ այլընտրանքներ առաջարկելու և նորը կառուցելու հարցում: Քանդում ու թալանում են, բայց չեն կարողանում կառուցել ու պաշտպանել:

Մինչ այժմ այս ուսումնասիրությամբ, որը մենք կարող ենք նաև անվանել հետազոտություն, իրականում փորձել ենք հիմք փորել կապիտալիստական արդիականության համար: Փորձեցինք ցույց տալ, թե պատմական որ զարգացումների արդյունքն է կապիտալիստական արդիականությունը: Առանց պատմության ներկայանալը կապիտալիստական գիտաուժային կառուցվածքի հիմնական հատկանիշներից է: Պատմության ու վայրի բացակայությունը կարևոր են մշտական և վերջնական համակարգ լինելու պահանջի համար: Տարածության ու ժամանակի բացակայության պայմաններում զարմանալի ու շատ մանրամասն վերլուծություններ են անում: Նրանք միկրոպատմության և

ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների տեր են: Նրանք նաև ցանկանում են հայտարարել, որ գործնականում ոչնչացնում են ժամանակի և տարածության ազդեցությունը, ինչպիսին է ժամանակ-տարածության սեղմումը: Այս ուսումնասիրությամբ ցույց տվեցինք, որ սոցիալական հոսքը, որը տարբերվում է նրանից, ինչ ցանկանում են ներկայացնել նման ջանքերը, անընդհատ շարժման մեջ է մարդկային հսկայական ջանքերով: Այս առիթով հայտարարեցինք, որ պատմությունից չի կարելի խուսափել, և որ թեև կապիտալիզմն իրեն համարում է պատմության վերջը, քաղաքակրթական շատ ուժեր նման պնդումներ են արել իրենց դարաշրջանի համար: Մենք բավականաչափ «զինված ենք» կապիտալիզմը վերլուծելու համար: Կշարունակենք բացատրել դրա՝ որպես քաղաքակրթության սահմանումը և առաջացման պայմանները, թեկուզ կրկնություն կլինի: Ուշադիր մատնանշելու ենք, թե ինչ է ժառանգվել նախորդ քաղաքակրթություններից և նրանց սեփական ներդրումներից:

Պաշտպանական ճառիս այս հատվածը որպես հիմնական թեզ կարելի է բացատրել հետևյալ կերպ. պետական քաղաքակրթական համակարգը, որն առաջացել է դասակարգի, քաղաքի և պետության փոխկապակցված ձևավորման հիման վրա և զարգացել անընդհատ բազմապատկվելով մինչև ֆինանսական կապիտալի շրջանը՝ կապիտալիզմի վերջին դարաշրջանը, հիմնականում շահագործում էր գյուղատնտեսական և գյուղական հասարակություններին՝ հիմնվելով ճնշելու վրա: Ընթացքում այն շահագործման և ճնշումների համակարգում է ներառում նաև անընդհատ ընդլայնվող քաղաքային աշխատողներին: Այն, որ 5000-ամյա պետական քաղաքակրթությունը շարունակում է առ այսօր գոյություն ունենալ դեմոկրատական քաղաքակրթության դեմ, որը հիմնված է ժամանակի և վայրի պայմանի վրա, որը, գուցե, նույնիսկ դրանից ավելի երկար է, և չի կարող իրեն փրկել գաղափարական, ռազմական, քաղաքական և տնտեսական մասնատվածությունից, հիմնականում պայմանավորված է գաղափարական հեգեմոնիայով: Ուժի և ճնշումների համակարգերը կարող էին հաջողակ լինել միայն գաղափարական հեգեմոնիայի հիման վրա: Հիմնարար հակասությունը ոչ միայն դասակարգային, այլև քաղաքակրթական մակարդակում է: Առնվազն 5000 տարվա պատմական պայքարը, որին կարող ենք հետևել գրավոր, ընթանում է պետական քաղաքակրթության (հիմնականում դասակարգային քաղաքի և պետության վրա հիմնված) և ժողովրդավարական քաղաքակրթության միջև, որը հիմնված չէ պետականության վրա և որի հիմնական մարմինը գյուղատնտեսությունն ու գյուղական հասարակությունն է, որի բովանդակությունը ժամանակի ընթացքում ձևավորվում է նաև քաղաքային աշխատողների կողմից: Հասարակության բոլոր գաղափարական, ռազմական, քաղաքական և տնտեսական հարաբերությունները, հակասություններն ու պայքարները տեղի են ունենում այս երկու հիմնական քաղաքակրթական համակարգերի միջև:

Այս հիմնական թեզը վերլուծելով և Մերձավոր Արևելքի ու Քրդստանի կոնկրետ համատեքստում կիրառելով՝ կզարգացվեն իմ պաշտպանական ճառի հաջորդ բաժինները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ՄԵԹՈԴԻ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ 31

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....116

1-Ի՞նչ է մարդկությունը պարտական Տավրոս-Զագրոս կամարին 119

2-Արիական լեզվի և մշակույթի տարածման հիմնախնդիրները.....131

3-Բարեբեր մահիկից բխող սոցիալական զարգացումը և կյանքի ճիշտ մեկնաբանումը.....149

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ
ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 184

Դիմակավորված աստվածների և շղարշված թագավորների դարաշրջան.....184

1-Ինչպե՞ս պետք է մեկնաբանենք շումմերական հասարակությունը.....190

2-Քաղաքակիրթ հասարակության ճիշտ մեկնաբանումը.....221

3-Քաղաքակիրթ հասարակության ընդլայնման խնդիրները.....264

ա- Շումմերական և եգիպտական քաղաքակրթությունների ընդլայնման հիմնախնդիրները 266

բ- Չինական, հնդկական և բնիկ ամերիկյան մշակույթների զարգացումները 298

գ- Հունահռոմեական քաղաքակրթության և ընդլայնման հիմնախնդիրները 308

4-Քաղաքակիրթ հասարակության փուլերը և դիմադրության խնդիրները 345

ԱԲԴՈՒԼԼԱՀ ՕՋԱԼԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ

Թուրքերենից թարգմանեց Զաբել Մարտիկյանը
Սրբագրիչ՝ Պողոս Պողոսյան

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ

ԼՈՒՍԱԿՆ

Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 055. 52.79.74:
Էլ. փոստ՝ lusakn@rambler.ru



«Այս ճառը գրում եմ Իմրալի կղզում՝ բացարձակ մեկուսացման պայմաններում: Ես չունեմ հետազոտական հնարավորություններ, և դա չէ այն ճանապարհը, որը կնախընտրեի: Անիմաստ եմ համարում թվարկել մարդկության այն ռահվիրաների անունները և ստեղծագործությունները, որոնք միշտ միմյանց փոխլրացրել են և նաև իմ հիմնական աղբյուրներն են. մտքի և գործի մեծ մարտիկներ, քանի որ ազատ կյանքն անհնար է քանակականացնել: Այս առումով դեմ եմ արդիականության գիտական կառուցվածքին: Ազատ կյանքով ապրելու կամքը չի կարող լինել այնքան ազատատենչ և արդար, որքան իմ մեկուսացման պայմաններում: Այս պաշտպանական ճառն ընկերաբար նվիրում եմ բոլոր նրանց, որոնք հավատում են և գիտեն, թե ինչպես իրականացնել այն:»

Այս մանիֆեստը մեր ուժի հիմնական աղբյուրն է՝ իր պատմությամբ, ներկայով և լուսավոր ապագայով: Այն պատկանում է ոչ միայն մեկ ազգի կամ դասի, այլ՝ ողջ մարդկությանը: Այս ռեսուրսը ողջ մարդկությանը սնուցող աղբյուրի վերածելը մեր կյանքի և պայքարի նպատակն է:

ISBN 978-9939-0-4791-1

9 789939 047911